Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

BY NC SA

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացածձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել աոկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

93 | 2020

Ի-68 | Իշխանյան, Բ.

Երկու ամիս բոլշևիկյան

րկրում:

Bfe 1359

CASA CULTURALĂ

Մատենաշար «ՅՈՒՍԱԲԵՐ», Թիւ 5

92
Ի-68
947.925

ԲԱԽՇԻ ԻՇԽԱՆԵԱՆ

ԵՐԿՈՒ ԱՄԻՍ
ԲՈԼՇԵՎԻԿԵԱՆ ԲԱՆՏՈՒՄ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԾԵՐ՝
Վ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ԳԱՀԻՐԷ
ՏՊԱՐԱՆ «ՅՈՒՍԱԲԵՐ»
1924



ԲԱԽՇԻ ԻՇԽԱՆԵԱՆ

1879—1921 Օգոստոս 26

«Մշակ» 1921 Սեպտեմբեր 1-ին.

Հայաստանի յարգելի Պատուիրակութեան

Փարիզ *)

«Անհուսաբար գալիս եմ պատմելու մեր անմոռանալի Պր. Բախշի Իշխանեանի ողբալի մահուան մասին, որ տեղի է ունեցել Օգոստոս 26-ին Port-Sudan-ում.

«Ես հեռագրով որպիսութիւն խնդրեցի Տէյիրմէնճեանից. ահա հեռագրիս պատասխանը.

Port-Sudan

Armenouhi Regret report death Mr. Ishkhanian twentysixth August.

Deirmendjian

«Պարոն Իշխանեանը վերցրել էր երրորդ կարգ. ինքը շատ առողջ մարդ էր. նրան խոստացել էին տալ առանձին սենեակ եւ ճաշ. մինչեւ նաւի շարժուելը յոյս են տալիս՝ թէ քիչ էլ սպասիր. մինչև որ նաւը շարժւի. բայց հէնց որ նաւը արդէն սկսեց շարժւել, նրան ոչ մի յարմարութիւն չտուեցին. Ստիպուած մեր

---

*) Գրքի նոյնութեանը ընդօրինակում եմ այն միակ փաստաթուղթը, որ անցել է Հ. Հ. Փարիզի Պատուիրակութեան ձեռքը եւ ուր ականատեսի գրչով տրուած է հանգուցեալ Իշխանեանի վերջին ժամերի պատկերը.

մօտ իրեն մի մահճակալի տեղ յարմարեցրինք։ Նրա հետ ծանօթացայ և իմացայ, թէ ինչ գործով է գնում և որտեղից է գալիս։ Լսեցի Թաւրիզից գալը ու աւելի հետաքրքրուեցի, քանի որ ինքս էլ Թաւրիզեցի եմ։ Երկու օր շատ հանգիստ էր, իսկ երրորդ օրը նա ունէր թեթև ջերմ։ Ես քանի որ տեսնում եմ, որ բոլոր մեր հայերը հիւանդ են, չեն կարող ոչինչ անել, ես եմ սկսում մեծ խնամք տանել Իշխանեանի վրայ, մինչդեռ իմ ծնողներս, եղբայրս էլ հիւանդ էին, որոնց ես թողի։ Ինը օր ու գիշեր նա ջերմում էր, տասներորդ օրը որ պիտի հասնէինք Port-Sudan, նա բոլորովին լաւ էր զգում իրան։ Ժամը 10-ին առաւօտեան մի վանեցի հայ կին մեռաւ. Նրան ծովը նետեցին։ Այդ րոպէին Պր. Իշխանեանը այդտեղ կանգնած է լինում։ Երբ նա վերադարձաւ, քիչ փոխուածի պէս էր։ Ժամը 2-ին հասանք նաւահանգիստ. Նա ցանկանում էր նաւից դուրս գնալ, բայց ես չթողի, քանի որ թոյլ էր։ Նա միայն ինձնից խնդրեց թարմ կաթ։ Ես գնացի և գտայ կաթը։ Իմ ներս մտնելուս պէս՝ Նա ուրախ վեր կացաւ անկողնից, շատ ուրախ։ Ես սկսեցի թէյ պատրաստել իրան համար։ Երբ նա ինձ ձայն տուաւ թէ շատ վատ է և ուզում է դուրս գնալ՝ ես իրան օգնեցի, բայց արդէն չէր կարողանում շարժուել։ Հօրս և երկու ուրիշ պարոնների օգնութեամբ դուրս տարինք, բայց նա ընկաւ կիսամեռ և լեզուն կապուեց։ 1.30 ժամ ես նրա վրայ ջրով և սառոյցով չարչարուեցի, բայց ի զուր։ Բժիշկ ենք խնդրում՝ չի գալիս. սառոյց ենք խնդրում՝ չեն տալիս, մինչև որ վերջապէս Թորոս Գուլումճեանը պատմեց բժշկին, որ այս մարդը այսպիսի պաշտօն ունի, մինչև վերջապէս բարեհաճեց գալ ու մենք 15 վեդրօ (դոյլ) ջուր լցրինք վրան և նա սկսեց խօսել։ Իսկոյն վերցրին հի-

ւանդանոց։ Միւս օրը ես անձամբ ներկայացայ հիւանդանոց, բայց ի զուր։ Երբ ես մօտեցայ, ձայն տուի ու հարցրի թէ՝ նա ինձ ճանաչո՞ւմ է, խեղճն աչքերը բաց արաւ և շատ ուշադրութեամբ երկար ինձ նայեց։ Կարծես ուզում էր ասել,— այո՛, ճանաչում եմ։ Բայց չէր կարողանում խօսել։ Նրա մօտ մնացի 1.30 ժամ. նա պառկած էր բոլորովին մերկ մի սաւանով, վրան լիքը սառոյց։ Նա միայն վախից հիւանդացաւ, քանի որ շատ էր կասկածում մահից։ Պր. Իշխանեանը ինձ հետ ծանօթանալուց յետոյ ինձ յանձնեց 2 կապոց և ասաց, որ լաւ պահեմ. նոյնպէս բոլոր իրերը։ Ասաց՝ եթէ ինքը շատ հիւանդ լինի, ես զգոյշ լինեմ, քանի որ շատ կարեւոր թղթեր ունի։ Port-Sudan-ում կայ մի հայ. ես գնացի նրա մօտ և խնդրեցի, որ ինձ գրի ամէն ինչ Պր. Իշխանեանի մասին և իրեն յանձնեցի Պր. Իշխանեանի պէտքերի համար 14 անգլիական փաունտ, 6 եգիպտական ոսկի և 50 դրուշ, 1 պալտօ, 1 գլխարկ, մի ձեռք սպիտակեղէն, 1 զոյգ գուլպա, 2 ձեռքի թաշկինակ։ Իրա հետ հիւանդանոց տարին 2 ադեալ (բաթանիա), 2 ժակետ և 1 զոյգ կօշիկ։ Ես չէի ցանկանում նրա ապրանքը յանձնել, բայց քանի որ նրանք ասացին, որ եթէ չտաս, մենք ժանդարմներով կը վերցնենք, ես էլ յանձնեցի ներկայութեամբ Պր. Թորոս Գուլումճեանի (գոնիացի), Պր. Նշան Քիգիրեանի (տիգրանակերտցի) և ստացել եմ ստացական, անհաւատարիկ ուղարկում եմ Ձեր մեծութեան։

Անհաւատարիկ նաեւ հասցէն, որի մասին ես շատ վատ պիտի գրեմ, քանի որ Իշխանեանը զոհ գնաց նրա անմարդութեան եւ զզուելի բժշկի անզգուշութեան. *)

*) Իշխանեանի թղթերի մէջ, ծոցատետրի մի փոքրիկ կտոր թերթիկի վրայ, հետեւեալ տողերը կան իր

Anchor Line S. S. Marsilia — (Indian Service)

Այս հասցէով կարող էք խնդրել Իշխանեանի հի-ւանդանոցի և թաղման ծախքը։

Mr. John Deirmendjian — Pr. Hotel Port-Sudan

Ջոնիկ Տէյիրմենճեան

Ես երէկ այդ մասին գրեցի Թաւրիզ՝ Թեմի սրբա-զան առաջնորդ Ներսէս Մելիք-Թանգեանին։ Չի կա-րելի երեւակայել թէ մենք, խեղճ հայերս, ինչքան ենք տանջուել այս նաւում անգլիացիների ձեռքից։ Մեր փողով մեզ հաց չէին տալիս։ Խոստացել էին 14 օրում հասցնել Marseille, հասցրին 24 օրում։ Մինչև օրս էլ այս նաւով գացողները հիւանդ են։

ԵՐԵՄԻԱ ԽԱՆ ՄՈՒՇԵՂԵԱՆ։

ճամբորդութեան մասին Բոմբէից դէպի Պորտ-Սուդան։

«III-րդ կարգ կոչուած ախոռատանը տեղաւորուած էին մօտ 100—120 հոգի. հայեր՝ 45 հ., ասորի՝ 8 հ., հրեաներ՝ 40 [դրանցից 7-ը Թուրքաստանից]. հնդիկներ՝ 20 հ., արաբներ՝ 4 հոգի, ուրիշ խօսքով հինգ կարգի նմոյշներ հնագոյն ժողովրդներից։ Հայերն ու ասորիները որպէս գաղթականներ գնում էին անծանօթ աշխարհը (Ամերիկա), հրեաները՝ Պաղեստին (հայրենիք), արաբները՝ Եգիպտոս. հնդիկները՝ ծառայութեան գործով Ջիբրալտար։ Երեկոները բացի հայերից մնացածները ամէն մէկն իր լեզուով երգում էին եկեղեցական երգեր. հայերն էլ ժողովրդական տխուր երգեր («Լուեց ամպերը» մեծ մասամբ)։ Հնդիկների— բոլորը երիտասարդներ— վայրենի աղմուկը շատ էր անհանգստացնում մնացածներին։ Ուտեստի պաշարի սակաւութիւնը կիսաքաղց վիճակի մէջ էր պահում ինձ. Նաւը շատ դանդաղաշարժ էր. 12 օրուայ փոխարէն միայն 17 օրում է հասցնում մեզ Պորտ-Սայիդ։ Ճանապարհը վեց անգամ ես ուժեղ տաքացնում եմ. Բժշկի՝ մի գարշելի խոզի պայթացուցիչ վերաբերմունքը դէպի հայ հիւանդ գաղթականները»։

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԾԵՐ

Մի յուզիչ դրուագ է այն կեանքն ու մահը, որ ունեցաւ Բախշի Իշխանեանը։

Սրանից մօտ չորսուկէս տասնամեակ առաջ հինաւուրց Արցախի հայ գիւղի մէկ նահապետական յարկի տակ ծնուեց Բախշին։ Անշուշտ ներկաներից եւ ոչ ոք մտածեց՝ թէ նորածինը տարիներ յետոյ պիտի դառնայ մարքսիզմի առաջին տեսաբանը հայ իրականութեան մէջ և հայ սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան կարկառուն դէմքերից մէկը։

Յետագային, երբ հասակ առած և մտքի ու գրչի տիրացած Բախշին, զինուած մարքսիզմի բոլոր զէնքերով, տարիներ շարունակ յամառ, յաճախ կրքոտ ու թունալից պայքար էր մղում մեր կեանքի խոշոր քաղաքական ազդակի՝ Հ. Յ. Դաշնակցութեան դէմ, այդ նոյն Բախշին չէր կարող գալիքը տեսնել և զգալ, որ մի գեղեցիկ ու լուսաշող առաւօտ, դեռ իր կենդանութեան շրջանին, Հայաստանն իբրև անկախ երկիր պիտի հռչակուի այդ նոյն կուսակցութեան գլխաւորութեամբ, իսկ ինքն էլ օտարութիւնից պիտի դառնայ հայրենիք, — իր բաժին աջակցութիւնը բե-

բելու հակառակորդ կուսակցութեան՝ նրա ժողովրդանուէր ու հայրենաշէն աշխատանքի մէջ։

Իսկ մեզնից և՛ ոչ մէկը կարող էր նախատեսել, թէ մեր հանրային կեանքի մի դժբախտ ու մռայլ օր նոյն Իշխանեանը, հալածանքի մատնուած իր երբեմնի գաղափարակիցների կողմից, տարագրի ցուպն առած աշխարհներ պիտի պտտի, երկրներ ու ծովեր կտրի և գայ ու իբրև անյայտ ու անծանօթ մէկը, վերջին թշուառութեան ու չքաւորութեան մէջ, իր հոգին աւանդի հեռաւոր Սուդանի մէկ անկիւնն ընկած Սուաքիմի անծանօթ հիւանդանոցի մէջ, բարոյական պարտաւորութիւն ձգելով Դաշնակցութեան վրայ՝ տէր կանգնել թղթերի կոյտից բաղկացած իր միակ «հարստութեան» և իր վերջին խօսքը հասցնել հայ ժողովրդին։

Մենք բնաւ նպատակ չունենք եղերաբախտ գործչի կենսագիրն ու նրա կեանքի և գործի մինչև իսկ համառօտ ուրուագիծը տալու։ Այդ անելու համար մեզ պակասում են թէ՛ համապատասխան նիւթերն ու թէ՛ աշխատանքի անհրաժեշտ պայմանները։ Այդ քաղցր պարտականութիւնը — աւելորդ է իսկ ասել — հաճոյքով պիտի կատարեն նրա գաղափարակից ընկերները, որոնք մինչև իսկ այսօրուան դժուարին պայմանների մէջ շարունակ հեռաւոր հայրենիքից տեղեկութիւններ են ստանում Իշխանեանի տարագրութեան շրջանի և յատկապէս նրա եղերական մահուան վերջին օրերի մասին։

Միշտ յիշենք ու երբեք չմոռանանք, որ և՛ ոչ մէկ բռնակալութիւն յաւիտեան կեանք ունեցած է մեր մոլորակի վրայ։

Մի հրաշագեղ օր պիտի փլի անշուշտ նաև բոլշեւիկեան անարգ ու բռնակալ շէնքը, պիտի բացուեն

շղթայուած լեզուները, Հայաստանի քաղաքացին ազատօրէն գրի պիտի առնի բարբարոսների իշխանութեան տակ իր տեսածը, լսածն ու ապրածը, իսկ Իշխանեանի գաղափարակիցներն առաջին իսկ հերթին պիտի տան իրենց թանկագին զոհի՝ Բախշու կեանքի ու գործի լրիւ պատկերը։

Մենք անհրաժեշտ համարեցինք այսօր իսկ մի երկու խօսք ասել — գէթ թռուցիկ գծերով — Իշխանեանի մասին, որովհետեւ մանաւորաբար գաղութահայութիւնը, որ առիթ պիտի ունենայ նրա գրուածքը թերթելու, ոչինչ չգիտէ վաղամեռ գործչի ո՛չ ապրած կեանքի և ո՛չ էլ նրա կատարած հանրային գործի մասին։

Իշխանեանը ծնուել է 1879-ին, Ղարաբաղի Խաչէն գաւառի Խանձք գիւղում։ Իշխանեանները ընդհանրապէս Ղարաբաղի հին ազնուականներից են. որոնք, հարկատու լինելով հանդերձ Խաչէնի մեծ իշխաններին՝ Հասան Ջալալեաններին, այնուամենայնիւ, դեռ Փանահ խանից շատ առաջ, տարիներ շարունակ իշխել են Խաչէն և Կարկար գետերի մէջ ընկած մի շարք գիւղերի վրայ։ Երբ սկսուեցին ծանօթ կռիւները Փանահ խանի և Ղարաբաղի հայ մելիքների միջեւ, Խանձք գիւղի Սարգիս (?) քահանան (Իշխանեաններից), ըստ ծերունի խաչէնցիների վկայութեան, երկար ժամանակ պարտիզանական կռիւներ է մղում Խանձք և Բադարա գիւղերի լեռներում, Կաչաղակաբերդի մօտերքը, Փանահ խանի հրոսակների դէմ։ Այդ քահանային թուրքերը կոչում են Դալի Սարը Քեշիշ (քահանան շէկահեր է լինում), որի անունով էլ Խանձքը թուրքերի կողմից կոչւում է Սարը-Քեշիշլը (շէկ տէրտէրի գիւղ)։ Այս նոյն տոհմից էր սերուած նաեւ կովկասահայ առաջին ընկերվարականներից Ջաւադ

բէկ Իշխանեանը, որ 70-ական թուականներին աւարտել էր Մոսկուայի համալսարանի իրաւաբանական բաժինը և դատուել ռուս յեղափոխական պատմութեան յայտնի Նեչաևների գործի մէջ, ու դատապարտուել բերդարգելութեան:

Յետագային միայն, հայ և թուրք մեծամեծների միջնորդութեամբ, չորս տարի բանտ նստելուց յետոյ, Ջաւադ-բէկ Իշխանեանը կայսերական հրամանով աքսորւում է Վեատկայի նահանգը, ուր վեց տարի մնալուց յետոյ վերադառնում է Շուշի և իր բաժին մասնակցութիւնը բերում մանուկ Բախշու կրթութեան և դաստիարակութեան գործի մէջ.

Ուշադրաւ դէմք է նաև Բախշու պապը: Նա մէկն է եղել այն առաջին խաչէնցիներից, որ մի խումբ ղարաբաղցիների գլուխ անցած օգնութեան է գնացել Ներսէս կաթողիկոսին՝ 1829-ի ռուս-տաճկական պատերազմի ժամանակ, և Ներսէսի գլխաւորութեամբ էլ մասնակցել է Երևանի գրաւման: Պատերազմից յետոյ մնալով Ներսէս V-ի մօտ, ընդունել է քահանայութիւն և Տէր-Յովհաննէս անունով վերադարձել իր ծննդավայրը՝ Խանձք: Տէր-Յովհաննէսն իր չորս զաւակներին գրագիտութիւն է սովորեցնում, սակայն նրանցից ամէնից ընդունակը դուրս է գալիս Զաքարիան, որը պատրաստւում է քահանայ ձեռնադրուելու՝ իր զառամեալ հօրը փոխարինելու համար: Զաքարիայի այս նպատակը, իր կնոջ մահուան պատճառով, անկատար է մնում սակայն: Զաքարիան ունենում է մի չորս որդիներ, որոնցից կենդանի են մնում միայն երկու տղայ և մի աղջիկ: Բախշին ամէնից փոքրն էր նրանցից: Զաքար-բէկը թէև ազնուական, բայց իր ունեցուածքով ոչնչով չէր տարբերւում նոյն գիւղի ոչ-ազնուական չունեւոր գիւղացիներից: Նա

զբաղւում էր գիւղական տնտեսութեամբ և մի կերպ պահպանում իր ընտանիքի գոյութիւնը. Սաչէնի հայ գիւղերի ժողովրդի կողմից Զաքար-բէյը ճանաչուած էր իբրև ուսեալ և բնական խելքի տէր մարդ. Իր ուժերի ներածին չափ նա ծանօթ էր հայոց պատմութեան ու հայ լեզուին և որպէս քահանայի որդի՝ աստուածավախ ու կրօնական մարդ էր. Զաքարիայի միակ փափաքն էր, որ Բախշին աւարտի Արցախի Հայոց Թեմական Դպրոցը (Շուշի), ձեռնադրուի քահանայ, վերադառնայ գիւղ և փոխարինի իր պապին. Ու թերևս նաև այս նկատումներով է, որ Զաքարիան իր որդիներից ամէնից շատ կապւում ու սիրում է Բախշուն. Նրա մեծ եղբայրը՝ Մովսէսը՝ գիւղական դըպրոցն աւարտելուց յետոյ անցնում է Բաքու և նաւթահանքերում աշխատում որպէս պարզ արհեստաւոր.

Բախշին իր սկզբնական կրթութիւնը ստանում է Սանձք գիւղի եռդասեան դպրոցում, որի աւագ ուսուցիչն էր իր հօրեղբայրը՝ Աբրահամ-բէկ Իշխանեանը, 1884-ի Թեմականաւարտներից. Այդ դպրոցում Բախշին մնում է մինչև 1892 թւականը, երբ իր ազգական Սարգիս Ջան բէկ և մեզ արդէն ծանօթ Ջաւադ բէկ Իշխանեան եղբայրները, որոնք ապրում էին քաղաքում [Շուշի] և զբաղւում փաստաբանութեամբ, նկատելով, որ Բախշին գիւղական դպրոցի աշակերտներից ամէնէն աչքաբացն է և չափազանց ջանասէր, իսկ հայրը միջոցներ չունի նրան քաղաք ուղարկելու ուսումը շարունակելու համար, որդեգրում են Բախշուն (իրենք անզաւակ էին) ու տանում Շուշի և մտցնում Թեմ. Դպրոց. Այստեղ Բախշին սովորում է չուրջ վեց տարի, ուր և աւարտում է 1899-ին. Այս շըրջանին ընդհանրապէս մի շարք ականաւոր դէմքեր իրենց անունները արդէն կապած են լինում Ղարաբաղի

Թեմականի հետ և նրա պատերից դուրս ու պատերից ներս ստեղծած եռուն հասարակական կեանքը։ Նոյն այդ շրջանին Շուշում բացւում է Կովկ. Հայոց Բարեգործական Ընկերութեան ճիւղը, որի ազատաքաղաքական հովանու տակ պատսպարուելով, Թեմականի ուսուցչութիւնը կարողանում է ծաւալել իր հասարակական գործունէութիւնը։ Այս գործիչների առաջին շարքերում է գտնւում Բախշու խնամակալ Ջալալ բէկ Իշխանեանը, որ մինչև իննսունական թուականները դեռ շարունակում էր պահել իր կապերը ռուս նարոդավոլցիների հետ։ Բախշին գալիս է քաղաք ճիշտ այն ժամանակ, երբ Կովկ. Հայ. Բար. Ընկերութեան Շուշու մասնաճիւղը եռուն գործի էր անցած։

Յաճախ նա ականատես է լինում, որ Ջալալ բէկի մօտ հաւաքւում են քաղաքի աչքի ընկնող մտաւորականները և խօսում ու վիճում հասարակական զանազան խնդիրների շուրջ։ Դէպքից-դէպք և առիթից-առիթ նա ազդւում է այդ շրջանից և սկսում հետաքրքրութիւն ցոյց տալ դէպի հանրային կեանքը։ Բախշու նկարագրի խմորման մէջ իր հսկայական դերն է կատարում նաև դպրոցական շրջապատը, ուր այդ թւականներին Բախշու հետ միասին սովորում էին Սարգիսը. Մենակը (Եգոր Առստամեան), Արամը. Իշխանը, Ալեքսանդր Մասուրեանը (Ռուբէնը), Թորգոմը (Թուման Թումեան), Արշաւիր Տէր-Իսրայէլեանը, Յովհաննէս Փանեանը և մի շարք ուրիշները, որոնք յետագայում այնքան մեծ դեր կատարեցին հայ կեանքում։ Դեռ եւս դպրոցական շրջանին, Գ. և Դ. դասարաններից սկսած, Բախշին մասնակցում է աշակերտական գաղտնի կազմակերպութեան, որի ղեկավարն ու ոգին էր 1904-ին Օլթիում սահմանն անցնելու ժամանակ 60 հոգու հետ միասին նահատակուած Թոր-

գոմը։ Աշակերտութեան վրայ անհագին ազդեցութիւն է թողնում և 96-ի կոտորածների հետևանքով հազարաւոր արևմտահայերի գաղթը դէպի Կովկաս, որոնցից մի քանի հարիւր հոգի են անցնում Շուշի և շատ ջերմ վերաբերմունքի արժանանում քաղաքի ազգաբնակութեան կողմից։ Բարեգործական Միութիւնը եռանդով գործի է անցնում. կազմւում են երիտասարդների, կանանց և օրիորդների խմբակներ, որոնք անէտուն շրջելով դրամ և զգեստ են հաւաքում ոչ միայն Շուշի հասած, այլ և երկրում մնացած կարօտ տաճկահայ եղբայրներին համար։ Այս գործին իր կարևոր բաժինն է բերում նաև աշակերտական կազմակերպութիւնը, որ գտնւում էր բացառաբար Դաշնակցութեան տեղական կոմիտէի ազդեցութեան տակ, որի գործօն դէմքերից էին այն տարիներին Շուշի գտնուող բժ. Քրիստափոր Օհանեանը և Ալեքսանդր Մելիք-Ղարագէօզեանը՝ Խարկովի համալսարանից, որ յետագային թոքախտից մեռաւ Շուշում։ Միաժամանակ Բախչին, Թորգոմն ու Արշաւիրը արտադպրոցական պարապմունքներ էին ունենում քաղաքի չքաւոր երեխաների հետ, որոնց պատրաստում և տեղաւորում էին դպրոցներում, Թումանն ու Բախչին աշակերտական գաղտնի կազմակերպութեան վարչութեան անդամներ են լինում, իսկ Թումանը միաժամանակ այդ նոյն վարչութեան կողմից մասնակցում է նաև Հ. Յ. Դաշնակցութեան Ապառաժի կոմիտէի նիստերին։

Այսպիսով, թերեւս աննկատ իրեն համար, սակայն, ինչպէս տեսանք, չափազանց բնական ձևով, Բախչու մէջ զարգանում է հանրութեան ծառայելու զգացումը և նա իրերի բերումով իր առաջին հասարակական մկրտութիւնը ստանում է Հ. Յ. Դաշնակցութեան գաղափարական աւազանում և անդամա-

գրւում այդ կուսակցութեան շարքերում։

Բախշին Թեմական դպրոցը 1899-ին յաջողութեամբ աւարտելուց յետոյ գնում է Էջմիածին և ընդունւում Գէորգեան Ճեմարանի առաջին լսարանը։ Շուտով այստեղ սկսւում է մի նոր գաղափարական կեանք, որի կենտրոնական դէմքերից մէկն է դառնում Բախշին։ Մի փոքրիկ խմբակ, որի մէջ մտնում են՝ Ռուբէն Տէր-Մինասեանը, Ռուբէն Դաջբերունին, Խաչատուր Կարճիկեանը, Մկրտիչը (յետագային Տաճատ վարդապետ, իսկ վերջը՝ Գարմէն) և ինքը Բախշին, սկսում են հրատարակել ուսանողական մի թերթ՝ «Ընծիւղ» անունով, ունենալով իբրև խմբագիր Բախշուն։ Սակայն շուտով խումբը ցրւում է, Իշխանեանը դառնում է զպիր, ցանկանում է պատրաստւել վարդապետութեան, բայց մինչ այս մինչ այն, ալեկոծւում է դպրոցական կեանքը և աննշան մէկ անկարգութեան համար Բախշին ճեմարանի երրորդ լսարանից 1901-ի աշնան նետւում է դուրս։ Ճեմարանում եղած ժամանակ Բախշին ամառուայ արձակուրդներին գալիս է Ղարաբաղ և նուիրւում կուսակցական կեանքի, առաւելապէս դասախօսութիւններ կարդալով քաղաքի արհեստաւորների և աշակերտների մէջ։ Ճեմարանից արձակուելով, Բախշին անցնում է, նախ՝ Շուշի և ապա՝ Բաքու և այս երկու քաղաքների մէջ, իր ազգականների ու բարեկամների հետ համախորհուրդ ու նրանց նիւթական օժանդակութեամբ, 1901-ին ուղեւորւում է Գերմանիա՝ իր ուսումը այնտեղ շարունակելու համար։ Տեղաւորուելով Լայպցիգի առեւտրական ինստիտուտում, այդտեղից նա աշխատակցում է «Մշակ» թերթին՝ գրելով պարլամենտարիզմի և տնտեսագիտական հարցերի մասին և ստանալով որոշ հոնորար խմբագրութիւնից։ 1905-ին աւարտելով Լայպ-

ցիցի ճեմարանը, Բախչին վերադառնում է Կովկաս, հաստատւում Թիֆլիզում և աւելի սերտօրէն կապւում «Մշակ»-ին։ Մինչ այդ նա արդէն քաշուել էր Դաշնակցութիւնից և 1903-ին պաշտօնապէս յարել սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան։

1905 թուի հոկտեմբերեան յեղափոխութիւնից յետոյ, երբ Գէորգ Մելիք-Ղարագեօզեանը սկսում է Թիֆլիզում հրատարակել «Արշալոյս» թերթը, Բախչին իր գործօն մասնակցութիւնն է բերում այդ թերթին։ Միաժամանակ նա աշխատակցում է նաև Ն. Թոփչեանի «Լոյս» օրացոյցին (սեզանի)։ Իսկ 1906-ին Բախչին արդէն խմբագրում է Հ. Ս. Դ. բանուորական կազմակերպութեան պաշտօնական «Կեանք» երկշաբաթաթերթը (Թիֆլիզ), գրելով յաճախ Genosse կեղծանունով և պայքարելով մանաւորաբար Անդրկովկասեան ֆեդերացիայի թէ՛ գաղափարի և թէ՛ նրա հնարաւորութեան դէմ։ Այս հարցի շուրջ բուռն վէճեր են տեղի ունենում առանձնապէս Խաժակի և Բախչու միջեւ, Խաժակը հրաժարւում է այլեւս բանավէճ տանել Բչխեանի հետ և խոստանում է մի առանձին գրքոյկով լուսաբանել ֆեդերացիայի գաղափարը և ցոյց տալ, որ սոցիալ-դեմոկրատական անֆիզ ու անբովանդակ «աւտոնոմիան» չի կարող բաւարարել իրաւահաւասարութեան ձգտող ժողովրդների պահանջներին։ Խաժակը կատարում է իր խոստումը, լոյս ընծայելով իր ծանօթ և արժէքաւոր գործը՝ «Դէպի Ֆեդերացիա»-ն։ Բախչին աշխատակցում է նաև Լեւոն Սարգսեանի «Մուրճ» ամսաթերթին, 1906-ին զետեղելով այնտեղ իր «Կարլ Մարքսը եւ Մարքսիզմը» աշխատութիւնը։ Այդ նոյն ժամանակ «Կեանք» թերթից առանձին գըր-քոյկներով արտատպւում են նրա «Տնտեսական զարգացման ձեւերը» և «Տանկային խնդիրը եւ միջազգա-

յին դիպլոմատիան»։ Այս աշխատութիւններից առաջին երկուսը բուռն քննադատութեան են ենթարկւում հանգուցեալ Լեւոն Աթաբէկեանի (այն ժամանակ դեռ դաշնակցական) և Կասեանի (սոցիալ-դեմոկրատ) կողմից (դաշնակցական թերթում), որոնց ազդեցութեան տակ Բախչին ընդունում է իր գործած սխալը և «բաց նամակով» համապատասխան յայտարարութիւն անում «Մշակ»-ում։ 1908-ի վերջերին Բախչին ձերբակալւում է Թիֆլիզում և դատւում, որպէս «Կեանք» թերթի խմբագիր, մեղադրուելով հակակառավարական գործունէութեան մէջ. Նրան սպառնում է 5 տարուայ բանտարկութիւն, բայց, շնորհիւ իր մտերիմների ազդու միջամտութիւններին և իր փաստաբանի զօրաւոր պաշտպանութեան, դատարանը մօտ երկու և կէս տարուայ բանտարկութեան է դատապարտում, հաշուելով նաև իր նստած ժամանակը։ Բանտում նա գրում է իր «Հասարակական գաղափարները Ռաֆֆու, Պատկանեանի եւ Սմբատ Շահազիզի գրուածքներում» ծաւալուն աշխատանքը։

1911-ին բանտից ազատուելով, Բախչին նորից անցնում է Գերմանիա, ուր մնում է մօտ երկու տարի, մինչև 1913-ի վերջը։

Գերմանիա գտնուած ժամանակ նա աշխատակցում է մի շարք թերթերի (ինչպէս առաջ՝ մինչև հըրատարակուող «Սոցիալիստ»-ին) և պատմական յօդուածներ է տալիս գերմանական թերթերին։

Ինչպէս ասացինք, Իշխանեանը 1903-ին քաշուեց Դաշնակցութիւնից և իր խօսքն ու գրիչը ուղղեց նրա դէմ։ Շատ չէ նրանց թիւը, որոնք Իշխանեանի պէս և Իշխանեանի չափ յամառ, յաճախ կրքոտ ու անխնայ, իսկ երբեմն էլ պարզ ու բացայայտ թշնամական ոգով պայքար են տարել Դաշնակցութեան դէմ։ Իշխանեա-

նի գրական արտադրութեանց մի պատկառելի տոկոսը — իսկ Նա արտադրել է բաւական չափ, հայ մտաւորականին գրեթէ անծանօթ չափերով — ուղղուած է եղել Դաշնակցութեան դէմ և ծնունդ է առել Դաշնակցութեան դէմ մղած պայքարի հետեւանքով։ Նա իր կենդանի խօսքն ու գործը յաճախ օգտագործել է առաւելապէս Դաշնակցութի՛ւնը հարուածելու, գլխաւորաբար Նրա՛ն տկարացնելու նպատակով։

Ամբողջ տասն և հինգ տարի, 1903-ից մինչև 1917-ի վերջերը, Նա, լինելով Դաշնակցութեան երդուեալ, անհաշտ ու անուղղայ հակառակորդը, երբեք առիթը բաց չթողեց իր թոյնը թափելու հակառակորդի հասցէին, և, ընկնելով յաճախ անհանդուրժելի ծայրայեղութիւնների մէջ, դժգոհութիւններ կուտակեց իր անուան շուրջ և ակամայից աւելի զօրացրեց հակառակորդի դիրքերը։ 1908-ից սկսած, երբ այլևս Հ. Ս. Դ. բանուորական կազմակերպութիւնն իր օրգանը չունէր, Նա շարունակ աշխատակցում էր «Մշակ»-ին։

Ուշագրաւ պարագայ։ Մշակականները 1905-ի ռուսական առաջին յեղափոխութեան ժամանակ պաշտօնապէս յարում են կադետական (սահմանադիր-ռամկավար) կուսակցութեան, որի պատճառով թերթից առանձին յայտարարութեամբ հեռանում են Նրա բոլոր դաշնակցական աշխատակիցները։ «Մշակ»-ը դառնում է հայ կադետների պաշտօնական օրգանը, իսկ միհրանական շարժման օրերին գրկաբաց հիւրընկալում է բոլոր Նրանց, որոնք վտարուած էին Դաշնակցութիւնից, և դառնում այդ անտուն հօտերի պաշտօնական բերանը։ Համբարձում Առաքելեանի գլխաւորութեամբ մշակականները հրահրում ու թև են տալիս [illegible]ուած շարժման, օրօրելով այն աղօտ յոյսը թէ՝ բարոյապէս ընկածների ջանքերով պիտի կարողանան

քայքայման որդը տեղաւորել Դաշնակցութեան չարքերում. Եւ «Մշակ»-ը լայնօրէն բաց է անում իր էջերը ազգից եկած բոլոր գրչակների առջև. Առանց խտիր զննելու գրողի դիրքի ու նրա համոզումի մէջ. «Մշակ»ը, «հարստացած» «յօդուածագրերի» ու «Թղթակիցների» մի այլանդակ բազմութեամբ, դառնում է հայ գրական բարքերի անկման շրջանը նիշող այլանդակ օրգանը. Ազատախոհ թէ կղերական, միապետական թէ սոցիալիստ, չէզոք թէ «վայրենի», մի խօսքով բոլոր նրանք, որոնք «խօսք» ունէին Դաշնակցութեան դէմ, վստահ քայլուածքով իրենց երթն ուղղում էին դէպի Արծրունու սրբագործուած չէնքը. համոզուած, որ այնտեղ ջերմ հիւրընկալութեան պիտի հանդիպեն.

Բարոյական յենակներից զուրկ Առաքելեանը չկարողացաւ «Մշակ»-ի թաւալգլոր անկման անսանձ թափը սանձել և թերթը իր ընթացքով սկսեց բաղխել բացայայտ մասոնութեան դռները. Անհաւասարակշիռ հակառակորդի բարոյական անկումը էլ աւելի վարկ տուաւ Դաշնակցութեան հմայքին. «Մշակ»-ը բուռն զայրոյթ ու խոր զզուանք առաջ բերաւ հասարակութեան լայն խաւերում ու նրանից հեռացաւ մինչև իսկ Լէօի պէս չափաւոր մարդը, որ Արծրունու օրերից «Մշակ»-ի հետ ապրելով՝ յաճախ տարիներ շարունակ միմիայն իր ուսերի վրայ էր տարել նրա ամբողջ բեռը.

Եւ ահա մինչև իսկ այս շրջանին, երբ հանրութեան հասարակական կարծիքը ծառացած էր «Մշակ»-ի դէմ, Բախչին, այնուամենայնիւ, շարունակում էր օգտուել... նաև նրա ամբիոնից. Ահա այսքան մեծ էր ու անզուսպ նրա ատելութիւնը դէպի Դաշնակցութիւնը. 1907-ին իբրև պատուիրակ (ռուսական սեկ-

ցիա) անցնելով Շտուտգարտ, նա ամէն ջանք թափում է, որ Դաշնակցութիւնը տեղ չունենայ Ինտերնացիոնալի մէջ, սակայն նաև այս փորձի մէջ ձախողում ու գլխիկոր վերադառնում է Կովկաս։ Նա գտնում էր, որ Դաշնակցութիւնը, որ գիտէ իր երթն ուղղել մերթ դէպի հաագա (Խաղաղարար Ատեան), մերթ դէպի Էջմիածին (Կաթողիկոսական ընտրութիւն), չի կարող գնալ Շտուտգարտ (Միջազգայնականի համագումարին) ու որդեգրել աշխատաւոր մարդկութեան ընկերվար մեծ ընտանիքին։ Տեսակէտներ, որոնք յետագային այնքան ալեծուփ կեանք ու այնքան անփառունակ վախճան ունեցան։

1912—13 թւականներին Բախչին արդէն Բագու էր և հասարակական եռուն կեանքի ոլորտում։ Այդ շըրջանին նա լոյս է ընծայում «Կովկասեան ազգերի սոցիալ-անտեսական կազմը», որ նախապէս հրատարակւել էր գերմաներէն (Գերմանիայում) և գերմանական որոշ ընկերութեան կողմից։ Այս նոյն աշխատանքը յետագային հրատարակւում է նաև ռուսերէն (մեր թարգմանութեամբ), ինչպէս նաև «Հայ-վրացական յարաբերութիւնները» խորագիրն ունեցող գրքոյկը, որ նախապէս հրատարակւել էր հայերէն լեզուով։

1915-ի մեծ նահանջին, երբ տասնեակ հազարաւոր գաղթականներ Երկրից թափւում են Երևանեան նահանգը, Բախչին այցի է գնում այդ գաղթականութեան, տեսնում է նրա ահաւոր պատկերը ու նորէն ծառանում իր վաղեմի հակառակորդի դէմ, բոլոր դժբախտութիւնների պատճառը Դաշնակցութեան մէջ որոնելով։ Նա դէմ էր կամաւորական շարժման և կարծում էր, որ եթէ Դաշնակցութիւնն իր կամաւորական գնդերով չմասնակցէր պատերազմին ու չվաստակէր Թուրք կառավարութեան թշնամութիւնը, ա-

պա արեւմտահայութիւնը այդքան եղերական ճակատագրի չպիտի դատապարտուէր։

1915-ին Բախչին ուղեւորւում է Պետերբուրգ, ուր հայկական ակումբում, հրապարակային մէկ դասախօսութեան մէջ, այն գաղափարն է արծարծում, թէ Ռուսաստանը պէտք է յառաջանայ դէպի երկրի խորքերը և իր տիրապետութեան տակ առնի Թիւրքահայ վիլայէթները։ Այս գաղափարները հրապարակով նա արծարծում է այն ժամանակ, երբ հայութեան ճնշող մեծամասնութիւնն այդ օրերին միջոցներ էր փորձում Տաճկահայաստանի աւտոնոմիայի գաղափարը իրականացնելու՝ մեծ պետութիւններին երաշխաւորութեամբ ու նրանց աջակցութեամբ։ Բախչու ձայնը հասնում է մինչեւ ռուսական շրջանակները և ռուսական մամուլի ազդեցիկ օրգաններից «Ռեչ»-ը (Միլիւկովի խմբագրութեամբ լոյս տեսնող կադետական կուսակցութեան պաշտօնաթերթը) ընդարձակ թերթօնով ու Միլիւկովի ստորագրութեամբ պաշտպան է կանգնում Բախչու արծարծած տեսակէտներին։ Ռուսական յեղափոխութիւնը սակայն գալիս է և ամէն ինչ հիմնիվեր գնում նաև հայ կեանքի այս փոքրիկ անկիւնում։ 1917-ին Թիֆլիսի մէջ տեղի է ունենում Հ. Յ. Դ. Կովկասեան Ռայոնական ժողովը (Ապրիլի 7-14), որի որոշումները պատճառ են դառնում, որ վերաքննութեան նժարի տակ առնեն հայ սոցիալ-դեմոկրատները դէպի Դաշնակցութիւնն ունեցած իրենց անհաշտ վերաբերմունքը։ Այդ յուսալից օրերին, երբ Ռուսաստանի գրեթէ բոլոր ստորադաս ազգերը բացայայտօրէն անջատողական ձգտումներ ունէին և հակառուս քաղաքականութեան շեմքերն էին մաշում, Դաշնակցութիւնը յստակ ու որոշ յայտնում է, որ նա ռուսահայ ժողովրդի բախտը կապում է Ռուսաստանի հետ, նրա

ազգային բաղձանքների տնօրինութիւնը վերապահելով երկրի գերագոյն տիրոջ՝ Սահմանադիր ժողովին.

Դաշնակցութեան այս ընթացքն այնքան աններդաշնակ էր ռուսական գրեթէ բոլոր մեծ ու փոքր ազգերի ցուցադրած միահամուռ ու միակամ ցանկութիւններին, որ մինչեւ իսկ Ռուսիոյ մեծ զաւակը՝ Գ. Պլեխանովը՝ որ այդ օրերին իր քառասուն տարուայ տարագրութիւնից վերադառնում էր հայրենիք, հարկ է զգում շնորհաւորութեան խօսքով այցի գացած Դոկտ. Զաւրիեւին և հայ ուսանողական ներկայացուցիչներին ասելու մօտաւորապէս հետեւեալը. «Յայտնում եմ իմ խորին գոհունակութիւնը ձեր այցելութեան համար, սակայն իմ ուշադրութիւնը գրաւում է շատ կարեւոր մի հանգամանք։ Ես հետեւում եմ թերթերին. Ռուսաստանի սահմաններում գտնուող բոլոր ազգերը, օգտուելով յեղափոխութեան հետեւանքով առաջացած պետական մեխանիզմի անխուսափելի և բնական թուլութիւնից, աւելին՝ անիշխանական դրութիւնից, անջատողական ձգտումներ են ցոյց տալիս, նոյնիսկ նախնական գործօն քայլեր են անում այդ ուղղութեամբ, ինչպէս, օր.. Ուկրայնայի Ռադան. Սակայն հայ ժողովուրդը, որ միապետական կարգերի ժամանակ ամէնից շատ հալածուածներից է եղել եւ ներկայ աշխարհաւեր պատերազմի ժամանակ ամէնից շատ է տուժել, տալով մօտ մէկ միլիոն զոհ, այդպիսի ձգտումներ չունի։ Մեծ պետութիւնները և մանաւանդ Ռուսաստանը պարտաւորութիւններ են ըստանձնել հայ ժողովրդի հանդէպ, խոստացել են նրան տալ ազատութիւն։ Նա, որ ա՛յնքան տուժել է և որ այնքան շատ իրաւունք ունի առաջին պահանջողը լինելու, այսօր լուռ է և իր բախտը կապում է մեր ժողովրդի հետ։ Հայ ժողովուրդը պետականօրէն է

մտածում այս խնդրում. Ես դա վերագրում եմ Նրա ղեկավար հոսանքի՝ Դաշնակցութեան տասնեակ տարիների ընթացքում տուած դաստիարակութեան։ Իմ գոհունակութիւնն եմ յայտնում Դաշնակցութեան, որ այդպէս է կրթել իր զանգուածներին։ Ինձ յայտնի են արդէն ձեր Թուրանական ժողովի որոշումները։ Ես իմ թերթի մէջ պիտի պաշտպանեմ Հայկական Հարցը և ոյժ տամ Նրա բարեյաջող լուծման։ Դուք ազատօրէն կարող էք օգտուել իմ թերթի էջերից»։

Ահա այսպիսի մթնոլորտ էր ստեղծուած հայ մեծ քաղաքական կազմակերպութեան շուրջ, անգամ նրա հակառակորդների կողմից։ Բախչին, որ մանկական միտարօրինակ ակնածանք ու պաշտամունք ունէր մանաւորապէս դէպի Կաուցկու և Պլեխանովի անունները, չէր կարող չազդուել այս ու նման փաստերից, որոնք իրենից, ի հարկէ, գաղտնի չէին մնում։ Սակայն բոլշեւիկեան դաւադրութիւնը (հոկտեմբերեան) ու Բագուի մեծ եղեռնը վերջնականապէս հանում են Բախչուն իր հակադաշնակցական կրքերի ու տրամադրութիւնների հին ու ծանօթ հունից և դնում ըմբռնումների ու դատողութեան նոր գծերի վրայ։ 1918-ի Բագուի սեպտեմբերեան տաճկական գազանութիւններին նա նուիրում է «Բագուի Մեծ Սարսափները» խորագրով իր արժէքաւոր ուսումնասիրութիւնը (հայ և ռուս լեզուներով), իսկ հոկտեմբերեան դաւադրութեան առաջին իսկ վայրկեանից ծառանալով բոլշեւիզմի դէմ, նա գրում է մի շարք հակաբոլշեւիկ գրքոյկներ և խօսքով ու գրչով եռուն պայքար սկսում նրանց դէմ։

1918 թուի Մայիս 28-ի լուսաշող առաւօտը նոր էջ է բանում Իշխանեանի հասարակական կեանքի համար։

Դարերի ստրկութեան ծոցից, համատարած աւերածութեանց վրայ, սերունդների դիւցազնական պայքարի ու ժողովրդական զանգուածների սրածման գընով՝ Մասիսի ստորոտը, հայկական հողերի կրծքին, Արարատեան դաշտի վրայ յարութիւն է առնում մեր հինաւուրց անկախութեան երազական շէնքը։

Աշխարհի տարբեր ծայրերից ուխտագնացութիւն է սկսւում դէպի հայրենիք։ Տարագրութեան կայաններից տուն են դառնում նրանք, որոնք վտարուել էին այդ տնից, տանելով իրենց հետ հայրենի երկրի մաշող կարօտը։

Հայաստան է գալիս նաև Բախշին։ Գալիս է և... սեփական հայրենիքում, հայ հողի վրայ ու հարազատ ժողովրդի հետ նա կարծես դառնում է մի բոլորովին տարբեր մարդ։ Հայրենիքի վերածնող շունչը փոխում է բոլորին։ Օրերի մէջ տարիների գործ է կատարւում և վերաշինւում է Հայաստանը ոչ միայն նիւթով, այլ ոգիով։ Իսկ կարեւորն այս էր։ «Նիւթ» միշտ կարելի էր գտնել, էականն ու անհրաժեշտը հայութեան գոլորշիացող «ոգին» էր, որ մեր վերածնուող քաղաքական անօթը՝ ազատ և անկախ Հայաստանը արագօրէն հաւաքում և ամփոփում էր իր մէջ։ Ազատագրուող հայրենիքի հսկայական դերը ըմբռնելու համար թող թոյլ տրուի մեզ մի քիչ շեղուել մեր նիւթից և խօսք տալ մեր իմաստուն պատմիչներից Փաւստոս Բիւզանդացուն, որ գիտէ այնքան յուզիչ ու իմաստալից ձեւով պատկերացնել այդ դերը։

Պարսից Շապուհ թագաւորը ուզում է գերութիւնից ազատել «տոհմ իւրովք» հպատակութեան եկած Հայոց Արշակ արքային, որի դէմ նա երկար տարիներ ապարդիւն պատերազմներ է մղել և միշտ էլ, ըստ իր վկայութեան, նրանից դաւադրուել։ Այս վճիռը

տալուց առաջ. Շապուհը որոշում է նախապէս առնել քաւդէների և կախարդների կարծիքը, որոնք Շապուհին հետեւեալ խորհուրդն են տալիս.

«Այժմ զի եկեալ է առ քեզ Թագաւորն Հայոց Արշակ, զիա՞րդ խօսի ընդ քեզ. կամ զի՞նչ ձայն ածէ, կամ զիա՞րդ ունի զանձն.

«Ասէ արքայն. Իբրեւ զմի ի ծառայիցն իմոց համարի զինքն, հօղ ոտից իմոց ջանայ լինել.

«Ասեն նոքա, առ արա զոր ասեմքս քեզ. պահեա դու զնոսա ատէն, և առաքեա դու զեսպանս յերկիրն Հայոց, և տուր բերել անտի հող ի սահմանացն Հայոց իբրև բեռինս երկուս. և կահոյք մի ջուր. Եւ հրաման տացես հարկանել զկէս խորանի յատակ ի բերեալ հողոյն Հայոց. և առցես քեզէն զձեռանէ արքային Հայոց Արշակայ, և տարցես նախ յայն տեղ՝ որ բնակ իսկ իցէ հողն. և հարցցես ցնա բանս։ Եւ դարձեալ առցես դու զձեռանէ նորա և տարցես ի հայատակն ի հարեալ հողոյն. և լուիցես դու բանս ի նմանէ, և ապա գիտասցես դու՝ եթէ կա՞յ յուխտի քո պահէ՞ զդաշինս քո թէ ոչ՝ յետ արձակելոյ զնա ի Հայս։ Ապա թէ ի վերայ հայ հողոյն խիստ ինչ բարբառեսցի, գիտասջիր՝ զի որ օր հասանէ յերկիրն Հայոց, զնոյն ձայն ածէ ընդ քեզ, և զնոյն պատերազմ նորոգէ ընդ քեզ, զնոյն ճակատս և զնոյն թշնամութիւն յուզէ»։

Շապուհը լսում է քաւդէների և կախարդների խորհուրդը և ուղտերով Հայաստանից բերել է տալիս հա՛յ հողից և հա՛յ ջրից։ Ապա կարգադրում է, որ ննջարանի յատակի մի մասը ծածկուի հայկական հողով ու նրա վրայ Հայաստանից բերուած ջուր ցանուի, իսկ միւս մասը թողնուի իր երկրի (պարսկական) հողին։

Եւ ահա թէ ինչ ձեւով է տալիս իմաստուն պատմիչը հայրենի երկրի հզօրութեան և հմայքի խորին ու յուզիչ գաղափարը.

Շապուհի հրամանով Արշակին ներս են բերում սենեակ և կանգնեցնում գորգածածկ յատակի այն մասի վրայ, որի տակ պարսկական հողն է գտնւում.

«Ընդէ՞ր եղեր իմ թշնամի, Արշակ արքայ Հայոց», — հարցնում է յաղթական Շապուհը՝ պարտուած ու կալանաւոր հայ թագաւորին.

«Մեղայ քեզ և յանցեայ, — մեղանչելով ասում է հայոց արքան. ... Ահաւասիկ ծառայ քո ի ձեռս քո կամ. զինչ և պէտք է քեզ, արա զիս, զինչ և կամ իցէ. սպան զիս, զի ես ծառայ քո առ քեզ կարի յանցաւոր եմ, մահապարտ եմ».

Ապա, Արշակից գաղտնի ու Շապուհի հրամանով, կալանաւոր հայոց արքային սենեակի այդ մասից տեղափոխում եւ կանգնեցնում են յատակի այն մասի վրայ, որի տակ փռուած է Հայաստանից բերուած հողն և ուր ցանուած է Հայաստանի ջուրը.

Կանգնելով այդ հողի վրայ, վայրկենապէս փոխւում է Արշակը և սկսում Շապուհի հետ խօսել հետևեալ ըմբոստ և յուզիչ լեզուով.

«Ի բաց կաց յինէն ծառայ չարագործ տիրացեալ տերանցն քոց. այլ ոչ թողեց զքեզ և որդւոց քոց զվրէժ նախնեաց իմոց, և զմահն Արտաւանայ արքային. Զի այժմիկ ձեր ծառայքդ զմեր տերանց ձերոց զբարձ կալեալ է. բայց ոչ թողից, եթէ ոչ տեղիդ մեր առ մեզ եկեսցէ».

Այսպէս առաւօտից մինչև երեկոյ չորս անգամ է փորձում Շապուհը Արշակին և միշտ էլ նոյն պատկերն է կրկնւում. երբ կալանաւոր արքան սենեակի պարսկական գետնի վրայ է կանգնած՝ «եւ կայր, ի

պղջումն դառնայր», երբ նա կանգնած է սեփական հայկական գետնի վրայ՝ «խրոխտացեալ ամբարտաւանէր» (Փ. Բիւզանդ, 1914, Վեն., էջ 213—5)։

Ահա ճիշդ այսպէս, երբ հայ ժողովրդի հատուածները, հեռաւոր գաղութներն ու տարբեր քաղաքական հոսանքները եկան ու խմբուեցին հա՛յ հողի վրայ ու հայկակա՛ն կենդանի գործի շուրջ, նրանք եւս, Արշակի նման, փոխուեցին — զգացումների եւ ըմբռնումների, ի հարկէ, բոլորովին ուրոյն աշխարհում — և սկսեցին ուրի՛շ կերպ դատել, ա՛յլ խօսք հնչեցնել ու տարբե՛ր ձեւով գործել։

Նրանք հայացան, հարազատ դարձան նրանց՝ երկիրն ու ժողովուրդը ու հարազատ դարձան նաև իրենք՝ երկրին ու ժողովրդին։

Պատմութեան համար անժխտելի փաստ է այլեւս, որ 1920-ին Հայաստանի մէջ նախորդ երկու տարիների ընթացքում ամփոփուած հայ ժողովուրդն ու նրա ծոցում գործող քաղաքական հոսանքներն այլեւս այն չէին, ինչ մենք ժառանգութիւն ստացանք մեր յարութեան չքնաղ արշալոյսին, 1918-ի Մայիս 28-ին։

1918-ին մենք ստացանք մի փոքրիկ կտոր հողամասի վրայ հատուածներ, դաւանանքներ և ուրոյն տեսակի կուսակցամոլներ ու կուսակցատեացներ, իսկ 1920-ին, ընդամէնը մօտ երկու տարի յետոյ, ժառանգութիւն ձգեցինք մի համեմատաբար աւելի ընդարձակ երկիր, որ Հայաստան էր, իսկ այնտեղ ապրող ժողովուրդն էլ՝ հայ։ Հայ՝ իր մտածումներով, ըմբռնումներով ու երազներով, հայ՝ իր ամբողջութեան մէջ։ «Ներքին թուրքը», ըստ հայ շնորհալի հրապարակախօս սոց.-դեմոկրատ Դ. Անանունի խօսքի, չքանում էր հայ մարդու հոգուց և կուսական գետին պատրաստում մաքրող, զտող ու վերածնող ա-

զա՛տ հայրենիքի և ազա՛տ ժողովրդի փրկարար գաղափարների համար։

Հոգեկան այս հիասքանչ վերածննդին անհաղորդ չմնաց Բախշին։ Նա՛ եւս փոխուեց։ Նա նոյնպէս ջերմօրէն փարեց մեր երկրի ու ժողովրդի ազատագրութեան գաղափարին, սիրեց մեր մանուկ հանրապետութիւնը, սիրեց Նրա նորածիլ ազատութիւնն ու անկախութիւնը, կարծես անկախ դարձաւ նաև ինքն իր հոգով ու մտքով, անկախ՝ կաշկանդող դոգմաներից ու թունաւորող յուշերից, և հայ հայրենիքի լացն ու ծիծաղը դարձրեց իր անձնական վշտի ու ուրախութեան աղբիւրը։ Սեփական հայրենիքում, հայ հողի վրայ ու հարազատ ժողովրդի հետ, — մի անգամ էլ կրկնենք, — նա կարծես դարձաւ մի բոլորովին տարբեր մարդ։ Այլեւս Իշխանեանի խօսքի մէջ ու գրչի ծայրին հին ու ծանօթ թոյնը չկար Դաշնակցութեան դէմ։ Եթէ դիւրին էր հեռաւոր հորիզոններից Դաշնակցութեան կենդանի գործը քննադատել, ապա չափազանց դժուար էր այդ նոյն քննադատող — և՛ դատող և՛ դատապարտող — ոգուն հաւատարիմ մնալ, երբ երկու հակառակորդ ուժեր դէմ առ դէմ էին եկել եւ խմբուել միեւնոյն հորիզոնի տակ ու միեւնոյն կենդանի գործի շուրջ։

Այս հանգամանքը է՛լ աւելի թունաւորեց բոլշեւիկ բանաւորներին, որոնք հայ սոցիալ-դեմոկրատիայի հայ կառավարութեան ցոյց տուած պաշտպանութեան մէջ տեսան իրենց սնանկութեան մէկ աւելորդ ապացոյցը։ Իշխանեանը եկաւ Հայաստան և լծուեց պետական շինարար աշխատանքի։ Նրան յանձնուեց Հանրապետութեան վիճակագրական բաժնի տեսչութիւնը, որի համար նա ունէր թէ՛ տեսական պաշար ու թէ՛ գործնական փորձառութիւն։ Նա գոհ էր իր վիճակից։

երջանիկ էր, որ իր երկրի մէջ է, իր կառավարութեան պաշտօնեան և իր ժողովրդի հետ, թէև գրեթէ կիսաքաղց, թէև զուրկ կեանքի և աշխատանքի ամէնէն տարրական յարմարութիւններից։ Ցերեկը նա գործի էր, իսկ իր ազատ ժամերին՝ անքթիթ պահակը— խօսքով ու գրչով— իր հայրենիքի մանուկ անկախութեան։

Ճշմարտութեան արժանի տուրքը տալով, բերենք Բախչու թարմ շիրմի առջև մեր անկեղծ խոստովանութիւնն և ընդունենք, որ քչերը մեզնից այնքան վառ սիրով, այնքան վճռական կամքով ու այնքան զօրաւոր ձևով պաշտպանեցին մեր նահատակ ժողովրդի ու արնաքամ հայրենիքի ազատութիւնն ու անկախութիւնը, որքան Բախչին։ Նա ռազմադաշտի բազուկ չէր, սակայն նա ունէր ազդու խօսք ու հատու գրիչ, որ ամբողջութեամբ ի սպաս բերաւ իր հայրենիքին։ Աշխատելու մի տարօրինակ սէր և ընդունակութիւն ունէր այդ կենսալիր մարդը, որի բացառիկ առողջութիւնը մի յաւելեալ գեղեցկութիւն էր ինքնին։ Արտակարգ եռանդի ու կորովի տէր, նա կարող էր լծուել ամէնէն յոգնեցուցիչ ու մաշող աշխատանքի, միայն թէ այդ աշխատանքը կապուած լինէր իր սիրոյ տարերքը դարձած գրչի ու կենդանի խօսքի հետ։ Ապացոյցն, երբ գրուի Իշխանեանի ընդարձակ կենսագրականը, անշուշտ հարկ պիտի լինի կազմել մի հարուստ ցուցակ, ուր կը տեղաւորուեն նրա ստուարաթիւ յօդուածների, ուսումնասիրութեանց ու գրական աշխատանքների անունները։ Մեր թուած գործերից դուրս՝ նա առանձին գրքոյկներով հրատարակել է. «Թիւրքիայի ապագան», «Աշխատանքի եւ աշխատաւորի գաղափարները Ադա Նեգրիի, Յ. Յակոբեանի, եւ Շ. Կուրղինեանի բանաստեղծութիւնների մէջ», «Հայ-վրացա-

կան յարաբերութիւնների պրոբլեմը» (*նաեւ ռուսերէն*), «Գերմանական պրոֆեսորը գերման ազգայնականութեան մասին. փաստեր եւ մերկացումներ» (*ռուսերէն*), «Գերմանիայի եւ Թիւրքիայի տնտեսա-քաղաքական փոխյարաբերութիւնները», «Աղետի եւ տառապանքի աշխարհից». (*Այց Թիւրքահայ փախստականներին*), «Դիմակները պատռուած» (*Ովքեր են բոլշեւիկները*), «Հակայեղափոխական շարժումը Անդրկովկասում» (*Մարտի անցքերի առիթով*), «Վրացական սոցիալ-դեմոկրատիայի մետամորֆոզան» (*Պատճառները և երեւոյթի քննադատութիւնը*), «Ազգային պրոգրեսը եւ դասակարգային շահերը»։ *Իսկ առանձնապէս պէտք է յիշատակել Իշխանեանի երկու մեծածաւալ ու արժէքաւոր գործերը, որոնցից մէկը՝* «Միլիտարիզմի եւ իմպերիալիզմի զարգացումը Գերմանիոյ մէջ» (*Պատմատնտեսական ուսումնասիրութիւն. Պրոֆ. Տուգան-Բարանովսկու յառաջաբանով*) *լոյս տեսաւ* 1917-*ին*, *Պետրոգրադի մէջ և ռուսերէն լեզուով, իսկ միւսը՝* «Արտասահմանեան տարրերը ռուսական տնտեսութեան մէջ», *հրատարակուեց գերմաներէն լեզուով*, 1913-*ին* (*գնահատուած ռուս անուանի տնտեսագէտ նոյն Տուգան-Բարանովսկու կողմից, «Րեչ»-ում*)։

Մենք բնաւ սպառելու համար չէ, որ տալիս ենք այս աշխատանքների մօտաւոր թիւն ու անունները։ Մեր նպատակն է գէթ հարեւանցի ակնարկով ցոյց տալ, թէ որքան բեղուն է եղել Իշխանեանի գրիչը և որքան նա սիրահար մտաւոր աշխատանքի։ Ցաւով չենք կարող այստեղ չարձանագրել, որ նրա մէկ փաստալից աշխատանքը (բոլշեւիկեան անդրանիկ իշխանութեան դաժանութեանց ու աւերածութիւնների, բռնութեանց և արնահոտ քաղաքականութեան մասին), նահանջի ժամանակ, Երեւանից դէպի Զանգեզուր տա-

նող ճանապարհին, թեռնակրի յանցանքով անհետ կորչում է։

Արդարօրէն նաև առաջնակարգ հռետորի համբաւ ունէր վաստակած Բախչին։ Ամբիոնն ու բաղմութիւնը արտակարգ կորով էին ներշնչում նրան և իր խօսքն ու քարոզը դարձնում աւելի հմայիչ ու վարակող։ Նա սիրում էր ամբոխը, սիրում էր կենդանի ու եռուն կեանքը և կարողանում էր ամբիոնն ու գրիչը հաշտեցնել իրար հետ, ժամանակ գտնելով թէ՛ մէկի և թէ՛ միւսի համար։

Նա յորդորում էր շարունակ, որ հայ ժողովրդի հատուածները, տարբեր քաղաքական թեւերն ու հոսանքները գէթ ժամանակաւորապէս մէկդի նետեն իրենց ճղճիմ հաշիւները ու ներհակ հասկացողութիւնները և հայրենիքի անկախութեան սպառնացող (թուրք և ռուս) մահացու վտանգի հանդէպ՝ միանան այդ նոյն հայրենիքը կորստից փրկելու նուիրական գաղափարի շուրջ, մէկտեղեն իրենց ճիգերը և միասնաբար լծուեն ընդհանուրի գործին։

Թերևս աւելորդ չլինի յիշատակել այստեղ մի հատուած միայն այն նամակից, որ Իշխանեանը, պըտտելով մի շարք գաղութներ, Բաղդադից Յուլիս 3-ին (1921) գրում էր Ս. Վրացեանին. «Յանուն հայ ժողովրդի ազատագրութեան սրբազան գործի, յանուն յեղափոխական ու սոցիալիստ մարդու դաւանած բոլոր նուիրական գաղափարների խնդրում եմ ձեր միջոցով ձեր բոլոր ընկերներին ընդառաջումների և զիջումների անկեղծ քայլեր արէք։ Ես ինքս եղել եմ ձեր կուսակցութեան ամենաթունդ հակառակորդը տասնեակ տարիների ընթացքում։ Բայց ես և իմ կուսակցութիւնը ունեցել ենք և շարունակում ենք ունենալ այն քաղաքական գիտակցութիւնը և պետա-

կան մտածողութիւնը, որ մահացու աստիճան ընդհանուր ճգնաժամի վայրկեաններին քաղաքական հակադիր հոսանքները և նրանց գաղափարախօսները պիտի գործեն ու քայլեն ոչ թէ իրար բաժանող ծրագրային տակտիկական կէտերի և ձգտումների ուղղութեամբ, այլ իրար մօտեցնող ու միացնող հրատապ լոզունգների և անյետաձգելի պահանջների ոգով.

«Երանի ամէն մի հայ քաղաքական դէմք ու կուսակցութիւն ապրէր ու գործէր Պլեխանովեան այս անմեռ աւանդի ուղղութեամբ. Մեր ջլատումից ու գժտութիւնից օգտւում են, ինչպէս և միշտ օգտուել են թշնամիները — ներկայ դէպքում բոլշևիկեան իմպերիալիզմը եւ եւրոպական անբարեհաճ դիւանագիտութիւնը»։

Ահա թէ ի՛նչ կերպ էր դատում և ի՛նչ ոգով գըրում այն մարդը, որ տասնեակ տարիների ընթացքում եղել էր «ամենաթունդ հակառակորդը» Հ. Յ. Դաշնակցութեան.

Այսպէս էր նաեւ երկրի մէջ.

Քաղաքական այս ողջմտութիւնը, այս իմաստուն թելադրանքը գալիս էր երկրից, հայրենի հողից ու ժողովուրդից, ուր և որի հետ ապրել էր իր կեանքի վերջին տարիները հանգուցեալ Իշխանեանը. Մի իմաստութիւն, որ անհաղորդ մնաց բոլոր նրանց, որոնք երբեք չեղան այդ նոյն հայրենիքի մէջ, որոնք չշնչեցին նրա մաքուր օդը, չտեսան հայ ժողովուրդի լացն ու ծիծաղը ու չապրեցին հայութեան բաժին ընկած դառնութիւններից և որևէ մէկը.

Դաժան է հայ ժողովրդի ճակատագիրը.

«Դժբախտի միակ բարեկամն է մեռնում,
«Բախտաւորի թշնամիներն են կոտորւում», —

ասում է բանաստեղծը.

Մեր վերածնուող հայրենիքի լաւագոյն բարեկամներից էր դարձել նաև Բախշի Իշխանեանը։

1921-ին Ապրիլ 12-ին, Երեւանի Մեծ Գաղթից ուղիղ ինը օր անց, Քեչիչքենդ գիւղից, Հայաստանի տարագիր կառավարութեան համաձայնութեամբ, Իշխանեանը որոշում է անցնել Եւրոպա և այնտեղ՝ խօսքով ու գրչով պաշտպանել Հայ Դատը.

Նրա թղթերի մէջ, «Հ. Հ. Հայրենիքի Փրկութեան Կոմիտէ»-ի մի փոքրիկ կտոր պաշտօնաթերթիկի վրայ (Նախագահ՝ Ս. Վրացեանի ստորագրութեամբ) հետևեալ երկտողը կայ գրուած.

«Ընկ. Բ. Իշխանեանը մեկնում է Պարսկաստանի վրայով Եւրոպա։ Սրանով խնդրում եմ Հայաստանի Հանրապետութեան պաշտօնատար անձանց եւ բարեկամներին ցոյց տալ նրան հարկ եղած աջակցութիւնը։ Ընկ. Բ. Իշխանեանին յանձնարարւում է արտասահմանում ներկայացնել Հայաստանի ներկայ վիճակը, ինչպէս նաև պրոպականդ մղել յօգուտ Հայաստանի Հանրապետութեան»։

Ահա այս առաքելութեամբ Իշխանեանն անցնում է Պարսկաստան, իր երկար ճանապարհին ընկած բոլոր հայաբնակ վայրերում տալիս է դասախօսութիւններ, պարզում մեր հայրենիքին հասած աղէտի իսկական պատճառները յուսադրում ժողովրդին, փորձում ամէն տեղ հայութեան ծոցում պայքարող հակադիր հոսանքները «մահացու աստիճան ընդհանուր ճգնաժամի վայրկեանին... իրար մօտեցնելու, միացնելու հրատապ լոզունգների ու անյետաձգելի պահանջների ոգով».— Եւ դեռ իր առաքելութեան գլխաւոր վայրը՝ Եւրոպա չհասած՝ ճակատագրի մէկ դաժան հար-

ուածով ընկնում է Բախչին, հեռաւոր ու անծանօթ Սուաքիմի մէջ, ընդմիշտ փակելով իր աչքերը։

Ցաւէտ լռում են Բախչու խօսքն ու գրիչը, որոնցից այնքան սարսափում էին բոլշեւիկ բորենիները։

Սակայն չի լռում, չի լռել ու չպէտք է լռի ո՛չ յառաջադէմ ու մարտնչող մարդկութեան, ո՛չ ազատատենչ հայ ժողովրդի ու ո՛չ էլ պայքարող Իչխանեանների հուժկու բողոքի ձայնը բռնակալութիւններից ամէնէն անարգի՝ ռուսական արիւնոտ դահճապետութեան դէմ։

Պիտի փլի ի վերջոյ մեր օրերի անարգ սարկապետութեան այս անիծակուռ չէնքը և առատօրէն հոսած հազարաւոր անմեղ զոհերի արիւնից բոսոր ու հրավառ գոյն առած նրա փլատակների վրայ պիտի բարձրանայ ազատութեան այն չքնաղ շէնքը, որի համար պայքարեցին և ընկան Իչխանեանները։

Ափսո՜ս մեր հակառակորդ Բախչին։

Նրա անուան շուրջ շարունակ ծփացել է հակադիր ու խաչաձեւող զգացումների մի ամբողջ աշխարհ։ Համակրող ու չհամակրող, սիրող ու չսիրող, թշնամի ու բարեկամ շարունակ զարնուել են իրար և նրան կամ վեր հանել կամ նետել դէպի վար։

Սակայն այսօր, յաւիտենապէս հանգիստ առած նրա թարմ շիրիմի առջեւ, մարդկայնօրէն այլեւս անհնար է չմիանալ մէկ ընդհանուր ու մաշող զգացումի մէջ.

— Անկարելի է չցաւել Բախչու մահը, չողբալ նրա կորուստը։

Իր բանտային յուշերի մէջ, խօսելով այն ծանր ապրումների մասին, որ ունեցել է հնարաւոր մահուան հանդէպ, Բախչին գրում է.

«Բայց յանկարծ վերջին ժամերին (կացնահարի երեւալուց առաջ. Վ. Ն.) մի փիլիսոփայող միտք կար-

ծես խոստովանանքի նման մի բան է փսփսում ական-
ջիս. «Ոչինչ քո սոսկ ֆիզիքական մահկանացուն. զր-
կանքներով ապրող, վայելքներ չտեսած, անձնական
երջանկութիւն երբէք չունեցած մի կեանք կարող է
դադարել գոյութիւն ունենալուց և հանգիստ գտնել
յաւիտենականութեան սառը գրկում. Ափսոս է միայն,
որ առնական կենսալիր հասակում, գործելու համար
ծնուած և գործունէութեան համար եռացող մի կեանք՝
լի անսպառ եռանդով և տոգորուած անհուն սիրով իր
գործունէութեան ասպարէզի համար, — այդքան վա-
ղաժամ պիտի չքանայ այս աշխարհից»։

Ի՞նչ կարելի է աւելացնել այս վարակող, այս-
քան անկեղծ, արդար ու ճշմարիտ տողերին։

Այո՛, մի յուզիչ դրուագ է այն կեանքն ու մահը,
որ ունեցաւ հայ եղերաբախտ գործիչը։

Ափսո՜ս մեր հակառակորդ Բախշին։

Վ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

Asoc. Cult. Armen...
„RAFFI"
pers. juridică
Com. cultural...
„ՌԱՖՖԻ"

ԵՐԿՈՒ ԱՄԻՍ ԲՈԼՇԵՎԻԿԵԱՆ ԲԱՆՏՈՒՄ

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

Առանց մի խօսքով անգամ անդրադառնալու բոլշեւիկների մուտքի կամ Հայաստանը Խորհրդային դառնալու նախօրեակին տեղի ունեցած քաղաքական իրադարձութիւնների վրայ, — դրանց կը նուիրուի մի յատուկ գրուածք, — ես ցանկանում եմ սոսկ գրի առնել յիշողութիւնները մի բանտարկեալի, որ դժբաղդութիւն է ունեցել բոլշեւիկների տիրապետութեան մղձաւանջի օրերին երկու ամիս բանտ նստելու, չորս պատերի արանքում կաշկանդուած։ Ես պիտի աշխատեմ լուսանկարչական ճշտութեամբ պատկերացնել ընթերցողների առաջ այն բոլորը, ինչ զգացել ու ապրել եմ, ինչ տեսել ու գիտել եմ, առանց մազաչափ աւելացնելու կամ չափազանցնելու, առանց միտումնաւոր գոյներով խտացնելու։

Ընդհակառակը, ես վախենում եմ, որ չկարողանամ հարազատ մնալ իրականութեան։ Վախենում եմ, որ անկարող լինեմ իրականութիւնը իր ողջ բովանդակութեամբ ու եզրերով պատկերացնել։ Վաղուց այն կարծիքին եմ, որ բոլշեւիկեան իրականութիւնը գերազանցում է ամեն մի նկարագրական ոյժին ու տա-

դանդին, թէկուզ վերջինս հասնէ մինչ կիկերոնեան պերճախօսութեան եւ Զօլայի գրչի կատարելատիպ աստիճանին։

Եթէ իմ բանտարկութիւնը և բանտային խոհերն ու յիշողութիւնները զուտ անձնական հանգամանքի բնոյթ կրէին, ես պիտի հրաժարուէի ընթերցողներին հրամցնելու այսպիսի մի գրուածք, չնայելով ընկերներիս և ծանօթներիս բուռն թախանձանքին՝ որ առաջ նետել հրապարակի վրայ գրուածքս։

Բանտը իր սեփական ինքնապարփակ կեանքը ունեցող մի անձուկ աշխարհ է, որի խորօրինակ առանձնայատկութիւնների մէջ արտացոլում է տուեալ երկրի պետական կառուցուածքը եւ կառավարական ռէժիմի էութիւնը։

Այն երկրներում, ուր վաղուց իրականացել են ժամանակակից ռամկավարութեան պահանջած բոլոր քաղաքացիական ազատութիւնների սկզբունքները եւ ուր ազատ մտքի ու խօսքի, գրաւոր ու բանաւոր քարոզչութեան իրաւունքները տարրական բարիքներ են դարձել հանրութեան համար, այդպիսի երկրներում բանտերը մոռացուած հաստատութիւններ են միայն, ուր խմբուած քրէական յանցապարտները, որպէս այդպիսիք, որպէս հանրավնաս տարրեր, ոչ ոքի չեն հետաքրքրում, եւ նրանք բանտարկուած ու դատապարտուած են ոչ միայն պետական օրէնքներով, այլեւ հասարակական մտքի ու խղճի արդար թելադրանքներով։

Իսկ այն երկրներում, ուր իշխում է տակաւին բռնակալութիւնը իր վատթարագոյն ձեւերով, հալածւում ու խեղդւում են քաղաքացիական բոլոր կարգի ազատութիւնները, տիրող չնչին փոքրամասնութիւնը ուժով բռնանում է բացարձակ մեծամասնութեան մտքի, խղճի, կամքի ու կարծիքի վրայ, ահա

այդպիսի երկրներում բանտերը բռնակալութեան յենարաններ կազմող կարեւորագոյն ինստիտուտներ կամ հաստատութիւններ են կառավարական քաղաքականութեան տեսակէտից, և յաւիտենական անէծքի ու նախատինքի դատապարտուած դժոխավայրեր՝ ճըն-շուած հանրութեան ազատատենչ ձգտումների տեսակէտից։ Եւ այդ դժոխքավայրերը, ուր հազարներով տառապում ու փթում են ըմբոստ քաղաքացիութեան, ապստամբ ռամկավարութեան լաւագոյն գաղափարախօսներն ու մարտիկները, մարմնացնում են իրանց մէջ տիրող բռնակալ ռէժիմի բոլոր յատկանիշները։

Ռուս միապետութեան օրով բանտը և բանտային կեանքի նկարագիրը լաւագոյն չափանիշն ու թերմոմետրն էր ցարական բիւրոկրատիայի գործելակերպի էութեան։ Ռուսական նորագոյն կոմիսարապետութեան օրով բանտը եւ բանտային անցուդարձերի վարքագիրը լաւագոյն դոկումենտն է բոլշեւիկեան ժանդարմերիայի սխրագործութիւնների մասին։ Առաջ ռուս հասարակական մտքի ու շարժման պատմագիրները խորին ուշադրութեամբ թերթում և ուսումնասիրում էին այն յիշատակարանները, նամակները, յօդուածներն ու ինքնակենսագրութիւնները, որ թողել են հին ռէժիմի օրով Պետերբուրգի Շլիսելբուրգ և Պետրոպավլովսկ կոչուած մարդակուլ բանտերում հիւծող, ողջակիզուող զոհերը։ Այժմ Ռուսաստանի ամեն մի ծայրերկիր, ամեն մի քաղաք ու գաւառ ունեն իրանց բազմաթիւ Շլիսելբուրգերն ու Պետրոպավլովսկները — բոլշեւիկեան ամեն մի բանտ վաղուց վառակել է ցարական տխրանուն բերդերի պատմական հռչակը. և շաբաթների ու ամիսների ընթացքում պատճառել է աւելի շատ զոհեր, քան ցարական բանտը

տարիների և տասնեակ տարիների ընթացքում։ Եւ բոլշեւիկեան բանտից հրաշքով ազատուած ամէն մի մարտիկ կամ գաղափարախօս բանտարկեալի յիշողութիւնները թանկագին նիւթեր պիտի մատակարարեն այն հասարակագէտին ու պատմագրին, որոնք շնորհակալութեան կոչուած պիտի ստանձնեն՝ աւերումների տխուր փորձութեան ծանր խաչը կրող դժբախտ երկրի ու ժողովրդի վիճակը ուսումնասիրելու։

Ահա ինչ նկատումներով եմ հրապարակի վրայ դնում այս գրուածքը՝ իմ բանտային խոհերի և յուշերի վերաբերեալ։

I

1920 թուականի դեկտեմբերի 2-ն էր, հինգշաբթի օրը։ Առաւօտեան ժամը 9-ին, ըստ սովորականին, ուղեւորւում եմ դէպի պաշտօնատեղիս — պետական ընդհանուր վիճակագրութեան գլխաւոր բաժանմունքը։ Ճանապարհին տեսնում եմ այս՝ ու այն տեղ խմբուած մարդիկ, որոնք ուսերը թօթուելով հաղորդում էին իրար պատմական տխուր վայրկեանի չարագոյժ նորութիւնները։ Դեկտեմբերի 1-ի գիշերը Դաշնակցութեան պարլամենտական ֆրակցիայի նիստում քննել և ընդունել էր Խորհրդային Ռուսաստանի միսիայի գլխաւոր Լեգրանի մի օր առաջ (նոյեմբեր 30-ին) ներկայացրած վերջնագիրը՝ Հայաստանը խորհրդային դարձնելու, ուրիշ խօսքով՝ իշխանութիւնը բոլշեւիկներին յանձնելու հարցի նկատմամբ։ Ես գիտէի արդէն անխուսափելիօրէն տեղի ունեցած այդ տխուր փաստի մասին, բայց մի քանի մանրամասներ հաղորդեց ինձ Վարդգէս Ահարոնեանը, որը առաջինը հանդիպեց ինձ փողոցում։

Մի քանի րոպէ անցած հանդիպում եմ Համբարձում Տէրտէրեանին՝ ֆինանսների նախարար, Ս. Վրացեանի կառավարութեան անդամ։

— Ես զարմանում եմ, որ դու դեռ այստեղ ես և հանգիստ քայլում ես փողոցով. աշխատիր այժմ և եթ հեռանալ Երևանից,— եղան նրա ինձ ուղղած առաջին խօսքերը։

Ես հասկացայ արդէն բանն ինչումն էր։ Նոյն դեկտեմբերի 1-ի գիշերը կամ 2-ին, շատ վաղ առաւօտեան, զանազան խմբերով հեռացել էին Երևանից բազմաթիւ կուսակցական պատասխանատու գործիչներ դէպի Վրաստանի սահմանները, ոմանք էլ պատրաստւում էին նոյն օրը թողնել քաղաքը։ Ես շատ լաւ գիտէի. որ բոլշեվիկների կողմից ամենախիստ վտանգւածներից մէկը ես էի, որովհետև ոչ ոք այնքան վաղուց— փետրուարեան յեղափոխութեան սկզբի օրերից սկսած— գրաւոր ու բանաւոր այնպիսի բուռն ու սիստեմատիկ պայքար չի մղել նրանց դէմ, ինչպէս ես եմ մղել 1917 թ. ի վեր Պետերբուրգում, Բաքւում, Թիֆլիսում, Երևանում և հայկական այլ գաւառներում։ Ես խորապէս գիտակցում էի, որ իմ գաղափարապէս սնանկ ու տկարամիտ հակառակորդները ուրիշ ոչ մի միջոց չգիտեն գործադրել իրանց գաղափարային-քաղաքական ախոյեանին լռեցնելու համար, բայց եթէ բռնութիւն և մահապատիժ, միշտ և միայն բռնութիւն, բիրտ ոյժի գործադրութիւն։ Եւ եթէ ես, այնուամենայնիւ, դեռ չէի հեռացել Երևանից, այդ եղել է ոչ թէ անմիտ յամառութեան կամ արիւնռուշտ թշնամու ձեռքն ընկնելու դոն-քիշոտական հերոսութեան հետևանքով, այլ ուրիշ հանգամանքի շնորհիւ։

Նախ պիտի բացէ ի բաց ասեմ, որ հեռացող խմբ-

թերից և ոչ մէկը ինձ ոեւէ բանով չիմացրեց գնալու մասին (հանդիպման տեղը, ժամը և այլ պարագաները)։ Նոյն իսկ Տէրտէրեանի նախազգուշացումից յետոյ, երբ ես նրա ցուցմունքով դիմեցի մէկին, միւսին (օր. լուսաւորութեան նախարար Գէորգ Ղազարեանին և ներքին գործերի նախարար Սարգիս Արարատեանին), որոնք պատրաստւում էին նոյն օրը խմբերով հեռանալ, և իսկապէս հեռացան քաղաքից. նոյն իսկ այդ օրը ապարդիւն անցան իմ դիմումները. լսեցի միայն զանազան չինծու ատարկութիւններ։ Ես, անշուշտ, չէի վշտանում և չէի մեղադրում մէկին կամ միւսին։ Ես տեսականօրէն գիտէի, որ վտանգի վայրկեանին փախչող մարդը օժտւում է կենդանական եսականութեան բոլոր հակումներով, ձգտելով փրկել միայն իր գլուխը— հրամայականին։ Ինքս նախաձեռնող լինել մի այլ խմբի կամ առհասարակ կազմակերպել փախուստ— պարզապէս անկարող էի. Ես գործնական մարդու այդ շնորհքը չունեմ, մանաւանդ որ անծանօթ էի տեղին, ճանապարհներին և այլն։

Բայց կար և մի այլ հանգամանք։ Ես շարունակ տատանւում էի այս երկընտրանքի առաջ. փախչե՞լ արդեօք, թէ՞ թագնուել Երևանի մի գաղտնի անկիւնում, ինչպէս արել էին ոմանք սկզբում, և հնարաւորութիւն ունենալ մօտիկից գիտելու բոլշեվիկների արարքները գժբախտ Հայաստանում։ Այդպիսի գաղտնի անկիւն գտել էր արդէն իմ քարտուղարը քաղաքի հեռաւոր խուլ թաղամասում— Կոնդ անունով։ Եւ ես վերջնականապէս որոշեցի քաղաքում մնալ, առաւելեւս, երբ պակասում էին հեռանալու համար բարեյաջող պայմանները։ Ես մնացի անդրդուելի այդ որոշման մէջ նոյն իսկ այն ժամանակ, երբ սպայ Դեվոյեանը հաղորդեց ինձ հետեւեալ սպառնական լուրը (նոյն օ-

րը, ժամը 12-ին, կառավարական շէնքի մօտ, արտաքին գործերի նախարարի օգնական Մովսէս Գեւորգեանի ներկայութեամբ).

— Ինչո՞ւ դուք դեռ այստեղ էք,— դիմեց նա ինձ ահարեկ շեշտերով.— Երէկ գիշեր ինձ մօտ էր խորհրդային միսիայի ծառայողներից մէկը, որը հաղորդեց ինձ, որպէս գաղտնիք, որ միսիան որոշել է առաջին հերթին ձերբակալել Արտաշէս Չիլինգարեանին (Ռուբէն Դարբինեանին) և Բախչի Իշխանեանին, ու անմիջապէս գնդակահարել նրանց: Չիլինգարեանը հեռացել է արդէն. իսկ Աստուծոյ շտապեցէք դուք էլ թողնել քաղաքը:

Այդ խօսքերը, խոստովանում եմ, վերահաս երկիւղի մի սառը դողով ցնցեցին իմ ջղերը: Բայց չգիտեմ ինչու իմ թողնելու վայրը թւում էր ինձ նոյնքան ապահով, որքան, օրինակ, Թիֆլիս ապաստանելը, առանց մի րոպէ հաշիւ տալու ինձ, թէ մինչեւ երբ և ինչպէս ու ապէս թողնուել կարելի է:

Տէրտէրեանը ևս ակնարկել էր ինձ՝ աւելի մեղմ ու անորոշ ձեւով, նոյն միտքը: Նա ասաց, որ Լեգրանի միսիան արամադրուած է առանձնապէս խիստ լինելու դէպի Հայաստանի սոցեալ դեմոկրատական կուսակցութիւնը, յատկապէս դէպի ինձ: Նա ասաց նաև այն, որ Լեգրանի միսիայի հաստատուելով Հայաստանի խորհրդային իշխանութիւնը միայն սկզբում կը լինի խիստ դէպի առանձնապէս իր վտանգաւոր քաղաքական հակառակորդները: Յետոյ արդէն, մօտ երեք շաբաթ անցնելուց, երբ հեռզհետէ կ'ամրապնդուի նոր իշխանութիւնը, ընդհանուր ներումն կը շնորհուի բոլորին, այնպէս որ Հայաստանից հեռացածներն իսկ կարող կը լինեն վերադառնալ:

Հ. Տէրտէրեանը նոյն թուականին Մոսկուա ա-

ռաքուած Շանթի պատուիրակութեան անդամներից մէկն էր, որ Հայաստանում ես շարունակում էր կառավարութեան կողմից բանակցութիւններ վարել Լեգրանի միսիայի հետ։ Այդ իմաստով հաւատում էի նրա ասածներին, իբրեւ առաջին աղբիւրից ծագած տեղեկութիւնների։ Բայց չէի հաւատում այդ նոյն առաջին աղբիւրի անկեղծութեանը։ Նոյն կարգի խաբուսիկ հաւատիացումներ անում են նրանք ամեն մի նոր նուաճած վայրում. նոյն կերպ վարւեցին նրանք Բաքւում և առհասարակ Ադրբէյջանում. Մոսկուայում թխած մի հեռագրով յայտարարելով, որ դեռ մայիսին (1920 թ. Բաքուն ընկել էր նրանց ձեռքը նոյն թւակ. ապրիլի 27-ին) կը լինի ընդհանուր ներումն բոլոր բանտարկուածների։ Փաստորէն ամիսներ շարունակ, և մասամբ մինչ օրս, նստեցին հին բանտարկեալները, տեղի ունեցան նորանոր ձերբակալութիւններ և գնդակահարեցին տասնեակներով անմեղ զոհեր։

Վա՜յ նրանց, որոնք չեն հասկանում բոլշեվիզմը և չեն ճանաչում բոլշեւիկներին։

Ինձ մնում էր պատրաստել եւ տեղափոխել Կօնդը։ Առանց այն էլ ես պիտի թողնէի իմ սենեակը, պիտի զիջէի այն Յովհ. Քաջազնունին և տեղափոխուէի ուրիշ բնակարան։ Բայց ես հարկ չունէի շտապելու։ Մինչեւ դեկտեմբերի 2-ի գիշերուայ ժամը 12-ը երկրի տէրը պիտի մնար հայրենի իշխանութիւնը և միայն յիշեալ ժամին Վրացեանի կառավարութիւնը պիտի զիջէր իր լիազօրութիւնը օտարներին։ Պայմանաւորուած էր, որ մինչեւ վերջինները— այդ ժամանակ Բաքու գնացող Մոսկուայի ներկայացուցիչ Ստալինի հաճութեամբ նշանակուած հայ գործակալները— Դիլիջանից Երեւան հասնելը իշխանութեան

գործերը պիտի վարէին Դրօն եւ Սիլինը՝ Հեգրանի միսիայի խորհրդականներից մէկը։

Բայց ահա ժամը 6-ին լուր է հասցնում ինձ ընկերս՝ Աշոտ Մելիք-Յովսէփեան (ներքին գործերի նախարարութեան միլիցիական բաժնի պետ), որ Հեգրանի միսիան պահանջել է Վրացեանից աւելի վաղ՝ երեկոյեան ժամը 7-ից, զիջել իրան իշխանութեան մի քանի իրաւունքներ՝ նախնական ձերբակալութիւններ կատարելու համար։

Արդէն ժամը 7 ու կէս էր։ Ես և քարտուղարս պայուսակները ձեռքներիս ցած էինք իջնում մեր տան սանդուղքներից։ Դեռ դուռը չհասած, լսում ենք մի ատօմօբիլի ձայն մեր փողոցում։ Յանկարծ կանգնում է մեր տան առաջ այդ ատօմօբիլը և ոչ պակաս, քան հինգ զինուած երիտասարդներ իջնում և մօտենում դռան։

— Ահա նրանք են, Վարդան, ես ընկայ ծուղակ,— ասացի քարտուղարիս։

Դուռը բացւում է և ներս են խուժում անկոչ հիւրերը։ Առաջինը մտնում է ինձ շատ լաւ ծանօթ մէկը, 1918 թ. Բաքւում գեներալ Բաղրատունու թիկնապահներից մէկը, Արշակ անունով, թունդ դաշնակցական, իսկ այժմ. առաջին իսկ օրերին, այդ հոգեվաճառը շտապել է փոխել իր մորթին և տեղ գտնել նորակազմ գաղտնի ոստիկանութեան մէջ։ Այդ պարոնը նոյն օրը հանդիպել էր ինձ մի քանի անգամ, ուրիշ խօսքով հետեւում էր իմ քայլերին, եւ ամեն անգամ Յուդայի ողջոյնն էր տալիս ինձ։ Սրանից յետոյ ներս է մտնում մի անծանօթ պարոն՝ խուզարկու չայկայի գլխաւորը, Շահումեան անունով (չշփոթել յայտնի, այժմ հանգուցեալ Շահումեանի հետ)։

— Դո՞ւք էք Բախչի Իշխանեանը,— հարցնում է նա ինձ։

— Այո՛, — պատասխանում եմ ես։

— Խնդրեմ գնանք մի քանի քայլով, այստեղ սպասում է ձեզ ոտոմօբիլը։

Հրաժեշտ տալով քարտուղարին, նստում եմ ոտոմօբիլ, որը ամենայն արագութեամբ սլանում է գլխաւոր (Արովեան) փողոցով դէպի միսիայի շէնքը։ Ճանապարհին, բացի Շահումեանից, միացածները հանել էին ատրճանակները և կազմ ու պատրաստ բռնել ձեռքներին։ Ես, չնայելով ընկճուած տրամադրութեանս, չկարողացայ զսպել ինձ եւ դարձայ նրանց հետեւեալ յանդիմանութեամբ։

— Տօ երեխաներ, եթէ անգամ ինքներդ առաջարկէք ինձ ցատկել այս արագավազ ոտոմօբիլից եւ ազատուել ձեր ձեռքից, ես չէի համաձայնի, ո՞ւր մնաց, որ այդպիսի վտանգի ենթարկէի ինձ հակառակ ձեր կամքի. ինչո՞ւ էք ուրեմն հանել ձեր ատրճանակները, չէ՞ք ամաչում։

Իմքի պես Շահումեանի կարգադրութեամբ պահում են նրանք ատրճանակները։

Մի քանի անգամ հարցնում են ինձ ճանապարհին՝ ունե՞մ արդեօք պայուսակների մէջ կամ ինձ վրայ ատրճանակ, փամփուշտ կամ առհասարակ որեւէ զէնք։ Իմ հաւաստիացումներին հաւատում են նրանք և չեն խուզարկում միսիայում իմ իրերը։ Նրանք գիտէին, որ իմ զէնքը իրանց դէմ է եղել միայն իմ գրիչը և իմ լեզուն, այսինքն ամենախիստ զէնքը բօլշեւիկների դէմ, որից այնքան վախենում են և որը այնքան բուռն կերպով ատում ու հալածում է բռնութեան ու բարբարոսութեան այդ նորելուկ սերունդը։

Միսիայում մնում ենք միայն հինգ րոպէ։ Շահումեանը շտապում է յայտնել Լեգրանին իր անդրանիկ ծառայութեան յաջող արդիւնքի մասին և գովա-

տանքի արժանանալ նրանից։ Ինձ տեղափոխում են միխայլի պարկ (կոմենդանտի շէնքը նոյն փողոցում)։ Այս անգամ քայլում ենք ոտով։ Շահումեանը մօտենում է և շողոքորթ տոնով յայտնում հետեւեալը։

— Ընկեր Իշխանեան, երեւի դուք ինձ չէք ճանաչում, բայց վաղուց է, որ ես սոցիալիստ եմ և տարիներ շարունակ եղել եմ ձեր ոգեւորւած աշակերտը եւ հետեւողը։ Բայց այն օրից սկսած, երբ ես մտայ բոլշեվիկների շարքերը, բաժանւեցին մեր ճանապարհները և ես դարձայ ձեր հակառակորդը, ուստի կը ներէք, որ ես այսօր կատարեցի իմ կուսակցական պարտականութիւնը։ Մենք, բոլշեվիկներս, ամենամեծ չափով լարւեցինք և թշնամացանք ձեր դէմ, երբ դուք այնքան անխնայ և անհաշտ կերպով պրոպագանդ մղեցիք մեր դէմ, մանաւանդ մայիսեան շարժման ժամանակ։ Վերջին ամիսների ընթացքում ես շարունակ այցելում էի ձեր դասախօսութիւններին եւ լսածներս մանրամասն հաղորդում մեր միխայլին։ Ախ, ընկեր Իշխանեան, ափսոս, որ դուք մեր շարքերում չէք, մեր մեծը. մեր ղեկավարը չէք. գիտէ՞ք ինչ փառքի ու պատւի կ՚արժանանայիք դուք...

Ես ընդհատեցի պարոնի այդ յիմար, բայց բոլշեվիկի դատողակերպի տեսակէտից բնորոշ զրոյցը և խնդրեցի շուտ տեղ հասցնել ինձ։

Ինձ տեղաւորում են կոմենդանտի բնակարանի կից սենեակում։ Կոմենդանտը՝ Ջալալօղլեցի մի պարոն՝ Զէյրաբեան անունով, բացակայում էր այդ վայրկեանին։ Շահումեանը դիմում է պահակին (12 հոգուց բաղկացած ռուս զինւորներ) և մի քանի անտեղի գովասանքներ շռայլելով իմ հասցէին, պատւիրում է նրանց, որ լաւ պահեն ու խնամեն ինձ։

Երիտասարդի տրամադրութիւնը շատ բարձր է երեւում. Նրան հրանգւած էր ինչպէս էլ լինի առաջին հերթին ձերբակալել ինձ. Ես առաջին բանտարկեալն էի ոչ միայն մայրաքաղաքում, այլ եւ ամբողջ Հանրապետութեան մէջ. ինձ ձերբակալել էին ոչ միայն աւելի վաղ, քան Հայաստանի Խորհրդային իշխանութիւն հաստատւելը, այլ եւ աւելի վաղ, քան Հայաստանը պաշտօնապէս խորհրդային հռչակւելը, քան հին իշխանութիւնը իր լիազօրութիւնները զիջելը նոր տէրերին. Ահա իր այդ առաջին յաջողութիւնից գոհ ու վարձատրւած, ձերբակալութիւններ կատարող նորակազմ չայկայի պետ Շահումեանը մտածեց գերազանցել իր անմիջական պարտականութիւններին, այսինքն դուրս գալ իրեն յանձնւած իշխանութեան լիազօրութիւնների սահմաններից և ձերբակալութիւն կատարել իր սեփական նախաձեռնութեամբ. Մի ժամ չանցած բերան ինձ մօտ Յովհ. Քաջազնունուն. Բայց մինչեւ կէս ժամը նրան նորից ազատ արձակեցին. Պարոն Շահումեանը շատ էր հեռուն գնացել իր պնակալէզութեան մէջ. Տեսնելով, որ անմիջական ձերբակալութեան ենթակայ գործիչները հեռացել են քաղաքից, նա ձերբակալում է, առանց յատուկ հրաման ունենալու, մի մարդու, որը դուրս էր գնում Հայաստանի սահմաններից՝ հայկական կառավարութեան վարած հակաբոլշեւիկեան քաղաքականութեան ամբողջ շրջանում և իբրեւ այդպիսին չէր կրում անձնական ոչ մի պատասխանատւութիւն նոր տէրերի հանդէպ. Քաջազնունիներին ձեռք տալու ժամը դեռ չէր հասել, այդպիսիներին կարելի էր ձերբակալել միայն վերջին հերթին. Այդ է պատճառը, որ նրան անմիջապէս ազատում են.

Այդ գիշեր այլեւս ոչ ոքի չեն բերում. Պ. Լեգ-

բանի մատնանշած նախնական ձերբակալութիւննե-րին․ ենթակայ զոհերը արդէն մազապուրծ էին եղել Շահումեանների ճանկերից։ Բայց դրա փոխարէն այդ ամբողջ գիշեր խուզարկու խմբակը իր ողջ եռանդը թափել էր ապրանքաթալանի վրայ, խլում, բերում էին սրա նրա ձեռքից այն, ինչ տեսնում էին բանուկ փողոցի այս կամ այն մասում, առարկելով, որ քա-ղաքացիները փախցնել են ուզում իրանց գոյքը՝ գալիք իշխանութիւնից թաքցնելու համար։

Այդ երեկոյ տեսայ պարէտի շէնքում մի տիպ, որ պակաս զարմանք չպատճառեց ինձ։ Յետ ու առաջ գնում գալիս էր և օտար տուն մտած ու մարաղած կատուի նման իր մենորսական հաւատարմութիւնը ցոյց տալու համար այս ու այն կողմ էր դիտում մի պարոն՝ Աբել Շերինեան անունով. դա այն պարոնն էր, որի եղբօրը Թարէնու հետ միասին նոյն թուակ. օգոստոս ամսին սրախողխող են արել բոլշեվիկները Զանգեզուրում, Գորիսի բանտում. դա այն պարոն Աբէլն էր, որը որպէս դաշնակցական և Ալէքսանդրա-պոլի երկաթուղային կազմակերպութեան բանուորութեան ներկայացուցիչ դիմել էր ինձ նոյն թուականի ապ-րիլի վերջերին, երբ ես գնացել էի Ալէքսանդրապոլ մի քանի դասախօսութիւնների համար, և խնդրել բանուո-րութեան կողմից, որ մի յատուկ դասախօսութիւն կարդամ նրանց համար բոլշևիզմի մասին։ Ահա այդ նոյն պ. Աբէլը թքելով իր վաղամեռ եղբօր յիշա-տակի, հեռուապէս և իր սեփական ինքնասիրութեան և պատուազգացութեան վրայ, ծախելով իր խիղճն ու հոգին, խաչ քաշելով իր կուսակցական անցեալի վրայ, շտապել եկել էր բոլշևիկեան միլիայի մօտ լրտեսութեան անարգական պաշտօնը ստանձնելու։ Որքան ծանր էր ինձ համար լսելու յաջորդ առաւօտ-

եղն ռուս պահակ զինուորի նախատական խօսքերը Աբէլ Տիրքինեանի հասցէին, երբ վերջինս շարունակ գնում էր դուրս, փողոց, և գալիս փախուստ կոմենդանտի ականջին.

— Մի՞թէ մարդիկ են այսպիսիները, մի՞թէ խիղճ, պատիւ ու ազնւութիւն ունեն սրանք. — ասաց նոր միայն զինւորագրուած և բոլշևիկեան բանակում տակաւին չփչացած ռուս զինուորը, ձեռքը ուղղելով դէպի Ա. Տիրքինեանը. — Շարունակ գնալ փողոց, լսել մարդկանց, նրանց բնակարանները և գալ ու մատնել նրանց.

Միգճ զինուորը չգիտէր, որ դա սրբագործւած սիստեմ էր բոլշևիկների մօտ. նա չգիտէր, որ բոլշևիկեան գործիչներին բանդան լցնում էին նման տիպերով, և մեծ ու փոքր հոգեվաճառ Աբէլները հըն-չող մեծամասնութիւն են կազմում այսպէս անուանւած Ռուսաստանի կոմունիստական կուսակցութեան և մանաւանդ սրա ենթաճիւղ հայ կոմունիստների մէջ. Եւ որքան Աբէլները եռանդուն ու ջանասէր են լինում իրանց արնարբու տխրահռչակ ասպարէզներում, այնքան նրանք վարձատրւում են բոլոր հարկին. Աբէլ Տիրքինեանը, որ հազիւ հասարակ ոստիկան լինելու արժանիք ունենայ, յետոյ նշանակւում է Էջմիածնի Ռեւկոմի (կամ Ռեւոլիւցիոնական Կոմիտէի, այդպէս է կոչւում բոլշևիկների բարձր գործադիր իշխանութիւնը կամ կառավարութիւնը) անդամ. Եւ դըժբաղդ հայ երկիրը պիտի դառնար կառավարական մարդանքների այն ախտոր վայրը, ուր առաջնակարգ և երկրորդակարգ Աբէլները պիտի ցուցահանէին իրանց մտքի ու հոգու բոլոր այլանդակւած գծերը. Ի հարկէ, հայ բոլշևիկները կարող են իրարից տարբերել իրանց անհատական առաւել կամ պակաս բարեմա-

նութիւններով։ Բայց մի ընդհանուր գծի վրայ նրանք բոլորը անխտիր միեւնոյն տխուր գծերի մէջ են գըտնւում. բոլոր հայ բոլշեւիկները հանդիսանում են ռուս պետութեան եւ քաղաքականութեան մասամբ մոլորւած ու կոյր եւ մասամբ գիտակից գործիքներ. Նրանք բոլորը համարւում են Լենին—Տրոցկու հրէա-չինական ձեռքը, ողորմելի թութակները.

Ժամը արդէն տասն էր. Միխայլից մի ժամ առաջ ուղարկել էին ինձ թէյ եւ ընթրիք. Կոմենդանտը, արտաքուստ բաւական քաղաքավարի եւ սիրալիր մի երիտասարդ, հրաւիրում է ինձ քնել. Քուն էր մտել արդէն ամբողջ պահակը, բացի մէկից, որ պիտի հըսկէր ինձ, հետեւէր իմ իւրաքանչիւր շարժման. Երբ ես պահակի ուղեկցութեամբ դուրս գնացի մի վայրկեան եւ վերադարձայ, կոմենդանտը հեռաձայնով խօսում էր Միխայլի հետ. Վերջին խօսքը, որ ես լսեցի սենեակ մտնելուց, հետեւեալն էր.

«Այո՛, այո՛, ոչ ուշ, քան առաւօտեան ժամը 5-ին»,
—ասաց կոմենդանտը եւ կախեց հեռաձայնի փողակը.

Իմ աչքում չափազանց խորհրդաւոր թւացող այդ խօսքերը մխւեցին գլխուս եւ քուն ու հանգիստ չտւեցին ինձ ամբողջ գիշեր.

«Ոչ ուշ, քան առաւօտեան ժամը 5-ին»։

Ի՞նչ են նշանակում այդ խօսքերը. ի՞նչ կարող է լինել ձմեռւայ այդ վաղ ժամին, երբ դեռ շատ մութն է լինում, աշխատանքի չի երեւում ոչ ոք. Արդեօք ի՞նչ արտակարգ յանձնարարութիւն պիտի լինի Միխայլի կողմից պատրաստւած, որ կոմենդանտը պիտի ի կատար ածէ «ոչ ուշ, քան ժամը 5-ին»։

Նման բազմաթիւ հարցեր, պարուրւած մի շարք հրէշային նախազգացումներով, պաշարեցին իմ միտքը ամբողջ գիշեր.

Ես, որ պառկել էի չոր տախտակների վրայ. առանց անկողնի, պինդ փաթաթուելով իմ հաստ վերարկուի մէջ, և շարունակ պտոյտ էի գալիս աջ ու ձախ կողմերի վրայ, յանկարծ վեր թռայ տեղիցս և անճարակ մարդու յուսահատական ճիչ արձակեցի. «Վա՜յ, ես կորած եմ»։

Ռուս գինւորը, որը նստած շարունակ ծխում էր և ինձ դիտում և որը չէր հասկանում ոչ իմ խօսքերը և ոչ իմ գալարումների պատճառները, դարձաւ ինձ և կարեկցող ձայնով ասաց.

— Ինչ է պատահել ձեզ, ինչո՞ւ չէք հանգիստ քնում. ոչինչ, ամեն բան լաւ կը լինի, անհանգիստ մի՛ լինէք։

Յանկարծ յիշեցի, որ բռնութեան զոհերը անյայտացնում են շատ վաղ առաւօտեան, սովորաբար յիշեալ չարագուշակ ժամին։ Քանի՜ անգամ եմ դեռ հին միապետութեան օրով կարդացել լրագրներում մահուան պատիժների ի կատար ածումը հէնց նոյն ժամը 5-ին առաւօտեան։

Այն միտքը, որ կոմենդանտի արտասանած վերջին խօսքերը կարող են վերաբերել միայն ինձ, սկսեց աւելի ու աւելի հաւանական թւալ իմ աչքում։ Յիշեցի Հ. Տէրտէրեանի խօսքերը Լեգրանի միսիայի վատ տրամադրութիւնների մասին յատկապէս իմ նկատմամբ։ Յիշեցի ապա Դեվոյեանի ահաբեկ շեշտերով արտասանած նախազգուշացուցիչ բառերը։ Վերջապէս յիշեցի ամիսներ առաջ Բագուից երկու տարբեր աղբիւրների միջոցով ինձ հասած միեւնոյն բովանդակութեամբ չարագոյժ լուրը, որ բոլշեւիկները Բագուն վերցնելուց յետոյ մահավճիռ են արձակել նաև Բագուից բացակայող, նախկին Բագուաբնակ հայ գործիչների— ի թիւս դրանց նաև իմ— հասցէին։

Սրանք մի չորք տողեր էին, որոնք գրեթէ անկասկածելի էին համարում ուղեղումս գամուած սըր-տամաշ միտքը. «ես կորած եմ»։

Բայց մէկ էլ սկսում էի սանձել բորբոքուած ե-րեւակայութեան վերասլաց թռիչքները. Աշխատում էի հանգստացնել ինձ, մեղմացնել ու փոքրացնել իմ գործած «յանցանքը» բոլշեվիզմի և բոլշեվիկների դէմ. Չէ՞ որ ես գործել եմ նրանց դէմ սոսկ գաղափարա-յին հողի վրայ. չէ՞ որ ես եղել եմ շիտակ հակառա-կորդ — միայն ու բացառապէս գրչի, մտքի և խօսքի պայքարատ արտայայտիչ. չէ՞ որ անգամ ցարական դատարանը այդքան հեռուն չգնաց իմ դէմ և 1908—10 թուականների բիւրոկրատական նորահոր ռէակցիա-յի սև օրերին ինձ վարձատրեց միայն 2 տարի և եր-կու ամիս բերդարգելութեամբ, իբրև հատուցում 1906 թ. գործած իմ յեղափոխական «յանցանքների»։ Մի՞թէ իրաւ իմ երէկուայ մօտ համախոհները, որոնք մինչև այժմ էլ շարունակում են երդուել սոցիալիզ-մի դրօշակի վրայ, ցարական դատարանից և բիւրոկ-րատիայից աւելի հեռու կգնան և անխնայ կլինեն իմ վերաբերմամբ։

Բայց յանկարծ վերակենդանանում էին յիշողու-թեան մէջ ուրուականները այն դժբաղդ գաղափա-րայինների — սոցիալ դեմոկրատների (փոքրամասնա-կան կամ մենշևիկ), սոցիալիստ-յեղափոխականների, դաշնակցականների, ռուս սամկավարականների (կադետ-ների), կուսակցական թէ անկուսակցական այն լա-ւագոյն մտաւորականների, — որոնք նորագոյն և ա-ւելի վատթարագոյն բարբարոսների ձեռքով հալած-ուել, ճնշուել, սրի ու գնդակի զոհ են գնացել հէնց մի-այն նրա համար, որ նրանք օգտուել են արդի կուլ-տուրական քաղաքացու անկապտելի իրաւունքից — գրել

ու խօսել են․ գաղափարապէս արտայայտել ու պայքարել են բոլշեվիզմ կոչուած ախտաւոր երեւոյթի դէմ։

Այդ բոլոր թեր եւ դէմ խօսերը լսել էին ուղեղիս բոլոր բջիջները․ բեւեռել ուշ ու միտքս անիծւած առեղծւածի շուրջը և անքնութեան այնպիսի մի համբերութիւն պարգեւել ինձ, որ կարող էի եփւել ու տապակւել այդ մղձաւանջ մտքերի հնոցում ոչ միայն մինչեւ ժամը 5-ը, այլեւ տասնեակ ժամեր շարունակ, եթէ չարագուշակ ժամը այդքան երկար ձգձգւելու լինէր։

Ալեկոծ մտքերիս հետ զուգընթացաբար արտասովոր կերպով ցնցւել էր ողջ ֆիզիքականս։ Կարծես մարմնիս մասնիկները չէին ենթարկւում այլեւս ուղեղիս ղեկավարող կեդրոնին, կամքիս թելադրանքներին։ Սրտիս ուժեղ բաբախումը նմանում էր ձիու սմբակի չեչտակի տրոփիւնի։ Մինչ արդ վայրկեանը ինձ համար անսովոր, երբեք չզգացած գործողութիւններ էին տեղի ունենում մտքերիս հետ։ Ծնկներս ծալւում էին իրենք իրենց, մկանունքներս կծկւում էին անդադար։ Որքան աշխատում էի ուղիղ մեկնած պահել ոտքերս, նրանք դարձեալ ծալւում և կուչ էին գալիս։ Շուտ-շուտ նստում էի, ժամացոյցին նայում, կանգնում, նորից նստում և նորից պառկում։ Չկար մի բան, որով ցրել փորձէի կոշմար խոհերս․ չկար մէկը, որի հետ բաժանել կարողանայի ծանր ապրումներս։ Զինւորի շարունակ կարեկցող դիմումներին պատասխանում էի, որ անսովոր եմ չոր տախտակի վրայ պառկելուն, դրա համար եմ անհանգիստ շարժումներ անում։ Յանկարծ մեղմանում էր սրտիս բաբախումը, հանգստանում էին մկանունքներս, երբ հերքել էի աշխատում հրէշային մտքի կարեկի-

ութիւնը, յուսադրում էի ինձ նորից ազատւելու, կենսալից պայքարի և կենդանի գործունէութեան վառ հեռանկարներով։ Սակայն այդ երջանիկ վայրկեանները շատ կարճատև էին լինում։ Վատը, յոռին, չարը նորից ու նորից յաղթանակում էին և տեւապէս տիրապետում իմ հոգուն, մտքին, սրտին, իմ ջղային ողջ ցանցին։

Ժամը արդէն երեքն էր։ Երկու ժամ էր մնում միայն մինչեւ անիծւած հինգը։ Նորից ծալւածքներ, նորից կծկումներ և թարախումներ աւելի ու աւելի ուժեղ չափերով։ Սկսեցի նախատել ինձ, երկչոտ ու թուլամորթ բառերով որակել իմ այդ վիճակը։ Բայց յանկարծ վերջին ժամերին մի փիլիսոփայող միտք կարծես խոստովանանքի նման մի բան է փսփսում ականջիս. «Ոչինչ, քո սոսկ ֆիզիքական մահկանացուն. զրկանքներով ապրող, վայելքներ չտեսած և անձնական երջանկութիւն երբեք չունեցած մի կեանք կարող է դադարել գոյութիւն ունենալուց և հանգիստ գտնել յաւիտենականութեան սառը գրկում։ Ափսոս է միայն, որ առնական կենսալից հասակում, գործելու համար ծնւած և գործունէութեան բովում եռացող մի կեանք, լի անսպառ եռանդով և տոգորւած անհուն սիրով իր գործունէութեան ասպարէզի համար,— այդքան վաղաժամ պիտի չքանայ այս աշխարհից»։

Ահա այդ հանգամանքն էր միայն, որ ինձ մտատանջում, հանգստութիւն չէր տալիս։

Ժամը արդէն 4-ը քառորդ անցած էր։ Յանկարծ մի սառը դող անցաւ ամբողջ մարմնովս և ցնցեց ինձ վերից վար։ Դրանից յետոյ աւելի ու աւելի հանգստացայ։ Որքան մօտենում էր չարագուշակ ժամը, այնքան աւելի էի հանգստանում. որքան սպառնալից էր դառնում մահացու վտանգի մօտալուտ գալուստը,

այնքան աւելի էի անտարբեր վերաբերւում և այնքան թթանում էին ջղերս։

Նման հոգեբանական պրոցե՞ս են մաշում արդեօք բոլոր մահապարտները, թէ՞ կան անհատական բացառութիւններ, ես չգիտեմ։ Ես ճշգրտօրէն գրի եմ առնում այն, ինչ պատահել է ինձ հետ։

Անցել էր քառորդ ժամ եւս։ Լուռ ու անձայն, քար կտրած, յառել եմ ուշադրութիւնս դէպի կոմենդանտի սենեակը։ Այնտեղ եւս ամեն ինչ լուռ էր։ Ոչ մի ոտի ձայն, ոչ մի չրխկոց։ Չէ՞ որ, մտածում եմ, այս մարդը պէտք է արթնանայ, պատրաստէ և ժամը 5-ին կատարէ իրեն տուած պատւէրը։ Անցնում են րոպէներ իրար յետեւից. դարձեալ ոչ մի ձայն։ Մնացել էր միայն տասը րոպէ ժամանակ, կոմենդանտը նորէն քնած էր։ Լրացաւ ժամը 5-ը, այսինքն հասաւ պատւէրի կամ վերին հրամանի գործադրութեան պայմանաւորւած ժամանակը, բայց հրամանը ի կատար ածող մարդը դեռ չէր շարժւում իր անկից։

Ի՞նչ է նշանակում սա, մտածում էի ես։ Չլինի՞ միտքն փոխել է իր որոշումը։ Բայց նա պէտք է դրա մասին հաղորդէր գիշերը որ եւ է ժամին։ Հեռախօսը իմ սենեակում էր, ես չէի քնել մի րոպէ անգամ. անկարելի էր, որ հաղորդւած լինէր որ եւ է բան և ես լսած չլինէի։ (Ինչպէս յետոյ իմացայ, այդ նոյն ժամին Ճանհումեանի խմբակը խուզարկութիւններ էր կատարել նախկին մի քանի նախարարների տներում)։

Ժամը 5-ի պատւէրը չէր վերաբերում ինձ, մտածեցի ես։ Մի ուրիշ կասկած ընկաւ սիրտս։ Եւ երբ ժամը 5.30 դարձաւ, ես արդէն համոզւած էի դրա մէջ։ Երա՞զ, թէ՞ իրականութիւն էր զգացածս ու ապրածս։ 10—5-ը, եօթ ժամ շարունակ ես սրտակտոր զգայարանքներով մաքառում էի մահւան մտքի կարե-

լիութեան դաժան ուրւականի դէմ. Լարուած երեւակայութիւնս ոլորապտոյտ սաւառնումներով անեզադէմ սարսափներ էր հիւսում և մթին աշխարհներ ուրւագծում. Ուրեմն այս բոլորը ցնորամիտ երա՞զ էր միայն, վայրկենական խաբւածութեան արգի՞ւնք.

Ո՛չ, որքան լաւ էր այդ խաբւածութիւնը.

Կայ նւիրական երազների, վարդագոյն յոյսերի, պայծառ ձգտումների խաբւածութեան վայրկեան, որ մահից էլ աւելի վատ է. Բայց կայ յուսահատ մըտքերի, վատ անկայունութիւնների, մահասարսուռ գալիքների խաբւածութեան վայրկեան ևս, որ կեանքից էլ բարձր է, որովհետեւ նա ինքը կեանքն է՝ մահւան ճիրաններից ճողոպրւած, անհուսալի վտանգից փրկւած. նա կեանք է գերագոյն աստիճանի, նա երջանիկ կեանք է։

Ճիշտ այդ վիճակի մէջ էի զգում ինձ ժամը 7-ին. Ես մինչ երջանիկ լինելու չափ գոհ էի խաբւածութեանս այդ վայրկեանին. Որքան ուժեղ էին ցնցումնալից սարսուռները իրական կործեցեալ մահւան հանդէպ, այնքան մեծ էր ուրախութիւնը և երջանկութեան զգացումը այդ մահւանից փրկւած լինելու վայրկեանին։

Նման հոգեբանական դրութիւն կեանքումս առաջին անգամն էի ապրում.

II

Այդ սաստում իմ հոգուն տիրել էին մի տարօրինակ մեղմութիւն ու քնքուշութիւն, մի հեզութիւն ու թեթեւութեան, ներողամտութեան մի անսահման զգացում. Իմ բանտարկւած վիճակը թւում էր այլեւս
Ե թեթեւ ու չնչին մի բան. Ես պատրաստ էի այդ մոմենտին ներել բոլոր նրանց, որոնք երբեւիցէ վիրա-

ւորել չէին ինձ որեւէ բանով, և ներողութիւն խնդրել բոլոր նրանց առաջ, որոնց ես երբեւիցէ որեւէ բանով վիրաւորել եմ։ Ահա անսովոր տրամադրութիւնների այդ վիճակում գրում եմ Աշոտ Յովհաննիսեանին (Լեգրանի միսիայի տեղեկատու բաժնի վարիչ, յետոյ խորհրդային կառավարութեան անդամ, որպէս լուսաւորութեան կոմիսար) մի տոմս ճիշտ հետեւեալ երկտողից բաղկացած.

«Յարգելի ընկեր Աշոտ!

Ես գտնւում եմ ձեր միսիայի կոմենդանտի շէնքում բանտարկուած։ Յանուն մեր նախկին ընկերականութեան խնդրում եմ անցնէք ինձ մօտ» (ստորագրութիւն)։

Խիստ սակաւ բացառութեամբ ես ընդհատել էի իմ ծանօթութիւնը բոլոր հայ բոլշեւիկների հետ։ Աշոտ Յովհաննիսեանը (մեր կուսակցական կազմակերպութեան նախկին անդամ), որպէս վատթարագոյն եւ ֆանատիկոս բոլշեւիկ հայ իրականութեան մէջ, պատկանում էր հակակրածս տիպերի շարքին։ Նա մէկն էր այն բազմաթիւ բոլշեւիկներից, որոնք կեղծ դերերի մէջ էին գտնւում. քաղաքական կարիերը, կոմիսարի շահաւէտ, փափուկ կեանքը և հրամայազօր դիրքը— ահա պատասխանատու բոլշեւիկ գործիչների մեծագոյն մասի բոլշեւիկական եռանդի ու գործունէութեան իսկական շարժառիթները։ Քի՞չ հոգեւորականներ կան (հայ և ոչ հայ եկեղեցիներում), որոնց մղում են դէպի հոգեւոր կոչումը ուրիշ հազար ու մի դրդապատճառներ, բայց ոչ անաղարտ հաւատը դէպի քրիստոնէական կրօնն ու եկեղեցական սրբութիւնները։ Ահա այդպիսի կարիերիստ, հոգով կեղծուած և համոզմունքով խարդախուած բոլշեւիկներին (ինչպէս և նման գաղափարային շառլատաններին—այլ կուսակցական շարքերում) առե-

լով տեսում եմ. Աշոտ Յովհաննիսեանները, Աբել Շիրինեանները, Շահումեանները — միեւնոյն խմորից հունցած ու կաղապարած, բայց տարբեր դիրքերի եւ աստիճանների տիպեր են։

Ահա այդպիսի մէկին գրեցի իմ անմեղ երկտողը այն ժամանակ, երբ գտնւում էի զգացումների և տրամադրութիւնների արտասովոր, անհաւասարակշիռ վայրկեանին։

Ժամը արդէն ութից անցել էր։ Ես վեր էի կացել անկողնիցս, լուացւել և պատուհանի մօտ կանգնած դիտում էի անց ու դարձ անողներին։ Անցորդ ծանօթներս կանգնում ու ողջունում էին։ Հեռըհեռէ փողոցի զանազան մասերում և պատուհանիս տակ խմբւում են ընկերներս, ծանօթներս, բազմաթիւ ուրիշ մարդիկ, և ձեռքով զանազան նշաններ անում։ Դեռ նախորդ երեկոյեան տարածւել էր քաղաքում իմ բանտարկութեան լուրը։ Եւ իբրեւ բանտարկութեան առաջին դէպքը, որպէս նոր, տակաւին չհաստատւած իշխանութեան առաջին դեբիւտը, առանձին հետաքրքրութիւն էր շարժել շատերի մէջ գալու կոմենդանտի շէնքի մօտ և դիտելու բոլշեվիկեան կամայականութեան առաջին զոհին։

Պահակ զինւորը մօտեցաւ և ներողութիւն խնդրելով ասաց, որ կոմենդանտը արդէն արթնացել եւ հագնւել է, կարող է տեսնել դրսի խմբւած մարդկանց հետ ձեր խօսակցութիւնը և նկատողութիւն անել իրան։ Ես կոմենդանտից թոյլտւութիւն խնդրեցի և ընկերներիցս մի քանիսը ներս հրաւիրելով, տեսնւեցի նրանց հետ։ Ինձ հաղորդում են հետեւեալը․

Բանտարկութեան լուրը առնելուն պէս Դաւիթ Անանունը, Պետրոս Զաքարեանը և Ստեփան Զօրեանը անմիջապէս բողոքելով դիմում են Դրօին եւ Ար-

լինին։ Դրօն իր զարմանքը և ցաւակցութիւնն է յայտնում, աւելացնելով, որ ինքը բոլորովին անտեղեակ է այդ փաստին։ Բանից երեւում է, որ իմ բանտարկութեան հրամանը տուած է եղել բացառապէս խորհրդային միսիայից՝ Աշոտ Յովհաննիսեանի թելադրանքով։ Երբ ընկերները դիմում են վերջինիս, նա պատասխանում է հետեւեալը.

Ոչ ոք մեզ այնպէս չի վնասել և մեր դէմ այնպէս չի գործել, ինչպէս Իշխանեանը։ Նա մեզ աւելի է վնասել, քան ամբողջ Դաշնակցութիւնը. մանաւանդ վերջին ամիսների ընթացքում։ Այն ժամանակ, երբ հայ զօրքը լքում էր ճակատը (խօսքը վերաբերում է հայ-տաճկական պատերազմին), երբ թիկունքը թուլանում էր և ամբողջ ժողովուրդը երես էր դարձնում դաշնակցական կառավարութիւնից, իսկ վերջինիս կղզիացումն ու թուլացումը կարող էր գլորացնել և արագացնել մեր, բոլշեւիկներիս, մուտքը Հայաստան, հէնց այդ կրիտիկական վայրկեաններին Իշխանեանի յաճախակի երեւան գալը՝ իր դատախօսութիւններով ու ճառերով, նորից սթափեցնում ու ոգեւորեցնում էր ժողովրդին. ամրապնդում նախկին իշխանութեան դիրքը և դժւարացնում մեր գործը Հայաստանում։ Այդպիսի մի հակառակորդին մենք պէտք է չէզոքացնէինք դեռ մեր իշխանութեան մուտքի նախօրեակին։ Անշուշտ նրա կեանքին չի սպառնայ ոչ մի վտանգ։ Նա կը մնայ միայն բանտարկւած վիճակի մէջ։

Պարոն Յովհաննիսեանը կրկնել է իր այդ խօսքերը՝ աւել կամ պակաս լրացումներով. նաեւ ուրիշ ընկերներիս ու ծանօթներիս, որոնք զանազան առիթներով դիմել էին նրան և խօսք յարուցել իմ մասին։

Պ. Յովհաննիսեանի խօսքերի առիթով ես կասեմ

միայն հետեւեալը. իմ հակառակորդները աւելի մեծ դեր ու նշանակութիւն են վերագրում ինձ՝ իմ հայրենիքին ու ժողովրդին մատուցած ծառայութեան հարցում և օտար ոյժերի (բոլշեւիկների) մուտքի դէմ պայքարելու գործում, քան ես ինքս զգում ու գիտակցում եմ.

Ամենից խրատականը և բոլշեւիկեան դատողութեան տեսակէտից բնորոշն այն է այս պարոնի պատասխանի մէջ, որ նախ՝ պատերազմի վայրկեանին մի ժողովուրդ սթափեցնելը և ոգեւորեցնելը՝ իր վտանգուած հայրենիքը պաշտպանելու նաիրական գաղափարի անունով, նշանակում է ուրիշ ոչինչ, բայց եթէ միայն զարկ տալ և ամրապնդել տուեալ վայրկեանին տիրող կուսակցութեան իշխանութեան հիմքերը. Երկրորդ՝ բանից դուրս է գալիս, որ ազգամիաճակատ կռիւը և թիկունքի թուլացումը հարուածներ են՝ ուղղուած միայն տիրող իշխանութեան դէմ և կոչուած են նրան կղզիացնելու, անկումը պատրաստելու համար.

Այս ախտաւոր մտայնութեամբ տարուած է ամեն մի բոլշեւիկ՝ տգէտ թէ գիտուն.

Հայաստանի այս կամ այն իշխանութիւնը՝ լինի նա բաղկացած դաշնակցականներից, մի այլ կուսակցութիւնից կամ լինի կօալիցիօն նրա կազմը, միեւնոյն է,— սոսկ ժամանակաւոր մի երեւոյթ է, պայմանաւորուած գործող քաղաքական ոյժերի փոխյարաբերութեամբ. Հիմնականը ինքը պետականութիւնն է, էականը ու անեղծականը՝ ինքը ընդհանուր հայրենիքն է. Երբ արտաքուստ սպառնում է որեւիցէ մահացու վտանգ՝ ուղղուած ընդհանուրի հայրենիքի և պետականութեան դէմ, ամեն մի ճշմարիտ հայրենասէր— որ բանակից ուզում է թող լինի— պիտի խորապէս գիտակցէ, որ արտաքին թշնամին չի եկել միայն տուեալ մոմենտին

տիրող իշխանութեան դէմ կռուելու, նրա հետ, որպէս այդպիսինի, հաշիւներ մաքրելու։ Այդպիսի արտաքին թշնամի չի եղել և ոչ էլ երբեք մղւել է պատերազմ այդօրինակ չարժառիթներով։ Մուստաֆա Քեմալ փաշայի կառավարութիւնը —բոլշեւիկների այդ հոգեհարազատ դաշնակիցը— չի յարձակւել Հայաստանի դէմ միայն Դաշնակցական իշխանութեան հետ հաշիւներ մաքրելու, նրան թուլացնել ու կամ ձգելու համար (դա հասցրած հարուածների հետեւանքներից մէկն է և ոչ պատերազմի նպատակը կամ պատճառը)— ինչպէս բոլշեւիկները խարդախութեամբ ու ցինիզմով խաբում, մոլորեցնում էին միամիտներին և ապուշներին, — այլ ապստամբ Թիւրքիայի նպատակն էր հարուածել, թուլացնել և իր առաջ չոքեցնել Հայաստանի հանրապետութիւնը, փոշիացնել հայ ժողովրդի ազատագրական ձգտումները. այսինքն պատճառել Հայաստանին այն, ինչ ցանկացել ու ծրագրել էին բոլշեւիկները— ինքնորոշուած հայ ժողովրդի և անկախ Հայաստանի ամենաոխերիմ թշնամիները։ Եւ բոլշեւիկների համաձայնութեամբ ու ոգեւորիչ ուղեկցութեամբ մինչեւ Ալեքսանդրապոլը մուտք գործած թիւրքական գամփաները ծծեցին ոչ թէ դաշնակցականների, այլ առհասարակ հայ ժողովրդի արիւնը. կողոպտեցին, թալանեցին, աւերեցին հայ երկիրը, կոտորեցին հայ ժողովուրդը, տարագրեցին նրա լաւագոյն զաւակները, յափշտակեցին նրա ամբողջ ինչքը։ Եթէ այդպիսի թշնամիների դէմ կռւելու համար ժողովուրդ սթափեցնելն ու ոգեւորեցնելը ճառերով ու դասախօսութիւններով— նշանակում է շովինիստական գործունէութիւն ցոյց տալ բոլշեւիկների դէմ՝ իր իսկ բոլշեւիկի խոստովանութեամբ, ապա հէնց այդ փաստը վկայում է, թէ որ աստիճան իրար տրամագծօրէն հակառակ են հայ ժո-

ղովրդի կենսական շահերը և սատար քանի ոյժերի կամակատար գործիքներ դարձած հայ բոլշեւիկեան չայկայի տիրապետութեան ձգտումները։

Պարոն Աշոտ Յովհաննիսեանը չէր ամաչել իր պատասխանի վերջում աւելացնել նաեւ հետեւեալ խօսքերը.

— Փողոցում հանդիպելիս նա (այժմէնքն ես) չի ողջունում ինձ. քանի անգամ ցանկացել եմ նրան բարեւել, բայց նա միշտ երեսը շուռ էր տալիս։

Գոնէ ես հեղինակի փոխարէն կամաչէի գրի առնելուց այդ խեղկատակ խօսքերը, եթէ նրանք ծագած չլինէին պատասխանատու բերնից։

Բարեկամներս յուսադրում էին ինձ, որ ես շուտով կազատուեմ, հանգիստ մնամ. որ ամբողջ Երեւանի համակրանքը իմ կողմն է, ժողովուրդը դատապարտում է ռուսական միսիայի այդ անխոհեմ քայլը և այլն։ Ես մի քանի խօսքով պատմեցի նրանց նախորդ գիշերուայ իմ մղձաւանջային ապրումները և մենք բաժանւեցինք։

Ես նստած կոմենդանտի սենեակում, թերթում էի բոլշեւիկեան գրականութիւն։ Արդէն ժամը 11-ն էր, երբ լսեցի միջանցքում մի ծանօթ ձայն։

— Ահա ձեզ մի նոր ընկեր, մենակութիւնից չէք ձանձրանայ, — ժպիտը դէմքին դարձաւ ինձ կոմենդանտը և առաջնորդեց ինձ մօտ բժիշկ Յովհաննէս (կամ Օվի) Տէր Միքայէլեանին (խնամատարութեան նախարարի օգնական)։

— Օվի, դո՞ւ էլ այստեղ. այ մարդ. քեզ ինչո՞ւ են բռնել. դու խօ քաղաքական դէմքերից մէկը չե՞ս Դաշնակցութեան շարքերում. սուսիկ փուսիկ մրաջան մեղուի նման, քո հանրօգուտ գործն էիր առաջ տանում. եթէ քեզ բանտարկել են, որպէս կառավա-

րութեան կամ պարլամենտի անդամ, մինչեւ քեզ դեռ շատերը կան հերթի կանգնած և Երեւանում գըտնըւող, որոնցից յետոյ միայն կարող էին քեզ ձեռք տալ։ Չլինի՞ թէ քեզ պատասխանատւութեան են ենթարկում այն յայտնի գործի համար։ (*)

— Ո՞վ է հասկանում սրանց։ Մի քանի րոպէ առաջ Շահումեան անունով մի պարոն, որ դեռ երէկ աշխատում էր մեր և նախարարութեան արհեստանոցներում իբրեւ ճախարակագործ և որի բոլշեվիկ լինելու մասին ես ոչինչ չգիտէի, առանց այլ և այլի մտնում է դրասենեակս (նախարարութեան շէնքում) և յաղթական տոնով յայտարարում՝ «Պ. Տէր-Միքայէլեան, դուք ձերբակալւած էք, տօվարիշը սպասում է ձեզ դուրսը»։ Եւ այդպէս, գալիս եմ այստեղ քեզ ըն-

---

(*) Խնամատարութեան նախարարութեան պաշտօնեաներից մեծ քանակով չարաշահւաց, խառացրած կար եւ այլ պարէններ էին բաց թողել մի քանի առեւտրականների, պայմանով, որ սրանք տւածի փոխարէն հացահատիկներ հայթայթէին։ Պետական գոյքը բաց էր թողնւած շատ աննպաստ պայմաններով, ուղղակի խաբւած գներով, ուստի դեռ. նախկին կառավարութիւնը պատասխանատւութեան էր ենթարկել առեւտրականներին, իսկ ինքը նախարարը՝ բժ. Ա. Բաբալեանը, գերի էր ընկել Ղարսում տանիկների ձեռքը։ Ինչպէս յետոյ պարզւում է, իսկապէս այդ գործի համար Լեգրանի միսիան բանտարկում է նախարարի օգնական Տէր-Միքայէլեանին, գործից անտեղեակ մի անմեղ մարդու, որի անունով երդւում էին բոլորը։ Խե՜ղճը անչափ տանջւում էր, որ իր անունը կապել են կեղտոտ գործի հետ։ «Թող քաղաքական գործի համար ինձ կախեն, փոյթ չէ, բայց չարաշահութեան (սպեկուլյացիայի) համար մի օր անգամ չնստեմ բանտում», — ասում էր նա յաճախ։

կերութիւն անելու համար։ Քո բանտարկութեան մասին լսել եմ երէկ երեկոյեան։ Տօ, անիրաւ գառնաս դու, շատ հեշտ կերպով հերոսացար և անմահացար. բոլորի բերանում մաստակ է դարձել անունդ. շարունակ հարցնում է մէկը միւսին՝ ինչո՞ւ ձերբակալեցին Իշխանեանին, արդեօք ի՞նչպէս կը վարուեն նրա հետ։ Իսկ քո դասախօսութիւնների սիրահար—հասարակութիւնը, մանաւանդ ուհիները. դէ գիտես է՛լի, անչափ ափսոսում են քո բանտարկութեան համար։

— Դատարկ բաներ են— վերջ տուր այդ խօսակցութեան,— ժողովուրդ է, այսօր կը խօսէ, վաղը կը մոռանայ։

Մենք խօսեցինք օրուայ չարիքների մասին։ Մեզ ոչ ոք չէր լսում, մենք առանձին էինք։

— Օվի, սա դեռ օտար պետութեան միջին է. դեռ խորհրդային իշխանութիւն չկայ, երբև հաստատուած և գործող մարմին, դեռ իշխանութիւնը գտնւում է ձեր Դրօի ձեռքում. որի անուանական դիկտատորութիւնը է՛լ աւելի է խեղկատակ (կարիկատուրային) վիճակ ստեղծում նրա առանձնած քաղաքական նոր դերակատարութեան համար։ Ասա՛, ինչ կը լինի այս երկրի դրութիւնը, երբ վաղը գան սրած ու լարած գործակալները Մոսկովեան կոմիսարօպետական (կոմիսարօդերժաւ) իշխանութեան։

Մեր խօսակցութիւնը ընդհատւում է։ Գալիս յայտնում են, որ ինձ մօտ այցելուներ են եկել։ Եկել էին իմ բաժանմունքից մի քանի ծառայողներ ու ծառայողուհիներ, որոնց խնդրեցի ես շարունակել իրանց ծառայութիւնը անխափան, առաջուայ պէս։

Այդ օրը յաճախ այցելուներ եկան թէ Օվու և թէ ինձ մօտ, բերելով իրանց հետ զանազան ուտելիքներ։ Ճիշդ ասած, մենք չէինք զգում մեզ բանտում։

Մենք փակուած էինք միայն չորս պատերի մէջ և չէինք կարող մեր կամքով ազատ քայլ անել․ Բայց մեր կապը արտաքին աշխարհի հետ դեռ խզուած չէր։ Մեր բանտարկութեան վայրը բանտ չէր, հետեւապէս չէր կարող և բանտային ռեժիմ ունենալ։ Կոմենդանտը շատ անյարմար վիճակի մէջ էր զգում իրան․ Կարծես քաշւում էր մեզ բացարձակ արգելելու՝ այցելուներ ընդունելու համար․ Կէսօրից յետոյ եկել էր ինձ մօտ իմ մօտ իմ ընկերներից մէկը՝ իրաւաբան Տ․ Տէր-Դատեանը։ Մենք վիճեցինք կոմենդանտի հետ զանազան հարցերի շուրջ՝ բոլշեվիզմի, սոցիալիզմի, բոլշեվիկների վարած քաղաքականութեան, արեւմտեան Եւրոպայի ականաւոր մարքսիստների և կազմակերպւած պրոլետարիատի բանած բացասական դերի մասին և այլն։ Այդ մարդը թողնում էր խելօք ու կրակ տպաւորութիւն․ կարծես նա աւելի շատ տարւած էր արտաքին ոյժով, իր պաշտօնի հմայքով, քան ներքին համոզմունքով ու գաղափարի հոսանքով։ Դա էլ մի առանձին տիպիքական նմոյշ էր բոլշեվիկեան «գործիչներից»։

Երէկոյեան դէմ էր արդէն։ Ես ու Օվին նստած կարդում էինք․ Նա իմ յանձնարարութեամբ կարդում էր «Կոմունիստական Մանիֆեստի» հայերէն թարգմանութիւնը՝ Պլեխանովի և Կաուցկու ընդարձակ առաջաբաններով, իսկ ես կարդում էի Լենինի վերջին անտաշող աշխատութիւններից մէկը՝ «Պետութիւնը եւ Յեղափոխութիւնը» վերնագրով (ռուս․ բնագիրը)։ Ընդհատելով ընթերցումը հէնց այս կէտում, ուր Լենինը հայհոյում է Կաուցկուն (*), դարձայ վիճակցիս հետեւեալ խօսքերով․

(*) Լենինը իր հայհոյանքների աղտոտ պարկը թափում է Կաուցկու վրայ իր՝ «Պրոլետարական յեղափոխութիւնը եւ ռենեգատ Կաուցկին» վերնագրով եւ աւելի անճաշակ գրուածքի մէջ․ հայհոյանքներ, որոնց տառաց

— Օ՜ֆ, այս մարդիկ, բոլշևիկները, փողոցային լուտանքներով հայհոյում են Պլեխանովին և Կաուցկուն՝ գիտական սոցիալիզմի և մարքսիստական թէորիաների ամենահեղինակաւոր ներկայացուցիչներին, և միաժամանակ չարաշահում են նրանց երկերը եռանդով հրատարակել, ուրիշ խօսքով ապրել նրանց մտաւոր-գաղափարային փշրանքներով։ Բայց իրականին մէջ որքա՞ն են բոլշևիկները իրանց մտածելակերպով և մանաւանդ գործելակերպով նահատակում մարքսիզմին ու մարքսիստներին։ Նրանց մարքսիստականութիւնը արտայայտւում է միայն նրանով, որ անդադար հրատարակում են մարքսիստական հին ու նոր երկերը. դա էլ անշուշտ, որոշ կարգի ծառայութիւն է, բայց այդ տպագրական ծառայութեամբ նրանք ոչինչ չեն տալիս առաջ երկրին ու ժողովուրդին՝ վերջնիս վիճակի իրական բարեփոխութեան նկատմամբ։

Այդ ամբողջ երեկոյեան անցրինք ընթերցանութեամբ։ Ստացել էինք դրսից առատ ուտելիքներ և անկողիններ։ Քուն մտանք ժամը 11-ին և այդ գիշեր հանգըստացանք առանց ոևէ միջադէպի։

III

Յաջորդ առաւօտեան (դեկտեմբերի 4-ին) կամենդանտը յայտնեց, որ մենք պիտի տեղափոխուենք քաղաքի պարէտի շէնքը։ Մենք ափսոսացինք, որ այդ

կարմիրել կարող էր վերջին կառապանը, ամենահայհոյասէր ռուս մուժիկը (գեղջուկը)։ Լենինը, որպէս բռնապետի մտածող, արժանի չէ Կաուցկու անգամ կօշիկների քուղերը արձակելուն։ Այն ժամանակ, երբ Լենինը դեռ մարքսիստ էր, Կաուցկուն խնկարկող աշակերտների շարքին էր պատկանում։ Յետոյ, երբ նա գլորուեց Բակունինեան անարխիզմի գիրկը, սկսեց Կաուցկուն հայհոյել այնպէս, ինչպէս Բակունինը հայհոյում էր Մարքսին։

թանուկ փողոցից և մաքուր բնակարանից պիտի հե-ռանայինք․ ժամը 9-ին, առաւօտեան, ինքը քաղա-քային պարէտը․ նախկին ծանօթ ազգաներից մէկը՝ գնդապետ Մաւսայէլեան․ գալիս է աւտոմոբիլով մեզ տեղափոխում իր շէնքը․

Մեր նոր բնակավայրը ոչ մի դրաւչութիւն չու-նէր․ Տուել էին մեզ մի փոքրիկ, բաւական կեղտոտ, պատուհանը դէպի բակը նայող սենեակ․ Կոմենդան-տը ներողութիւն խնդրեց, որ իր անբաւարար շէնքի մէջ աւելի լաւ սենեակ չունեն, աւելացնելով, որ մենք այդտեղ միայն մի գիշեր պիտի մնանք, վաղը պիտի տեղափոխուենք ոչ հեռու գտնուող միլիցիայի պահեստա-տեղի կոչուող շէնքը, ուր դեռ առաջ էլ ժամանակաւո-րապէս տեղաւորում էին նոր բանտարկեալներին․ Մեզ համար կարեւորը նոր բնակավայրի ռէժիմն էր, այ-սինքն այն, որ մեզ չզրկէին արտաքին աշխարհի հետ յարաբերութիւն ունենալու իրաւունքից․ Բարեբաղ-դաբար այդտեղ եւս ունեցանք այցելուներ ոչ պակաս թւով․

Մեզ յայտնեցին, որ Շահումեանին նշանակել են քաղաքային պարէտի կոմիսար․

— Ոչինչ, — դարձաւ դէպի Օլլին, — իր թափած եռանդի արժանի գնահատումը գտել է արդէն ձեր նա-խարարակազմը․

Մենք տեղաւորուեցինք մեր նոր սենեակում և շա-րունակեցինք ընթերցումը․ Փոքր անցած մտաւ մեզ մօտ նոր կոմիսարը՝ Գ․ Շահումեանը․ Օլլին դարձաւ նրան հետեւեալ հարցով․

— Մի՞թէ ես չպիտի իմանամ, թէ ինչո՞ւ էք ինձ բանտարկել․

— Ոչինչ․ Գ․ Տէր Միքայէլեան, դատարկ բան է․ ձեզ շուտով բաց կը թողնեն, ձեզ համար բոլորն էլ ե-րաշխաւորում են․

Ապա դառնալով ինձ, ասաց հետեւեալը.

— Ձեզ համար շատերը դիմում են Միխային եւ խնդրում են ազատել ձեզ։ Միխան իմ միջոցով դիմում է ձեզ եւ խնդրում է պատասխանել հետեւեալ երկու հարցերին՝

1. Ի՞նչպէս է արդեօք ձեր վերաբերմունքը դէպի Հայաստանի սովետականացումը կամ խորհրդային դառնալու փաստը։

2. Կը ցանկանա՞ք արդեօք գործել Խորհրդային Հայաստանում։

Ես խոստանում եմ պատասխանել, եւ իրաւ նոյն կոմիսարի միջոցով ուղարկում եմ հետեւեալ գրութիւնը.

«Խորհրդային Ռուսաստանի Միխային
Հայաստանում

Ես, որպէս Կաուցկու եւ Պլեխանովի հետեւողական աշակերտ, գրաւոր ու բանաւոր արտայայտուել եմ բոլշեվիզմի դէմ սոսկ գաղափարային պայքարի շրջանակներում, որպէս իդէական շիտակ հակառակորդ։

Սակայն, ես սիրում եմ իմ ժողովուրդը եւ նրա գոյութեան շահը, — որի համար պատրաստ եմ մեռնել իւրաքանչիւր վայրկեան, — շատ աւելի, քան իմ զգացմունքները եւ նուիրական համոզմունքները։ Երբ ես տեսնեմ, որ իրերի անողոք դասաւորութեամբ կեանքի կոչուած խորհրդային իշխանութիւնը Հայաստանում ի վիճակի կը լինի, յենուած խորհրդային Ռուսաստանի ուժեղ բազկի վրայ, փրկել դժբաղդ հայ ժողովրդի վերջին բեկորների ֆիզիքական գոյութիւնը, պաշտպանել նրա առաջադիմութեան ուղիները, ապա ոչ միայն դէմ չէի լինի, այլեւ ի սպաս կը դնէի խոր-

խորհրդային Հայաստանին իմ բոլոր ուժերը սիրած աս-պարէզներում. գիտակցելով, որ դրանով ծառայում եմ դարձեալ հայ ժողովրդին, ես իմ բնաւորութեան խառնուածքով աւելի շուտ կաբինետային մարդ եմ, քան աղմկալից հրապարակի, կուզենայի, որ ինձ հնարաւորութիւն տրուէր նուիրուելու Հայաստանի քաղ-մաէջ կեանքի տնտեսա-վիճակագրական ուսումնասի-րութեան գործին։ (Ստորագրութիւն)

Երեւան, 1920 թ., դեկտեմբերի 4-ին։

Միաժամանակ նոյն այդ գրութեան պատճէնը ու-ղարկում եմ դուրսը, իմ ընկեր Դաւիթ Անանունին, ի պահպանութիւն։

Բոլշեւիկները, գլխաւորապէս մեզ արդէն յայտ-նի Աշոտ Յովհաննիսեանը, լուր են տարածում քա-ղաքում, որ իբր ես ամեղայականս եմ ուղարկել մի-սիա, որով յետ եմ վերցնում իմ բոլոր խօսածները բոլշեւիկների մասին, հրաժարւում եմ այսուհետեւ նրանց դէմ դուրս գալուց եւ նոյն իսկ, ո՛վ Աստուած, Աշոտ Յովհաննիսեանը իր մի բարեկամ դաշնակցակա-նի (Վահան Նաւասարդեան) ուղղած նամակում այն-քան է մոռանում խիղճն ու ամօթը, որ գրում է՝ Ռէչխանեանը իր գրութեան մէջ հրաժարւում է երկ-րորդ ինտերնացիոնալից։ Ափսոս միայն, որ Յովհան-նիսեանը չի աւելացրել, Ռէչխանեանը ծունկ է խո-նարհում երրորդ (Մոսկուայի) ինտերնացիոնալի ա-ռաջ։ Եթէ կարելի է թխել մի սուտ, ինչո՞ւ չթխել երկրորդը, երրորդը. ո՛վ է սանձ դնում նրանց լեզ-ուին։

Ես գիտէի, որ ստախօսութեան, խաբեբայու-թեան, բացարձակ կեղծիքի եւ մանաւանդ հրապարա-կային դեմագոգիայի մէջ, բոլշեւիկները — սկսած նը-րանց գաղափարային ուսուցիչ Լենինից մինչեւ վեր-

ջին սատանէն ու մինչքօրը— ճիզւիտների դպրոցն աւարտած չնաշխարհիկ վարպետներ են, հէնց այդ պատճառով էլ ես հարկ համարեցի պատճէնն ուղարկել Դաւիթ Անանունին, որը իր հերթին ցաքանում էր լպիրշ ստախօսների բերանները և եռանդով հերքում տարածւած լուրերը, ունենալով իր ձեռքի տակ գրաւոր դօկումենտ։

Օ՜, եթէ իմ վերոյիշեալ գրութիւնը պարունակէր նրա հեղինակը վարկաբեկող «Մեղայականի» դէթ մի նշանախեց, պ. Ա. Յովհաննիսեանը չէր վարանի ամենալայն չափով մամուլի շահագործութեան նիւթ դարձնել, իրանց «Կօմունիստում» կը հրատարակէր ընդարձակ մեկնութիւններով, կը շտապէր հեռագրով յայտնել Մոսկւային։ Չէ՞ որ նոյն պարոնը, իբրեւ միսիայի տեղեկատու բաժնի վարիչ, չէր զլանում Մոսկւա հեռագրելու անգամ իմ դասախօսութիւնների մէջ եղած քննադատականները բոլշեւիկների մասին և մեր կուսակցութեան բաց թողած թռուցիկների (քաղաքական վայրկեանների մասին) բովանդակութիւնը։ Իսկ այս անգամ, երեւակայում եմ, նա առանձին բաւականութեամբ կը հաղորդէր իմ «Մեղայականի» բովանդակութիւնը և յաղթական տոնով կը յայտարարէր. «անգամ Իշխանեանը նւաճեց մեր առաջ հոգով, մտքով ու բարոյապէս»։

Բայց իմ հակառակորդները չ՛յանդգնեցին մի խօսքով անգամ մամուլի նիւթ դարձնելու իմ գրութիւնը, շատ լաւ ըմբռնելով, որ այդ գրութիւնը մի բարոյական ապտակ է իրանց հասցէին և բարոյական ատեստացիա նրա հեղինակի համար։

Ես համաձայն չեմ իմ մի քանի ընկերների և ծանօթների հետ, որոնք անպատեհ էին համարում այդ գրութիւնը։ Ես հասկանում եմ բարեկամներիս։ Տեսայ

վայրկեանին տարածուած ստայօդ լուրերի անախորժ տպաւորութեան տակ ներելի է նրանց այսպէս դատել։

Բայց կարեւորն այդ չէ. «Սուտի պոչը կարճ է լինում» — ասում է ժողովրդական առածը.

Սուտը վաղանցուկ է. Փաստական ճշմարտութիւնը հրապարակ կը գայ, կը պատժէ ստախօսական հնարինակներին եւ հրապարակի վրայ կը մնայ միշտ ճշմարտախօս գրութիւնը, որպէս մնայուն դոկումենտ։

Ես շատ գոհ եմ, որ ժամանակին առաքուել է այդպիսի մի գրութիւն ըստ պատկանելոյն եւ մենք ունենք այժմ սեւը սպիտակին վրայ անջնջելի մնացած մի պատմական նշանակալից դոկումենտ.

Ի՞նչ է արդեօք այդ գրութեան իմաստը։

Տաճկական սպանիչ պատերազմի հետեւանքով Հայաստանը կանգնել էր փակուղու առաջ։ Եթէ նա չընդունէր ուժով (վերջնագրի պահանջով) իր չլինքին փաթաթած խորհրդային վարչաձեւը կամ բոլշեւիկների իշխանութիւնը, պէտք է տաճկական մահացու վտանգին անկլանար ռուսականը. Ուստի Հայաստանի Հանրապետութիւնը գերադասեց ընդունել հիւսիսային ոյժերի պահանջը, որպէս չարիքներից փոքրագոյնը.(*)

Ստեղծուած քաղաքական կացութեան հանդէպ պատասխանատուութեան զգացմունք ունեցող ամեն մի հայ գործիչ պիտի մտածէր այսպէս. տուեալ վայրկեանին, երբ իրերի անողոք դասաւորութեամբ հայ ժողովրդի քաղաքական բաղդը յանձնուած է կամ գտնւում է բոլշեւիկների ձեռքին, իմ գործնական դիրքը դէպի խորհրդային Հայաստանը պիտի թողէ այն

(*) Քաղաքական այդ իրադարձութիւններին մենք կը նուիրենք մի առանձին գրուածք. 1)

1) Բ. Իշխանեանի այս փափաքը, իր մահուան շնորհիւ, դժբախտաբար, անկատար մնաց։ Վ. Ն.

գերագոյն սկզբունքից, որի անունն է հայ ժողովրդի ֆիզիքական գոյութեան և առաջադիմութեան շահ, անկախ այն հանգամանքից, թէ տեսականօրէն ինչ համոզմունքներ ունեմ բոլշևիզմի մասին և անհատականօրէն ինչ պայքար եմ մղել նրանց դէմ անցեալում։ Ես պայման եմ դնում. եթէ դուք, եկւոր ոյժերդ, ի վիճակի էք արդարացնելու հայ ժողովրդի յոյսերը, համեցէք ձեզ իմ ծառայութիւնը։ Ինչ ասել կուզի, որ այդ պայմանը բաց ձեռքեր է տալիս ինձ՝ փոխելու իմ գործնական դիրքը դէպի խորհրդային իշխանութիւնը, եթէ վերջինս չարդարացնէ տածած յոյսերն ու ակնկալութիւնները։

Ահա այս է իմ գրութեան իմաստը։

Ես գոհունակութեամբ պիտի շեշտեմ, որ յետոյ, Հայաստանում գործող բոլոր քաղաքական կազմակցութիւնները — դաշնակցականները, սօցիալիստ-յեղափոխականները, սօցիալ-դեմօկրատները, հնչակեանները և անգամ ժողովրդականները — իրանց պատրաստակամութիւնն են յայտնել խորհրդային կառավարութեան՝ աջակցելու նրան և ծառայելու նոր վարչաձևի օրով այնպէս, ինչպէս առաջ։ Ի հարկէ, ոմանք, օրինակ հնչակեանները և Դաշնակցութեան ծոցից ելած «ձախ» երիտասարդները չափազանց հեռու են գնում իրանց շողոքորթ արտայայտութիւնների մէջ նոր տէրերի հանդէպ (յետոյ շատ են զղջում նրանք այդ բանի համար)։

Ինչպէս տեսնում է ընթերցողը, խաղաղութեամբ Հայաստան «նուաճած» պարոնները չէին գտնում երկրի ներսում իրենց հանդէպ կանգնած որևէ թշնամի յանձին այս կամ այն քաղաքական հոսանքի։

Այս փաստը շատ կարևոր է և պէտք վերյիշուի ու ընդգծուի առանձնապէս։

Փոխանակ գործի լծելու հայ մտաւորականութիւնը, օգտագործելու նրա կուլտուրական և մասնագիտական ոյժերը. ընդհակառակը վանում են իրանցից բանու-թեան և արհեստաւորու քաղաքականութեան սիրահար-ները և բոլորին թշնամացնում իրանց դէմ.

Կրկնում ենք, պէտք է բարձր հնչեցնել այս պատ-մական փաստը, որպէսզի միանգամ ընդմիշտ պապանձ-ւեն այն լեզուները, — մոլորւած թէ վարձւած, — ո-րոնք ջանում են սխրագործ հերոսների յետագայ ե-ղած ոճիրները մեղմացնել և կամ նրանց պատասխա-նատուութիւնը թեթևացնել, մեղադրելով միւս կու-սակցութիւններին.

Այս գրւածքի ծաւալը չի ներում ինձ կանգ առ-նել այնպիսի հարցերի և կէտերի վրայ, որոնք ընդ-հանուր քաղաքական բնոյթ են կրում. դրանց վրայ կը ծանրանամ հանգամանօրէն մի այլ գրւածքի մէջ.

Դեկտեմբերի 4-ին մեր յաւծ նորութիւնն այն էր, որ կոմիսարներից երկուսը՝ Հեղափ. կոմիտէի նախա-գահ Կասեանը և զօրական կոմիսար Աւիսը Դիլիջա-նից եկել է Երևան.

Կասեանը նախկին հնչակեան է. արդէն վաղուց մտած բոլշևիկների շարքերը. Նա բնաւորութեամբ բարի ու չափաւոր, Հայաստանի առանձնայատկու-թիւնները ըմբռնող ու գնահատող մարդ էր. Բայց ինչ նշանակութիւն ունէին այդ բարեմասնութիւնները, երբ նա չափազանց կամազուրկ, մտավախ և թուլա-մորթ էր, բացարձակապէս զուրկ որև է ազդեցութիւ-նից սեփական ընկերների շարքերում, ուր նա «Հայր սարկաւագ» ծառայական մականունն էր վաստակել. Կարծես նրան նշանակել էին կառավարութեան գլուխ՝ յարգելով աւելի շատ նրա տարիքը, քան շնորհքն ու ընդունակութիւնը.

Այլ տիպ էր Աւիսը. նա Հայաստանի Հերոստրատն էր, չարաճճակ թրքրքուած ուղեղի ազդեցութեան տակ գործող մի հիւանդ դէմք (երիտասարդ ուսանող), կատարեալ ապիկար և գեղեցկերատ, դեռ մինչև 1918 թւականի կէսերը մոլեռանդ դաշնակցական, իսկ յետոյ. ռուսապաշտութիւն ընդունած հրէայի նման, աշխատում էր ամէն մի լպիրշ ու ստորաքարշ արարքով իր մայր ծնողի դէմ ցոյց տալ իսկական ռուսներին, որ նա ուղղափառից էլ աւելի մոլեռանդ ու հաւատարիմ անդամ է. Աւիսները կառավարեցին Հայաստանը և որոշեցին նրա քաղաքական բաղդը, բայց ոչ Կասեանները: Նա Աւիսների նման տիպերն էին խռուանքի ու գուլքի արժանանում կենտրոնից, որովհետև ինքը՝ բոլշևիկեան ռէժիմը, որպէս արդար սիստեմ, հիմնուել եւ առաջ էր տարւում Աւիսների միջոցով.

Յաջորդ օրը, դեկտ. 5-ին, իսկապէս մեզ տեղափոխում են նոր չէկը, տեղաւորում են դահլիճի չափ մեծ սենեակում մի քանի պատուհաններով, բայց չատ ցուրտ. միակ մխիթարութիւնը արեգակի ճառագայթներն էին, որ ուղիղ նայում էին մեր պատուհաններին և փոքր ինչ ջերմացնում մեզ. Փայտ երբեմն տալիս էին, երբեմն ոչ, նայած ինչ կարգի զինուորներ էին մեզ մօտ պահակ կանգնում: Հերթի կանգնող պահակի բոլոր զինւորները հայեր էին, որոնք, խիստ սակաւ բացառութեամբ, չատ լաւ տղերք էին. ընդառաջում էին մեզ՝ ինչ քանով կարող էին, եկող այցելուներին բաց էին թողնում առանց զգալի դժուարութիւնների. իսկ մենք առատօրէն ստացած մեր ուտելիքներից բաժին էինք հասցնում նրանց ըստ հարկին: Օղու համար նարդի էին բերել դրսից, այնպէս որ մենք բացի կարդալուց ունէինք նաև ուրիշ զբաղմունք:

Այդ օրը բերան մեզ մօտ սպայ Շահխաթունեանին՝ Երեւանի նախկին պարէտ և մեր յայտնի գեներալ Շահխաթունեանի եղբօրը. Ինքը տարիներով ծառայել է բօլշեվիկների մօտ Ռուսաստանի զանազան մասերում, որպէս նախկին զօրքի սպայ և ամիսներ առաջ մի հրաշքով նրանց ձեռքից ազատուել ընկել էր Հայաստան։ Այժմ նորից բռնել էին այդ տանջուած, զանութիւններ տարած մարդուն ինչ-ինչ անհիմն կասկածների հիման վրայ։ Նրա յաճախակի լացը, մանաւանդ իր ռուս կնոջ ներկայութեամբ, ծանր տպաւորութիւն էր թողնում մեզ վրայ։ Երեք օրից յետոյ նրան տեղափոխեցին Բագու՝ այնտեղ քննելու համար նրա գործը։ Մեկնելու նախընթաց երեկոյեան եկել էր նրա մօտ մի ուրիշ եղբայրը՝ հայկական բանակի զինուոր, մի յաղթանդամ երիտասարդ։

— Բաւական է. թոյլ տուր ինձ գնալ այդ սրիկային սպանել, ինչ ուզում է թող լինի։ Ես գիտեմ, որ քեզ Բագուից չեն վերադարձնելու։

Խօսքը վերաբերում էր պ. Աւխին, որի հրամանով եղբօրը ուղարկում էին Բագու։

Սպայ եղբայրը մի կերպ հանգստացրեց իր զինուոր եղբօրը և ուղարկեց տուն։

Յաջորդ օրը բերան մեզ մօտ երկու տարբեր եւ՝ մի անգլիացի գնդապետի, որ վերջին 2—3 ամիսների ընթացքում մտել էր հայկական բանակը ծառայելու, և մի տաճիկ սպայի, որին գերի էր վերցրել խմբապետ Սեպուհը տաճկական պատերազմի վերջին ընդհարումների ժամանակ, Ղարաքիլիսայի ուղղութեամբ։

Անգլիացի սպան, հազիւ 26 տարեկան մի երիտասարդ, ինքը թատերագիր, պարզապէս զոհ էր գնացել իր միամտութեան։

— Շատ էի լսել և շատ էին պատմում ինձ բոլ-

շևիկների մասին— դարձաւ նա ինձ կոտրատած գերմաներէնով. Օգտւելով այն հանգամանքից, որ բոլշևիկները գալիս են Հայաստան խաղաղ կերպով և ոչ կռւով, և որ անմեղ մարդկանց, մանաւանդ օտարներին, ձեռք չեն տալ, ես վճռեցի մնալ Երևանում և տեսնել, թէ ինչ տեսակ մարդիկ են նրանք և որքան ճիշտ են նրանց մասին լուրերը. Եւ այժմ տեսնում եմ, թէ որքան սխալւել եմ, որ ընկել եմ այս բարբարոսների ձեռքը. փողոցում բռնել են ինձ և առանց բացատրութեան, առանց ասելու, թէ ինչի մէջ է կայանում իմ մեղքը, բերել են այստեղ.

— Պարոն սպայ,— ասացի ես նրան,— դուք միամիտ էք եղել երկու բանում, նախ, որ ինքնաբերաբար մնացել էք և ձեր թշնամիների ձեռքն ընկել և երկրորդ՝ այն բանում, որ դուք չէք իմացել, որ ձեր մեղքը բոլշևիկների աչքում հենց ձեր անգլիացի լինելու մէջ է կայանում.

Անգլիական սպային պահում են մի քանի շաբաթ, որպէսզի նրան փոխանակեն մի որևէ բանտարկւած ռուս բոլշևիկի հետ անգլիական երկրներում. Թէև անգլիացին շատ էր մտատանջւում, բայց նա գոհ էր, որ գնդակահարելու փոխարէն վերջ ի վերջոյ իրան ազատելու են.

Տաճիկ սպային պահեցին մի օր. Տաճիկների դաշնակից բոլշևիկները չյանդգնեցին նրան երկար պահել և գոնէ Ղարսում գերի մնացած բազմաթիւ հայ սպաներից մէկին ու մէկի հետ փոխանակել. Նրան բաց թողեցին առանց այլևայլի և ուղարկեցին Ալէքսանդրապոլ՝ հրամանատար Կարաբէքիր փաշայի բանակը.

Ապշեցուցիչ բաներ էր պատմում այդ թիւրք սպան հայ քայքայւած զօրքի մասին, թէև նրա տաճկերէն լեզուն մեզնից ոչ ոք հասկանալ չէր կարողանում,

բացի ապայ Շահխաթունեանից, որ իր կիսաթուրքե-րէնով կարողանում էր որևէ կերպ բացատրել։

— Ես դեռ չեմ տեսել որև է գործ այդպիսի վի-ճակի մէջ։ Առանց մեր կողմից հրացան արձակելու, բաւական է, որ մեզ տեսնում էին հայ զինուորները, իսկոյն փախչում էին ահաբեկուած ամբոխի նման։ Մենք հայ զինուորների կռուելու ընդունակութեան և քաջու-թեան մասին շատ աւելի լաւ կարծիք ունէինք։

Տանիէլ ապան մի քանի դէպքեր պատմեց իր ա-սածները հաստատելու համար։ Ի հարկէ, կարող է պատահել, որ նա յաղթող կողմի հպարտութեամբ մի շարք չափազանցութիւններ արած լինի։ Բայց իրա-կանութիւնը անհերքելի էր. տարաբախտաբար հայ զօր-քի բանդայի վերածուելու չափ կազմալուծուած լինե-լու փաստը ակնյայտնի էր բոլորիս համար։

Յաջորդ օրը առաւօտեան պահակի զինուորներից մէկը, որպէս աւարքերից, հրամցնում է մեզ բոլշևիկ-ների պաշտօնական օրգանի («Կոմունիստ» անունով) առաջին համարը։ Թէ ինչ «մտքեր» էին քարոզում տգէտ աշակերտների և թերևս ուսանողների ձեռքով խմբագրուող այդ վատ թերթուկի մէջ Լենին-Տրոցկու հայ համհարզները, այստեղ չէ, որ կարելի է ծան-րանալ նրանց վրայ. դրանց քննադատութեան հերթը եւ կը գայ մի այլ անգամ և այլ տեղ։

Առաջին համարում պատիւ էին արել ինձ բոլշե-վիկները, տպելով խոշոր տառերով.

«Բ. Իշխանեանը բանտարկուած.

Ձերբակալուած է յայտնի հակայեղափոխական Բախշի Իշխանեանը»։

Ցոյց տալով այդ տողերը Օնիկին, չկարողացայ զսպել Բուալյոյի հեգնական ժպիտը։

— Լսում ես, Օնի՛կ. ինձ հակայեղափոխական են

անուանում այդ պարոնները և երևի վաղը իմ դէմ ուղղած մեղադրականը այդպէս էլ որակուած կը լինի, որպէս հակայեղափոխական. Յեղափոխականութեան և սօցիալիզմի դասերը մեր կեանքում մեզնից են առացել այդ ազէտ աշակերտները, իսկ այժմ մենք հակայեղափոխական ենք նրանց աչքում.

— Արժէ՞ դրա մասին խօսել. Հէր օրհնած, դու ինքդ գիտես, որ Պլեխանովի նման մարդուն— ռուսական սօցիալիզմի հօրը և կուսակցութեան հիմնադրին, որին անխտիր աշակերտել են բոլոր ռուս սօցիալիստները,— կենդանի նահատակեցին, այնպէ՛ս բառերով որակեցին նրան. ինչի՞ մասին ես խօսում.

— Այո՛, այդպէս է, սիրելի Օվի. Բայց ես կուզենայի, որ ողջ աշխարհը, մանաւանդ մոլորուածների և խաբուածների լեգէոնները հասկանային մի անգամ ընդմիշտ, որ բոլշեվիկների կողմից գործածած «հակայեղափոխական» խօսքը, ուղղած իրանց հակառակորդների դէմ, ուրիշ բան չի նշանակում փաստօրէն, բայց եթէ հակաբոլշեվիկ. Բոլշեվիկների ամեն մի գաղափարային հակառակորդ ուրախութեամբ կ՚ընդունէ կուլտուրականութեան այդ մեծ վկայականը՝ հակաբոլշեվիկ լինելու կոչումը. Բայց նրանք դիտմամբ բոլշեվիկութիւնը և յեղափոխութիւնը դարձրել են հոմանիշ հասկացողութիւններ, որպէսզի հակայեղափոխական (կարդա փաստօրէն՝ հակաբոլշեվիկ) որակումով վարկաբեկել կարողանային անգիտակիցների աչքում բոլոր հակաբոլշեվիկ յեղափոխականներին ու սօցիալիստներին. Մինչդեռ այն օրից սկսած, երբ ռուսական բոլշեվիզմը վերածուեց բռնակային նիհիլիզմի և վերջինիս ներկայացուցիչները— հոգով ու մարմնով բռնակալները— իրանց կեղտոտ ձեռքերով արատաւորեցին յեղափոխութեան, սօցիալիզմի, կոմունիզմի ու

այլ նուիրական գաղափարների սրբազան տաճարները. ահա այդ օրւանից ի վեր թօլստօյիզմը ոչ միայն հակայեղափոխութիւն է նշանակում, այլ և վատթարագոյն տիպի ռէակցիա.

— Այդ թեման շօշափե՞լ ես դու քո դասախօսութիւնների մէջ,— հարցրեց ինձ Օվին.

— Այո՛, բայց միայն շատ անցողակի կերպով. Ուզում եմ ամենից առաջ գրական քննութեան նիւթ դարձնել այդ հարցը, բայց դժբախտաբար ժամանակ չեմ ունեցել մինչև այժմ. Երևանը, Օվի, իր ընձեռած գործնական աշխատանքներով և կենդանի պայքարի բազմաթիւ առիթներով կլանել է իմ ամբողջ ժամանակը և գերեզմանափոր դարձել իմ գրական աշխատանքների համար. Թիֆլիսում և Բագւում շատ աւելի բեղմնաւոր էի, քան Երևանում. միւս կողմից էլ պետական վիճակագրութեան կազմակերպութեան գործն էր կլանում իմ ամենաթարմ ժամերը— առաւօտները.

VI

Այդ օրը այցելուներից մէկը հաղորդեց մեզ մի շատ անախորժ լուր. քաղաքում յամառ կերպով խօսում էին այն մասին, որ ճանապարհին, Ղարաքիլիսայի կողմերում, բռնել են Երևանից հեռացող խըմբերից մէկին. Մենք սկզբում կասկածում էինք այդ լուրի ճշտութեան մէջ, բայց յաջորդ օրը նոյն լուրը հաղորդւած էր թերթի մէջ, առանց յայտնելու, թէ ովքեր են բռնւածները. միայն աւելացրւած էր, որ բռնւած խմբի մէջ կան նախկին նախարարներ և պարլամենտի անդամներ. Օվին շարունակում էր կասկա-

ծել, իսկ ես հաւանական էի համարում և ենթադրում էի, որ Երեւանում հեռագիր է ստացուած այդ մասին։ Յետոյ, ինչպէս յայտնի է, դժբաղդաբար ճշտում է իմ ենթադրութիւնը։

Նոյն օրը յայտնում են մեզ, որ կոմիսարներից չորս հոգի ևս եկել են. Ալ. Բէկզադեան (արտաքին գործերի կոմիսար), Ի. Դովլաթեան (ներքին գործերի կոմիսար), Կոստանեան (ճանապարհների—հաղորդակցութեան կոմիսար) և Ոսկանեան (աշխատանքի նախարար)։

Վերջին երկուսին չէի ճանաչում։ Գիտէի միայն այն, որ նրանք առաջին կուրսի ուսանողներ էին տակաւին, երբ 1917 թ. նետուեցին շարժման գիրկը. և իրանց տեղը գտան բոլշեվիկների շարքերում։ Ահա այդ թերուս երեխաներն են, ոչ մի առնչութիւն չունեցած հայկական կեանքի հետ, որ նախարարական կամ կոմիսարական պաշտօններ պիտի վարէին Հայաստանում։

Առաջին երկուսին՝ այդքան կարեւոր պաշտօններ ստանձնած Բեկզադեանին եւ Դովլաթեանին, ճանաչում էի շատ լաւ։

Բէկզադեանը գործում էր բոլշեվիկների շարքում 1904 թուականից ի վեր. նա, այսպէս անուանուած, բոլշեվիկ էր հին տիպի, ինչպէս և տողերիս գրողը։ Բայց 1917 թուականից ի վեր, այսինքն յեղափոխութեան շրջանում, նա թողնում է շատերի նման կուսակցութեան շարքերը, երբ նկատում է, որ արդի անարխիստական բոլշեւիզմը ոչինչ ընդհանուր գիծ չունի նախկին սոցիալ դեմօկրատական բոլշեւիզմի հետ։ Մինչեւ 1920 թ. այդ պարոնը ոչ միայն բոլշեվիկների հետ չէր, այլ և նրանց քննադատում էր։ Սակայն յիշեալ թուականից ի վեր, երբ բոլշեւիկեան հօրդաները հե-

ողջնում մնում են կովկասեան լեռնաշղթայի և
ինքնորոշուած ժողովուրդներին նուաճողական վտանգ
սպառնում. մեր պ. Բէկզադեանը կամաց-կամաց փո-
խում է իր դիրքը, վերսկսում իր կապերը բոլշևիկ-
ների հետ և 1920 թ. մայիսին անցնում Բագու (Թիֆ-
լիսից), երբ բոլշևիկները գալիս տիրում են Ադրբէյ-
ջանին։

Ահա սա էլ մի տարբեր տիպը Հայաստանի քա-
ղաքական բաղդը անորոշողների։ Երևի պարոնը ափ-
սոսել է, որ չորս տարի շարունակ ի զուր հեռու է
մնացել քաղաքական կարիերայի մարզանքներից և
աշխատում է նորից դարձի եկած հաւատացեալի նման
քաւել իր հաւատուրացութեան մեղքը նրանով, որ
ամենից եռանդով և ջերմեռանդութեամբ կրկնում է
յաճախ բոլշևիկեան պատւիրանների այն անամէջ
ֆրազէօլօգիան, որ երէկ իսկ նոյնքան եռանդով պա-
պանում և քննադատում էր։

Որքա՛ն հոգիներ է փչացրել բոլշևիզմը և կամ
որքա՛ն փչացած հոգիներ են աւելի ու աւելի այլա-
սերել ու այլանդակել բոլշևիզմը—դա Աստուած գիտէ։

Այլ կաթեգորիայի է պատկանում Դավլաթեանը։

Նա տարրական միայն կրթութիւն է ստացել, ե-
ղել է տարիներ շարունակ Բագւում հասարակ գրա-
գիր Մանթաշեանի նաւթարդիւնաբերական ձեռնար-
կութեան գրասենեակում, անդամ էր համարւում մեր
կազմակերպութեան, իսկ վերջին յեղափոխութեան շըր-
ջանում անցել էր բոլշևիկների շարքերը։ Նա չա
քիչ հասկացողութիւն ունի այն գործից, որին նա
ծառայում է. մինչև վերջն էլ սօցիալիստական հա-
կացողութիւնների այբուբենը սովորում էր իր աւագ
ընկերներից։ Այժմ նրա ունեցած բոլոր իմաստու-
թիւնների աղբիւրը Լենինն է։

— «Եթէ մի շարժում ճիշտ չլինի և ապագայ չու-նենայ, մի՞թէ Լենինը այդքան մոլեռանդօրէն կը պաշտ-պանէ» — ահա Դուլլաթեանի հասկացողութիւնների ալֆան եւ օմեգան։ Եւ այդ պարոնը Հայաստանի «սօ-ցիալիստական» Հանրապետութեան ներքին գործերի կոմիսարն էր։

Արդէն դեկտեմբերի 10-ն էր, ուրբաթ օրը։ Վաղ առաւօտեան Օվին նոր միայն արթնանալով, աչքերի տանով ասաց. «Եւ եղեւ երեկոյ և եղեւ առաւօտ, օր եօթներորդ»։ Ահա եօթ օր է և ես դեռ չգիտեմ, թէ ինչու համար են ինձ բռնել։ Իսկ այդ պարոնների կանոններով, եթէ չեմ սխալւում, 24 ժամւայ ըն-թացքում պէտք է ձերբակալւածին քննեն և մեղադ-րանքը յայտնեն կամ բաց թողնեն նրան, եթէ ար-դար է։

— Օվի, մի օր էլ աւելացրու քո հաշւածին, դուրս կգայ իմ բաժինը։ Նրանց կանոններից ես խօսում. դարձեա՞լ այդքան միամիտ։ Մարդիկ «կարմիր տէր-րօրի» շաբաթներ էին յայտարարում Ռուսաստանի զանազան մասերում և հարիւրներով անխնայ գնդա-կահարում առանց հարց ու փորձի, իսկ դու մի շաբաթ նստել ես և նրանց գրաւոր կանոններն ես յիշում։ Քի՞չ բան ունեն այդ պարոնները գրի առած իրանց ծը-րագրի մէջ սօցիալիստական աւետարանից, իսկ իրա-կանութեան մէջ թքում ու մրում են ամեն քայլա-փոխման եւ՛ սօցիալիստական աւետարանը եւ՛ իրանց ծրագիրը։ Որքան միջին դարերում կաթոլիկ եկեղե-ցու պապական կազմակերպութիւնը հաւատարիմ էր մնում քրիստոնէական վարդապետութեան, այնքան էլ արդի բօլշեվիզմը, իբրեւ սօցիալիստական մեծ ըն-տանիքի մէջ մի հերձւած, կարող է հաւատարիմ մնալ սօցիալիստական ուսմունքին։ Էհ, Օվի, այդ բոլորը

դատարկ բաներ են. քեզ հաւանօրէն շուտով բաց կը թողնեն. չէ՞ որ ընկերներդ աշխատում են և քեզ շարունակ յուսադրում։ Հէնց այն հանգամանքը, որ դաշնակցականներից — քեզնից շատ աւելի պատասխանատու գործիչներից — մինչև այժմ ոչ ոքի չեն բռնել, ապացուցւում է, որ քեզ բռնել են ոչ թէ քաղաքական նկատառումներով, այլ այն անիծւած գործի համար։ Փաստօրէն, ինչպէս տեսնում ես, քաղաքական հողի վրայ բանտարկել են մինչև այժմ միայն և բացառապէս ինձ։

Նոր միայն հագնւում էինք, երբ պահակի զինւորների աւագը բերաւ մեզ մի թուղթ և ասաց, որ մինչև երկու ժամը մենք պիտի տեղափոխւենք զինւորական բանտը։ Թղթի մէջ գրւած էր. «ընկերներ... (այս ինչ մարդկանց՝ իմ, Օվու և անգլիացու անունները), որոնք հաշւում են Արտակարգ Յանձնաժողովի վրայ, տեղափոխել զինւորական բանտը»։ Ստորագրւած էր Արտակարգ Յանձնաժողովի նախագահ՝ Այվազեան։

Օհօ՛, — միաժամանակ կոչեցինք ես և Օվին և գըրութեան բովանդակութիւնը հասկացրինք նաև անգլիացուն, որը ոչ միայն զարմացաւ, այլ և վախ զգաց։

— Հը՛, Օվի, ինչպէ՞ս ես հիմա, ի՞նչ կասես այժըմ։ Արտակարգ Յանձնաժողովի (ինչպէս ռուսներն են ասում՝ «Չրեզվիչայնայա կոմիսիա» կամ կրճատւած գործ են անում սովորաբար՝ «Չե-կա», այդպէս էլ մենք գործ կածենք) ձեռքն ենք յանձնւած։ Չգիտեմ, դու գաղափար ունի՞ս այդ բացառիկ հաստատութեան մասին։ Բաւական է քեզ ասել, որ անգամ հին ցարական բիւրոկրատիան չէր յղացել և կեանքի կոչել նման մի զարհուրելի հաստատութիւն։ Բոլշեւիկեան րէժիմի բոլոր հրէշային կողմերն ամփոփւած

և մարմնացած են «Չե-կա»-ների մէջ։ «Չե-կա» ասածդ, սիրելիս, դա միայն ոստիկանատուն չէ և ոչ էլ սոսկ վարչական (ադմինիստրատիւ) օրգան. դա բանտ չէ միայն և ոչ էլ հասարակ դատաքննական հաստատութիւն։ Դա ամէն բան է, հասկանում ես, ամէն բան, որ լիազօրուած է ե՛ւ ձերբակալել, ե՛ւ քննել, ե՛ւ մեղադրական կայացնել, ե՛ւ բանտ նստեցնել, ե՛ւ աքսորել, ե՛ւ կախել, գնդակահարել կամ կացնահարել։ Նա Արտակարգ Յանձնաժողովի անունն է կրում և լիազօրուած է բացարձակ իրաւունքներով ամէն բան անելու։ Բոլշեւիկեան «իրաւագիտական» հասկացողութիւնը վերապահել է այդ հաստատութեան «հակայեղափոխութեան, սպեկուլացիայի (կամ չարաշաթեան) և «սաբոտաժի» (գործից կամ ծառայութիւնից խուսափողների) դէմ կռուելու կոչումը, և վայը տարել է այն քաղաքացուն, որի մասին փողոցները վըխտող «Չեկայի» գործակալներից մէկը կասկածելի լուր հաղորդեց «Չեկային»՝ վերոյիշեալ երեք կարգի «յանցանքներից» մէկն ու մէկը վերագրելով նրան. Նա արդէն ենթակայ է խուզարկութեան և ձերբակալութեան, նրան չկայ այլեւս փրկութիւն։ «Չեկաների» դժոխային գոյութեան դէմ անգամ Լենինը պայքարեց յամառ կերպով, համարելով նրանց անհրաժեշտութեան շրջանն արդէն անցած, բայց նա չարաչար պարտուեց Պետերսի կողմից, — համառուսական բոլոր «Չեկաների» կենտրոնական խորհրդի և Մոսկուայի «Չեկայի» նախագահից, — Ռուսաստանը փաստօրէն կառավարող այդ դահճապետից։ Այո՛, Լենինը միայն թագաւորում է, այնպէս, ինչպէս թագաւորում են բոլոր արքաները, իսկ երկիրը կառավարում են բացառապէս մեծ ու փոքր Պետերսները։ Եւ այժմ մենք, ես՝ հակայեղափոխականս, դու՝ չարաշահութեան մէջ մե-

եագրւողը, և այս օտարը, իբրև անգլիացի, ընկել ենք Երևանի նորահաստատ «Չեկայի» ձեռքը։

— Տեսնենք ինչ կը լինի։ Իսկ ո՞վ է այդ Այվազեանը, որ նշանակել են այդպիսի պատասխանատու պաշտօնի գլուխ, հարցրեց Օվին։

— Դա զանձակեցի ռուսախօս մի երիտասարդ է, անյայտին մէկը, որ դեռ անցեալ տարի ծառայում էր Բագւի կօօպերատիւում, որպէս հասարակ հրահանգիչ (ինստրուկտոր)։ Ո՛վ գիտէ, երևի մի որևէ զարշելի արարքով արժանի է դարձել իրան «Չեկայի» նախագահ լինելու կոչման։ Բայց դու ուշադրութիւն դարձրի՞ր, Օվի, թէ ինչպէս գրութեան մէջ «ընկերներ» բառն էր գործածւած մեր հասցէին։ Դա էլ բոլշևիկեան տարօրինակութիւններից մէկն է, բոլորին անխտիր ընկերներ կոչել։ Դեռ բոլշևիկներից առաջ մեր հանգուցեալ Սեդրակ Թառայեանը «Ընկեր» անունով մի շաբաթաթերթ էր հրատարակում, ուր նա թերթի ճակատին բառացի ձևով շարել էր տալիս միշտ խոշոր տառերով. «բոլոր մարդիկ ընկերներ են իրար հետ»։ Բայց կարո՞ղ էր երևակայել մեր խեղճ Թառայեանը, Շիլլերական տիպի այդ վերացած իդէալիստը, որ իր կեանքի վերջին տարիներին դարձել էր Տօլստոյի բարոյա-փիլիսոփայական հայեացքներով տոգորւած մի դէրվիշ, — կարո՞ղ էր նա երևակայել, որ իր կուսական և եղբայրասիրական իմաստով գործածած «ընկեր» գաղափարը փողոցայինի չափ կապականւի գազանային և մարդասպանական բընազդներով օժտւած «Չեկաների» հերոսների բերնում։

Մեզ, երեքիս, տեղափոխում են չորրորդ բանտավայրը։ Սա արդէն հասարակ բանտավայր չէ, այլ իսկական բանտ։ Երբ մէկը միւսին յաջորդող երկաթէ

դռները փակեցին մեր յետեւում և երեքիս խիստ խուզարկելով, վերցնելով դրամը, ժամացոյցները և բոլոր արժէքաւոր իրերը, ձգեցին մի խոնաւ, դուռը միշտ փակ կամերա, այդ ժամանակ միայն զգացինք, որ նստած ենք իսկական բանտում։

— Էհ, Օվի, այժմ մնաք բարեաւ չարունակական այցելութիւններ, արտաքին աշխարհին հետ կապ ու յարաբերութիւն և, ով գիտէ, առատ ուտելիքներ։

Բարեբախտաբար այդտեղի ծառայողները՝ բանդապետը, հսկիչները. պահակի զինուորները— բոլորը տակաւին մեր հանրապետութեան նախկին պաշտօնեաներ էին և բոլշեւիկների հետ ոչ մի կապ չունեցած— շատ քաղաքավարի են վերաբերւում մեզ հետ, մասամբ նաեւ այն հանգամանքի շնորհիւ, որ նրանցից շատերը ծառայել են Օվու մօտ՝ հիւանդանոցում։ Նրանք թոյլ են տալիս կերակուր ստանալ դրսից առանց արգելքի։ Ես ու Օվին, մանաւանդ ես, բաղձաւոր էինք ուտելիքների կողմից։ Այնքան առատ էինք ստանում, որ բաժին էինք հասցնում և՛ անգլիացուն և՛ մեզ ծառայող բանտարկեալին։

— Եղբայր, ես դուրսը երբեք այսպէս լաւ չէի կերակրւում, այսքան ուտել կը լինի՞,— ասում էր յաճախ Օվին։

— Ես էլ, գուցէ աւելի, քան դու, պէտք է խոստովանեմ նոյնը,— լրացնում էր Օվու ասածը։

Այդ բարութիւնը պատճառած էին մեզ, ի հարկէ, մեր լաւ բարեկամներն ու ընկերները։ Ես անտէր էի Երեւանում, ընտանիք չունէի, իսկ Օվու ռուս կինը, իր երեխաներով, գտնւում էր տարիներից ի վեր Խարկովում, որտեղից հնար չէր գտնում բոլշեւիկներից թոյլտուութիւն ստանալ և իր տունը վերադառնալ։ Խեղճ Օվին տանջւում էր ուղղակի։ Ինձ համար կերա-

կուր ուղարկում էր իմ ընկեր Աշոտ Մելիք-Յովսէփեանի ընտանիքը. որի երախտիքի փոխարէն ես հազիւ կարողանամ որեւէ հաւասարարժէք բարութեամբ հատուցանել. այնքան թանկ էր իմ աչքում այդ ընտանիքի արածը։

Յաջորդ օրը, դեկտ. 11-ին, հակառակ մեր սպասածի, գալիս են այցելուներ թէ ինձ և թէ Օվու մօտ, բայց այս անգամ արդէն «Չեկայի» յատուկ թղթով, միայն հինգ րոպէով. այն էլ բանդապետի հսկող աչքերի ներկայութեամբ։ Ինձ մօտ եկել էին իմ ընկեր Մելիք-Յովսէփեանի կինը՝ տիկ. Սիրանը և իմ բաժանմունքում ծառայող օրիորդներից մէկը, որոնք ձեւանալով իբրեւ իմ քոյրերը, յաջողեցրել էին ամենակարող «Չեկայից» թոյլտուութեան թուղթ ստանալ։ Բժիշկ Օվու մօտ եկել էին իր եղբօր աղջիկը և իր բժիշկ ընկերներից մէկը։ Տիկին Սիրանը հաղորդում է ինձ ուրախ-ուրախ, որ իր հօրեղբօր որդի Սերօժան (Սարգիս Բաղդաթեան, յայտնի բոլշեւիկներից մէկը, որ կարճ ժամանակով մնում է Հայաստանում, որպէս արդարադատութեան կոմիսար), եկել է և իմանալով իմ բանտարկութեան մասին, խոստանում է ամեն կերպ աշխատել ինձ ազատելու համար։ Բայց մեր այցելուները հաղորդում են նաև այն, որ Ղարաքիլիսայի մօտերը բռնուած խումբը բերել են արդէն և տեղաւորել առայժմ պարլամենտի շէնքում։ Այդ խմբի մէջ կային նախկին կառավարութեան անդամներ Համօ Օհանջանեանը, Արտաշէս Չիլինգարեանը (նա, որին սրած ժանիքներով հետեւում էին բոլշեւիկները) և պարլամենտի անդամներ՝ Բժ. Յ. Տէր Դաւթեանը, Վարշամեանը, Վ. Նաւասարդեանը, Բժ. Մելիքեանը, Երեւանի քաղաքագլուխ Ա. Տէր Աստուածատուրեանը և այլն, մօտ 15 հոգի։ Այդպէս ուրեմն

ճչւում է յամառ կերպով տարածւած լուրը. Նրանք բռնել էին հայ գիւղերից մէկի մօտ մի քանի միլիցիօներներ, ընդամէնը չորս վերստ հեռացած մինչև վրացական սահմանը.

Այդ լուրը մեզ շատ է վշտացնում. ինչո՞ւ արևախում Թշնամու ձեռքը տալ նորանոր քաղաքական զոհեր— մտածում էինք մենք.

Վերև յիշուած Ա. Բաղդաթեանին (Խորհր. Հայաստանի արդարադատութեան կոմիսարը) ճանաչում էի շատ վաղուց՝ դեռ ուսանողական շրջանից. Նա էլ մի տարբեր տիպի բոլշևիկեան գործիչ է, և տարաբաղդաբար նրա նմանների Թիւը շատ չնչին է բոլշեվիկների— մանաւանդ հայերի — մէջ. Նախ նա եղել է սկզբից և մնացել է մինչև վերջը բոլշևիկ. երկրորդ՝ խոստովանելով հանդերձ իր կուսակցութեան յոռի կողմերը, մի տարօրինակ մոլեռանդութեամբ և անխախտ հաւատով ու սիրով նւիրւել է իրենց շարժման, ընդունելով վերջինիս ճշտութիւնը և ապագայ յաղթանակը. երրորդ՝ ազատ է կեղծ դերակատարի մտավախութիւնից, քսութիւնից, կարիերիստական և շահախնդրական ձգտումներից. անկեղծ է. ազնիւ ու համեստ, ամենից շատ պատրաստւածը և ազդեցիկը հայ բոլշևիկների մէջ, լինելով Լենինի անձնական մօտ ծանօթը. Այդպիսի բոլշևիկի դէմ կարելի է պայքարել. իբրև գաղափարային հակառակորդի, բայց չի կարելի նրան չ՛յարգել, որպէս անկեղծ, շիտակ հակառակորդի.

Իր ազնւութեան և քաղաքացիական համարձակութեան փայլուն ապացոյցը ցոյց տւաւ նա հէնց առաջին վայրկեանին, երբ նոր ոտք էր դրել հայկական հողի վրայ. Նա հասնում է Դիլիջան այն ժամանակ, երբ վերոյիշեալ ձերբակալւած խումբը բերել

*էին Ղարաքիլիսայից ռուս կոզակների պահակախմբով և յամառ կերպով պահանջում էին Ղազախի վրայով տանել Բագու՝ այնտեղ նրանց դատը տեսնելու համար։ Ձերբակալուածների բոլոր դիմումներն ու խնդրանքները՝ Բագուի փոխարէն Երեւան տանելու համար, Դիլիջանի ռուս և հայ կոմիսարներին, ապարդիւն են անցնում։ Երբ յայտնում են դրա մասին նոր միայն եկած Ս. Բաղդասարեանին, վերջինս զայրանում է իր ստորաքարշ ընկերների վրայ և պահանջում է ձերբակալուածներին տանել Երեւան ասելով. «Հայաստանի քաղաքական բանտարկուածները կարող են դատուել միայն Հայաստանում և ուրիշ ոչ մի տեղ»։ Նա անմիջապէս կարգադրում է վստահելի պահակի ուղեկցութեամբ և օտօմօբիլով փոխադրել ձերբակալուածներին Երեւան։ *)*

Հակառակորդի այս ազնիւ ժեստի մասին խորին երախտագիտութեամբ էին պատմում ինձ բռնուած խմբի անդամները։ Նրանց ոչ մի փրկութիւն չէր լինի այն Բագուի բանտում և «Զինկայում», որոնք այնքան հայեր էին անվերադարձ կուլ տուել (Բագուի բռնուած հայերից և Հայաստանից դուրս տարած Մանասեանին իր ընկերներով)։

Մի ուրիշ փաստ։ Երբ Բագուից, տեղական խորհրդային իշխանութիւնը, այսինքն մուսաւաթեան գործե-

---

*) Ձերբակալուածներին կոզակները բերել էին Դիլիջան ոտով եւ վիրաւորական յիշոցներով տանում էին նրանց. «Եթէ 1918 թուականը լինէր, մեզ կը սատկացնէին ճանապարհին շների նման. Ի՞նչ անենք, այժմ արգելուած է»։ Երեւակայում եմ, թէ ինչ կը լինէր խեղճերի վիճակը, եթէ նրանց նոյն պահակի ուղեկցութեամբ ճամբէին Բագու ոտով։ **) **Բ. Ի.**

**) Ձերբակալուածների հետ նոյն օտօմօբիլով Դիլիջանից Երեւան է գալիս նաեւ Ս. Բաղդասարեանը, ընդհանուր հսկողութիւնը իր վրայ առնելով։ Վ. Ն.

վիկներից բաղկացած յեղ. կոմիտէն, հեռագրով դիմում է Երեւան և առաջարկում Երեւանի բանտից ազատել Խան Նախիջեւանսկուն (միակ հաստատափոր թուրք կալուածատէրը Երեւանի բանտում), հայ ստրկամիտ կոմիսարները տրամադրւում են յարգել իրանց թաթար ընկերների դիմումը. Բայց Բաղդատեանը, որ ուշացած է լինում այդ նիստին, վրայ է հասնում,— քանդում կայացրած որոշումը և սպառնում հակառակ դէպքում բաց թողնել բանտից բոլոր դաշնակցականներին.

Այդ երկու փաստերը— նման փաստեր շատ են եղել— ցոյց են տալիս, որպէս բնորոշ նմուշներ, թէ ինչպիսի բացառիկ դէմք էր Բաղդատեանը հայ տխրահռչակ գործիչների շարքում. Հայաստանի վիճակի հետ ծանօթանալուց յետոյ շատ էր նեղացել իր աւելի իրազեկ ընկերներից, որոնք շարունակական ինտրիգներով գրգռում էին Մոսկուայի գործիչներին՝ փութացնել Հայաստանի սովետիզացիան կամ խորհրդայնացումը.

Մի մարդ, որ հոգով ու կրթութեամբ համարեա ռուսացած էր, որ հազիւ էր բացատրւում հայերէն, թէեւ ինքը ղարաբաղցի էր և որեւէ կապ ու յարաբերութիւն չի ունեցել հայ հասարակական իրականութեան և կուլտուրական միջավայրի հետ, լինելով շարունակ ռուսական կենտրոններում, բանտերում եւ Սիբիրի խորքերում տարագրւած, ահա այդ մարդը— Ս. Բաղդաթեանը— շատ աւելի փափկանկատ վերաբերմունք ունէր դէպի հայ երկրի բացառիկ կացութիւնը, աւելի ազնիւ ու խոհեմ եղաւ իր քաղաքական հակառակորդների նկատմամբ, քան այն Աւիսները, որոնք տարիներ շարունակ սնւել են Դաշնակցութեան ազգայնական գաղափարականութեան դպրոցում եւ ունեցել նրանց շարքերում իրենց մտերիմ ընկերները.

քան իրանց տիրացուական տափսկութեամբ բոլշեւիկ-դարձած սեմինարիստներն ու ճեմարանականները, որոնք հայ լեզուի եւ պատմութեան վրայ գլուխ կոտրելուց յետոյ այժմ այնքա՜ն ալ-կարմիր «ինտերնացիօնալիստներ» են դարձել, որ խուսափում են հայերէն խօսելուց և հայատառ պաշտօնական գրութիւններ ստանալուց։

Այո, այդպէս է այլանդակ իրականութիւնը։

Եւ դա շատ հասկանալի է։

Բաղդասարեանները ունեն արդէն գաղափարային գործունէութեան և պայքարի հնոցում վառուած իրանց անունն ու դիրքը օտար երկնակամարի տակ՝ լայնածաւալ Ռուսիայում, և բնաւ կարիք չունեն նոր «գաղփնիներ» ձեռք բերելու խղճուկ Հայաստանում։ Մնացած հայ բոլշեւիկները՝ Յովհաննիսեանները, Դովլաթեանները, Աւիսները, տիրացու սեմինարիստներն ու ճեմարանականները և նման բազմաթիւ ուրիշներ, լինելով ոչնչութիւններ օտար հորիզոններում, ձգտում էին առանց միջոցների խտրութեան յագուրդ տալ իրանց անձնական և խմբական իշխանատենչ հակումներին — զաւթել հրամայողի իրաւունքը, տիրապետողի փառքը և վայելողի հանգիստը — Հայաստանի անկման և հայ ժողովրդի անօրինակ թշուառութեան գնով։

Ահա ինչու Բաղդասարեաններ չկային Հայաստանի նոր տէրերի շարքերում։

VII

Մեր բանտային օրերը անցնում էին շատ դանդաղ։ Թէ Օվին և թէ ես սպասում էինք, որ շուտով պիտի ազատէին մեզ։ Ամսի 13-ին դրսից հաղորդել էին ինձ, որ այսօր-վաղը արձակելու են, որ Բաղ-

դաժեանը եռանդով աշխատում է ինձ համար։ Օվին և ես վիճում էինք դրա շուրջը․ ես նրան աւելի վաղ ազատութիւն էի նախատեսնում, քան ինձ, իսկ նա կարծում էր հակառակը․ մինչ այն աստիճան, որ պատրաստում էր տոմսեր՝ իր այս կամ այն ընկերոջ և բարեկամին հասցնելու համար իմ միջոցով։

Իմ նախատեսումը ճշտւում է․ դեկտեմբերի 15-ի երեկոյեան ազատում են Բժ․ Օվի Տէր Միքայէլեանին, կանխօրէն վերցնելով «Չեկայում» նրանից ստորագրութիւն, որ նա պարտաւորւում է չմնալ Երեւանում և հարկ եղած դէպքում ներկայանալ։

— Էհէ՜, այդ չեղաւ, Օվի, դու աւելի ուշ բանտ եկար և աւելի շուտ ազատւում ես, ո՞ւր է քո ընկերական արդարամտութիւնը, — կատակով նկատեցի նրան հրաժեշտի վերջին րոպէին։

Ես եւ անգլիացին մնացինք մենակ։ Օվուն շատ էր ընտելացել մի քանի օրուայ ընթացքում, նրանից յետոյ ժամանակը անցնում էր տաղտկալի և սպանիչ դանդաղութեամբ։ Անգլիացին անհետաքրքիր էր իբրև զրուցընկեր։ Ընթերցանելի գրքերս արդէն վերջացել էին, սպասում էի դրսից նոր գրքերի։ Բանտում եղած սակաւաթիւ բանտարկեալներից (հին իշխանութեան օրով) ոչ ոք չկար, որ կարողանայի մի քանի րոպէ զրուցել հետը․ դրանք դասալիք զինւորներ էին և մի քանի քրէական յանցապարտներ։ Լուր էր տարածւել, որ նոր իշխանութիւնը ազատելու է բանտարկեալ բոլոր դասալիք զինւորներին, ուստի վերջիններս՝ մեծ մասամբ ծառայութիւնից խուսափած և կամ պատերազմի դաշտից փախած այդ երկչոտ անզգամները, կարմիր ժապաւէններ էին կապել՝ նոր տէրերին աւելի դուր գալու համար։ Իսկապէս մի քանի օր անցնելուց յետոյ ազատւում են բոլոր դասալիք զինւորնե-

րը։ Հին իշխանութեան օրով եղած դատալիքները խրախուսանքի էին արժանանում բոլշեվիկ կառավարիչների կողմից. դա միանգամայն հասկանալի վարքագիծ է նրանց տեսակէտից։

Այդ օրը երեկոյեան լուր է տարածւում, որ արդարադատութեան նոր կոմիսար Ս. Բաղդաթեանը առաւօտեան այցելելու է բանտերը։ Անգլիացին խնդրում էր ինձ, որ անպատճառ բարեխօսեմ իրեն համար։ Ես խոստացայ։ Ես ցանկանում էի, եթէ հանգամանքները ներէին, եթէ ուրիշ անախորժ տիպեր չլինէին նրա հետ, վաղեմի ծանօթիս հետ խօսել մի քանի հարցերի շուրջը։

Յաջորդ օրը, հինգշաբթի, դեկտ. 16-ին, իսկապէս այցելում է մեր բանտը (ինչպէս և կենտրոնական բերդը, ուր տեղափոխել էին արդէն ձերբակալւած դաշնակցականների խումբը) նոր կոմիսարը։ Ման գալով բանտի զանազան մասերը, վերջում գալիս են մեր կամերը. նրա հետ էր իր օգնականը՝ Գրիգոր Զուբարեանը (սոցիալիստ յեղափ.., բայց կանգնած խորհրդային իշխանութեան տեսակէտի վրայ, իբրև այդպիսին, նա ողորմածութեան է արժանացել բոլշեվիկների կողմից, նշանակւելով կոմիսարի օգնական)։

Առանց մի բոպէ տատանւելու, ես ցանկանում եմ բացէ ի բաց և բառացիօրէն դնել հրապարակի վրայ այն խօսակցութիւնը, որ ես ունեցել եմ Ս. Բաղդաթեանի հետ բանտի չորս պատերի մէջ։ Առանց կոմենտարների, առանց յաւելւածական բացատրութիւնների, ես ուզում եմ ընթերցողների առաջ դնել այն երկախօսութիւնը, որ տեղի է ունեցել մի կոմիսարի և մի բանտարկեալի միջև. միաժամանակ իմ շնորհակալութիւնն եմ յայտնում Սերեժային — վաղեմի բարեկամիս — նրա բացասիրտ և անկեղծ խօստովանութիւնների համար։

Առաջին խօսքը, որ նա ուղղեց ինձ, էր հետեւյալը.

— Բախչի, եթէ ոչ մի հիմք էլ չունենային մերոնք քեզ ձերբակալելու համար, այնուամենայնիւ անհրաժեշտ էր քո ժամանակաւոր բանտարկութիւնը և դրա մասին Բագու յայտնելը, որպէսզի դրանով բաւարարութիւն տայինք Թուրքերին։

— Ես քեզ չեմ հասկանում, Սերեժա. ի՞նչ բաւարարութեան մասին է խօսքը, — զարմացած հարցրի ես։

— Խօսքը վերաբերում է քո վերջին գրքին՝ «Բագւի մեծ սարսափները» վերնագրով։ Այդ գիրքը չափազանց շատ է լարել ու գառնացրել Թուրքերին քո դէմ։

— Բայց, Սերեժա, չէ՞ որ այդ գիրքը վերաբերում է այն եղեռնագործութեան, որ տեղի է ունեցել 1918 թ. սեպտեմբերին, Բագւի անկման հետեւանքով, չէ՞ որ գրքիս մէջ քննադատում եմ տաճկական գամփռների և Ադրբէյջանի մուսաւաթա կառավարութեան բարբարոսութիւնները, չէ՞ որ Ադրբէյջանի այժմեան տէրերը ձեր բոլշևիկ Թուրք ընկերներն են, ի՞նչ կապ ունեն վերջիններս հին հաշիւների հետ՝ իրանց չվերաբերող անցեալի...

— Եղբա՛յր, ճիշտ ես ասում, — ընդհատեց ինձ խօսակիցս, — ես քեզ միանգամայն հասկանում եմ, բայց էլի Թուրքեր են չէ՞. վերջապէս նրանք էլ հաշւի են նստում միւս Թուրքերի հետ։

— Փառք Աստուծոյ, որ այդ բանը ասում է բոլշևիկը. դրաբար այսպէս են որակում նման ինքնասպան խոստովանութիւնը. «ի բերանէ քումմէ դատեցիր զքեզ». — ի հարկէ դու չես հասկանում այս բառերի իմաստը։ Բայց թողնենք այդ, — փոխեցի ես

խօսակցութեան նիւթը ,— ասաց խնդրեմ ինչպիսի՞ քաղաքական վարքագիծ էք մշակել Հայաստանի համար. Գոհունակութեամբ պիտի շեշտեմ, որ մինչև այժմ ձերոնց վարած քաղաքականութիւնը բաւական ազատ է եղել ձեր աշխարհում ընդունուած սովորական բռնութիւններից . . .

— Ցաւը նրանումն է, որ մենք այժմ դժուար դրութեան առաջ ենք կանգնած ,— ասաց կոմիսարը. Մի կողմից Ադրբէյջանի Յեղկոմը, միւս կողմից Անգորայի ներկայացուցիչները կասկածելի հարցերով դիմումներ են անում մեզ ասելով՝ ո՞ւր է սովորական և հարազատ բոլշևիզմը Հայաստանում. ինչո՞ւ չէք խորացնում կռիւն ու հալածանքները հակայեղափոխականների դէմ. Ահա ինչ են պահանջում մեզնից.

— Օ՜, Սերեժա, ես արդէն հասկանում եմ քեզ. Ուրեմն մուսուլմանութիւնը միացած իր գիւղային ծրագրնե՞րն է ուզում առաջ տանել ձեր միջոցով այս դժբաղդ երկրում՝ քօղարկելով իր պահանջները բոլշեվիկեան կանոնագրքի կամ յեղափոխական ֆրազէօլոգիայի տակ. Ուրիշ խօսքով պանիսլամիզմի իդէօլոգները արդեն կոմպենսացիա՞ են պահանջում ձեզնից . . .

— Նրանք ասում են, — վրայ բերեց խօսակիցս ,— չէ՞ որ մենք, մուսուլման բոլշևիկներս, այնքա՜ն մարդիկ ենք գնդակահարել Բագւում Թուրք հակայեղափոխականներից, ո՞ւր է նման գործելակերպը Երեւանում . . .

— Բաւական է, Սերեժա, բաւական է. ես արդէն հասկանում եմ ամէն բան. Բայց, Սերեժա, ի՞նչ պատասխան էք տալիս դուք, ձեր Յեղկոմը.

— Մենք աշխատում ենք համոզել նրանց Հայաստանի բացառիկ վիճակը, մարդիկ ուղարկել Բա-

վու անձնական բացատրութիւնների համար, ես ինքս գնալու եմ մինչև 10—15 օր։

— Լսի՛ր, Սերժոժա, ինչո՞ւ չէք հասկացնում արեան վրիժառութեամբ մեր դէմ թունաւորուած ձեր այդ գաղափարակից պարոններին, որ արեան կոմպենսացիայի տեսակէտից հայ ժողովուրդը, մանաւանդ հայ մտաւորականութիւնը, աւելի է արդէն իր տուրքը բոլշեվիզմին աւելի քան հարկաւոր չափերով։ Ինչո՞ւ չէք բացատրում այդ կեղծ յեղափոխականներին և կոմունիստներին, որ մինչև Բագուն ձեր կողմից գրաւելը, ուրիշ խօսքով Ադրբէյջանը խորհրդային դառնալը, մուսուլմանութիւնը չի տեսել մի զոհ անգամ և ռուս զօրքը Բագու մտնելու նախօրեակին թուրք բոլշեվիկները առօք-փառօք գնացքով ճանապարհ են ձգել դէպի Թիֆլիս Մուսաֆաթ նախարարներին և լիդերներին։ Մինչդեռ մեզ մօտ դրութիւնը միանգամայն այլ կերպ դասաւորուեց։ Նախ քան Հայաստանը խորհրդային դառնալը հայկական տարրը տուաւ իր բազմաթիւ զոհերը նոյն Բագուի թաղերում, Ղարաբաղում, Զանգեզուրում և անգամ Հայաստանի զանազան մասերում՝ մայիսեան շարժման օրերին։ Բոլշեվիզմի անունով տուած մեր զոհերը մի քանի անգամ գերազանցում են մուսուլմանութեան զոհերին, չհաշւելով որ կոտորածից, սովամահութիւնից և գաղթից ընդհանրապէս զերծ մնացած այդ ժողովուրդը Անդրկովկասում գրեթէ երկու անգամ թւով գերազանցում է հայութիւնից։

— Միանգամայն ճիշտ են դիտողութիւններդ. ամեն կերպ պիտի աշխատեմ, ինչ ինձնից է կախուած։ Դժբաղդութիւնը նրանումն է, որ նրանք մեզնից շատ ուժեղ են Մոսկուայում։

— Աշխատիր, սիրելիս. միակ բոլշեվիկն ես դու,

որին շարունակում եմ յարգել քո օրինակելի անկեղծութեան համար։ Նայիր գաղթականների և որբերի այս դժբաղդ երկրին. խնայեցէք վերջին փշրանքները հայ ժողովրդի։ Թող ցոյց տան բոլշևիկները գէթ մի անգամ, որ արեան քաղաքականութիւնը խորթ է իրանց համար այնքան, որ չկան ունեւորներ դրա համար. Թող այդպիսի մի պայծառ բացառութիւն ունենայ ռուսական բոլշևիզմը իր որով ու հրով անցած ճանապարհի ամբողջ տարածութեան վրայ։

— Է՛հ, է՛հ մեզ խփեցիր, Բախշի՛. ա՛յ մարդ դո՛ւք բանտում լաիր — նկատեց Բաղդասարեանը ծիծաղելով։

Այս նա ակնարկեց, որ ինքը շատ է աշխատում ազատել բանտից ինձ, Վահան Նաւասարդեանին, ապա, եթէ յաջողեր. Համօ Օհանջանեանին և բժ. Տէր Դաւթեանին։

Ես խնդրեցի նրան անգլիացու համար. նա, թէև ակամայից (անգլիացիներին սարսափելի ատողներից էր Բաղդասարեանը), խոստացաւ մի բան անել։

Կոմիսարը գնալուց յետոյ, ես չկարողացայ ուրիշ ոչ մի բանով զբաղուել, բայց եւ է խորասուզուել տխուր խոհերի աշխարհը իմ բոլոր լաւերի նկատմամբ։

Բաքուն և Անդրեան պահանջներ են անում, բռնութիւնների, հալածանքների դժոխային քաղաքականութեան ծրագրի իրագործում են սպասում իրանց հայ ընկերներից...

Սա վատ խաղի սկիզբն է. ո՞ւր կը տանէ մեզ վախճանը, Աստուած իմ։ Նշանակում է այս Թշուառականները ոչ միայն Մոսկուայի ծափովն են պար գալիս ամէն բանում և ամէն մի քայլափոխման, այլև Բաքուն իրաւունք ունի մաս Թափ տալու սրանց

վրայ։ Ո՞ր աստիճան ողբալի դրութեան էր մատնուել Հայաստանը. Նարիմանովները և Կարայեւները պիտի թելադրէին հայ ժողովրդի քաղաքական բաղդի տնօրէններին իրանց կամքը — քօղարկուած պանիսլամիզմի հրէշային ծրագիրը։

Այդ ամբողջ օրը ես կամ մտամոլոր քայլում էի կամերի մէջ և կամ պառկում ու շարունակ մտածում էի ապագայ հնարաւոր դալիքների մասին։ Ինձ ամենից շատ սարսափեցնում էր քաղաքացիական արիւնահեղ կռիւների ուրուականը, որի չոքչոփը տեսել էինք արդէն մայիսեան շարժման օրերին։ Իսկ մուսաւաթական ուժեղ ազդեցութիւնը կենտրոնում, որին պիտի վերագրել մասամբ Հայաստանի սովետիզացիայի դժբաղդութիւնը, պիտի աշխատէ ամեն կերպ արիւնահեղ քաղաքականութեան տանելու առիթներ ստեղծել հայ ամբոխների միջոցով։

Միւս օրը, դեկտ. 17-ին, ուրբաթ երեկոյեան ազատւում եմ նաև ես՝ երկու շաբաթ բանտ նստելուց յետոյ։ Բարեկամներս, Մելիք-Յոլչեանները, պատմում են, որ շատ աղմկալից է եղել Ցեղկոմի այն նիստը, ուր վերջնականապէս պիտի լուծէր իմ հարցը։ Հակառակորդներս, մանաւանդ դրանց մէջ մի երկուսը, որպէս ու ձնակալն թշնամիներ, ամեն կերպ յամառում էին և չէին համաձայնում գրաւոր քուէ տալ։ Երբ Բաղդասարեանը պահանջում է, որ հակառակ դէպքում միայն ինքը իր պատասխանատուութեամբ բաց կը թողնէ ինձ, ակամայից համաձայնում են միւսները և գրաւոր լուծում տալիս իմ հարցին։

Այժմ ինձ համար հարց էր ծագում. ի՞նչ պիտի անէի ես։

Առանց մի բոպէ անգամ տատանուելու այդ հարցի առաջ, ես որոշեցի անմիջապէս. շարունակել պայքա-

նախարարութիւնս, չհրաժարուել ծառայութիւնից մինչ այն ժամանակ, երբ կառավարիչը ինքը չի արձակի ինձ պաշտօնից։ Պաշտօնս—պետական վիճակագրու-թիւնը— այնպիսին է, որով ես ոչ մի շփում ու կապ չպիտի ունենայի քաղաքական ու վարչական շրջան-ների հետ և անյարմար դրութիւն չէր ստեղծի ինձ համար։ Պաշտօնս այնպիսին է, որով ես դարձեալ պիտի ծառայէի մեր երկրի ուսումնասիրութեան գոր-ծին։ Վերջապէս, ինչո՞ւ հրաժարուելով զէնք տայի հակառակորդներիս ձեռքը, որ նրանք մեղադրէին ինձ ծառայելու անպատրաստակամութեան մէջ, ինչո՞ւ դառնայի ստորագրածներից և. ինչո՞ւ ես չունենայի զէնք իմ ձեռքին՝ հարկ եղած դէպքում ինքս նրանց մեղադրելու համար։

Միւս օրը դուրս ելայ քաղաք։ Փողոցով անցնել չէր լինում. ամեն կողմից թափւում էին վրաս զուարթ դէմքերով, թօթւում ձեռքս և բարձր, դեմօնստրատիւ տոնով կոչում՝ «շնորհաւորում ենք», «կեցցէ», «ալլա-ւս Իշխանեանց», «յաղթութիւնը մեր կողմն է», «հեռ-րատացաք» և այլն և այլն։ Ես սովորաբար ճնշւում էի այդ ցոյցերից և աշխատում էի խուսափել բանուկ փողոցներով երթևեկելուց։ Ի հարկէ, իմ անձի հասցէին չէր, որ տեղի էին ունենում այդ ցոյցերը, այլ այն գաղափարների, այն քննադատական առողջ տե-սակէտների հասցէին, որ ես շարունակ արծարծել եմ հրապարակով մեր ազգային-պետական կեանքի վերա-ծնութեան հարցերի շուրջը։ Եւ այդ գաղափար-ներն էին ահա, որ փառաբանւում էին հրապարակով։

Նշանակում է հասարակական համակրանքը մեր կողմն է դարձել,— մտածում էի ես։ Նշանակում է սուտի տիրապետութիւնը, հակառակորդի ձեռնարկած բոլոր միջոցները և մղած ագիտացիան ամեն կարգի

ու ձեւի — չեն փոխել հասարակական տրամադրութիւնները յօգուտ նրանց. Միայն իմ ստացած թռուցիկ տպաւորութիւնների հետեւանքով չէր, որ ես այդպիսի կարծիք կազմեցի, այլ իմ ընկերների և բազմաթիւ ծանօթների տուած կենդանի վկայութեամբ.

«Բոլորն էլ զզւած են, բոլորն էլ ցաւում են, որ խաբւել են իրենց ակնկալութիւնների մէջ և բոլորի մէջ էլ խորանում են հիասթափութեան սերմերը».

Աջից ու ձախից լսում էի շարունակ այսպիսի վկայութիւններ.

Եւ դա դեռ այն ժամանակ — առաջին մեղրային շաբաթներին — երբ բոլշեւիկեան իշխանութիւնը դեռ չէր պարզել հրապարակով իր իսկական դէմքը, իր ֆիզիօնոմին, երբ ժողովուրդը դեռ չէր ճաշակել դառնութեան բաժակից բոլշեւիկեան ռէժիմի, երբ դեռ մէկը, միւսը միամտաբար հարցնում էին ինձ, թէ ո՞ւր են հապա բոլշեւիկեան այն սարսափները, որոնց մասին այնքան խօսում են, մինչեւ այժմ դեռ ոչինչ չտեսանք. Ահա դեռ այդ սկզբնական մեղմ շրջանում ժողովրդի մէջ խորանում էր հիասթափութիւնը. *)

Բանտից դուրս գալուց առաջին օրւանից սկսած երկու դէմքեր չափում էին քայլերս բոլոր ուղղութիւններով. երկու երիտասարդներ, բոլորովին անծանօթ մարդիկ, շարունակ հետեւում էին ինձ՝ երբեմն միասին, երբեմն առանձին-առանձին. Ուր գնում էի, ուր մտնում էի, ում հետ խօսում էի — այդ մարդիկ, որպէս կենդանի ուրւականներ, տեսնում, դիտում, հետեւում էին ինձ շարունակ.

— Լրտեսներ են հա՛, զգո՛յշ կաց, Բա՛խչի — ասաց

*) Այդ երեւոյթի պատճառների վրայ կը ծանրանամ ես մի այլ գրւածքում.

ընկերներիցս մէկը փաղողում. նկատելով նրանց.

— Գիտեմ, վաղուց են հետեւում ինձ այդ սատանայի հոգիները։ Դրանք «Չեկայի» բաց թողած որսորդ շներն են, որոնք չնայած հաւատարմութիւնից է՛լ աւելի պիտի գերազանցեն՝ իրանց հետապընդած որսի մասին հաղորդած լրտեսութիւններով։

Բայց ահա չորս օր անցնելուց յետոյ ամենահաւաստի աղբիւրից հաղորդում են ինձ հետեւեալը. բոլշեվիկեան կուսակցութեան կենտրոնական կոմիտէի նիստում երիտասարդ անդամները (Երեւանի աշակերտներից ընտրուած) բողոքում են Ցեղկոմի մեղկ, մեղմ, թոյլ ու անվճռական քաղաքականութեան դէմ. փաստ բերելով, օրինակ. իմ այդքան շուտ ազատութիւնը բանտից և Ցեղկոմի մեղմ վերաբերմունքը դէպի բանտարկուած դաշնակցականները։

Եւ ահա երիտասարդների բողոքի ու քննադատութեան բացասական հետեւանքները շուտով յայտնւում են. դեկտեմբերի 23-ին ստանում եմ հռչակաւոր «Չեկայից» հրաւէրատոմս հետեւեալ բովանդակութեամբ. «Առաջարկւում է ձեզ դեկտեմբերի 24-ին, ժամը 10-ին, առաւօտեան ներկայանալ «Չեկայի» նախագահին»։

«Չեկայի» հրաւէրը լաւ բանի համար չի լինիլ անշուշտ, — մտածում եմ ես և մի չար նախազգացում պաշարում է սիրտս։ Նոյն կարծիքն ունէին նաև ընկերներս, որոնցից մի քանիսը առաջարկեցին ինձ թաքնուել և չներկայանալ բոլորովին։ Ես չհամաձայնեցի եւ որոշեցի ներկայանալ։ Յաջորդ օրը, որոշեալ ժամին ես այնտեղ էի։ Բայց պարոնը դեռ այնտեղ չէր, իսկ օգնականը կամ քարտուղարը չգիտէին ինչումն էր գաղտնիքը։ Ստիպուած էի սպասել մի ամբողջ ժամ։ Օգտուելով հանգամանքից, ես դիտեցի «Չեկա» կոչուած այդ անիծուած հաստատութիւնը։

Դա բազմաթիւ բաժանմունքներից բաղկացած մի լաբիրինթոս էր, տեղաւորուած Երեւանի ամենալաւ և ամենամեծ տներից մէկի ամբողջ շէնքում. Բոլոր բաժանմունքներում ծառայում էին, չնչին բացառութեամբ, փոքրահասակ աշակերտներ և օրիորդներ: Կան բաժանմունքներ, որ խստիւ արգիլուած է մուտքը. դա նրանց գաղտնի տեղերը կամ գաղտնարաններն էին (սեկրետ վայրերը), ուր սովորական մահկանացուն մուտք գործել անկարող էր. Շինութեան ներքեւի մասում, բակի կողմում, կային մի քանի մութ սենեակներ. դրանք «Չեկայի» բանտատեղեր են, ուր ժամանակաւորապէս, երբեմն 2—3 շաբաթ, նստում են նոր բանտարկեալները և ապա այնտեղից բանտ ուղարկւում. պատահում է, որ այնտեղից բանտ չեն ուղարկւում, այլ միւս աշխարհը. Այդ լաբիրինթոսի ցանցից ներս մտնելու համար պէտք է վաղօրօք յետեւի կողմից կոմենդանտի բաժանմունքից վերցնել մուտքի տոմս, ցոյց տալ մուտքի մօտ կանգնած զինւորներին և ապա դուրս գալու ժամանակ մի այլ բաժանմունքից յատուկ տոմս վերցնել և նորից զինւորին ցոյց տալ, աւելի շուտ՝ տալ նրան և այնուհետև դուրս գալ այնտեղից. Եթէ մի անգամ ընկել էք այնտեղ, այլեւս դուրս գալու հնար չունէք առանց ներսի տոմս տուող բաժանմունքի թոյլտուութեան, որը իր հերթին պէտք է իմանայ, թէ ո՞ւմ մօտ կամ ո՞ր բաժանմունք էք եկել, վերջացրե՞լ էք արդեօք այնտեղ ձեր գործը և ունի՞ք իրաւունք դուրս գալու թէ չէ.

Ահա եզուիտական հնարագիտութեամբ կեանքի կոչուած մի հաստատութիւն, ուր մարմնացած էր բոլշեւիկեան նորագիւտ բռնակալութեան սիրտը, հոգին, ամբողջ զօրութիւնը.

Ինձ յայտնեցի՛ն, որ նախագահը եկել է և հրա-

ւիրում է նրա։

«Զեկայիս նախագահ Այվազեանը յայտնում է ինձ հետեւեալը.

«Բարձր իշխանութիւնների վճռի համաձայն դուք պէտք է թողնէք Հայաստանի սահմանները և գնաք ուրիշ սովետական երկիրներ, օրինակ Բագու։ Ե՞րբ կարող էք մեկնել»։

Ես յայտնեցի նրան, որ իմ բաժանմունքի բազ-մաթիւ գործերը կոմիսարիատին յանձնելու համար բաւական ժամանակ է հարկաւոր, առնուազն մի շա-բաթ։

— Ոչ. այդքան չեմ կարող. հինգ օրն էլ ձեզ բա-ւական է, մինչեւ դեկտեմբերի 29-ը. այդ օրը ու-ղարկելու են Երեւանից Բագու հայ սպաներից մի խումբ, դուք կը մեկնէք նրանց հետ միասին։

Ասաց այդ պարոնը, նշանակեց յիշեալ ամսաթիւ-ը— հակառակ իմ առարկութիւնների— և վերցրեց ինձնից ստորագրութիւն պայմանաւորուած օրը թող-նելու Երեւանը։

— Ի՞նչպէս են գնալու սպաները, հարցրի ես։

— Այստեղից մինչեւ Աղստաֆա կայարանը (Ա-դրբէջանում) կանցնէք խումբը ոտով. մօտ 180 վերստ տարածութիւն, իսկ ամէն մէկի մի-մի փութ իրերի համար կը լինեն սայլեր. Աղստաֆայից արդէն կը նստէք գնացք մինչեւ Բագու։

— Ի՞նչ է, ուզում էք պատժե՞լ մեզ։ Նախ ես ոտով չեմ գնայ ոչ մի պարագայում. երկրորդ՝ չէի ուզենայ վիճակս կապել սպաների հետ։

— Այն ժամանակ բարի եղէք ձեր ծախքով կառք կամ աւտօմօբիլ վարձել. բայց այդ դէպքում ձեզ հետ կը դնենք զինուած պահակ մինչեւ Բագու,— պատաս-խանեց Այվազեանը։

— Ասացէք խնդրեմ, պարոն Նախագահ, ընդունուա՞ծ բան է. որ դուք աքսորէք ինձ. հակառակ իմ կամքի քշէք այստեղից, իսկ ծախքերը ես քաշեմ։

— Դա արդէն իմ գործը չէ. ես կատարում եմ Ցեդկոմի որոշումը, ուզում էք՝ դիմեցէք նրան։

Ես թողնում հեռանում եմ։ Այդ օրը հրաւիրում ենք մեր կուսակցութեան կենտրոնական կոմիտէի նիստը իմ աքսորի հարցը քննելու համար։ Բոլորը գտնում են, որ անկարելի է իմ Բագու գնալը, որ այնտեղ մահացու վտանգը խիստ մեծ է իմ դէմ։

— Ընկերներ, — ասում եմ ես, — ո՞վ չի ցանկանալ գնալ այնտեղ, ուր տարիներով ապրել է, ուր ունի իր հարազատները, տունն ու տեղը, ընտելացել է տեղական կեանքին ու միջավայրին։ Այդպէս է ինձ համար Բագուն։ Երեւանում ես օտար եմ զգում ինձ անձնապէս վերցրած, իսկ Բագւում մեր տանը կը լինեմ։ Բայց ես գիտեմ, թէ ինչ է սպասում ինձ Բագւում։ Երբ ինքը՝ բոլշեվիկ կոմիսարը խոստովանում է, որ ինձ պէտք է ձերբակալէին, որպէսզի դրանով բաւարարութիւն տային Բագւի թուրքերին, դա ցոյց է տալիս, թէ ինչպիսի ատամկրճտոց կայ իմ դէմ Ադրբէյջանի կենտրոնում։ Հայաստանի խորհրդային իշխանութիւնը ինձ ազատում է այստեղ և աքսորում Բագու. դրանով հայ բոլշեւիկները լուելեայն հասկացնում են իրանց թուրք ընկերներին — մենք աքսորեցինք Իշխանեանին Բագու. իսկ դուք վարուեցէք, ինչպէս կուզէք։

Բոլորն էլ համաձայնում են, որ պէտք է միջոցներ դիմել փոխելու համար Ցեդկոմի վճիռը։ Որոշւում է անմիջապէս ուղարկել Ցեդկոմին մեր կենտրոնական կոմիտէի անունից գրութիւն հետեւեալ բովանդակութեամբ։

Խորհրդային Հայաստանի Ցեղկոմին.

Հայաստանի Սոց.-Դեմ. Բան. Կուսակցութեան Կենտր. Կոմիտէն իր դեկտեմբերի 24-ի նիստում քըննութեան ենթարկելով ընկեր Բ. Իշխանեանին Բագու աքսորելու հարցը, որոշեց դիմել Ցեղկոմին հետեւեալ յայտարարութեամբ։

Մենք գտնում ենք ընկ. Բ. Իշխանեանին Բագու աքսորելու վճիռը չափազանց խիստ, ուստի խնդրում ենք փոխել այդ վճիռը և թողնել նրան Հայաստանի սահմաններում։ Եթէ Ցեղկոմին համար անհաճելի է ընկ. Իշխանեանի ներկայութիւնը մայրաքաղաքում, նա կարող է հեռանալ Հայաստանի մի որ եւ է խուլ անկիւն։ Հակառակ դէպքում, եթէ խորհրդային իշխանութիւնը չահագրգռուած է, որ ընկ. Իշխանեանը հեռանայ Հայաստանի սահմաններից առհասարակ, այն ժամանակ խնդրում ենք թոյլ տալ նրան իր կամքով հեռանալ արտասահման, ուր ինքը կը ցանկանայ։ (Ստորագրութիւն՝ Հերթական նախագահ Տրդատ Տրդատեան)։ Երեւան, դեկտեմբեր 24-ին, 1920. թ.

Միաժամանակ կոմիտէն որոշում է, որ ես և Դ. Անանունը դիմենք անձամբ արտաքին գործերի կոմիսար Ա. Բէկզադեանին նոյն հարցի համար։

Բէկզադեանը իմ և Դաւիթի անձնական մօտ ծանօթն էր (իմ նոյն իսկ ազգակցական բարեկամը), այնպէս որ մեր դիմումը ունէր կիսապաշտօնական և կիսաընկերական բնոյթ։

Բէկզադեանը պատմեց, որ Երեւանի երիտասարդ բոլշեւիկները, որոնք միշտ յաճախել են իմ դասախօսութիւններին և հետեւել են իմ գործունէութեան, խիստ լարուած եւ թշնամացած են իմ դէմ։ Նրանք ասում են, որ վերջին ամիսների ընթացքում հասարա-

կական կարծիքը Երեւանում ղեկավարել է բացառա-պէս Իշխանեանը և բոլշեվիկների դէմ շատ աւելի կատաղի կռիւ է մղել, քան ոեւէ դաշնակցական, ուստի նրանք գտնում են, որ խորհրդային իշխանութիւնը անկարող է հանդուրժել այդպիսի մեծ հակառակորդի ներկայութիւնը Հայաստանում.

— Ահա նրանց կտրուկ պահանջի հետեւանքով է, որ մեր կենտրոնական կոմիտէն որոշեց քեզ, Բախչի, ուղարկել Բագու, — դարձաւ նա դէպի ինձ. Դա աւելի լաւ է քո շահերի տեսակէտից, որովհետև այնտեղ կը ստեղծուի քեզ համար մի սարսափելի մթնոլորտ. Կը գնաս Բագու, կը մնաս այնտեղ մի քանի ամիս և յետոյ նորից կը վերադառնաս, երբ այստեղ կրքերը կը հանդարտեն:

Ի հարկէ Բէկզադեանը չհամաձայնեց մեր յայտնած կասկածներին՝ Թուրքերի վերաբերմունքի նկատմամբ: Բայց և այնպէս նա համաձայնեց պաշտպանել մեր կոմիտէի դիմումը՝ իմ աքսորի հարցը վերաքննութեան ենթարկելու իմաստով.

— Սաշա, ասա խնդրեմ, — դիմեցի Բէկզադեանին, — ինչո՞ւ չեն ձերոնք թոյլ տալիս, որ ես գնամ արտասահման՝ Վրաստան, այնտեղից էլ Պոլիս, Եւրոպա:

— Ո՛չ, դա անկարելի է. ինչպէս կարող ենք բաց թողնել մեր թշնամուն, որ նա գնայ և մեր դէմ շարունակէ խօսել արտասահմանում:

— Տօ եղբայր, ձեր դէմ խօսում է ամբողջ Եւրոպան, ամբողջ աշխարհը. ի՞նչ նշանակութիւն ունի, եթէ միլիոնաւոր խօսողների վրայ աւելանայ մէկը եւ. Վերջապէս դա գաղափարային երկչոտութեան եւ անանկութեան ապացոյց չէ՞ վախենալ մի հակառակորդի ասածներից դրսի աշխարհում և վանդակում փակած պահել.

— Տեսնո՞ւմ ես, Դաւիթ,— ասաց Բէկզադեանը,— դեռ երէկ է ազատւել բանտից, էլի շարունակում է մեզ այդպէս հարւածել։ Տօ բաւական է,— դարձաւ նա դէպի ինձ ծիծաղելով,— մի փոքր պապանձւիր էլի՞։

— Քանի բոլշեվիզմը կայ, ես երբեք չեմ պապանձւի— նկատեցի ես։

Մենք հեռացանք Բէկզադեանի մօտից։ Տարաբաղդաբար կենտ. կոմիտէի այն նիստում, ուր քննւել է իմ աքսորի հարցը, Բաղդաթեանը ներկայ չի եղել։ Այժմ նա աշխատում էր ամեն կերպ հարցը վերաքննութեան ենթարկել։ Նա ինձ հաւատացնում էր, որ նախկին վճիռը իր ուժի մէջ մնալու դէպքում, Բագու գնալու խնդիրը ուրիշ կերպ կարելի է տնօրինել. նա ինքը դեկտեմբերի 29-ին աւտօմօբիլով մեկնելու է Բագու և կարող է ինձ վերցնել հետը, առանց պահակի երես տեսնելու։

Երկու օրից յետոյ Յեղկոմը որոշում է՝ իմ հարցի վերջնական լուծումը թողնել իրանց կուսակցութեան կենտր. կոմիտէին, իբրև աւելի բարձր մարմնի։

Օրերը գալիս անցնում են, ահա արդէն դեկտեմբեր 29-ն է։ Բաղդաթեանը գնում է աւտօմօբիլով. չափազանց յարմար առիթ է, գնա՞լ արդեօք նրա հետ, թէ՞ սպասել նրանց կենտր. կոմիտէի վերջնական որոշման։ Յանկարծ կոմիտէն որոշեց մերժել մեր դիմումը և իր նախկին վճիռը թողնել ուժի մէջ. յետո՞յ, ի՞նչ դրութիւն կը ստեղծւի ինձ համար. գնալ այնուհետև ոտո՞վ, սպաների հետ միասին...

Մի կրիտիկական դիլեմա էր ստեղծւել ինձ համար։ Ընկերներիցս շատերը, ես էլ նրանց հետ միասին, չէինք հաւատում, որ բոլշեվիկների կենտր. կոմիտէն կը փոխէ իր վճիռը, անկարելի բան է, ուստի

շատերը խորհուրդ էին տալիս ինձ չփախցնել յարմար առիթը, գնալ Բաղդաթեանի հետ միասին, որը խոստանում է տանել մինչեւ մեր տուն հասցնել անվտանգ. Ես նրան կատարելապէս հաւատում էի, բայց հետեւանքների համար ոչ ոք երաշխաւորել չէր կարող. Նոյն Բաղդաթեանը— որի խօսքին շատ աւելի էի հաւատում, քան որեւէ այլ բոլշեվիկի— զգուշացնում էր ինձ միաժամանակ Բագւում մնալու նկատմամբ.

Ի՞նչ անել ուրեմն. միւս կողմից էլ «Չեկան» կարող է կասկածել, որ ես խուսափում եմ, որովհետեւ Ցեղկոմի պարոնայք կոմիսարները չեն հաղորդել «Չեկային», որ խնդիրը վերաքննւելու է և ամսի 29-ին մեկնել չէի կարող.

Ես որոշեցի մնալ, ինչ ուզում է լինի. Վերջին օրերը լաւ չէի զգում ինձ, պառկած էի իմ բաժանմունքի գործավար Յովհ. Վարդանեանի բնակարանում, դեղեր էի ընդունում և ունէի բժշկական վկայական.

VIII

Յունւարի 2-ն էր, երեկոյեան ժամը 6-ը. Յանկարծ ներս մտան երեք հոգի՝ խուզարկու կոմիսարը և երկու ռուս զինուորներ. «Յայտնում եմ ձեզ, որ դուք բանտարկւած էք «Չեկայի» օրդերով», ասաց կոմիսարը և սկսեց մանրազննին խուզարկել իմ սենեակը, իմ և բնակարանատէր գործավարիս բոլոր առարկութիւնները— որ իմ հարցը նորից պիտի վերաքննւի կենտր. կոմիտէում, որ ես այժմ հիւանդ պառկած եմ՝ ահա բժշկական վկայականը, որ տանտէրը երաշխաւորում է մինչև վաղը պահել ինձ իր մօտ եւ ինքը անձամբ յանձնել «Չեկային» և այլն,— ապար-

գիրն անցան․ «Չեկայի» հրամայագր կարգադրու-թեամբ պէտք է ձերբակալուէի։

Ինձ տանում են «Չեկա», խուզարկում հանգամանօրէն և վերցնում վրայիցս, ինչ գտնում են։ Մօտս լինում է հայկական դրամանիշներով 232,000 ռուբլի և անդրկովկասեան բոներով 119.000 ռուբլի։ Նոր էի ստացել այդ դրամը Թիֆլիսից՝ այնտեղի գրախանութներում վաճառուած գրքերի արդիւնքից։ «Չեկայում» վերցնում են հայկական դրամը, բայց չեն նկատում բոները, որոնց ես թաքցրել էի մէջքիս վրայ, հագուստիս մէջ․ բանտում բացւում է այդ գաղտնիքը և վերցնում են հենց նոյն երեկոյեան խուզարկութեան ժամանակ այնտեղ թաքցրած բոները, խոստանալով միւս օր տալ ինձ ստացական։ Այս անգամ արդէն ինձ տանում են ուղիղ կենտրոնական բանտը կամ բերդը, որի ռեժիմի մասին սարսափելի բաներ էին պատմում մեզ՝ զինուորական բանտում նստած ժամանակ։ Բանտապետի օգնականը, Ռուբէն անունով, ինքը բոլշեվիկ, առաջնորդում է ինձ մի մեծ կամերում, ուր նստած էին արդէն 23 հոգի (բոլորն զանազան գործերով բռնուած բոլշեվիկների օրով) և խոստանում վաղը տեղափոխել աւելի վայելուչ տեղ, ինտելիգենտների մօտ, փոքրիկ սենեակ (սեկրետ կամեր)։

Հաշտուեցի դրութեանս հետ։

Բաց արին երկաթէ մի դուռ և ձգեցին ինձ ներս։

Ամեն կողմից մօտեցան բանտարկեալները իրանց նոր «ընկերոջը» ով լինելը իմանալու։ Շատերը ճանաչում էին ինձ, բայց ես ոչ մի ծանօթ դէմք չգտայ նրանց մէջ։ Նրանք բոլորը դուրսն էին, երբ ինձ առաջին անգամ բռնել էին և այժմ էլ գիտէին, որ ես ազատուել էի. ուստի զարմացած հարցնում էին իմ նոր բանտարկութեան պատճառների մասին։

Արդէն ժամը ութից անց էր։ Կամերը բաւական մութն էր. թէեւ լոյսը ելեքտրական էր, բայց այնքան բարձր էր կախուած փոքրիկ կանթեղը և այնքան աղօտ էր լուսաւորում, որ դա՛յլճի չափ մեծ կամերի անկիւններում հազիւ մարդ կարողանար մի բան տեսնել։ Սովորական հարց ու փորձից և ամեն մէկը իր ցուր մի քանի խօսքով պատմելուց յետոյ քուն մտան բոլորը։ Ամենքը, բացի երկու հոգուց, փռուած էին ցուրտ ու խոնաւ գետնի վրայ, չարերը պատառոտած լաթերի մէջ։ Իսկ երկու հոգին բերել էին դրսից, իրանց տներից, փայտեայ հասարակ մահճակալներ (թախտեր) և նրանց վրայ էին քնում։ Ես ոչինչ չունէի հետս բերած, բայց ինձ միայն իմ անբաժան հաստ վերարկուն։ Թախթ ունեցողներից մէկը տրամադրեց ինձ իր լայն անկողնի մի անկիւնը։ Ես, ի հարկէ, չքնեցի ամբողջ գիշեր, նստում էի, քայլում, թեթեւ պառկում, նորից նստում, ինձ նետելով հազար ու մի խոհերի գիրկը։

Այսպէս ուրեմն ես նորից բոլշեվիկեան բանտում եմ գտնւում։ Ուղիղ մի ամիս առաջ, դեկտեմբերի 2-ին, ձերբակալեցին ինձ. երկու շաբաթ բանտ նստեցի, երկու շաբաթ դուրսն էի և այժմ նորից բանտ եմ նետուել։ Ինչո՞ւ ես չվարուեցի ուրիշների նման. Վահան Նաւասարդեանը բանտից ազատուելուն պէս թաքնուեց ու գաղտնի, ուրիշների հետ միասին, հեռացաւ Երեւանից դէպի Վրաստան։ Ինչո՞ւ չօգտուեցի առիթից, չճողոպրեցի գազանների ձեռքից և երկրորդ անգամ զոհ գնացի իմ իդէալիզմին — յանդիմանում էի ինքս ինձ։

Բայց ի՞նչ կը նշանակէ իմ այս նոր բանտարկութիւնը։ Իմ սենեակը խուզարկող կոմիսարն ասաց, որ մինչեւ հինգ օրը ուղարկելու են հայ սպաների

երկրորդ խումբը. (*) հաւանօրէն ձեզ կ'ուղարկեն նըրանց հետ միասին։

Եթէ նախկին վճիռը մնացել է անփոփոխ և ինձ աքսորելու են Բագու, ինչո՞ւ հապա բերել են կենտրոնական բանտը, ուր սովորաբար տևապէս և անորոշ ժամանակով բանտարկւածներին են տեղաւորում. ինչո՞ւ ինձ չպահեցին «Չեկայում» հինգ օրից յետոյ սպաների հետ միասին Բագու ուղարկելու համար։

Ոչինչ հասկանալ չէի կարող, մինչև դրսից, ստոյգ աղբիւրներից որոշ տեղեկութիւններ ստանալը։ Ինձ հարկաւոր էր այժմ ամենից առաջ դուրսը բան հաղորդելու միջոց գտնել։

Միջանցքում գնում գալիս էր և յաճախ կանգնում մեր դռան առաջ հսկիչը, մի հայ զինւոր։ Հարցուփորձից երևաց, որ նա Սուրմալուեցի է՝ խմբապետ Դրոյի հայրենակիցը և զինւորը, որը, իբրև այդպիսին, սկզբից ևեթ վստահութիւն ներշնչեց ինձ։ Ես չսխալւեցի կարծիքիս մէջ, որովհետև նա շարունակ ցաւակցութիւն էր յայտնում մեզ՝ բանտարկւածներիս համար և նախատինքով արտայայտւում բոլշևիկների հասցէին։ Առաջին հերթին խնդրեցի նրան, որ վաղը ծառայութիւնից ազատւելուց յետոյ գնայ իմ գործավարի տունը և յայտնէ ինձ համար անկողին ու թախտ բերելու։

Ամբողջ գիշեր շարունակ անհանգիստ շարժումների մէջ էի։ Քայլում էի, նստում, պառկում, նորից նստում, նորից քայլում և այդպէս անվերջ. Ձմեռւայ

(*) Փոքրիկ խմբերով ուղարկւող այդ սպաները չպէտք է խառնել այն մօտ 2000 հոգուց բաղկացած սպաների մեծ խմբի հետ, որ ամենավայրագ ձևով քշում տանում են Բագու յունւարի կէսերին.

ցուրտ ու երկարատեւ գիշերը մի կերպ լուսացրի։

Առաւօտեան բանտարկեալները նորից խմբւում են չորս կողմս, նորից սկսւում է հարց ու փորձը. լուրը տարածւում է հարեւան կամերներում եւ այնտեղից էլ մարդիկ էին գալիս մօտս։

Ես հասկանում եմ բանտարկեալների հոգեբանութիւնը։ Եթէ նորեկը օր ու գիշեր նորութիւններ պատմէ նրանից եւ նրանց բոլորի մասին կամ ամէն մէկին առանձին հազար ու մի ենթադրութիւններ յայտնէ՝ նրանց վիճակի կամ գլխին գալիքի վերաբերեալ, նրանք քար կտրած կը լսեն անկուշտ ախորժակով եւ անսպառ համբերութեամբ։

Այդպէս են բանտարկւած մարդիկ։

Ճիշտ այնպէս, ինչպէս մէկը մի շատ կարեւոր գործի համար ժամեր ու օրեր է հաշւում, թէ երբ կը ստանայ հեռագրական տեղեկութիւն կամ նամակ, այնպէս էլ բանտարկւած մարդը՝ աշխարհից կտրւած, չորս պատերի մէջ գերւած վիճակում, աչք տնկած սպասում է, թէ կը գա՞յ մէկը, որը մխիթարական լուր կը բերէ իրեն սփոփող, իր վիճակի համար այս կամ այն նպաստաւոր նշանակութիւնը ունեցող. կը գայ այսօր կամ վաղը քննիչը իրեն հարց ու փորձ անելու, իր անմեղութեան մէջ համոզւելու եւ իրեն ազատելու համար մի ուրախ տեղեկութիւն հաղորդելու։

Եւ ինչո՞ւ են բանտարկել այդ խեղճերին։

Ահա մի շարք սպաներ, որոնց մեղադրում են, որպէս Դենիկինի զօրքի սպաների։

— Ի՞նչ մեղաւոր ենք մենք, — դառն գանգատւում էր ինձ մի արմաւիրցի հայ սպայ, — որ լինելով հիւսիսային Կովկասում, Դենիկինի հրամանով վերցրել են մեզ, որպէս ռուսական զօրքի սպաների եւ

կազմակերպել իրանց զօրամասերի մէջ։ Դենիկինի փոխարէն բօլշեվիկները լինէին այնտեղ տակաւ ժամանակին, մենք կը ծառայէինք նրանց բանակում։ Մի՞թէ Դենիկինի զօրքում լինել, նշանակում է հոգով գաղափարով Դենիկինին կողմնակից լինել։ Որ մենք ներքուստ ոչ մի կապ ու յարաբերութիւն չենք ունեցել Դենիկինի գործի հետ, թող ապացոյց ծառայէ այն հանգամանքը, որ մենք, մի խումբ հայ սպաներ, յարմար առիթով թողել ու փախել ենք այնտեղից, եկել Հայաստան մեր հայրենիքին ծառայելու համար։ Մի՞թէ այս փաստը բաւական չէ, որ մենք Դենիկինեան լինել չէինք կարող։

Ահա հինգ գիւղացիներ՝ Երեւանից ոչ հեռու, էջմիածնի գաւառի Փարաքար գիւղից բռնած բերած, երկուսը ուսուցիչ, մէկը կոոպէրատիւ գործիչ. միւս երկուսն էլ սովորական մարդիկ։

— Այս ի՞նչ է մեր մեղքը, — պատմում են նրանք իրանց ցաւերի մասին. մէկը միւսին լրացնելով, — որ շաբաթներով փթեցնում են մեզ այստեղ առանց հարցաքննութեան։ Երեւակայեցէք. պ. Իշխանեան, մեզ մեղադրում են նրա մէջ, որ երբ Երեւանից լուր է հասնում Փարաքար, որով հաղորդւում էր, որ մեր նախկին իշխանութիւնը տեղի է տալ իր լիազօրութիւնները խորհրդային իշխանութեան և այսուհետեւ մեր երկրի տէրերը լինելու են բօլշեվիկները, իբր թէ այդ ժամանակ հաւաքուած գիւղացիներից մէկը, վարժապետ Գ., բարձր ձայնով ասում է. «Խեղճ Հայաստան, նորից կորցրեցիր անկախութիւնդ, նորից քո տէրերը օտարները դարձան», և որ իբր մենք արձագանքում ենք այդ խօսքերին, ասելով. «այո՛, խեղճ Հայաստան»։ Ահա մեր այս հինգ հոգու դէմ բարդուած ամբողջ մեղադրանքը։ Մեզ ասում են. «Դուք

դաշնակցականներ էք, որ այդպիսի խօսքեր էք ասել»։

— Աստուած վկայ ես այդպիսի խօսքեր չեմ ասել,— յարեց ուսուցիչ Գ.․— եթէ իմ կարծիքն էլ այդպէս լինէր, միեւնոյն է չէի ասի զգուշութեան համար, որովհետեւ այնտեղ ներկայ էին գիւղական ցեցեր, որոնք նոր տէրերին դուր գալու համար սուտ մատնութիւններ կանէին. Եւ այժմ տեսնում էք թշնամի մարդու լրտեսութեան զոհ դարձած նստել ենք այստեղ, թողնելով մեր ընտանիքները անտէր ու քաղցած վիճակի մէջ։ Մեր ամբողջ գիւղից,— շարունակեց ուսուցիչը— հարիւրաւոր ստորագրութիւններով համախոսական են ներկայացրել այստեղի «Չեկային», ուր գիւղացիները միաբերան երդւում են մեզ համար, որ ոչինչ հակառակ գործ չենք կատարի խորհրդային իշխանութեան դէմ։ Բայց էլի ոչ մի հետեւանք չունեցաւ մինչեւ այժմ այդ համախոսականը, չնայելով որ մեր քննիչը մեր անմեղութիւնը ապացուցելու համար միակ միջոցը գիւղացիների հաւաքական վկայութիւնն էր համարում։ Ասացէք, ո՛ւր է նրանց պաշտպանած արդարութիւնը. այսպէ՛ս են նրանք գիւղացիութեան շահերը պաշտպանում. երբ արհամարհում են մի ամբողջ գիւղի վկայութիւնը իրանց համագիւղացիների անմեղութեան մասին։ Հէնց այն օրիկան, որ մատնել է մեր մասին, այժմ համարւում է Փարաքարի գիւղական Ցեղկոմի նախագահ, ստացել է արժանի վարձատրութիւն իր կատարած սուտ մատնութեան համար։

— Չէք կարող երեւակայել, պ. Իշխանեան,— մէջ ընկաւ գիւղացիներից մէկը՝ Փ. անունով մի թարձրահասակ, առողջակազմ, 45 տարեկան գիւղացի, բայց իր վիճակից շատ ընկճւած,— թէ ինչպիսի

խուզարկութիւններ կատարեցին մեզ մօտ։ Էջմիածնի «Չեկայի» նախագահը՝ Լ. Ենգիբարեան անունով աւազակին մէկը, որ իր մորթին շուտ շուտ փոխում է, նայած որտեղից ինչ օգուտ կունենայ (Նախկին հընչակեան, յետոյ դաշնակցական, իսկ այժմ էլ բօլշեվիկ). գալիս է մեզ մօտ ատրճանակը ձեռքին բռնած, զինուորներով շրջապատուած. «Չշարժուէք տեղներիցդ, բոլորին կը կոտորեմ. դո՛ւք, գիւղական կուլակներ, ինչ ունիք հանեցէք մէջտեղ—ոսկուց, արծաթից, դըրամից, թանկագին իրերից, պարէնի մեծ պաշարից և այլն։ Եթէ մի բան թագցրել էք, ձեզ շան նման կը սատկացնեմ, հասկանո՞ւմ էք»—խօսքը ուղղում է ինձ։ Ի՞նչ կարող է ունենալ մի հայ գիւղացու տուն այս սով ժամանակին։ Հանում ենք ամեն բան, դնում այն արնախում գազանի առաջ. միւս կողմից էլ զինւորներն են տան անկիւնները քրքրում և խուզարկում։ Գ. Իշխանեան, անգամ կնոջս ճակատին կպած արծաթ փողերն են հանում տանում։ Ինձ մօտ կային 5000 ռուբլի ռոմանովեան փողեր. Հէնց որ տեսաւ այդ գազանը, իսկոյն ճանկեց ձեռքիցս և բարկացած ձայնով ասաց. «Մի՞թէ դու չգիտես, որ արգելուած է Նիկոլայի փողեր պահել, սովետական իշխանութիւնը անպէտք է յայտարարել այս փողերը և խստիւ պատժում է նրանց, որոնց մօտ գտնւում են այդ փողերից. դու շնորհակալ եղիր, որ այդ փողերի մասին ես ոչինչ չեմ յիշի արձանագրութեան մէջ. թէ չէ յանցանքդ աւելի կը բարդանար»—ասում է Ենգիբարեանը։ Ես պատասխանում եմ, որ դեռ չեմ լսել այդպիսի մի օրէնքի մասին, որով անպէտք յայտարարուէին Նիկոլայի փողերը. ես պահանջում եմ նրանից, որ ինձնից վերցրած այդ դրամի համար տայ ինձ ստացական։ Իսկ նա ոչ միայն ստացական չտւեց, այլև

արձանագրութեան մէջ չի յիշել այդ փողի մասին։

— Դուք չէ՞ք ասել այդ ապօրինութեան մասին ձեր քննիչին,— ընդհատեցի ես։

— Ի՞նչպէս չենք ասել. նա զարմացաւ և ասաց որ կը ստուգեն, բայց մինչեւ այժմ ոչ մի հետեւանք։ Պ. Իշխանեան, ի՞նչ անեմ ես հիմա, ո՞ր քարը տամ գլխիս։ Իմ ընտանիքը բաղկացած է 16 հոգուց, այրիացած քրոջս և մեռած եղբօրս որբերը ես թափուած են գլխիս. տան գլուխը և բազմանդամ ընտանիքին միակ կերակրողը ես եմ, ի՞նչ անեմ, մի խորհուրդ տուէք, մեր մեծը, մեր մէջ իմաստունը դուք էք։

Այնուհետեւ միւսները պատմեցին մէկը միւսից ապշեցուցիչ փաստեր իրանց մօտ կատարուած խուզարկութիւնների մասին,

— Երեւակայեցէք, պ. Իշխանեան,— ասաց միւս ուսուցիչը. արդէն 50 տարեկանից անց ալեզարդ ծերունին,— «Չեկայի» նախագահ Ենգիբարեանը չամաչեց մեր տան եղած անգամ վեց ֆունտ ծխախոտը վերցնելուց, ասելով, որ ես իրաւունք չունեմ միանգամից այդքան ծխախոտի պաշար գնելու։ Ես նրան աշխատեցի հասկացնել. որ ես ու կինս ծխում ենք և որպէսզի ծխախոտի համար ծախսեր չանեմ այս ձմեռուայ ցրտերին յաճախ Երեւան գալու. միանգամից գնել եմ վեց ֆունտ ծխախոտ, որ հազիւ մեզ ամիսուկէս բաւարարութիւն տար, որովհետեւ մենք խիստ շատ ենք ծխում, բայց անսիրտն ու անխիղճը անգամ ծխախոտը չզիջեց ինձ։

— Մենք ռուսական հին կառավարութեան օրով,— մէջ ընկաւ կօօպերատիւ գործիչը, ծանրախոհ դէմքով մի գիւղացի,— եկեղեցական կալուածների գրաւման ժամանակ Սիբիր տարագրուած և այնտեղ տարիներով մնացած մարդիկ ենք, բայց հաւատացնում եմ

ձեզ, որ այս 2—3 շաբաթները ինձ վրայ աւելի թանգ են նստել, քան այն ժամանակուայ տարիները։ Այս իշխանութիւնից վատ հոտ է փչում, ես նախազգում եմ. մի տեղ, ուր չկայ արդարադատութիւն և ուր ամեն մի թուկից փախած սրիկայ՝ բոլշեվիկ անուան տակ խաղայ մարդկանց գոյքի և կեանքի հետ, այնտեղ չի կարող խօսք լինել խաղաղութեան և ապահովութեան մասին։

— Օրինակ այս մարդուն բանտարկել են, — խօսեց մինչեւ այդ լուռ մնացած գիւղացին դիմելով իր ընկերներին, խօսքը ուղղելով ինձ, — որովհետև նա խօսել, գրել, կռուել է նրանց դէմ. Նրանց վատութիւնները երեսներումն է տուել, և այժմ կարող է գոնէ ինքն իրան մխիթարել նրանով, որ այստեղ նստում է իր գործունէութեան համար, տուժում, զրկանքներ է կրում ժողովրդի շահերի օգտին։ Իսկ մեզ ինչո՞ւ համար են բռնել. խեղճ հողագործ մարդիկ ենք, հազիւ կարողանում ենք մեր ընտանիքը, մեր երեխաները պահել։ Մեզ համար միեւնոյն է, թէ ով է այս երկրի տէրը. ով գալիս է, մենք նրա հաւատարիմ հպատակներն ենք, դաշնակցականներ լինեն եկողները թէ բոլշեվիկներ ողջ մէկ է. միայն թէ արդարութիւնը պաշտպանեն, աշխատաւոր ժողովուրդը ոտնատակ չտան։ Ախր բոլշեվիկների այս արարքները նոյն իսկ ինձ նման մարդկանց կատաղեցնում է նրանց դէմ։

Ես խորին ուշադրութեամբ լսում էի այդ և նման բազմաթիւ ուսանելի զրոյցներ ու պատմութիւններ, որոնց բոլորին այստեղ գրի առնելու ոչ մի հնարաւորութիւն չկայ։

Բայց ահա մի ուրիշ խումբ եւս, չեզոք զօնայի վեց կոմիսարները (այն չեզոք զօնան, որ գծուած է հայ-տաճկական պայմանագրով՝ Էջմիածնի և Ալէք-

սանդրոպոլի գաւառների միջեւ), որոնք երկու շաբաթ է նստած են անմեղ մեղաւորների դերում, ինչո՞ւ են բռնել այդ պաշտօնեաներին, Թողնենք, որ նրանց գլխաւորը— նախկին սպայ Հ. Ա.— խօսէ.

— Մեր ամբողջ մեղքը կայանում է նրանում, —ասաց նա,— որ մենք հաւատարիմ ենք մնացել մեր պարտականութիւններին։ Նոր իշխանութիւնը հաստատուելուց յետոյ մենք, չեզոք զօնայի կոմիսարներս, պարտք համարեցինք մանրամասն և փաստալից զեկուցագրով դիմելու նրան և պարզելու այն զարհուրելի աւերումների, անվերջ թալանի ու կողոպուտի և մասնակի սպանութիւնների պատկերը, որ տեղի է ունենում Ալեքսանդրոպոլի գրաւած գիւղերում և անգամ չեզոք զօնայի գիւղերում տաճիկ ասկեարների կողմից։ Մեր բոլոր դիմումները տաճկական վարչութիւններին և շտաբին— անհետեւանք են անցել։ Ուստի մեր սեպուհ պարտականութիւնը համարեցինք այդ բոլոր երկինք աղաղակող փաստերի նկարագիրը ներկայացնել Հայաստանի նոր իշխանութեան։ Եւ ահա, պ. Իշխանեան, մեր այդ պարտականութիւնը կատարելու համար զինւորական կոմիսար Աւիսի կարգադրութեամբ մեզ բանտարկել են, առարկելով, որ մենք, որպէս նախկին իշխանութեան պաշտօնեաներ, պրովոկացիա ենք անում տաճկական հրամանատարութեան դէմ։ Դրա մասին կային թեթեւ ակնարկներ «Կոմունիստի» մէջ, գուցէ կարդացած լինէք։

— Այո՛, յիշում եմ այդպիսի մի բան, բայց չգիտէի, որ ձեզ բանտարկել են այդպիսի «մեղքի» համար,— ասացի ես։

Նշանակում է դրութիւնը շատ աւելի վատ է, քան ես կարծում էի, քան շատերին թւում է արտաքուստ,— մտածում եմ ինքս իմ մէջ։ — Նստած զին-

ւորական բանտում և այնուհետև դուրս լինելով երկու շաբաթ, չգիտէի, որ այս պարոնների դատաստական օրգանները այնքան հեռուն են գնացել իրանց ճնշումների գործում գիւղացիների դէմ. Փարաքարցիք պատմեցին, որ էջմիածնի բանտում ահագին քանակով նստած գիւղացիներ կան— դատաստական այս կամ այն կոմիսարի կամայականութեան զոհ գնացած անմեղ մարդիկ։ Նշանակում է այս պարոնները—շարունակում եմ որոճալ տխուր խոհերի անվերջ շարանը— սկսել են իրանց բուրժուական սիստեմի գործադրութիւնը դատարաններում. հայ գիւղացիութեան թիկունքի և տնտեսութեան վրայ, և Երևանի քաղքենին, որ մինչև այժմ դեռ զերծ է մնացել բոլշևիկեան լծի հարւածներից, գաղափար չունի տակաւին, թէ ինչ քաղաքականութիւն է առաջ տարւում իր եղբայրակիցների նկատմամբ գիւղերում։ Փարաքարցիների պատմածները,— ի հարկէ շատ աւելի մեղմ ու աղօտ գոյներով, քան խեղճ գեղջուկի անպաճոյճ լեզուն կարող էր վերարտադրել պատմածից գերազանցող իրականութիւնը,— մի-մի բնորոշ փաստեր են համատարած երևոյթի, որովհետև Ենգիբարեանները բացառութիւններ չեն, այլ տիրապետող տիպեր բոլշևիկեան տիրապետութեան ծոցում. Ինքը սիստեմն է, որ ստեղծում է Ենգիբարեաններ։

Ես հարց ու փորձ արի բաղդակիցներիցս բանտային կեանքի և ռէժիմի մասին։

— Օ՛, մի՛ հարցնէք դրա մասին,— ասաց ինձ երեկոյեան իր թախտը առաջարկող հարևանս՝ Վօֆեան անունով,— նայեցէք՝ հսկայական սենեակ, ապակիները ջարդուած պատուհաններով և բաց դռնով (դուռը, իր միջին տարածութեամբ ծածկուած չէր, այլ երկաթէ ձողերից ցանցաձև շինուած), երկու կողմից

էլ ցուրտ քամի է փչում, իսկ դրան կողմից նաև արտաքնոցի գարշահոտութիւնը։ Այս սարսափելի ցուրտ ձմրանը վառելիքի երես չի տեսել այս կամերը, տեսնում էք բոլորը ման են գալիս կամերում փաթաթուած ձմեռուայ վերարկուների մէջ և էլի մրսում են, Իսկ յատակը, տեսէք ինչպիսի խոնաւութիւն կայ այդ սեւ հողի վրայ. գոնէ տախտակներ փռէին այդ խոնաւ յատակի վրայ, որպէսզի գետնին պառկողները չմրսեն ու չհիւանդանան. Տեսէք որքան նիհարցած, դեղնած ու սմքած դէմքեր կան։ Ամբողջ բանտի բոլոր մեծ կամերները, որ տեղաւորում են իրանց մէջ բոլոր բանտարկեալների 80—30 առ հարիւրը, այս վիճակի մէջ են. դեռ փառք մեր կամերին, մերից շատ աւելի վատերը կան միւս կորպուսներում.

— Բանտային վարչութիւնը ոչինչ չի անում՞ բանտարկեալների մասին,— վրայ բերեց միւս Թախտ ունեցող հարեւանը՝ Թարվերդեան անունով,—շատ քչերը կան մեզնից, որ ստանում են դրսից սպիտակեղէն եւ ճաշ. Ի՞նչպէս անեն հապա այն խեղճերը, որոնք չունեն դուրսը ոչ ոք, ոչ մի հարազատ կամ բարեկամ, լինելով Հայաստանի ուրիշ մասերից կամ Անդրկովկասի հեռաւոր վայրերից. Նրանք դրսից բացարձակապէս ոչինչ չեն ստանում, երբէք չեն փոխում իրանց սպիտակեղէնը, տառապում են կեղտոտութեան մէջ. դրա համար էլ լիքն է մեր կամերը գարշելի միջատներով, դուք ինքներդ կապրէք ու կը տեսնէք. Իսկ ուտելի՞քը,— Աստուած ճաշ համարէ դա. Այսօր կէսօրին կը տեսնէք. Թէ ինչ են տալիս այդ խեղճերին։ Ամեն մէկին տալիս են մի-մի ֆունտ հաց—երբեմն երեք քառորդ, երբեմն էլ կէս ֆունտ— ամենավատ տեսակից, յաճախ ուղղակի ուտել չի լինում, և ջրի նման հաստ անհամ սուպ. Այս է բանտարկեալի

ամբողջ կերակուրը 24 ժամուայ ընթացքում։ Բայց տեսէք, այնքան անկազմակերպ է դրուած գործը եւ այնքան անփոյթ է վերաբերւում բանտային վարչութիւնը, որ նոյն իսկ այդ «ճաշ» ասուածը շատ անկանոն է տրւում. օրեր են լինում, երբ հացը ստացւում է կէսօրին, իսկ սուպը երեկոյեան, որովհետեւ փայտը ժամանակին չեն հասցնում սուպը եփելու համար։ Եւ ընդհակառակը, օրեր են լինում, երբ սուպը բաժանում են ժամանակին, իսկ հացը երեկոյեան ժամը 6—7-ին, որովհետեւ, ասում են, փուռչին չի հասցրել ժամանակին։ Բայց յաճախ օրեր են լինում նաեւ, որ տալիս են հաց, առանց սուպի, կամ բաժանում են սուպ, առանց հացի։ Ես և Վօֆեանը ուշադրութեամբ հետեւել ենք՝ չեն եղել երբեք իրար շարունակաբար յաջորդող 3—4 օր, որ այդ երկուսը—հացն ու սուպը— բաժանէին միասին, իր ժամանակին։ Ասեմ ձեզ թէյի մասին,— շարունակեց խօսակիցս։ Առաջ տալիս էին առաւօտները եռացրած ջուր, միայն եռացրած ջուր, ուրիշ ոչինչ, իսկ երեկոները ոչինչ չեն տալիս։ Իսկ այժմ առաւօտեան այդ էժան բաւականութիւնից էլ են զրկել՝ երբեմն տալիս են, երբեմն ոչ։ Գոնէ տային մեզ ածուխ կամ փայտ՝ մենք ինքներս կը պատրաստէինք, կամ թոյլ տային դրսից ստանալու նրանց, որոնք կարող էին։ Փորձեր են եղել դրսից փայտ ստանալու, ծառայողները զաւթել են և իրանք գործադրել։ Ահա ձեզ, պ. Իշխանեան, տառապանքի եւ քաղցածութեան իսկական «կօմունան», որ այսպէս անուանուած «կօմունիստական» կուսակցութիւնը ստեղծել է բանտերում հազարաւոր անմեղ զոհերի համար։ Այն, ինչ դուք թէօրիայով գիտէք և գրել էք բոլշեվիկների մասին, մենք ահա կրում ենք մեր մէջքի վրայ։

— Ասացէք խնդրեմ, ո՞վքեր են և ի՞նչ մարդիկ են բանտային վարչութեան անդամները. ի՞նչպէս են պահում իրանց և ի՞նչպէս են վերաբերւում դէպի բանտարկեալները,—դիմեցի հարցով խօսակցիս.

— Մի հարցնէք այդ սրիկաների մասին. Ախտատուն անգամ չի կարելի բաց թողնել նրանց, իսկ այստեղ յանձնւած է նրանց հարիւրաւոր մարդկանց բաղդը. Բանտապետը և նրա մի օգնականը բօլշեվիկներ են, մայիսեան շարժման ասպետներից, որոնք բանտարկւած էին այստեղ նախկին իշխանութեան օրով, իսկ այժմ կարգւել են տէրեր նոյն բանտի վրայ, ուր նստած ամէն մի բանտարկեալ դաշնակցական է նրանց աչքում, ուստի և արհամարհանքի ու վիրաւորանքի արժանի ամէն քայլափոխման. Միւսը, առաջ օգնականը, անկուսակցական է, բանտային րէժիմի քութայում եփւած մի հին աղուէս, որ գիտէ իր վարպետական փորձառութիւնը համապատասխան ձեւերով ի սպաս դնել ամէն մէկին, ով դրութեան տէր է հանդիսանում տւեալ վայրկեանին. Կայ և չորրորդը, այսպէս կոչւած բանտային կոմիսարը, ի հարկէ դարձեալ բօլշեվիկ. ջահել երեխային մէկը, որ հսկում է բանտի ընդհանուր գործերի ընթացքի վրայ։ Նրանք բոլորն էլ օրն ի բուն կոնծում են, ամէն գիշեր լակում, հարբում են. Չեղաւ մի անգամ, որ մենք զգաստ տեսնէինք դրանցից մէկին կամ միւսին. Եւ ես շարունակ հարցնում եմ ինձ և ընկերներիս. որտեղի՞ց են արդեօք այն միջոցները, որոնց հաշւին այս պարոնները այսքան կոնծում են. կամ բօլշեվիկեան իշխանութիւնը անվերապահօրէն բաց է արել իր ընկերների առաջ Շուստովի գործարանի ոգելից խմիչքների տակառները, կամ այս պարոնները բանտին յատկացրած բիւտջէով են քէֆեր անում և կամ բանտարկեալների իրանց

մօտ կուտակուած դրամներն են ծախսում անամօթաբար․ Մէկը, միւսը, կամ երրորդը, և կամ մէկից, միւսից և երրորդից մաս-մաս, ուրիշ բացատրութիւն չկայ հասկանալու համար օրգիաների հաւասար անվերջ քէֆերի նիւթական միջոցների որտեղից լինելու գաղտնիքը։ Մարդիկ վերաբերւում են դէպի իրանց պաշտօնները որպէս ժամանակաւոր վարձկաններ, որոնք շահագրգռուած են՝ որքան կարելի է շուտ ուտել, վայելել ու վատնել։ Ի՞նչ վերաբերմունք էք սպասում այդպիսի պաշտօնեաներից դէպի բանտարկեալները։ Նրանք խօսում են բանտարկեալի հետ «ընկերներ» բառով, բայց նայում են նրա վրայ վերևւից, աղայական գոռոզութեամբ ու արհամարհանքով. երբեք չեն լսում բանտարկեալի խօսքը, չեն ընդառաջում նրա կարիքներին, իսկ բողոքի դէպքում պատրաստ է կարցերը (մութ, խոնաւ ու ցուրտ նկուղին) յանդուգն ըմբոստի համար։ Ինչ կարիք կայ այս ամէնը պատմելու. դուք կարէք այստեղ և կտեսնէք բոլորը։

— Ասացէք խնդրեմ, բանտարկեալներից վերցրած դրամներից մաս-մաս բաժի՞ն են հասցնում տէրերին՝ իրանց կարիքները հոգալու համար.

— Կանոնով ամեն մի բանտարկեալ իրաւունք ունի իր դրամներից ամսական քառասուն հազար ռուբլի վերցնել (ով այդքան շատ դրամ ունի նրանց մօտ), բայց ես մինչև այժմ չտեսայ, որ որևէ բանտարկեալի յաջողուած լինի նրանցից կոպէկ ստանալու։ Ոչ թէ մերժում են տալուց. ոչ, խոստանում են ստանալ «Զեկայից» և տալ. իսկապէս ստանում էլ են շատ անգամ. Բայց այնքան են այսօր վաղը ձգում, ամեն անգամ այս կամ այն արւեստական խոչընդոտը առեղծում և վերջումն էլ առաջարկում իրանց միջո-

ցով գնել ու բերել տալ դրսից, ինչ ցանկանում է տւ-եալ բանտարկեալը, որ վերջինս զզւում ու թողնում է։

— Իսկ ի՞նչ դիտաւորութեամբ է այդպէս վարւում բանտային վարչութիւնը, — հարցրի ես։

— Շատ պարզ է։ Ռուսաստանի բոլշեվիկեան բանտերի մասին շատ են պատմել ինձ այնպիսի ազբիւրներից, որոնք մեզ նման այսպէս դառնութեան բաժակը քամել են մինչև վերջ։ Դա ևս սիստեմի վերածւած մի գործելակերպ է նրանց մօտ։ Նախ եւ առաջ թանկագին իրերը և օտար դրամները կամ Ռուսաստանում հազւագիւտ դարձած դրամանիշները՝ ինչպէս են ռումանովեան դրամները, կերենկաները, իսկ Անդրկովկասում նախկի բոնները՝ չեն վերադարձնում բանտարկեալներին, ասելով, որ ազատելուց յետոյ կը ստանաք. ընթացիկ դրամների նկատմամբ վարւում են այնպէս, ինչպէս ասացի քիչ առաջ։ Ահա նրանք ինչ դիտաւորութիւն կամ, աւելի շատ, ակնկալութիւն ունին, եթէ տւեալ բանտարկեալը աքսորւում կամ գնդակահարւում է. նրա թողած դրամները իւրացնւում են, իսկ եթէ բանտարկեալները ազատւում են. նրանց մէջ լինում են շատերը, որոնք այնքան են զոհ լինում իրանց ազատութեան փաստով և այնքան են զզւում բոլշեվիկների հաստատութիւններից, որ աւելի շուտ խաչ են քաշում իրանց ունեցածի վրայ, քան ցանկութիւն են ունենում մտնել նորից «Չեկայի» դռներից՝ իրանց դրամը կամ այլ իրերը յետ ստանալու։ Հէնց օրինակ մէկը ես. միլլիոնից աւելի զանազան տեսակի դրամ և ոսկէ ժամացոյց ունեմ «Չեկայում». ինչ էք կարծում, եթէ ինձ վաղը միւս օրը բաց թողնեն՝ պիտի գնամ այդ դրամը յե՞տ վերցնեմ, ոչ մի պարագայում։ Իրերը ստանալու ժամանակ նրանց այն կասկածելի հարց ու փորձը — ո՛ւր պիտի

գնամ, ինչո՞վ պիտի զբաղուեմ. ինչ նոր հասցէ պիտի ունենամ և այլն—զզւեցնում և նոր տարակուսանքներ է առաջ բերում մարդու մէջ. Եւ գիտէ՞ք այդ եղանակով որքան օտարի բարիքներ են կլանում բոլշևիկեան «Չեկաներին» և բանտերի հերոսները—դժողքի և գեհենի այդ անիծւած ծնունդները։ Կան բանտարկուած Թիւրքահայեր, որոնց մօտից խուզարկել և վերցրել են ահագին քանակով տաճկական լիրաներ. Գիտեմ օրինակ մի Թիւրքահայ առեւտրական, որին բանտարկելու ժամանակ մօտը գտել են 13 միլիոն ռուբլի հայկական չեկերով, 100,000 անդրկովկասեան բոնաներ և 300 տաճկական լիրաներ (ոսկի), առել է ներկայ կուրսով մօտ 120,000,000 միլիոն հայկական դրամ։ Եւ այդ խեղճ մարդը այնքան է դողդողում իր կեանքի համար, որ պատրաստ է ամենից հրաժարուել, միայն թէ իրան բաց թողնեն։ Շատ անգամ գիտեմ, առանց որևէ առիթի և կասկածի ունեւոր մարդիկ են ձերբակալում՝ նրանց խուզարկելու և դրամներ ու թանկագին իրեր վերցնելու ակնկալութեամբ։ Սա մի իւրատեսակ շանտաժ է, աւազակութիւն և դրամաշորթութիւն՝ բոլշևիկների կողմից պաշտօնական ձեւի վերածւած ու սրբագործւած.

X

Այդ վայրկեանին ինձ կանչում են դրսից. մօտենում դռան և գտնում եմ Արշալոյս Աստուածատրեանին (Երեւանի քաղաքագլուխ) և Ստեփան Մաչիկեանին (դաշնակցական հին գործիչներից). Երկուսն էլ ճանապարհին բռնւած խմբի անդամներ.

— Բարև, Բախչի, բարեւ, տօ տնաշէն մենք էլ

նախանձում էինք քեզ, որ այդքան շուտ բաց են թողել, հիմա նորից եկար մեզ բաղդակից լինելու, է՞հ, գնանք մեր կամերը, պատմիր տեսնենք ինչ նորութիւններ կան դրսի աշխարհում. Այսօրուայ հսկիչը լաւ տղայ է, ոչինչ չի ասի, իսկ այն շներից (այդպէս էին կոչում բանտարկեալները իրար մէջ բանտային վարչութեան անդամներին) այս ժամին ոչ ոք չի գալիս, հիմա երեւի դեռ հարբած թափւած են.

Նրանց կամերը մի շատ փոքրիկ, երկու հոգու բաւարարութիւն ունող գողտրիկ սենեակ էր, պատուհանը դէպի դուրսը, բաւական առատ լոյսով, պատերին գորգեր փռած, գրքերը թափւած անկողինների վրայ,— անհամեմատ հաճելի տեղ մեր կամերի հետ համեմատած.

— Տօ՛ անիրաւներ, ինչ լաւ տեղ էք ապրում, — ասացի ես.

— Շատ թանգ է նստել մեզ վրայ սեկրետ (առանձին) կամեր տեղափոխուելու համար, մենք էլ գտնըւում էինք մեծ կամերում, միւս կորպուսի մէջ, շատ աւելի վատ տեղ, քան այժմեան ձեր կամերն է. Դուրսը շատ են աշխատել մեզ համար, ուտեցրել, խմեցրել են բանտապետին և խնդրել, որ մեզ տեղափոխեն այստեղ, թէ չէ իմ տկար առողջութիւնը,— ասաց Արշալոյսը,— գիտես էլի՛, չէր կարող դիմանալ մեծ կամերների ցուրտ ու խոնաւ պայմաններին.

Ասացին, որ Համօն իր միւս ընկերներով— կառավարութեան և պարլամենտի անդամները, ընդամենը եօթ հոգի— տեղաւորուած են վերեւի յարկում, առանձին կամերում.

— Տղե՛րք, ես այն կամերում ապրել անկարող եմ. այնտեղի ցուրտը, խոնաւութիւնը, կեղտը, սարսափելի քանակով միջատները, ինչպէս պատմում են,

ապա այն ժխորն ու աղմուկը երկու դիմացին մարդկանց և, որ գլխաւորն է ինձ համար, կարդալու, պարապելու անյարմարութիւնները — ինձ ուղղակի կը խենթացնեն, ուստի դուք էլ, ես էլ աշխատենք ամեն կերպ, որ ես տեղափոխուեմ այստեղ. Թէեւ, անշուշտ, շատ նեղուած կը լինենք այս փոքրիկ ծակում երեք հոգով, բայց ինչ արած, ընկերաբար կը տանենք մի կերպ։ Ձեզ մօտ գալու գրաւիչ հանգամանքներից մէկն էլ Թաչիկի (այդպէս են կոչում Թաչիկեանին) ներկայութիւնն է, նրա տնարարութիւնը՝ տնտեսելու, շինելու, պատրաստելու, ամէն բան մաքուր պահելու բացառիկ շնորհքը, — նրա այդ առաքինութեան ծանօթ եմ ես դեռ 1908—1910 թուականներին, երբ նըստած էինք միասին Թիֆլիսի Մեսեխի բերդում, — ինձ անհրաժեշտ է այդպիսի մի մարդու հետ ապրել, որովհետեւ տնարարութեան գործում ես կատարելապէս անշնորհք ու անճարակ եմ։

— Լաւ, լաւ, աշխատենք քեզ այստեղ տեղափոխելու, — ընդհատեց ինձ Թաչիկը, — բայց ի՞նչպէս, ո՞ւմ միջոցով և ի՞նչ եղանակով։

— Երէկ երեկոյեան բանտապետի օգնական Ռուբէնը խոստացաւ հէնց այսօր տեղափոխել մի ուրիշ կամեր. Նրան կը խնդրենք, որ ձեզ մօտ տեղաւորէ ինձ։

Լախ-լախ ծիծաղեցին երկուսն էլ։

— Դեռ շատ միամիտ ես Բախշի այդ պարոնների նկատմամբ, թէեւ դու աւելի, քան որեւէ մէկը, խօսել ու քննադատել ես բօլշեւիկներին, — վրայ բերեց Արշալոյսը։ Ի՞նչ ես ասում ա՛յ մարդ, ինչ խոստանալ, ինչ բան. հազար անգամ կարող են խոստանալ և մի քայլ չանել։ Դատարկ բաներ են այդ խոստումները։

— Ես այսօր առաւօտեան, ընդհանուր ստուգման ժամանակ, — ասացի ես, — խնդրեցի աւագ հսկիչին, որ նա անունս գրէ և բանտապետի օգնականին յայտնէ ինձ կանչելու համար, որպէսզի նրան յիշեցնեմ երէկուայ իր խոստումը և նորից խնդրեմ տեղափոխելու համար։ Ահա արդէն 3—4 ժամ է անցել, նա չի կանչում։

Նորից ծիծաղեցին խօսակիցներս։

— Կարող ես մէկի փոխարէն քսան անգամ դիմել և տոմսեր գրել, ոչ մի ուշադրութիւն, — ասաց Արշալոյսը, — նրանք խօ մեզ, բանտարկեալներիս, մարդու տեղ չեն դնում։ Շատ աւելի կարևոր գործերի համար դիմումներ են անում, օրինակ կամերում հիւանդ պառկած, ծանր տնքացող մարդկանց համար դիմում են հսկիչների միջոցով և խնդրում, որ հիւանդներին տեղափոխեն հիւանդանոց, — դարձեալ ոչ մի ուշադրութիւն։ Դէպքեր են եղել, որ հիւանդ մարդը հոգին է փչել կամերում, առանց հիւանդանոցի երես տեսնելու, չնայելով որ հիւանդանոցը նոյն բանտի բակումն է գտնւում։ Հիւանդանոցի բժիշկ ասածդ մի մանեկեն է, որ առանց բանտապետի կամ նրա օգնականի հրամանի ու կարգադրութեան չի կարող ոչինչ անել։

— Ո՛հ, ինչեր եմ լսում, — զարմացած բացականչեցի ես, — ահա քեզ իսկական բանտ, դժոխքի հաւասար բօլշևիկեան բանտ։ Ուրեմն ճիշտ են բանտի մասին լսածս բոլոր պատմութիւնները մեր կամերում։

— Ով որ քեզ պատմել է, երևի միայն բուն իրականութեան կմախքն է կարողացել քեզ հասկացնել, — ասաց Արշալոյսը։

— Որքա՜ն լաւ էր այդ տեսակէտից Մետեխում, — դարձայ ես դէպի Թաչիկը, — ինչպիսի յարգանք և

ուշադրութիւն կար դէպի մանաւանդ քաղաքական բանտարկեալները։ Ցանկանում էիր տեսնել բանտապետի հետ կամ գնալ վարչութեան գրասենեակը որևէ կարիքի համար, յայտնում էիր դրա մասին, իսկոյն կանչում էին քեզ։

— Ի՛նչ համեմատութիւն, տէ՛ր օրհնած, — վրայ բերեց Թաշիկը, — ցարական րէժիմի ամենավատթար և խուլիգան բանտապետն անգամ հազար անգամ առաքինի է բոլշեւիկեան րէժիմի ամենալաւ համարուած բանտային պաշտօնեայից։ Նրանք, հները, օրինականութեան որոշ սահմաններում գործող և պատասխանատւութեամբ ստորագրուած պաշտօնեաներ էին, իսկ սրանք, նորերը, իրենք իրենց էութեամբ ապօրինութեան զաւակներ են, կամայականութիւնը սկզբունք դարձրած, որոնք նոր «դուրս պրծածների» գետնայական հպարտութեամբ են նայում դէպի բանտարկեալները։

Արդէն ժամը մէկն էր, ստացւում էր դրսից (տներից բերուած) մասնաւոր ճաշը սրա կամ նրա անունով։

— Ինչպէս է քո ճաշի հարցը, Բախչի, — ասաց Թաշիկը, ընդունելով ծառայողից իրանց տնից ուղարկըւած ճաշը, — դու գիտես, այստեղ կարելի է քաղցից հալումաշ լինել և հիւանդանալ առանց դրսի ճաշի. ո՞վ պիտի հոգայ քեզ համար, մտածե՞լ ես դրա մասին։

— Այդ կողմից, ինչպէս գիտէք, ձեր մէջ ամենէն դժբաղդը ես եմ. չունեմ ոչ մի հարազատ Երեւանում։ Զինւորական բանտում ճաշ բերում էին ինձ համար Մելիք Յովսէփեանները, իսկ այս անգամ չէի ցանկանայ երբեք նրանց կրկին նեղութիւն պատճառել։ Յոյսս Յովհ. Բաբայեանի ընտանիքն է, որոնց

մօտ ես ապրել եմ վերջին 15 օրը։ Կը գրեմ նրանց, որ բոլոր ունեցածս, հագուստեղէնս վաճառեն և նրա հաշուին ինձ այստեղ ճաշ ուղարկեն, ինչ պէտք անեմ. իսկ մինչ այդ կաշխատեմ, այստեղ բանտում և «Ջէկայում» գտնուած դրամս ստանալ և ուղարկել դուրս ճաշի համար։

— Այդ փողի վրայ կարող ես արդէն այժմեանից խաչ դնել, կոպէկ չես կարող ստանալ— յարեց Խաչիկը։ Թէեւ իմ դրամը քիչ է «Ջեկայում», բայց եւ այնպէս ցանկացայ ստանալ և կնոջս ուղարկել։ Երկար դիմումներից յետոյ ստացուեց այստեղ, իսկ բանտի պարոնները չարունակ ձգձգում են, ուրիշ խօսքով չեն տալիս։

— Եղբայր, այսպիսի խայտառակութիւն կը լինի՛. հապա ո՞ւմ դիմես, ո՞ւմ բողոքես. կամայականութիւն մինչ այս աստիճա՞ն,— ասացի ես յուզուած տօնով։

— Ո՛ւմ պէտք դիմես, երբ մեծից մինչև փոքրը միմեանց գերազանցող աւազակներ են,— վրայ բերեց Արշալոյսը։

Ինձ դրսից կանչում են։

— Երևի իմ անկողինն են բերել. գնամ. միւս անգամ կը պատմեմ ձեզ տեղեկութիւններ դրսի աշխարհից, ըը...

Ապրած լինի Յովհաննէսը. ուղարկել է մի թախտ, անկողինս, մի ձեռք սպիտակեղէն և մի տուփ ծխախոտ։ Ճա՛շ չկար, դրա մասին չէր յայտնել երէկ. երևի նա էլ թիւրամացութեամբ չի ուղարկել. մտածում եմ ես, մխիթարելով ինքս ինձ։ Նրա ուղարկած տոմսակի յետևը գրեցի, որ վաղւանից ինձ համար ճաշ ուղարկեն և մի քանի գրքեր, յիշելով անունները։ Այդ օրը ճաշին հրաւիրում են ինձ իմ երկու հա-

րեւաններըՙ Թարվերդեանը և Վօֆեանը։ Ճաշից յետոյ մի փոքր հանգստանում եմ, չէ՞ որ ամբողջ գիշերը չէի քնել։

Ժամը արդէն հինգն էր. յանկարծ բանտարկեալները փախում են իրար — բանտապետի աւագ օգնականը, Կարապետը, գալիս է։ Մտնում է մի միջահասակ մարդ, ողջունում բոլորին, ես յայտնում եմ նրբան իր պաշտօնակցի երէկւայ խոստումըՙ ինձ մի ուրիշ կամեր փոխադրելու համար։ Ապա խնդրում եմ ինձանից վերցրած բոների համար ստացական տալ։

— Ես կը խօսեմ Ռուբէնի հետ և կը տեսնենք, կ՚աշխատենք. ինչ վերաբերում է բոների ստացականին, դիմեցէք անմիջապէս բանտապետին։

Ահա և միւս օգնականը. ահա նրա պատրաստակամութեան աստիճանը և բացատրութիւնը բանտարկեալի դիմումներին.

Այդ օրը անցաւ։ Մեր կամերում սովորութիւն կար ամէն երեկոյ հերթով հէքիաթներ պատմել. բոլորի մէջ աչքի էր ընկնում Արամ Թարվերդեանը իր զարմանալի հէքիաթագիտութեամբ և սրախօսութեամբ։

Յաջորդ օրը ստացայ ճաշ և մի շարք գերմաներէն և ռուսերէն գրքեր Ֆրանսիական յեղափոխութեան և տնտեսական հարցերի վերաբերեալ։ Ուղարկած ճաշի ամանակի վրայ գրել էր գործավարս ցաւակցող բարեկամի անկեղծ մտահոգութեամբ. «Ճաշ միշտ կը ստանաս, անհոգ եղիր»։

Չգիտեմ ինչ են զգացել նրանք, որոնք երբեւիցէ նստել են բանտում և բարեբարուել ոչ հարազատներից, ես կասեմ հետեւեալը։

Այդ կարգի բարեբարութիւնը երախտապարտութեան մի անջնջելի կնիք է դրոշմում յաւէտ մարդու

հողու վրայ, որը ոչ մի բանով փոխարինել կամ փոխհատուցել կարելի է, որովհետեւ չկայ սովորական կեանքում օգնութիւն և աջակցութիւն մի եղանակ, որը հեռաւորապէս անգամ նոյնը կամ նման լինէր բանտարկեալին արած բարերարութեանը։ Բանտարկեալը մի օտար միջավայրում, ուր չունի իր մասին հոգացող ու ցաւող հարազատ սիրտ, նման է վանդակում փակուած այն թռչունին, ձեռք ու ոտք շղթայած, ձայնը խեղդած և կամքը բանտարկուած այն արգահատալից արարածին, որը ճակատագրի դաժան հարուածների տակ կարող է ճմլուել ու փշրուել, ստոփճանական մահացման գիրկը նետուել, եթէ չկայ օգնութիւն և փրկութիւն կողմնակի ձեռքը։ Ասածս փաստը կրկնակի իմաստ ունի մանաւանդ այն երկիրներում, ուր մարդկային կեանքը մժեղի գոյութեան է հաւասարեցրուած, ուր կամայականութիւնը կանոն է, իսկ օրինականութիւնը բացառութիւն և ուր, վերջապէս, վերին իշխանութիւն առած տարուած քաղաքական ատելութեան մոլի ախտով, յատուկ դիտաւորութեամբ պայմաններ է ստեղծում և միջոցներ հայթայթում իր գաղափարային հակառակորդների ոչնչացումը արագացնելու համար ամէն գնով։

Բոլշեւիկեան ռէժիմը է՝ այդպիսին աններեւակայելի չափերով, ուստի թող ինքը ընթերցողը գնահատէ, թէ որքան մեծ է այդպիսի պայմաններում ոչ հարազատների մատակարարած բարերարութեան արժէքը։

Պէտք է ապրած լինել բոլշեւիկների տիրապետութեան տակ և ճաշակած նրանց բանտային կեանքի դաժանութիւնը՝ ասածներիս իմաստը խորապէս ըմբռնելու համար։

Աշխատեցի ընտելանալ նոր բանտի նոր պայմաններին. միակ սփոփանքը, որ ես կարող էի գտնել, դա ընթերցանութիւնն էր։ Բայց ամփոփուել և խո-

րանալ դրա մէջ հնար չկար հանրակացարանի (կազարմա) նման կամերում, ուր տասնեակներով մարդիկ աղմուկ են հանում հազար ու մի զրոյցներով ու բացագանչութիւններով: Նրանք էլ նկատում էին, որ ինձ խանգարում են, ուստի յաճախ աշխատում էին լռել կամ կամացուկ խօսել. բայց դա տեւական չէր լինում, ինքնաբերաբար նորից աղմուկ էր բարձրանում: Բացի դրանից ինձ սարսափելի ճնշում էր այն հանգամանքը, որ քսանից աւելի մարդիկ միայն ինձ համար— պէտք է խեղդեն իրանց ձայնը, պէտք է ճնշւեն մի մարդու պատճառով. դա երբեք ցանկալի չէր: Ի՞նչ կարող էին անել այդ խեղճերը— որոնց մէջ միայն 3—4 հոգի էին երբեմն-երբեմն գիրք առնում իրանց ձեռքը,— բայց եթէ խօսել, զրուցել, խաղալ ու զւարճանալ և այդպիսով օր օրի վրայ սպանել իրանց ժամանակը: Թեթեւացնել իրանց խեղդող տաղտկութիւթիւնը: Ես ճնշում էի նրանց, որպէս բազմութեան, իրաւունքից, իսկ նրանք ճնշում էին այն յարգանքից, որ տածում էին դէպի իմ անձը: Այս փոխադարձ ճնշումը ստեղծել էր իմ և նրանց միջեւ մի տեսակ արհեստական դրութիւն: Եւ ես և նրանք ըմբռնում էինք, որմենք տարբերւում ենք իրարից մեր հոգեկան ապրումներով և մտաւոր ինտերեսներով, որ ոչ ես կարող էի ընտելանալ նրանց ժամանցի ձեւերին և ոչ նրանք կարող էին ընտելանալ իմ նրանց համար ձանձրացուցիչ զբաղմունքին. Ներդաշնակութիւն երկու կողմերի միջեւ չէր կարող լինել, ուստի թէ մէկ և թէ միւս կողմի մէջ կար մի լռելեայն, բուռն փափաք—բաժանուել իրարից որքան կարելի է շուտ:

Նստել բանտում և լարուած չզբաղուել կարդալով կամ գրելով, նշանակում է պատիժ կրել կրկնակի, եռակի իմաստով: Բայց ի՞նչ անեմ ես, երբ իմ բազմաթիւ դիմումները անարձագանք են մնացել. անգամ

բանտապետին դիմեցի, ոչ մի հետեւանք։ Կարծես դիտմամբ էին մերժում, որպէսզի ես բարոյապէս աւելի ու աւելի տանջուեմ։

Բանտարկեալների տեղաւորման ինչպիսի՞ յիմար դասաւորութիւն կար Երեւանի բերդում։ Բրէականները. արդէն դատապարտուած, նստում էին սեկրետ (առանձին) կամերներում, իսկ քաղաքականները խառն ի խուռն ընդհանուր կամերներում։ Բրէականների համար,— որոնք օրն ի բուն աշխատում էին բանտի բակում կամ խոհանոցում և կամերներում չէին լինում համարեա ցերեկները,— ցանկալի էր ընդհանուր կամեր՝ աղմկալից զրոյցների միջավայր. իսկ քաղաքականների, մանաւանդ ինտելիգենտների և յատկապէս գրականագէտ մարդկանց համար ցանկալի էր առանձնացած կամերներ։ Վերջիններս ունեն նաև այն առաւելութիւնը՝ բանտային վարչութեան շահերի տեսակէտից, որ քաղաքականները փակուելով այնտեղ, հնարաւորութիւն չեն ունենայ շփուելու և ագիտացիայով հաղորդակից լինելու բանտարկեալների բազմութեանը։ Այդպէս էին վարւում ցարական ռէժիմի օրով և այդպէս է առհասարակ ամէն տեղ։

Բայց ահա մի օր հարեւաններիցս մէկը այսպիսի մի հաւանական միտք յայտնեց։

— Ձեզ չեն հանում այստեղից ուրիշ նկատառումներով,— ասաց նա,— տեսնում էք այն երիտասարդը (ցոյց տալով մեր կամերի բանտարկեալներից մէկին), նա բոլշեվիկ է. նա եօթ ամիս նստել է այս բանտում նախկին իշխանութեան օրով, որպէս բոլշեվիկ. և այժմ նրան ձգել են այստեղ բացառապէս լրտեսելու համար. ի սէր Աստուծոյ զգոյշ եղէք ձեր արտայայտութիւնների մէջ բոլշեվիկների հասցէին։

— Հը՛, ես այժմ միայն հասկանում եմ,— յարեցի ես,— թէ ինչո՞ւ այդ երիտասարդը առանձին ուշադրութեամբ էր ինձ լսում և, կարծես, առանձին յանձնարարութեամբ, իր խելքից բարձր հարցեր էր տալիս ինձ։ Շնորհակալութիւն ձեր նախազգուշութեան համար, թէեւ կարող էիք այդ սիրալիրութիւնը աւելի վաղ անել։ Բայց, էապէս վերցրած, ինչ կարող է նա հաղորդել իմ մասին իւրայիններին. բօլշեվիկները նոր չպէտք է ճանաչեն ինձ, բազմաթիւ տեղեր և բազմաթիւ անգամներ գրել ու խօսել եմ նրանց մասին. ամէն բան գիտեն իմ նկատմամբ։

X

Մի օր մտաւ մեր կամերը մի ջահել օրիորդ եւ մէկին միւսին մօտենալով հարցնում, թղթի վրայ ինչ որ բաներ էր գրում։

— Դա բանտապետի քրոջ աղջիկն է,— փսփսաց ականջիս Վօֆեանը,— ծառայում է բանտի բժշկի մօտ, դեղեր է պատրաստում և այսպէս երբեմն շըրջում է կամերները՝ բանտարկեալների առողջութիւնն իմանալու։

Օրիորդը մօտեցաւ ինձ և ժպտերես բարեւելով, ասաց.

— Թոյլ տւէք հաղորդել ձեզ ողջոյններ ձեր հայրենակցուհուց՝ օրիորդ Հեղինէից։

— Շնորհակալութիւն օրիորդ, խնդրեմ փոխադարձաբար յայտնեցէք նրան նոյնը։

— Պարոն Իշխանեան, ինչո՛վ կարող եմ ձեզ ծառայել, ունի՞ք որեւէ կարիք։

— Շնորհակալ եմ օրիորդ ձեր սիրալիրութեան համար. ես առայժմ ոչ մի առանձին կարիք չունեմ։

Բայց ո՞րտեղից էք դուք ինձ ճանաչում։

— Անցեալ տարի յունիս ամսին, երբ դուք եկել էիք Ղարաքիլիսա դասախօսելու, ես յաճախել եմ ձեր բոլոր դասախօսութիւններին և, թոյլ տուէք ինձ ասել, ես ձեզ ամենաջերմ յարգողներից մէկն եմ։ Թոյլ տուէք. խնդրում եմ, պաշտօնապէս ներկայանալ ձեզ. օրիորդ Նունէ.

— Զգացուած եմ, օրիո՛րդ, ձեր խօսքերի համար։

— Բայց ես ցանկանում եմ ձեզ որ և է բանով օգտակար լինել, խնդրում եմ ասացէ՛ք ինչո՛վ կարող եմ։

— Օրիորդ, իմ ամենամեծ և ցաւոտ կարիքն այն է, որ ես կարողանամ ազատել ինձ համար անտանելի դարձած այս կամերից և տեղափոխել մի առանձին կամեր, ուր կարելի լինէր հանգիստ պարապել։ Իմ բազմաթիւ դիմումները բանտային վարչութեան անհետեւանք են անցել։ Ահա ո՛րն է առայժմ իմ կարիքը. բայց ի՞նչ կարող էք անել դուք այդ խնդրում։

— Ո՛հ, զզուելի է այդ բանտային վարչութիւնը. ի՞նչ էք սպասում բոլշեվիկներից։ Բայց գիտէք ինչ, բանտապետը իմ քեռին է և շատ սիրում է ինձ, ես ամեն կերպ կ՚աշխատեմ այդ հարցում ձեզ բաւարարութիւն տալ, այո՛, ամեն կերպ, առայժմ ցտեսութիւն։

Ես մօտեցայ Վօֆեանին և հարցրի.

— Դուք ասում էք, որ այդ օրիորդը բանտապետի քրոջ աղջիկն է և, անշուշտ, նրա շնորհիւ է, որ օրիորդը պաշտօնավարում է բանտում. բայց ի՞նչպէս բացատրել, որ բոլշեվիկ քեռի ունեցող և բոլշեվիկների շրջանում աշխատող այս օրիորդը բացասաբար է վերաբերւում դէպի բոլշեւիկները։ Ինձ մօտ ձեւանո՞ւմ էր նա, թէ՞ կայ այստեղ մի ուրիշ գաղտնիք։

— Գիտէք ինչ կայ.— պատասխանեց նա,— այդ օրիորդի մասին հակասական կարծիք կայ տարածուած քաղաքում։ Ոմանք պնդում են, որ նա լրտեսութիւն է անում իր քեռու յատուկ պատուէրով և առանձնապէս ձևանում է յայտնի հակաբօլշևիկների մօտ, սիրալիրութիւններ է անում նրանց հանդէպ՝ նրանցից խօսք դուրս քաշելու համար։ Ոմանք էլ, ընդհակառակը, պնդում են, որ նա ոչ միայն բօլշևիկեան գործիք չէ, այլ ուղղակի ատում է, առանց թաքցնելու իր զգացումը անգամ իր քեռուց։ Նա, ինչպէս ասում են, աւելի շատ դաշնակցական է։ Ճիշտն ասած մինչև հիմա դժւարացանք այդ աղջկայ դէմքն ու դերը պարզօրէն ճանաչել։ Բայց բոլորի տպաւորութիւնն այն է, որ նա, հակառակ իր փոքր, գրեթէ դպրոցական տարիքի, խելօք ու հասկացող օրիորդ է։

— Այնպիսի բաներ եմ լսում, որ կարծես մենք չորս կողմից լրտեսներով ենք շրջապատուած։ Այդ տակաւին դեռատի արարածի աչքերի անմեղ արտայայտութեան մէջ ես լրտեսի յետին մտքերի և խարդախութեան հեռաւոր նշաններն անգամ չնկատեցի։ Ես կասկածում եմ այդ բանի մէջ. Իմ տպաւորութիւնն այն է, որ նա մաքուր զգացմունքների տէր է, և շատ կուզենայի, որ ես խաբւած չլինեմ, որովհետև նրա մաքուր հայերէն լեզուն, որ ամենամեծ առաքինութիւնն է համարւում մեզ մօտ ռուսական կրթութիւն ստացած օրիորդների մէջ, շատ հաճելի տպաւորութիւն թողեց ինձ վրայ, և կ՚ուզենայի, որ այդ տպաւորութիւնը չնսեմանայ հոգեկան այն այլասերւած յատկութեամբ, ինչպիսին վերագրւում է նրան, որպէս լրտեսի։

— Կարող է պատահել, որ այդ մի օրինակում մենք սխալւենք, իսկ ձեր լաւ տպաւորութիւնը ար-

դարանայ, երանի այդպէս լինի, ով չի ուզենայ, որ մաքուր հոգիների թիւը աւելի լինի և միայն քչերը զոհ գնան ժանգ րէժիմի ստեղծած թակարդներին եւ ապականութեան. Բայց որ մենք, — չարունակեց խօսակիցս, — իսկապէս շրջապատուած ենք լրտեսներով, դրա մէջ մազաչափ կասկած չունենք շատ շատերս. Պարոն Իշխանեան, դուք այդքան միամիտ և յաւատես մի լինէք. Հէնց այն բոլոր հսկիչները և պահակի զինուորները, որոնք փոփոխակի յաջորդում են իրար մեր միջանցքում, և որոնցից մի քանիսի միջոցով դուք այնքան յաճախ տոմսեր էք ուղարկում քաղաք ձեր ընկերներին, հէնց այդ բոլորը, խիստ սակաւ բացառութեամբ, լրտեսում են մեզ չարունակ, տանում են «Չեկա» ձեր բոլոր տոմսերը, կարդացւում, ուղարկւում ըստ պատկանելոյն և այնտեղից ստացած պատասխանները նորից անցնելով «Չեկայի» գաղտնարանի բովից՝ հասնում են ձեզ կամ նրան, ով նման գրութիւններ է ուղարկում դուրս յիշեալ ճանապարհով և պատասխաններ ստանում. *)

*) Ես այդ բանին երբեք չէի հաւատում. Գոնէ վըստահանում էի այն հսկիչներին, որոնց միջոցով ուղարկում էի տոմսեր զանազան մարդկանց զանազան բովանդակութեամբ. Բայց որքա՜ն ապշեցի ես, երբ բանտից դուրս գալուց յետոյ պատմեցին, որ ոչ միայն տոմսերս կարդացւում էին «Չեկայում» եւ պատճէնները վերցնում, այլ եւ պտոյտներ էին գործում կոմիսարների ձեռքերին (օր.. Դովլաթեանի, յայտնի զազան Աթարբէկեանի. երբ նա ժամանակաւորապէս Հայաստան էր եկել, եւ այլն). Ընկերներս մի քանի անգամ յայտնել էին ինձ նոյն հսկիչների միջոցով, բայց վերջիններս ինձ դիտմամբ ոչինչ չէին ասել. որպէսզի ես շարունակէի տոմսակագրութիւնս. Ես նոր միայն հասկացայ. թէ ինչու ընկերներս շատ յաճախ ոչինչ չէին պատասխանում, իսկ ես միամտաբար կարծում էի, որ նրանք ինձ մոռացել են. Բարեբախտաբար իմ գրածների մէջ ոչինչ վըտանգաւոր բան չկար նրանց համար.

Անգամ այն քրէական բանտարկեալը, որ մեզ ծառայում է, ամենայն հաւանականութեամբ անմեղ տեղից բռնուած այն խեղճ պօլսահայ կամաւորը, անգամ նա մեզ լրտեսում է ամենայն եռանդով. Եւ դա, իմ կարծիքով, շատ հասկանալի է. Դժբաղդ կացութիւնը և իշխանութեան երկիւղալից սպառնալիքն է ստիպում այդ խեղճերին խեղճ ու հոգի վաճառքի հանելու. չէ՞ որ ով եռանդուն լինի այդ կեղտոտ արհեստի մէջ, նա կը սիրաշահուի ու կը վարձատրուի. Անբարոյականութիւն է սերմանում բոլշեւիկեան սիստեմը և գարշահոտ ճահիճների վերածում մարդկանց հոգիները։

Յաջորդ օրը նորից եկաւ օրիորդը՝ ըստ երեւոյթին միայն ինձ համար տեղեկութիւն բերելու դիտաւորութեամբ։ Աւետաբեր թռչունի նման ուրախ-ուրախ մօտեցաւ ինձ և ասաց հետեւեալը.

— Երէկ երեկոյեան, երբ միասին էինք ես ու քեռիս, սկսեցի գանգատուել նրա դէմ և քննադատել նրա խստութիւնները։ Նրա քէֆը լաւ էր, խմած էր։ Նա դարձաւ ինձ և ասաց. «Ինչ ես ուզում, որ կատարեմ, խնդիրքդ չեմ մերժի, եթէ ինձնից լինի կախւած»։ Ես նրան ասացի, միայն մի խնդիրք ունեմ, եթէ ինձ սիրում ես կատարիր այն։ Երբ ձեր անունը տւի և խնդրեցի կամերից տեղափոխելու կարգադրութիւն անել, նա գլուխը շարժելով ասաց. «Բայց դու գիտե՞ս, որ Իշխանեանը մեր ամենակատաղի հակառակորդն է, ինչպէս կարող եմ այդպիսի սիրալիրութիւն անել նրան»։ Ես առանց քաշուելու պատասխանեցի. «Հէնց շնորհիւ նրան, որ նա բոլշեւիզմի ամենակատաղի թշնամին է, ես յարգում եմ նրան ամբողջ հոգով, ես պաշտում եմ նրա խիզախութիւնը»։ Նա բարկացաւ, սկսեց հազար անգամ կրկնած նախատինքը նորից թափել վրաս։ Բայց նորից ժպտաց եւ

ներողութիւն խնդրեց, ես երդւեցրի նրան մօրս անունով, որին նա չափազանց սիրում է, և նա հաստատ խօսք տուաւ այսօր և եթ կարգադրել ձեզ տեղափոխելու համար։

— Օ՜, օրիորդ Նունէ, որքա՜ն զգացւած եմ, որքա՜ն պարտաւորեցրել էք ինձ. ինչպէս պիտի դուրս գամ ձեր լաւութեան տակից։

— Ի՛նչ լաւութիւն է դա, ի՛նչ էք ասում. մենք ենք, որ պարտական ենք և ամօթահար ձեր առաջ։ Չէք կարող երեւակայել, պ. Իշխանեան, թէ որքան է այրւում իմ հոգին, երբ տեսնում եմ ձեզ և ձեզ նման շատերին այս բանտում։ Ինձ մտատանջում է շարունակ այն միտքը, թէ միթէ՞ յանցանք են գործել և պիտի տուժեն նրանք, որոնք իրենց ես-ը նւիրել են ժողովրդի շահերին և հայրենիքի պաշտպանութեան։

Ասաց և արագութեամբ հեռացաւ օրիորդը, լսելով բանտապետի օգնականի ձայնը։

Ես մնացի շւարած կանգնած. ո՞վ է, մտածում եմ ես, այն մարդը, որ համարձակւում է ցեխ շպըրտել այս անարատ հոգու հասցէին։ Ո՛չ, անկարելի բան է. նա մեզնից է և ոչ նրանցից. նա հայրենիքի ցաւով տառապողներից է և ոչ թէ ռուսական քաղաքականութեան տխմար գործակալներից. անբիծ ու անկաշառ է նրա ազնիւ հոգին։

Այդ օրը ես ինձ բաւական թեթեւ և ինքնագոհ էի զգում, կարծես մի փոքրիկ գիւտ էի արել. ոչ այն պատճառով, անշուշտ, որ շուտով պիտի ազատւէի 14-րդ կամերից, այլ որ չեմ խաբւել իմ ստացած ըս-կըզբնական լաւ տպաւորութեան և կազմած դրական կարծիքի մէջ մի նոր միայն վարդի նման բացւող արարածի նկատմամբ։ Կրկնակի արժէք ու-

նեն իմ աչքում այն ընդդիմադիր դէմքերը, որոնք շրջապատուած լինելով ճահճոտ մթնոլորտի տխուր հերոսներով, ոչ միայն չեն խորտակւում և ապականւում նրանց հոգիները, այլ և պահպանելով հանդերձ իրանց մաքրութիւնը, չարունակում են մնալ և լինել ըմբոստ ու պայքարող իրանց շրջապատի դէմ. Այդ տեսակէտից է՛լ աւելի էր հիացնում ինձ փոքրիկ, անչափահաս օրիորդը՝ իր տակաւին չկազմակերպուած բնաւորութեամբ և աշխարհայեացքով. Նա կարող էր, եթէ միայն ուզենար, լողալ նիւթական վայելքների մէջ և անազնիւ դրամներ շահել, ինչպէս անում էին կին սեռից հարիւրաւոր փչացած հոգեվաճառներ. *) Նա դեռ աւելին կարող էր անել, շնորհիւ իր կապերի, իր քեռու ամուր դիրքի։ Բայց նա պահում էր իրան համեստ ու քաշուած, փրկելով իր խիղճն ու հոգին ստոր վաճառքի առարկայ լինելուց.

Ես շտապում եմ իմ ձեռնարկած միջոցների և հասած արդիւնքների մասին հաղորդել Խաչիկին և Արշալոյսին.

— Հա՛, եթէ օրիորդը համաձայնել է միջնորդել իր քեռու առաջ, կարող է յաջողցնել. բայց զգոյշ կաց Բախչի. նրա մասին շատ կասկածելի բաներ են ասում, — ասաց Խաչիկը.

*) Միայն Երեւանում կային 300 կանայք (տիկիններ եւ օրիորդներ), որոնք լրտեսութեան տխուր պաշտօններ էին կատարում խորհրդային իշխանութեան հըրահանգներով. Դրանցից շատերը ծառայողներ չէին պաշտօնական իմաստով, այլ մասնաւոր մարդիկ, որոնց պատուիրուած էր շփուել հակառակորդների շրջանում, խօսել խորհրդային կարգերի մասին եւ լսածները ու տեսածները հաղորդել «Չեկայի» գործակալներին.

— Սուտ է, մի՛ հաւատա,— վրայ բերեց Արշալոյսը,— իմ կարծիքով նա լաւ աղջիկ է։

— Ապրես Արշալոյս. միանգամայն ճիշտ է. իմ ունեցած վերջին խօսակցութիւնից յետոյ ես արդէն հաստատ կարծիք եմ կազմել նրա մասին և չեմ հաւատում այլեւս դատարկ զրոյցներին։

Բայց այդ օրը եւս չեն տեղափոխում ինձ. արդէն յունուարի 9-ն էր, ուղիղ մի շաբաթ, ինչ ես տառապում եմ 14-րդ կամերում. արդէն կամերում վըխտացող միջատների երամը ինձ եւս զոհ էր դարձրել իր կեղտին։ Միայն յաջորդ օրը առաւօտեան բանտապետի օգնականը ինձ ասաց՝, որ կարգադրուած է ինձ տեղափոխել սեկրետ կամեր. «տեսնենք որտեղ կը յաջողի, այսօր կիմանանք, վաղը կը տեղափոխենք», — ասաց նա։

Որքան աշխատեցի այդ տառակեր ապուշին հասկացնել, որ այդ խնդիրը արդէն պարզուած է, պէտք է տեղափոխուեմ թիւ 11-ը, Թաշքենդեանի և Աստուածատրեանի կամերը, նա չընդունեց, առարկելով, որ բանտապետը ոչինչ չի ասել այդ կամերի մասին։ Ուրեմն այդ օրը ես չյաջողեցի։ Անիծեալ դու բանտարկեալ, որքա՜ն արիւն ես պղտորում և ժամանակ, ոյժ վատնում դատարկ բաների վրայ։

*Միւս օրը, յունուարի 11-ին, բարեբաղդաբար լաւ առիթ հանդիսացաւ. ժամը 10-ին առաւօտեան հրամայեցին կամերները և միջանցքները մաքրել, որովհետեւ արդարադատութեան նոր կոմիսար Սուլէյման Նուրին *) և նրա օգնական Գրիգոր Զուբարը գալու են*

---

*) Բոլշեվիկների րեժիմը տապալելուց յետոյ պարզւում է, որ Սուլէյման Նուրին ոչ թէ Ադրբէյջանում գործող բոլշեվիկ էր, ինչպէս հայ իդիոտները էին կարծում, այլ տաճկական հրամանատարութեան գործակալն ու լրտեսը։

բանտը այցելութեան. Մտածեցի տանց այլ և այլ խնդրել Զուբարին և տեղն ու տեղը վերջ տալ այդ ձանձրալի պատմութեան. Զուբարը չի մերժի խնդիրքս, նա ինձ յարգողներիցն է։ Երբ կոմիսարները գալիս են մեր կամերը, Զուբարը ներկայացնում է ինձ Սուլէյման Նուրիին, ասելով. «նա մեր մարքսիստական յայտնի դէմքերից է. գաղափարային հողի վրայ պայքար է մղել բոլշեվիզմի դէմ և դրա համար թիւրիմացութեամբ բանտարկուած է»։

Բոլշեվիկը, անշուշտ, չէր ասի վերջին խօսքերը, բայց սօցիալիստ-յեղափոխական Զուբարը համարձակութիւն ունեցաւ կոմիսարի ներկայութեամբ ինձ «թիւրիմացութեամբ բանտարկուած» անուանել բոլշեվիկների կողմից։

Զուբարը խնդիրքս կատարեց անմիջապէս. Նրա կարգադրութեամբ բանտապետը հրամայեց իր օգնականին ինձ իսկոյն տեղափոխել Թիւ 11 կամերը։ Զուբարը յանձն առաւ իմ միւս խնդիրքը ևս կատարել, այն է ստանալ իմ դրամը «Չեկայից» և յանձնել իմ ցոյց տուած մարդուն, միայն պէտք է ես պաշտօնական դիմում անէի կոմիսարիատին, պատճառաբանելով դրամս ստանալու շարժառիթները։

Երբ Զուբարը դիմեց բոլոր բանտարկեալներին, թէ ով ինչ կարիք ունի. բոլորն էլ մէկը միւսի յետեւից դառնապէս գանգատուեցին իրանց անտէր վիճակի մասին, որ շաբաթներով նստած են առանց հարցաքննութեան, առանց դատի, ինչու չեն վերջացնում իրանց գործերը և այլն։ Եւ երբ Զուբարը ընդհատեց նրանց, ասելով, որ այդ բոլորը «Չեկայի» իրաւասութեան է վերապահուած և արդարադատութեան կոմիսարիատը իրաւունք չունի խառնուելու բանտարկեալների մեղադրանքին վերաբերող գործերի մէջ, բաղ-

դակիցներս իրաւացի դառնութեամբ նկատեցին. «հապա ի՞նչ անենք, ո՞ւմ դիմենք, երբ «Զեկան» ոչ մի ուշադրութիւն չի դարձնում մեր դիմումներին, խնդրանքներին և աղերսագրերին։ Զուքարը աւելացրեց, որ արդարատուութեան կոմիսարիատը հետաքրքրւում է միայն ձեր կեանքի տնտեսական և առողջապահական կողմերով։ Բանտարկեալները այստեղ են մէկը միւսին լրացնելով վրայ տուին իրար յետեւից. «ընկեր կոմիսար, նայեցէք մեր վիճակին. այս սարսափելի ցրտաշունչ ձմրան գէթ մի անգամ չի տաքացրել մեր կամերը. պատուհանների ապակիները ջարդուած, դուռը բաց, երկու կողմից փչող սաստ քամու այս խոնաւ և ցուրտ գետնի վրայ մարդիկ նստում, պառկում են։ Աղտոտութեան վայրը օրերով չի մաքրւում, բանտային վարչութիւնը ուշադրութիւն չի դարձնում և մեր դիմումներին պատասխանում է, որ մենք հերթով հաց տանք քաղցած բանտարկեալներին (քրէականներից). նրանք կը մաքրեն։ Մեղք չէ, ընկեր կոմիսար, այդպիսի պահանջ անել օրական մի ֆունտից աւելի պակաս հաց ստացողներից. այդ հացն էլ կանոնաւոր չենք ստանում. երբեմն սուպ առանց հացի, կրկին հաց առանց սուպի. մէկը կէսօրին, միւսը երեկոյեան։ Եռացրած ջուր այժմ չենք ստանում, շաբաթը 2—3 անգամ միայն, առաւօտները, տալիս են եռացրած ջուր։ Դուրսը մարդիկ չունեցող բանտարկեալները շաբաթներով չեն փոխում իրանց սպիտակեղէնը, այնպէս որ մեր կամերը լիքն է միջատներով։ Խնդրում ենք այդ բոլորի մասին հարկաւոր կարգադրութիւնն անէք»։

Այդ բոլոր դառը գանգատները ընդունելուց յետոյ պարոն կոմիսարը (որ շարունակ թարգմանում էր ռուսերէն Սուլէյման Նուրիին) ուրիշ ոչինչ չունէր

տալու. բայց եթէ հետեւեալ անճարակ, և միաժամանակ խեղկատակ պատասխանը. ինչ անենք, ընկերներ, ամբողջ Հայաստանն է այդ վիճակի մէջ. փայտ շատ դժուար է ձեռք բերւում, եթէ առհասարակ կարելի է ձեռք բերել. հացի ընդհանուր ճգնաժամ է ամբողջ երկրում և մանաւանդ մայրաքաղաքում. Պէտք է մի կերպ տանենք այս վիճակը. Իսկ միւս հարցերի համար ես կը կարգադրեմ».

Ասում և հանգիստ սրտով հեռանում են պարոնայք կոմիսարները.

Կոմիսար Զուբարի ասածների մէջ ուշագրաւ էր ամենից առաջ այն կէտը, ուր նա ասում էր, թէ արդարադատութեան կոմիսարիատը իրաւունք չունի խառնուելու բանտարկեալների մեղադրանքին վերաբերող գործերի մէջ. Այո՛, շատ ուշագրաւ է այդ կէտը խորհրդային իշխանութեան սահմանադրական կարգերի ճանաչողութեան տեսակէտից.

Երկրի արդարադատութեան կոմիսարիատը — կամ աւելի վայելուչ և հասկանալի լեզուով մի ամբողջ պետութեան արդարադատութեան նախարարութիւնը կամ մինիստրութիւնը — զուրկ է օրէնքի և իրաւունքի սահմաններում գործելու ազատութիւնից. Ուրիշ խոսքով պետութեան օրէնքի և իրաւունքի պաշտպանութիւնը, ապա հակաօրինականութեան և իրաւազանցութեան դէպքերի (կամ օրէնքի և իրաւունքի խախտման) քննութիւնն ու որակաւորումը (քուալիֆիկացիոնը) դուրս է գտնւում օրէնքի և իրաւունքի ամենաբարձր իշխանութեան — ասել է՝ արդարադատութեան կոմիսարիատի — իրաւասութեան և գործունէութեան շրջանակներից. Այդ բարձր իրաւունքը վերապահւած է բացառապէս «Չեկային», — ոստիկանական կամայականութեան և ժանդարմիական բռնութիւնների այդ

գժոխային հաստատութեան, — որը չէ թէ ստորադաս մի օրգանն է համարւում արդարադատութեան կոմիսարիատի, այլ միանգամայն անկախ է ու բացարձակ իր գործունէութեան սահմաններում, անկախ առհասարակ տւեալ երկրի (օրինակ Հայաստանի) բարձր իշխանութիւնից՝ Ցեղկոմից, և ենթարկւած միմիայն համառուսական «Չեկաների» ամենաբարձր կենտրոնին Մոսկւայում, ուրիշ խօսքով՝ Պետերների հրամաններին.

Ահա «արդարադատութեան» ինստիտուտի խեղկատակ վիճակը, — որ երբեք ցարական Ռուսիան անգամ չի ունեցել, — որ ունեն այսպէս կոչւած «սօցիալիստական հանրապետութիւնները» կոմիսարօպետական ճիպոտի հովանու ներքոյ՝ «խորհրդային» անւանւած գժոխային Ռուսիայում.

Բայց ի՞նչ գործերի մէջ է իրաւասու արդարադատութեան կոմիսարիատը. նա կարող է «զբաղւել բանտարկեալների միայն տնտեսական և առողջապահական գործերով» — ասում է կոմիսար Զուրաբը.

Կարծես արդարադատութեան կոմիսարիատը տնտեսա-սանիտարական մի կոմիտէ է և կամ հօգաբարձական մարմին. Քանի՞ գրոշ արժէ այդպիսի հաստատութեան հետաքրքրութիւնը բանտի վիճակով, երբ նա բացարձակապէս զուրկ է որ և է լիազօրութիւնից բանտարկեալների դէմ գործադրւող կատարեալ կամայականութիւնը սանձահարելու համար.

XI

Վերջապէս ես փոխադրւում եմ 11-րդ կամերը և այդ օրւանից սկսւում է ինձ համար ուրիշ կեանք.

Բանտ չնստած ընթերցողը չի կարող հաւատա-

պէս անգամ հասկանալ, թէ ինչ ուրախութիւն և հոգեկան բաւականութիւն է պատճառում մի փոքրիկ հանգիստ անկիւնը, ուր մարդկային աշխարհից կտրըւած մտաւորականը կարող է յափշտակուել ու մերուել իր լաւագոյն ընկերների, իր սիրասուն դասականների — լուռ ու անշունչ, բայց հոգեպարար գրքերի — աշխարհում.

Նա ընտելացել էր արդէն բանտային կեանքի մտաւոր զբաղմունքին դեռ Մետեխի բանտից.

Բայց ինչպիսի համեմատութիւն հնի ու նորի միջեւ.

Մեր առաջադիմական միտքը սովորել է միշտ եւ առհասարակ հինը վատաբանել և ստորադասել նորին, բարեփոխուածին. Բայց բոլշեվիկեան երկնակամարի տակ ոչ միայն ոչինչ չի բարեփոխուել, այլ և ամեն բան հնից շատ ու շատ վատացել է. Ուստի ցարական «հինն» է, որ կարող է ներկայ դէպքում, յառաջդիմական տեսակէտից բարձր դասուել բոլշեվիկեան «նորից» և ոչ երբեք հակառակը.

Այդ «հին» բանտում — հազար փառք նրան — զբաղուել ցանկացող մտաւորականներին տրամադրւում էր ամէն բան — գիրք, թուղթ, մատիտ, գրիչ ու թանաք, յատուկ համարակալած տետրներ. Եթէ գրական աշխատանքով էք զբաղւում, մի խօսքով բոլոր պայմանները, ինչ կարեւոր են և կապուած են ձեր մտաւոր զբաղմունքի հետ.

Թիֆլիսի Մետեխի երանելի բանտում, — որը իր ներթի՝ դժոխք անունն է կրել իմ բանտային հին յիշողութիւնների մէջ, բայց նա երանելի է համարւում այժմ բոլշեվիկեան բանտի հանդէպ, — ես ունէի իմ կամերում հայերէն, ռուսերէն և գերմաներէն գրքերից բաղկացած մի գրադարան և տասնեակ համարա-

կալած տեսարներ՝ զանազան գրական աշխատանքների համար։ Երեւանի բոլշեւիկեան բանտում դուք բացի գրչից ուրիշ ոչինչ չեք կարող ունենալ։ Եթէ խուզարկութեան ժամանակ ձեզ մօտ գտնում էին մատիտ եւ թղթի կտոր, խլում տանում էին առանց այլեւայլի։ Որքա՜ն ջանք եմ գործ դրել, մինչեւ ինձ յաջողուել է — դարձեալ շնորհիւ կոմիսար Զուբարի — մատիտ եւ քիչ թուղթ պահել ինձ մօտ։

Ծարական բանտում երկու տարուայ ընթացքում գրել եմ երկու աշխատութիւն, որոնցից մէկը լոյս տեսաւ դեռ ես բանտում նստած ժամանակ, իսկ բոլշեւիկեան դժոխքում եթէ 12 տարի էլ նստէի, հնարաւորութիւն չպիտի տային անգամ վտիտ գրքոյկ գրելու։

Որքա՜ն աշխատեցի, որպէսզի ինձ թոյլ տային վիճակագրական նիւթերով զբաղուելու, գրելու չոր ու ցամաք, անմեղ թւեր, որոնք ոչ մի կուսակցական կամ «հակայեղափոխական» հոտ չեն փչում, բայց որոնք խիստ անհրաժեշտ էին ինձ աւարտելու համար իմ կիսատ մնացած մեծ ուսումնասիրական երկը։

— Ո՛չ, անկարելի է,— եղաւ միշտ ինձ տուած լակոնական պատասխանը սովետական բիւրոկրատիայի վարձկան ծառաների կողմից, առանց որեւէ բացատրութեան։

Ինձ մնում էր, այդ դէպքում, բաւականանալ միմիայն ընթերցանութեամբ։

Այդպէս, երեք հոգով ապրում ենք մի շատ փոքրիկ սենեակում, ուր իմ թախտը դնելուց յետոյ հազիւ կարելի էր լինում շարժուել։ Երեքս էլ զբաղւում էինք ընթերցանութեամբ։ Իմ երկու ընկերները խաղում էին նաեւ շախմատ՝ ընթերցանական միապաղաղութիւնը եւ ձանձրոյթը ցրելու համար։ Ես շախմատ

սովորեցի միայն բանտում, բայց նրա ժամեր կուլ տուող կամ ժամավաճառ ընթացքը ինձ դուր չեկաւ, որքան էլ հմուտ խաղացողների կարծիքով ամենից հետաքրքրական խաղն է համարւում շախմատը․ այնպէս որ ես նրանց ընկերութիւն անել չցանկացայ շախմատի խաղում և բաւականացայ իմ միապաղաղ ընթերցանութեամբ։

Կենցաղի տեսակէտից դժգոհ լինելու առիթ չունէինք, որովհետև երեքս էլ դրսից ստանում էինք ճաշ։ Բանտից մեզ հասանելիք բաժինը տալիս էինք թէ մեր ծառայողին և թէ այն բազմաթիւ քաղցածներից մէկին կամ միւսին, որոնք օրն ի բուն բաղխում էին մեր դուռը և աղերսալից տոնով հաց խնդրում մեզնից։

Մերթ գալիս էր մեզ մօտ ցնցոտիների մէջ պարուրուած խեղճ գառամեալ ծերունի— այս կամ այն արհեստաւորը, քաղաքային մշակը կամ գիւղացին․ ու մերթ գալիս էր յաղթանդամ, բայց քաղցածութեան ճանկերում ընկած, հալ ու մաշ եղած երիտասարդ․ մերթ գալիս էր բոբիկ, գրեթէ մերկանդամ պատանի, անգամ 13—15 տարեկան երեխայ և բոլորը միաբերան, աղերսանքով ու պաղատանքով հաց են խնդրում, ուտելիք են մուրում։

Ահա հեռաւոր Դիլիջանից բռնած բերած բանտարկեալները— համալսարանական ուսանողներ եւ գիմնազիոնի աշակերտներ,— որոնք ոչ ոք չունէին Երեւանում, որոնք չկարողանալով տեւական քաղցը տանել, ամօթխածութեամբ, քաշուելով դիմում են մեզ։ Ահա արմաւիրցի հայ սպան, մի բարձրահասակ, գեղեցկադէմ երիտասարդ, որ դժգունել, սմքել ու կըմախքացել էր, ամաչելով իր սպայական ինքնասիրութիւնից, այնուամենայնիւ հաց է խնդրում։

Ի՞նչ տեսարան է սա, Աստուած իմ. Սովեալ Հայաստանի մինիատիւր պատկերն էր դա՝ փռւած մեր առաջ պարսպապատ դժողքի անձուկ միջավայրում.

Եւ ի՞նչպէս վարուես. ո՛ւմ բաւարարես և ո՛ւմ զրկես. ո՛ւմ չոր հացի կտոր տաս և ո՛ւմ մերժես. Թէեւ համարեա միշտ սրան, նրան բաժին էինք հանում նաեւ մեր ստացած կերակրից ու հացից. բայց ի՞նչ նշանակութիւն ունէր դա, թէկուզ հէնց մեր ամբողջ ստացածը տայինք և ինքներս էլ նոյն քաղցած վիճակին մատնւէինք. քանի՞ մէկին բաւարարես՝ տասնեակներով դիմող քաղցածներից.

Յաճախ վիճում էի Խաչիկի հետ,— որին ընտրել էինք մեր փոքրիկ տնտեսութեան վարիչ կամ «կօմունապետ»,— և նրան մեղադրում, որ մէկին տալիս է մեծ կտոր, իսկ միւսին ոչինչ, մինչդեռ կարող էր կիսել կամ երեք բաժին անել և երեք հոգու բաւարարել.

— Ա՛խ Խաչիկ, անպիտան դատաւոր դու, ինչո՞ւ չունենամ դուրսը ունեւոր հարազատներ, որպէսզի ճաշ պահանջէի երեք-չորս անգամ աւելի չափերով և այս թշւառներին բաւարարէի. Ոչ մի անգամ հաց մուրալու զարհուրելի վիճակը ինձ վրայ այնքան չի ազդել, որքան ազդում է այստեղ, այս դժողքում, ուր մուրացկանութեան համար կեանքը աւելի խեղդիչ է, քան ազատութեան համար.

Բնական է, որ այդպիսի պայմաններում քաղցածների բանը իր զոհերը պիտի տար. Եւ ոչ այլ ոք. բայց եթէ մեզ արդէն յայտնի օրիորդ Նունէն ասաց մի օր ցաւով ու վշտով, որ շաբաթական 2—3 հոգի են մեռնում քաղցածութիւնից. նա գիտէ բանտի բոլոր պայմանները, ի պաշտօնէ շրջում է բոլոր կամերները. ուստի առաջին ստոյգ աղբիւրն էր այդպիսի մի տեղեկութեան համար.

Յունուարի 17-ն էր արդէն։ Նորից երկու շաբաթ դարձաւ իմ բանտարկութեան և ես դեռ անորոշ դրութեան մէջ էի։ Հէնց այդ առաւօտ հսկիչներից մէկը բերել էր տոմս Դաւիթ Անանունից, որով նա պատասխանում է իմ տոմսին, գրելով. «Քո երկրորդ անգամեայ ձերբակալութիւնը եղել է բացառապէս Աւիսի կարգադրութեամբ, որ զայրացել է մեր կոմիտէի ուղղած գրութեան վրայ. արդեօք կ'ուղարկեն քեզ Բագու թէ կը պահեն Երեւանի բանտում, առայժմ ոչինչ յայտնի չէ։ Դու հանգիստ եղիր, մի՛ վրդովուիր, մենք աշխատում ենք քեզ համար ամէն կերպ»։

Այսպէս ուրեմն, պ. Աւիսին հաճելի է եղել փակել ինձ չորս պատերի մէջ։ Բաղդաթեանի ժամանակ նա ձայն է տուել յօգուտ իմ ազատուելուն, իսկ այժմ, նրա մեկնելուց յետոյ, արաժանիք գազան է դարձել իմ դէմ։ Դրսից եկող նորանոր բանտարկեալները պատմում էին, որ Աւիսը իր ձեռքն է առել բոլոր գործերը, յենուելով կենտր. կոմիտէի ագրեսիւ մեծամասնութեան վրայ։ Չէզոքացրել է Ռեւկոմի թոյլ անդամների, մանաւանդ Կասեանի, ամէն մի ազդեցութիւն։ Կասեանը գրոշի արժէք չունէր այլեւս։ Երկու օր առաջ եկել էր Երեւան յայտնի Աթարբէկեանը՝ 1918 թ. հիւսիսային Կովկասի հռչակաւոր դահիճը *).

*) Աթարբէկեանը «Չեկաների» բարձր կենտրոնից (Մոսկուայից) նշանակուած էր իբրեւ արտակարգ լիազօր ամբողջ Կովկասի «Չեկաների» վրայ։ Նրա Երեւան գալու լուրը կայծակի արագութեամբ տարածւում է բոլոր կամերներում. «գազանը եկել է, վայը տարել է Հայաստանին եւ մանաւանդ բանտարկեալներին»։ Նրա գալը մի ընդհանուր սարսուռ էր տարածել բանտում.

և նրա սուտ ներկայութիւնը թեքել է Ցեղկոմի քաղաքականութիւնը դէպի աւելի ու աւելի յարձակողական դիրքեր։ Եւ ո՞վ կարող էին Աւխնները դուրս գալ իրանց անխնայ քննութիւններով, բայց եթէ ոչ կենտրոնից առանձնաշնորհեալ արտակարգ լիազոր Աթարբէկեանին։

Պառկած կարդում էինք. ժամը դեռ հազիւ 11 լինէր։ Յանկարծ լսում ենք աւագ հսկիչի ձայնը միջանցքում. «Շուտ, շուտ դուրս եկէք բոլորդ կամերներից»։ Դուրս եկանք մենք, ինչպէս և հարևան կամերների բանտարկեալները։ Յանկարծ տեսնենք վանդալների նման ներս թափւեցին անծանօթ դէմքերով պաշտօնեաներ և սկսեցին տակն ու վրայ անել անկողինները։

— Խուզարկուներ են հա՛, Նաչիկ, լաւ նայիր։ Անշուշտ սրանք «Չեկայից» եկած պաշտօնեաներ են. տե՛ս ինչպէս են կատաղած քրքրում և այս ու այն կողմ նետում իրերը։

Կամերները վերջացնելուց յետոյ մօտեցան մեզ ևս խուզարկելու։ Ինչպէս էին խուզարկում. չօշափում էին մինչև վերջին թելը. հանել տւին ոչ միայն վերարկուները, այլև հագուստները մինչև շապիկը. անգամ կօշիկներ ու գուլպաներ հանել տւին։ Եղել են կամերներ, ուր բանտարկեալներին ստիպել են բերանները բաց անել՝ ներսը նայելու համար։ Մեզ մօտ ոչինչ չգտան. Դաւիթից ստացած տոմսը իսկոյն ոչնչացրել էի։ Բայց չգիտեմ ինչու նրանք հանեցին պատերից և վերցրին բոլոր մեխերը, որոնցից կախում էինք այս կամ այն իրը կամ հագուստը։

Այդքան խիստ խուզարկել մարդկանց, որոնք ոչ մի շփում ու յարաբերութիւն չունեն արտաքին աշխարհի հետ, որոնց արգիլուած է որ և է տեսակցու-

*թիւն *), դա աւելի քան տարօրինակ էր թւում. Ցարական ռէժիմը դարերի ընթացքում չկարողացաւ իր ոստիկանութիւնը ընտելացնել խուզարկութեան այնպիսի խիստ ու մանրակրկիտ ձեւերի, ինչպէս բոլշեվիկեան ժանդարմներին իւրացրեց մի քանի տարիների ընթացքում.*

Միւս առաւօտ միայն իմացանք նախորդ օրուայ խիստ խուզարկութեան անմիջական պատճառը.

Այդ օրը Աթարբէկեանը եկաւ բանտ այցելութեան. Կարծես ժանդարմերիայի չէֆն էր եկել, այնպէս դողում էին բանտի ծառայողները նրա առաջ. Հաչակաւոր դահիճը այցելեց բոլոր կամերները, բացի մեր կամերից. և դա մնաց մեզ համար գաղտնիք մինչեւ վերջ. Բանտարկեալների տւած հարցերից, թէ ինչո՞ւ չեն հարցաքննում կամ երբ կը հարցաքննեն իրանց, նա միայն մի պատասխան էր տալիս. «կը հարցաքննեն և դատ կը լինի, երբ ժամանակը կգայ, համբերութիւն ունեցէք».

Ոչինչ, լաւ պատասխան է, բաւական մխիթարական. «համբերեցէք». մի համբերութիւն, որ կարող է երկար ամիսների տեւողութիւն ունենալ, մինչեւ «ժամանակը կը գայ». Անխիղճ բիւրոկրատն անգամ չի արհամարհել այդ եղանակով բանտարկւած մարդկանց, ինչպէս յեղափոխութեան անունը արատաւորող այդ սեւ հոգիները.

Աթարբէկեանը գնալուց յետոյ բանտային վարչութիւնը հաւաքում է մի շարք կամերներից դրսից

---

*) Տեսակցութեան ժամերում ժամադրատների հետ Համօի խումբը աւելի նախանձելի պայմանների մէջ էր գտնւում, երեւի շնորհիւ այն բանի, որ նրանք Ցեղկոմի վրայ էին նայում եւ ոչ «Չեկայի».

քերած վառարանները, սամովարները, նարդին ու շախմատը, որպէսզի բանտարկեալները իրաւունք չունենան նոյն իսկ իրենց սեփական ծախքերով տաքացնելու սառնամանիք դարձած կամերները, ջուր եռացնելու թէյի համար և իրանց ժամանակը սպանելու զանազան խաղերով.

Աթաբէկեանի այցելութիւնից յետոյ սկսեց բանտային աւելի խիստ րէժիմի գործադրութիւնը.

Սակայն այդ ոչինչ. չորս պատերի մէջ փակուած մի քանի հարիւր հոգին կարող էին մի կերպ տանել իրանց կեանքի խաչը. Ցաւը սրանում էր, որ դուրսը՝ ամբողջ Հայաստանում և մանաւորապէս Երեւանում, յունուարի սկզբներից սկսած կառավարական խստութիւնները քանի գնում այնքան աւելի ու աւելի էին ուժեղանում, իսկ Աթաբէկեանի ներկայութիւնը է՛լ աւելի անհնարին չափերի էր հասցնում բոլշեվիկեան րէժիմի գործադրութիւնը. Խուզարկութիւնները և ամէն կարգի պարէնի անխնայ բռնագրաւումները քրոնիկական չափերի բնոյթ էին ստացել. տասնեակներով ձերբակալւում և բանտ էին նետւում զանազան պրոֆեսիաների (զբաղմունքների) մտաւորականներ. *)

— Երանի ձեզ, որ դուք բանտարկուած էք, — ասում էին մեզ անխտիր նոր ձերբակալուածները. — դուրսը այնպիսի մի խեղդուկ մթնոլորտ է տիրում, այնպիսի մի ընդհանուր ահաբեկում կայ ժողովրդի մէջ, որ շատերը երանի են տալիս փաստօրէն բանտարկուածներին, քան մշտապէս անապահով և ահաբեկուած վիճակին ենթարկուածներին, որոնք ոչ համ-

---

*) Այստեղ անկարող ենք ծանրանալ բանտի պատերից դուրս տեղի ունեցած անցքերի վրայ. այդ՝ բոլորը նիւթ կը դառնան մի այլ՝ արդէն մասնանշուած՝ գրքոյկի.

գիտ փայլել կարող են քաղաքում և ոչ հանգիստ նստել ու քնել տանը, առանց երկիւղ ունենալու, որ ահա հիմա կամ մի վայրկեան յետոյ կը գան քեզ մօտ եւս խուզարկելու, բանագրաւումներ կատարելու կամ ձերբակալութիւններ անելու։ Բանտարկեալը արդէն միանգամ ընդմիշտ հաշտւում է իր վիճակի հետ, որպէս բանտարկեալի։ Դուրսը մարդիկ ոչ ազատ են և ոչ բանտարկւած, մի տեսակ գերութեամբ կաշկանդւած գոհեր են, անդադար ենթակայ մղձաւանջի, իսկ դա ամենածանր դրութիւնն է։

Ահա ինչպիսի տեղեկութիւններ էին հասնում մեզ դրսի աշխարհից։

Մի օր տխուր ու ընկճւած եկաւ օրիորդ Նունէն և պատմեց սրտաշարժ գոյներով այն բարբարոսական վարմունքը, որ ցոյց է տւել զօրական կոմիսար Ավի-սը հազարաւոր հայ աղջկերին՝ ջրա կողմից զինուորներով շղթայ կապած և գնդացիրներ բռնած վիճակում Երեւանից Բագու տեղափոխելու համար։

— Այդ օրը սուգ ու վայնասուն էր Երեւանում, — ասաց օրիորդը։ — Երէկ գիշեր դարձեալ եղել են խուզարկութիւններ և ձերբակալութիւններ։ Չեկան լիքն է բանտարկեալներով։ Ա՜խ, երանի բաւականանային միայն բանտարկութեամբ, դա փոքրագոյն չարիքը կը լինէր։ Գ. Իշխանեան, որոնց (այսինքն բոլշեւիկների) շրջանում պտտում է մի հրէշային լուր...

Օրիորդը կանգ առաւ, չշարունակեց իր խօսքը։ Կարծես զղջաց իր վերջին խօսքերի համար և լուռ ու մունջ աչքերը յառեց գետնին։ Ես մտատանջւած հասկացայ, որ մի ծանր ու անախորժ բան պիտի հաղորդէր նա ինձ, ուստի պնդեցի, որ նա վերջացնէ իր խօսքը, չթաքցնէ ինձնից ոչինչ։

— Այո՛, հէնց այն պատճառով, շարունակեց օ-

օրիորդը աւելի սիրտ տուած.— որ ես ամենաարդար և լաւագոյն բարեկամներիս թանկագին հայրենիքի համար տուժողների և տառապողների, ուստի չեմ ուզում թաքցնել ձեզնից այն, ինչ հասել է իմ ականջը նրանց աղբիւրներից։ Ասում են, որ գնդակահարութեան վտանգ է սպառնում մի քանիսի գլխին....

— Ում դէմ, ասացէ՛ք պարզ, առանց քաշուելու,— վրայ բերեցի ես, նկատելով, որ օրիորդը նորից դժուարանում է իր խօսքը աւարտել։

— Առաջին հերթին չորս հոգու դէմ՝ նախկին նախարար Արտաշէս Չիլինգարեանի, պարլամէնտի անդամ և արտակարգ դատարանի նախագահ բժ. Յ. Տէր Դաւթեանի, արտակարգ դատարանի քննիչ Ղազարեանի և...

— Եւ ո՞ւմ դէմ, դարձեա՞լ ընդհատեցիք, ասացէ՛ք առանց քաշուելու։

Օրիորդը յամառ լռութիւն պահպանեց, շարունակ աչքը ձգելով գետնին։

— Եւ իմ դէմ, այնպէս չէ՞, օրիորդ, ես լրացրի ձեր ընդհատուած խօսքը։

Օրիորդը խոր հառաչեց, կսկծալից աչքերը ուղղեց ինձ և նորից բաց արաւ իր լեզւի փականքները։

— Երբ երէկ երեկոյեան քեռուս բնակարանում խօսում էին դրա մասին— քեռիս, իր օգնականը, բանտի կոմիսարը և մի ուրիշ բոլշևիկի խօսում էին և ուրախ-ուրախ քրքջում, ես չկարողացայ ինձ զսպել, առանց վախենալու ընդհատեցի նրանց լպիրշ քրքիջը և ասացի. «Պարոններ, խիղճ ու ամօթ ունեցէք. մի օր էլ դուք էք եղել նոյն վիճակում, հաւատացած եմ կը գայ դարձեալ մի օր և, երբ նորից նոյն վիճակում կը լինէք, բաւական է, մարդկային սիրտ ունեցէք։

— Թեոյս սաստիկ բարկացաւ ինձ վրայ, — շարունակեց օրիորդը, — իսկ ես աւելի համարձակութիւն ստացայ և ուղղակի ասացի. «Թեոյի, ոյժն ու իրաւունքը քո ձեռքին է, կարող ես վարուել ինձ հետ, ինչպէս կամենաս. բայց ես առանց քաշուելու յայտարարում եմ բոլորից բացարձակ կերպով՝ այն գնդակը, որ դուք պիտի ուղղէք նրանց — ձեր թշնամիների դէմ, ուղղեցէք ինձ դէմս»։ Ասացի և դուռը զարնելով յետեւից, դուրս եկայ։

Այն վայրկեանին, երբ օրիորդը արտասանում էր իր վերջին գթաշարժ խօսքերը, նրա աչքերը փայլում ու վառւում էին անկեղծ սիրով յանուն այն գաղափարի, որի համար այդքան վաղաժամ և այդպէս ուժգին բաբախում էր նրա մատաղ սիրտը։ Ես պարզապէս խոստովանում եմ, որ ուղղակի գաղափարապէս սիրահարուեցի այդ օրիորդի վրայ։

— Օրիորդ Նունէ, — ասացի ես մինչ յուզմունքի աստիճան զգացուած, — յաւէտ օրհնուի այն մայրը, որ ծնել է ձեզ. ինչո՞ւ քիչ են ձեզ նման աղջիկներ ծնող մայրերը։ Օրիորդ, դուք ձեր պատանեկան համարձակութեամբ աւելի քաջալերեցիք ինձ մեր առաջ գալիքների հանդէպ. խորապէս շնորհակալ եմ ձեզնից։

Օրիորդը հեռացաւ։ Ես նորից նետուեցի հազար ու մի խոհերի ու ենթադրութիւնների գիրկը. բայց կարճատեւ եղան երեւակայութեանս անզուսպ թռիչքները. որովհետեւ քիչ անցած եկան Արշալոյսն ու Խաչիկը, որ գնացել էին բաղը զբօսնելու։ Ես ո՛չ միշտ ընկերանում էի նրանց զբօսանքին. վերջինս էլ, չախմախի նման, ինձ շատ ձանձրացրեց, քանի գնում, այնքան աւելի ու աւելի ուժեղանում էին իմ մէջ նստակեաց ճգնաւորի հակումները։

— Հը՛, ինչո՞ւ չէիր եկել զբօսանքի — հարցրին

ընկերներս. ամբողջ օրը նստելով կը փթեմ կամ գե-մորոյ հիւանդութիւն կը ստանամ,— վրայ բերեց Ար-շալոյսը.

— Օրիորդը եկել էր, զրուցում էի հետը,— ա-սացի ես.

— Դարձեա՛լ օրիորդը,— մէջ ընկաւ Խաչիկը,— տօ չլինի՝ սիրահարուել էք դուք իրար վրայ. Արշալոյս, բանտային ռօման էլ ենք տեսնելու, ինչպէս երե-ւում է.

— Տխմար բաներ մի՛ խօսիր, անհոգին մէկը. Մենք ինչ բաների մասին ենք խօսել, դու ինչ անմիտ ենթադրութիւններ ես անում,— նկատեցի ես զա-նացած.

— Որ եւ է նորութիւն հաղորդե՞ց օրիորդը,— հար-ցըրեց Արշալոյսը.

— Ես պատմեցի բոլոր լաւծներս։

— Դատարկ բան է, Բախչի ջան, մի՛ հաւատա այդ լուրերին. Նման զրոյցներ կարող են եղած լինել, բայց անհիմն. Երեւի նրանց պաշտպանատուներից մէկը այդ իմաստով խօսքեր է շպրտել և այդ հի-ման վրայ չափազանցրած լուրեր են տարածել,— ա-սաց Արշալոյսը պաղարիւն ունկնդրի մխիթարութեան խօսքը բերնին.

— Ի հարկէ. Արշալոյս, եթէ մենք հակառակ դե-րերի մէջ լինէինք, ես եւս նոյն խօսքերը կ՚ուղղէի քեզ,— յարեցի ես.

— Սիրելիս,— առարկեց նա,— ես չեմ ասում, որ դա անկարելի բան է արտաքուստ բարենիների կող-մից. ես միայն ուզում էի ասել, որ դեռ վաղաժամ է նրանց այդօրինակ գործելակերպի հանդէս գալը.

— Եղբայր, ի՞նչպէս անեմ,— ասացի ես, նիւ-թը փոխելով— որ մի օր կարողանամ վերեւ գնալ եւ

տեսնել Համօի, Արտաշէսի և առհասարակ ամբողջ խմբի հետ։ *) *Պիտի նրանց ծառային խնդրեմ, որ մի յարմար օր գտնի վաղ առաւօտեան ինձ այնտեղ տանելու համար։*

Այդպէս էլ արի։ Ծառան խոստացաւ վստահելի պահակ կանգնելու դէպքում ինձ ուղեկցել վերև։

XII

Յունուարի 25-ն էր։ Այդ օրը «Ջեկան» սիւրպրիզ էր արել ինձ։ Ժամը 5-ին եկել էր բանտը «Ջեկայից» ուղարկուած մի քննիչ՝ Արտաշէս Տէր Վարդանեան անունով, ջահել դպրոցականի մէկը, ինձ հարցաքննելու համար։

Նստած ենք ես և քննիչը առանձնասենեակում։

— Ես կուզենայի իմանալ, թէ ինչումն է մեղադրում ինձ ձեր «Ջեկան», — եղաւ իմ առաջին հարցը։

— Մենք ձեզ մեղադրում ենք, որպէս հակայեղափոխականի, — պատասխանեց քննիչը։

— Այդ սերտած շաբլոն արտայայտութիւնը ոչինչ չի տալիս, բացի միայն ծիծաղ յարուցանելուց։ Դուք երեխայի մօտ չէք եկել, խօսեցէք ինձ հետ շօշափելի փաստերով, — առաջարկեցի ես։

— Մի՞թէ հասկանալի չէ. դուք, որպէս բոլշե-

---

*) Վերևի և ներքևի յարկերում տեղաւորուած քաղաքական բանտարկեալները չունէին ոչ մի հնարաւորութիւն իրար հետ տեսնուելու և խօսելու։ Երեք շաբաթից աւելի էր, ինչ բանտումն էի. բայց չկարողացայ գէթ մի քանի րոպէով տեսնուել Համօի խմբի հետ, այնքան խիստ էր վարչութիւնը իր հսկողութեան մէջ։

վիզմի հակառակորդ և խորհրդային իշխանութեան թշնամի, գործել ու կռւել էք մեր դէմ, և այժմ ենթարկւում էք պատասխանատւութեան,— բացատրեց իր միտքը պ. քննիչը։

— Այժմ արդէն հասկանալի է. ես մեղադրւում եմ, որպէս հակաբոլշեւիկ և հակասովետական, բայց ոչ իբրև հակայեղափոխական, դրանք տարբեր հասկացողութիւններ են։ Իսկ իբրև պատասխանատու իմ գործունէութեան, կարող եմ ձեզ երկու խօսքով ասել հետևեալը։

Ես, նման եւրոպական սոցիալիստների և մարքսիստների, կռւելով եւրոպական բոլշեւիզմի դէմ, կատարել եմ միայն իմ յեղափոխական պարտականութիւնը և սոցիալիստական դերը հայ դեմոկրատիայի հանդէպ։ Չէ՞ որ ամէն բան, ինչ վերագրւում է ինձ «Չեկայի» կողմից, պէտք է նրան արդէն յայտնի լինի իմ գրւածքներից, յօդւածներից և դասախօսութիւններից, ի՞նչ կարիք կայ հարցաքննութեան անւանւած այս ձեւականութեան։

— Այո՛, այդպէս է,— ասաց քննիչը.— բայց մեզ անհրաժեշտ է, որ դուք պատասխանէիք մի քանի հարցերի։

— Պատրաստ եմ,— պատասխանեցի ես։

— Ասացէք խնդրեմ, ընկեր Իշխանեան, ի՞նչ կապ էք ունեցել Դաշնակցութեան և դաշնակցական կառավարութեան հետ թէ դուք և թէ ձեր կուսակցութիւնը առհասարակ։

— Ոչինչ ոչ մի կապ.. բայց եթէ միայն քաղաքական համագործակցութիւն այն բոլոր դէպքերում, երբ հարցը վերաբերում էր մեր երկրի անկախութեան, պետականութեան և հայրենիքի պաշտպանութեան— բոլոր կարգի թշնամիների դէմ, ո՛ր կողմից և ինչ դրօշակի տակ, միևնոյնն է։

— Ստացե՞լ է ձեր կուսակցութիւնը դրամական աջակցութիւն հայկական կառավարութիւնից։

— Ոչ մի դէպքում. ոչ կարիք և ոչ ցանկութիւն է եղել այդպիսի աջակցութիւնից օգտուելու։

— Ես և իմ բոլշևիկ ընկերները յաճախ ենք լսել ձեր դատախօսութիւնները. ասացէք խնդրեմ. ընկեր Իշխանեան, ինչպէս բացատրել այն հանգամանքը, որ դուք յաճախ. երբեմն շատ ուժեղ, քննադատելով հայկական կառավարութեան և Դաշնակցութեան քաղաքականութիւնը, արգելք չէր դրւում ձեր առաջ կառավարութեան կողմից, չէր սահմանափակւում ձեր ազատութիւնը։

— Երիտասարդ պարոն, աւելի քան զարմանալի է թւում ինձ այդ հարցը մի քաղաքացու կողմից, որը ապրել է Հայաստանում գէթ 1—2 տարի։ Ես կ'ուզենայի, որ դուք փորձէիք ինձ պատասխանելու, թէ Հայաստանում գործող ո՛ր կուսակցութեան կամ կուսակցականի քննադատական խօսքի ազատութիւնն է բռնաբարւել մեր երկրի իշխանութեան կողմից — ընդունելով, որ այդ քննադատութիւնը ուղղւած չէ եղել երկրի անկախութեան գաղափարի և պետականութեան դէմ, — որ իմ խօսելու և քննադատելու ազատութիւնը արգելւէր։ Անգամ սօցիալիստ յեղափոխականները Հայաստանում, որոնք միշտ էլ կանգնած եղել այսպէս կոչւած ռուսական օրիենտացիայի տեսակէտի վրայ, հետեւապէս հակառակ են եղել Հայաստանի սուվերէն անկախութեան և այդ չափով եղել են նրանք աւելի շուտ ձեզ հետ, քան հայկական կառավարութեան հետ, անգամ նրանց չի արգելւել ազատ քննադատութիւնը թէ դուրսը և թէ պարլամենտի ներսերին։ Ինչո՞ւ ենք հեռու գնում։ Նոյն իսկ դուք, բոլշևիկներդ, Հայաստանի անկախութեան և

ինքնորոշման պետականութեան բացարձակ թշնամիներդ. ոչ միայն Վրաստանից հալածւելուց յետոյ ազատ ապաստան գտաք Հայաստանում, այլև նոյնքան ազատ պրօպագանդա մղեցիք Հայաստանի Հանրապետութեան դէմ, առանց արգելքի հանդիպելու կառավարութեան կողմից: Աւքսենտեան Ճառաակար հակառակորդները ոչ միայն չրջում ու գործում էին մեր երկրում, այլև բանտից բաց թողնւեցին առանց այլևայլի։ Ձեր դէմ հալածանք սկսեց միայն այն ժամանակ, երբ դուք խօսքից անցաք գործի. Տեսնո՞ւմ էք ուրեմն, թէ որքա՛ն անտեղի և անհիմն է ձեր հարցը։ Հայաստանում ոչ միայն քննադատութեան ազատութիւն կար, այլ և ազատութեան չարագործութիւն։ Չի կարող մի իշխանութիւն աւելի ազատամիտ լինել, քան ինքը ազատութիւնն է։ Եւ հայկական կառավարութեան դէմ ուղղած իմ քննադատական կէտերից մէկն էլ հէնց նրա մեղկութիւնը և թուլութիւնն է եղել՝ ամենից առաջ բոլշևիկների նկատմամբ։ Եթէ կառավարութիւնը ուրիշ քաղաքականութիւն տանէր, դուք այդքան հեշտութեամբ չէիք կարող Հայաստան գալ։

— Ընկեր Իշխանեան, դուք չատ էք մեզ դիպչում՝ մինչ վիրաւորելու աստիճան. եթէ չլինէր մեր՝ երիտասարդներիս տածած պատկառանքը դէպի ձեզ, մենք ուրիշ կերպ կը վարուէինք ձեզ հետ։

— Ես ասում եմ այն, ինչ անհերքելի փաստ է և զուտ ճշմարտութիւն։ Իսկ ինձ հետ վարուելու են արդէն ձերոնք այնպէս, ինչպէս հարկն է, անհոգ եղէք։ Այդ տեսակէտից ձեր ամբողջ հարցաքննութիւնը սոսկ միայն խեղկատակութիւն է և ուրիշ ոչինչ։

Պարոն քննիչը վերջացրեց դրանով իր հարցաքննութիւնը և մենք բաժանւեցինք։

Անկողնումս յենւած կարդում եմ։ Դուռը ծեծում և ներս են մտնում չէզոք զոնայի մեզ արդէն յայտ-

նի կոմիսարներից երկուսը «Կոմունիստի» համարը ձեռքներին։

— Ընկեր Իշխանեան, — սկսեց նրանց աւագը, — տեսնո՞ւմ էք այժմ ինչ արշաւանք են սկսել բոլշեվիկները Մուստաֆա Քեմալի հրամանատարութեան և առհասարակ տաճիկների արարքների դէմ Հայաստանի նւաճւած մասերում։ Այն, ինչ առաջ մենք էինք ասում և հայհոյում նրանցից, այժմ իրանք են կրկնում նոյն բանը. ողորմելիներ։

— Տաճիկների աւերումները յայտնի են եղել բոլշեվիկներին շատ վաղուց. բայց նրանք չէին դիպչում իրանց «կարմիր», «յեղափոխական» դաշնակիցների քէֆին։ Այժմ էլ եթէ ուշացած հաշւով քակել են նրանք իրանց լեզուների փականքը, ապա ոչ ի սիրոյն հայ ժողովրդի, այլ շնորհիւ նրան, որ վերջերս տաճիկ հրամանատարութիւնը սկսել է նեղել ու ճնշել Ալէքսանդրապոլի բոլշեվիկներին։ Դուք անշուշտ կարդացել էք «Կոմունիստի» մէջ Ալէքսանդրապոլի Ցեղկոմի բողոքը տաճկական վարչութիւնների դէմ։ Այդ բողոքի տակ ստորագրած հինգ պարոնները, սկսած նախագահ Ն. Գրիգորեանից մինչև քարտուղարը, այն անամօթ դաւաճաններն են, կամ գուցէ և անգիտակից ապուշները, որոնք նոյեմբերի 7-ին (1920 թ.) կարմիր դրօշակներով և «Ինտերնացիօնալ» երգելով դիմաւորել են Ալէքսանդրապոլի պատերի տակ տաճկական զօրքին։ Հայաստանի անկումը ու հայ ժողովրդի կրած աղէտն ու կատաստրոֆը նրանց համար տօն ու ցնծութիւն էր։

— Այո՛, այո՛, գիտեմ. այն ժամանակ մենք նահանջում էինք Ալէքսանդրապոլից։ Բայց ընկեր Իշխանեան, — շարունակեց չեզոք զօնայի կոմիսարը, — մենք ուզում էինք մի բանի համար ձեր խորհուրդը

խնդրել. դուք կարդացե՞լ էք այսօրուայ «Կոմունիստում» այն ընդարձակ յօդուածը, ուր նկարագրուած են տաճկական խժդժութիւնները, աւերն ու թալանը, սպանութիւններն ու բռնութիւնները գրաւուած մասերում։ Այդ յօդուածը ճիշտ և ճիշտ մեր զեկուցումից է կազմուած, մեր թւած բոլոր փաստերից և երևոյթներից։ Հիմա ի՞նչպէս վարւենք մենք. բանտարկուած ենք մի զեկուցման համար, որը այժմ իրանք բոլշևիկներն են դնում հրապարակի վրայ, ասել է ընդունում են նրա ճշմարտութիւնը. մի՞թէ մենք պիտի շարունակենք դեռ տուժել բանտում, երբ բացարձակ արդար ենք։

— Սիրելիս, եթէ բոլշևիկների աշխարհում օրէնք և արդարութիւն լինէր, նրանք իսկոյն բաց կը թողնէին ձեզ բանտից՝ ներողութիւն խնդրելով և վարձահատոյց լինելով ձեզ, և պատասխանատուութեան ենթարկելով ձեզ բանտարկողին, այսինքն օրէնքը խախտողին։ Այսպէս են վարւում բուրժուական Անգլիայում, իսկ «սօցիալիստական» Ռուսիայում օրէնք եւ արդարադատութիւն նախապաշարմունքներ են յայտարարուած, իսկ կոմիսարների կամայականութիւնը սրբագործուած է, որպէս սկզբունք։ Ի՞նչ խորհուրդ կարող էի տալ այդպիսի պայմաններում։ Փորձեցէք խնդրագիր ուղարկել ձեր քննիչին, յիշելով կամ հէնց հետը ուղարկելով թերթի այդ համարը։

Կոմիսարները բաւականացան այս խորհուրդով եւ հեռացան։

Միւս օրը բանտում տարածւեց մի լուր. «Զեկայի» նախագահ Այվազեանը հեռացրւել է և նրա փոխարէն նշանակւել է Մելիք Յովսէփեանը։ Դա մի եղելութիւն էր բանտարկեալների կեանքում, որոնց կարծիքով իրանց անորոշ վիճակի գլխաւոր պատճառը

հէնց «Զեկայի» վատ նախագահն էր։ Ուրեմն նախ նրա հեռանալն էր ցանկալի եւ երկրորդ նրա յաջորդի լաւ մարդ լինելը։ Այսպէս էր դատում բանտարկեալների մեծագոյն մասը— անճարակ դրութիւնից ստիպուած։

Փաստ էր Այվազեանի հեռանալը։

Բայց ո՛վ էր նորելուկ նախագահը։

Իմ բարեկամ Համազասպը, այժմ հանգուցեալ, համարում էր լուրի աղբիւրը և նա յամառօրէն պնդում էր, որ ըստ իր ստացած տեղեկութեան նոր նախագահը Աշոտ Մելիք Յովսէփեանն էր, այսինքն իմ կուսակցական ընկերը։ Երկու օր շարունակ չկարողացանք ստուգել այդ լուրը և հաւատացած էին շատերը, որ Համազասպի ստացած և հաղորդած տեղեկութիւնը ճէշտ է։ Զանազան ենթադրութիւններ էին անում բանտարկեալները.— ի՞նչպէս, բոլշեւիկները յանկարծ այդպիսի մի պատասխանատու պաշտօն տան սօցիալ դեմօկրատին, այն էլ այնպիսի մի կուսակցութեան անդամի, որի գործունէութիւնը ուղղուած է ամենաուժեղ թափով բոլշեւիզմի դէմ։ Երկուսից մէկը. կամ բոլշեւիկները փոխել են իրենց տակտիկը՝ չափաւորել, մեղմացրել են իրանց րէժիմը և կամ Մելիք Յովսէփեանը անպատեհօրէն «հաւատափոխ» է եղել, նետուել է նրանց գիրկը։

Այսպէս թէ այնպէս վիճակակիցներիցս շատերը ոչ միայն ինձ շնորհաւորում էին, որ շուտով ազատուելու եմ, շնորհիւ ընկերոջս, այլ եւ խնդրում էին իմ միջնորդութիւնը նոր նախագահի առաջ իրանց եւ շուտով բաց թողնելու համար։

Տարօրինակ դիւրահաւատ են լինում բանտարկեալները։ Նրանց ապառողական և ջղայնացած վիճակը պատրաստ է որսալ իւրաքանչիւր լուր և նրա հետ կապել ինչ որ ակնկալութիւններ։

Որքա՜ն դառը եղաւ յուսախաբութիւնը, երբ պարզւեց, որ Նախագահը Սերգէյ Մելիք Յօվսէփեան անունն է կրում և որ նա ոչ այլ ոք է, բայց եթէ Աթարբէկեանի գործակիցը 1918 թուականից ի վեր եւ անցել է նրա «Չեկայական» գործունէութեան դպրոցը հիւսիսային Կովկասում։

Ուրախառիթ, բայց անհիմն լուրին յաջորդեց տխրառիթ փաստական տեղեկութիւնը, այն լրացումով, որ Նոր Նախագահը հնից հազար անգամ աւելի վատ է, որ Նոր Նախագահը մի փոքրիկ Աթարբէկեան է, և որ այդպիսի Նախագահ նշանակելը ապացոյց է բօլշեվիկեան ռէժիմի ծայրահեղօրէն վատացման։

Վերջապէս ինձ յաջողւում է գնալ վերին յարկը։ Վաղ առաւօտեան ծառան առաջարկում է ինձ գաղտագողի կերպով և ես ընկնում եմ Համօի և միւսների կամերը։ Հերթապահ զինւորը, լաւ տղաներից մէկը, ինքնաբերաբար խոստանում է մի բան լինելուց ինձ իմացնել. մօտաւորապէս մի ժամ էր մնում մինչեւ առաւօտեան ընդհանուր ստուգումը, երբ ամէն մի բանտարկեալ պէտք է անհրաժեշտօրէն իր տեղումը լինի։

Ես պատմում եմ իմ լսածները օրիորդից և ունեցած խօսակցութիւնը քննիչի հետ։ Համօն և միւսները պատմում են իրանց հասած տեղեկութիւնները, (անձնական տեսակցութեան ժամանակ) բօլշեվիկների դժոխային բռնութիւնների մասին գիւղերում։

— Ի՞նչ են ուզում այդ հրէշները խեղճ հայ գիւղացիութիւնից. կայ աւելի թշւառ, խնամքի կարօտ վիճակ, քան հայ գիւղացիութիւնն ունի, հարցրի ես։

— Հացահատիկների բռնագրաւումները, ինչպէս և անասունների, ստացել են գիւղերում սիստեմատիկ բնոյթ և անցել են անկարելիութեան չափ ու սահ-

մանը— նկատեց Արտաշէս Զիլինգարեանը։

— Հայ գիւղացու ձեռքից, որ երկու տարի շարունակ մուրում էր իր ապրուստը Ամերիկայից, խլում են վերջին պատառ հացը և դրանով կերակրում ռուս քաղցած գիւղացիներին,— ահա Հայաստանի նոր տէրերի պարենաւորման քաղաքականութիւնը— վրայ բերեց Համօն։

— Եւ այդ տգէտ մօնթերը յանդգնում էին քար նետել ամերիկացիների հացին, առ ոչինչ համարել նրանց օգնութիւնը և պատճառաբանել վերջինս օտար իմպերիալիստների շահագործական ինչ-ինչ նկատառումներով։ Թշւառականներ, դուք ոչինչ չտալով հանդերձ հայ գեղջուկին, նրա քրտնաթոր աշխատանքի հալալ վաստակն էք յափշտակում վերջին աւազակի բոլոր ձեւերով։ Եւրոպական իմպէրիալիզմը տնտեսագործող և կուլտուրաշէն մի գործօն է՝ անպայման շահագործութեան հիմքերի վրայ կառուցւած, իսկ ռուսական բոլշեւիզմը սոսկ ուտիչ ու վատնիչ մի ցեց է, լափող ու ծծող մի տզրուկ, սոցիալական մի պարազիտ, որ յարաժամ սպառում է բոլոր հիւթն ու նիւթը, առանց ոչինչ շինելու, առանց տնտեսագործել կարողանալու,— տաքացաւ նա լսած ցաւալի տեղեկութիւնների ազդեցութեան տակ։

— Ո՞ւր կերթայ իրերի այս ընթացքը, ի՞նչ կը լինի վախճանը, ի՞նչ հաշիւներ են տալիս իրանց այդ պարոնները իրանց արածների մասին,— հարցրեց Վարշամեանը։

— Ի՞նչ պիտի լինի, նորից սովամահութեան գիրկը կը մատնուի դժբաղդ ժողովուրդը,— ասացի ես։

— Բայց եթէ այդպէս շարունակւի, այդ քաղաքականութիւնը կարող է ոտքի հանել յուսահատւած գիւղացիութեան, ի՞նչ կարող են անել այն ժամա-

նակ.— հարցրեց նորից Վարշամեանը.

— Անշուշտ, բռնութիւնների և հալածանքների ամեն մի քաղաքականութիւն առաջ է կոչում զանգուածային դիմադրութեան և շարժման տարերային ձիգեր. բովանդակ Ռուսաստանի օրինակը — ձեզ լաւագոյն ապացոյց՝ թէ հին միապետական և թէ արդի կոմիսարապետական ռէժիմի օրով. Բայց երանի թէ մեզ մօտ յարաբերութիւնները չհասնեն այդ դրութեան. ինձ ամենից շատ տարակուսեցնում է ներքին ապստամբութիւնը և թշնամու հակահարուածը. հայ ժողովուրդը չի դիմանայ այդ նոր զոհերին,— ասացի ես.

— Ի հարկէ, ցանկալի չէ ոչ մի դէպքում,— նկատեցին միաժամանակ մի քանիսը.

— Ասացէք խնդրեմ,— դարձայ դէպի Համօ Օհանջանեանը,— որքան են համապատասխանում իրականութեան Բաշգեանի (Փարնիբասար գաւառամասի ամենամեծ գիւղը իր ամենաքաջ և ըմբոստ գիւղացիութեամբ) մասին տարածուած լուրերը, որ իբր այդ գիւղը չի ենթարկուել երբեք բոլշեվիկեան իշխանութեան և այժմ էլ ապստամբ վիճակի մէջ է.

— Բաշգեանը միայն մի քանի օր է տարել բոլշեվիկեան ռէժիմը,— պատասխանեց Համօն,— իսկ այժմ էլ ոչ թէ ապստամբուած վիճակի մէջ է, այլ հերոսաբար դիմադրում է բոլշեվիկների յարձակումներին և չի ուզում ենթարկուել նրանց լծին. Բայց դա տեղական բնոյթ ունի և ընդհանուր հետեւանքներ ունենալ չի կարող.

Բոլորս այն կարծիքին էինք, որ նախ հայ ժողովուրդը չի կարող իր սեփական ոյժերով ապստամբել և յաջողութիւն ունենալ, դուրս քշել բոլորի համար ատելի դարձած թշնամուն իր երկրի սահմաններից.

երկրորդ՝ որ ցանկալի չէ շատ տեսակէտներից այդպիսի մի ապստամբութիւն, ամենից առաջ հէնց տաճկական վտանգի տեսակէտից, որ չարունակւում էր, որպէս դամոկլեան սուր, կախւած մնալ հայ ժողովրդի գլխի վրայից Հայաստանի սրտում,— Ալէքսանդրապոլում.

Իր խօսքին հաւատարիմ մնացած պահակի զինւորը ընդհատելով մեր խօսակցութիւնը յայտնեց ինձ, որ շուտով ստուգում է լինելու, շտապեմ ներքև իջնել, որպէսզի աւագ հսկիչը չնկատէ. Այդ օրը վրացի աւագի հերթն էր, ապականւած ռէժիմից տակաւին անվթար մնացած մի պատւական մարդ, այնպէս որ անպատիժ կը մնայի, եթէ նոյն իսկ նկատէր նա ինձ վերին յարկում. բայց և այնպէս ցած իջայ ժամանակին, որպէսզի չդնէի նրան անյարմար դրութեան մէջ իր ստորադրեալների մօտ. Այնուհետև յաջողւեց ինձ զանազան դիպւածներով մի 3—4 անգամ ևս տեսնել Համօի խմբի հետ և փոխանակել օրւայ նորութիւններով.

XIII

Յունւարի 30-ն էր. Առաւօտեան, ստուգումից յետոյ, «Ձեկայի» մի պաշտօնեայ պտտում էր կամերից կամեր և կարդալով բանտարկեալների անունները, ինչ որ նշաններ էր անում ցուցակի վրայ.

Բանտարկեալներին հարկաւոր էր այդպիսի մի փոքրիկ դէպք, որպէսզի առիթ ունենային հազար ու մի անտեղի և անհիմն ենթադրութիւններ անելու.

— Ես տեսայ, որ այս ինչ անունների մօտ ազատւելու նշան դրւեց,— ասում է մէկը.

— Չլինի՞ թէ մեզ աքսորելու են, պ. Իշխանեան, մեր անունները միասին կարդացուեցին և մի յատուկ նշան գրուեց նրանց կողքին, — հարցնում են փարաքարցիները։

— Իսկապէս ի՞նչ է նշանակում այդ. ինչո՞ւ եկան անձամբ կարդացին և զանազան նշաններ դրին, — դիմում են ինձ մի քանի սպաներ։

Նման հարցերի անվերջ շարան։

Արի ու բոլորին գոհացում տուող պատասխան գըտիր։

Տօ՛ եղբայր, ի՞նչ էք ջղայնանում նրանց ամեն մի քայլից. որոշ պատուէր է, մարդը եկաւ ու կարդաց երեւի որոշ դասաւորումների համար— ըստ յանցանքի որակի և գործի վիճակի։

Չանցած մի երկու ժամ, յայտնում են մեզ, թէ ովքեր ինչ հաստատութեան վրայ են հաշւում. 36 քաղաքականների գործեր «Չեկայից» անցել են այսպէս կոչուած գերագոյն տրիբունալին կամ դատարանին, ինչպէս նրանք են կոչում ռուսերէն՝ վերխ-տրիբունալին։ Այնուհետեւ մի շարք մարդկանց գործեր— զինուորականների և ուրիշ մանր գործեր— անցել են ռազմա-յեղափոխական տրիբունալին (վոյեննօ-ռեվօլիւց. տրիբունալ), իսկ մնացածները, առաջին մեծամասնութիւնը, մնում էր տակաւին անփոխւած «Չեկայի» վրայ։

Մեր, մի կամերում նստած երեք հոգուս գործը, որպէս զուտ քաղաքական բնոյթ կրող, անցել էր գերագոյն տրիբունալին։

Եւ այդ տեղեկութիւնը կարծես որոշ թեթեւութիւն բերաւ մեր սրտին։

Մենք մտածում էինք միշտ այսպէս. եթէ մեր գործը չի վերջանալու վարչական (ադմինիստրատիւ)

եղանակով «Չեկայում», ապա աւելի լաւ կլինէր որքան կարելի էր շուտ յանձնէին դատարանի, որ հրապարակային դատ լինէր, որ հակառակորդը մեղադրէր և լսէր մեզ հրապարակով, օրէնքի շրջանակներում.

Միւսները, որոնց գործը գտնւում էր դեռ «Չեկայում», չնայելով որ ամսից աւելի էր, ինչ նստած էին բանտում, մնացել էին շուարած. Նրանք և՛ նախանձում էին և՛ ոչ. Նախանձում էին, որ գործը շուտ կը կատարուի՝ այս կամ այն վախճանով և վերջ կը տրուի այն անորոշ, սպասողական դրութեան, որը ամենից անտանելին է բանտարկեալի համար. Բայց՝ նրանք միւս կողմից մտածում էին. գուցէ լաւ նշան է, որ իրանց գործը չի յանձնուել դատարանի. գուցէ դա ապացոյց է այն բանի, որ մեղադրական ծանրակշիռ փաստեր չունէին իրանց դէմ, ուստի նոյն «Չեկայում» էլ կը վերջանայ կամ կը կրճատուի գործը և շուտով կազատեն իրանց.

Տրամաբանօրէն և օրինականութեան ընդունուած հասկացողութեան սահմաններում իրաւացի էին այդպէս մտածողները և՛ մէկ և՛ միւս դէպքում.

Սակայն ընդհանրապէս վերցրած մենք բոլորս էլ, հակաբոլշևիկեան լոգիկայի և մտածողութեան տէրմարդիկս, շատ միամիտ էինք մեր աւանդական հասկացողութիւններով. Մենք շարունակում էինք օրօրել մեզ օրինականութեան և անկաշառ դատականութեան նուիրագործւած սկզբունքների ծոցում, մոռանալով, թէ ուր էինք գտնւում, ինչ սկզբունքներով առաջնորդւող իշխանութեան խնամքին ենք յանձնւած մենք. Մոռանում ենք, որ դատարան, դատարանական պրոցես, հրապարակային դատ ու պաշտպանութիւն և այլն — իրանց հերթին հին նախապաշար-

մունքներն են և միայն աչքառու ֆիկցիաների համար են պահում բոլշեւիկեան իրաւակարգին մի անկիւնում։ Ամէն բան վաղօրօք չափած ձեւած է, կուլիսների յետեւ որոշուած ու վճռուած է — այնպէս, ինչպէս չէր անում և չէր անի ցարական ճնշուած, կաշառուած և խարդախուած դատարանը։

— Դէ՛հ, Բախչի ջան, պատրաստիր այժմեանից մի մեծ ու դրդրեցնող ճառ քո դատի օրը արտասանելու համար, — ասաց ինձ Արշալոյսը մի այնպիսի տոնով ու տրամադրութեամբ, որ կարծես շատ գոհ էր, որ գործը ընկել է դատարան և շուտով առիթ պիտի ունենայ ամէն մէկը իրան պաշտպանելու։

— Գիտես ինչ կայ, Արշալոյս, — ասացի ես ուղղակի, — նախ ես չգիտեմ, կը լինի մեզ համար դատ, թէ չէ, բայց ես խիստ կասկածում եմ, որ դատը, լինելու դէպքում, թոյլ տան, որ այն կրէ հրապարակային բնոյթ և մեղադրեալին էլ թոյլ տան ինքզինքը պաշտպանելու համար երկարօրէն արտայայտուել։ Անկարելի է, որ բոլշեւիկեան իշխանութիւնը գոնէ այդ ըստինքեան հասկանալի փոքրիկ առաքինութիւնը ունենայ։ Նրանք մտածում են այսպէս. թոյլ տալ, որ հակառակորդը ազատ արտայայտէ խմբուած հասարակութեան ներկայութեամբ, դա կը նշանակէ միտինգ կազմակերպել հակառակորդի պրոպագանդի համար։ Ահա բոլշեւիկեան — և առհասարակ բռնութեան ու խաւարի ամէն մի նման իշխանութեան — մտածելակերպը, սիրելի Արշալոյս։ Ի՞նչ ես կարծում, երբ մի իշխանութիւն փակելով բոլոր քաղաքացիների բերանները, ունելիքով է հանում իր բնից այն լեզուն, որը կը յանդգնէ բոլշեւիկեան աբսօլիւտիզմի դէմ որեւէ քննադատական խօսք ասել, թոյլ կը տա՞յ այդպիսի իշխանութիւնը իր պաշտօնական հաստատու-

թեան մէջ, հրապարակով, որ հակառակորդը նախատինքի և խայտառակութեան սիւնին գամէ կոմիսարօպետական անլուր կամայականութիւնները։

— Բայց կարծում եմ, Բախշի, որ մեղադրեալի վերջին ժամի պաշտպանութեան տարրական իրաւունքը կը յարգւի, — առարկեց Արշալոյսը։

— Ո՛չ, Արշալոյս, ո՛չ. նրանք կը խլեն անգամ մահապարտ մեղադրեալի ինքնապաշտպանութիւնը։ Վերջին ժամի ազատութիւնը, ընկեր։ Իրաւունքից մի՛ խօսիր նրանց մօտ. մտածելու եւ գործելու, գրելու և խօսելու ազատութիւն և իրաւունք միայն իրանք ունին և իրանք պիտի ունենան, հակացիր միանգամ ընդմիշտ հակառակորդներին։ Այդպէս է կառավարւում Ռուսաստանը, այդպէս պիտի կառավարեն Հայաստանը։

Մի քանի օր անցած, փետրուարի 3-ին, վաղ առաւօտեան, բանտի գրասենեակից գալիս են ինձ յայտնում, որ պահակի զինուորներ են եկել ինձ գերագոյն տրիբունալ տանելու համար։

— Այս ինչ բան է, մի՞թէ այսօր իմ դատն է, — հարցրի ընկերներիս։

— Երեւի, — պատասխանեց Արշալոյսը, — բաղդաւոր մարդ ես, 36 հոգաց առաջինը քեզ են կանչում. դա կամ շատ լաւ և կամ շատ վատ նշան է։

— «Վատ» բառը առանց վերապահման մի՛ գործածիր այս դէպքում. լաւ է այն իմաստով, որ գործը շուտ կը վերջանայ։ Է՛հ, գնանք տեսնենք։

— Բախշի, երեսից խաչ հանիր, — նկատեց Խաչիկը ծիծաղելով։

— Դու աղօթիր իմ փոխարէն, — ասացի և դուրս գնացի։

Քայլում էինք ոտով, քաղաքի գրեթէ մի ծայրից

միւսը։ Ինձ հետ կային երկու հայ զինուոր։ Ճանապարհին մէկը թէ միւսը տալիս էին կցկտուր հարցեր։

— Ասացէք խնդրեմ, եղբայր, ձեզ ինչո՞ւ են բանտարկել,— հարցրեց մէկը։

— Ինձ ասում են՝ դու մեր հակառակորդն ես, մեր դէմ գրել ես, խօսել ես։

— Հէնց էդքա՞ն, մի՞թէ գրելը կամ խօսելը մեղք է,— վրայ բերեց միւս զինուորը,— թող իրանք էլ ձեր դէմ խօսէին և ոչ թէ բանտ նստեցնէին։

— Ի՞նչ ասեմ մեր ժողովրդին, որ իրանց մեծերը այս օրը ընկան,— վրայ բերեց առաջին զինուորը։

— Գուցէ ձեզ տանում են այսօր բաց թողնելու,— հարցրեց երկրորդ զինուորը։

— Աստուած տայ,— վրայ բերեց առաջինը։

— Չեմ կարծում, այդպէս շուտ չի լինիլ,— փակեցի նրանց հարց ու փորձը։

Այդպէս, դէսից դէնից հարցեր էին տալիս զինուորները, ամբողջ ճանապարհին նրանք գանգատւում էին նաև իրանց վիճակից, ասելով, որ շատ խիստ են վերաբերւում, չնչին բանի համար խիստ պատիժներ են տալիս։ Այս խտրութիւն են դնում ռուս և հայ զինուորների միջև. ռուսներին աւելի լաւ են կերակրում և խնամում, քան մեզ։

Ճանապարհին շատ ծանօթների հանդիպեցի. չկային այլևս նախկին զուարթ դէմքերը. համարձակ քայլուածքը. լուռ ու մունջ, աչքերը գետին ձգած, տխուր մտահոգութեամբ պաշարւած քայլում էին մարդիկ, որոնց ,կարծես, հետապնդում և անհանգստացնում էր մի միտք՝ թէ ի՞նչ կը պատահէ իրանց հետ այսօր, այս գիշեր, վաղը և այլն։ Անգամ վախենում էին ազատ ողջունելուց. նայում էին չորս կողմը՝ յանցանք գործող մարդու զգուշութեամբ, գլխի հա-

զիւ նշմարելի շարժումով ողջունում սգաւորի թախծոտ դէմք առած։

Հասանք վերջապէս գերագոյն տրիբունալը՝ տեղաւորւած արդարադատութեան կոմիսարիատի (նախկին նախարարութեան) շէնքում։ Ինձ առաջնորդեցին նախագահի մօտ. Երեւանցի մի երիտասարդ՝ Սարգսեան ազգանունով, նոր միայն վերադարձած Ռուսաստանից և մոռացած հայերէն լեզուն։ Ինձ կանչել է այդ պարոնը ուրիշ ոչ մի բանի համար, բայց եթէ հարցաքննելու։ Տրիբունալը գոհ չէ մնացած «Չեկայի» քննիչի առաջին հարցաքննութիւնից, ուստի որոշել էին նորից հարցաքննել ինձ անմիջապէս նախագահի միջոցով։

Բայց ի՞նչ հարցաքննութիւն էր այդ։

Իմ մանրամասն կենսագրութիւնը՝ սկսած ծնւած օրից մինչեւ բոլշեւիկեան բանտ նստելու վայրկեանը. իմ ծագումը, ծնողներիս սոցիալական վիճակը. երեխայական, պատանեկան, երիտասարդական շրջանների նկարագրութիւնը, աշակերտութիւնս, ուսանողութիւնս, յեղափոխական և գրական գործունէութիւնս. որտեղ եմ աշխատակցել, ինչ յօդւածներ եմ գրել և գրքեր հրատարակել՝ բովանդակութիւնը, արծարծած գաղափարները։ Երբ և ինչ թերթեր եմ խմբագրել՝ նրանց ուղղութիւնը և առաջնորդող մտքերը. երբ, որտեղ և ինչ ոգով դասախօսութիւններ եմ կարդացել և այլն և այլն։ Մօտ չորս ժամ շարունակ այդ տարօրինակ քննիչը մոռանալով իր կոչումը, դարձել էր իմ կենսագիրը և եռանդուն գրագրի նման աւարտում էր մի թերթ միւսի յետեւից։ Ես ինքս էլ, իմ հերթին, ճանաչելու համար ուսումնասիրական այդ նոր էկզեմպլեարներին, սիրով ու ախորժակով պատմում էի կենսագրութիւնս։

— Ինչո՞ւ համար են այդ բոլորը.— հարցրի ես վերջում պ. Նախագահին.

— Ձեր կենսագրութիւնից և անցեալ գործունէութիւնից պիտի բղխեցնենք մեր այս կամ այն կարգի վերաբերմունքը դէպի ձեզ,— պատասխանեց նա.

— Բայց ի՞նչ կապ ունեն իմ վարքագիրը և անցեալ գործունէութիւնը ձերներկայ մեղադրականի հետ,— նորից հարցրի ես.

— Մենք այդպէս ենք վերաբերւում դէպի մեր կուսակցութեան առանձնապէս յայտնի հակառակորդները։ Բայց եղած հարցաքննութիւնը բաւական չէ. դուք պիտի բարի լինէք գրաւոր պատասխանելու նաև այս հարցերին և վաղը նորից տրիբունալ գալու,—ասաց նա, տալով ինձ մի թուղթ՝ լի մի շարք հարցերով։ Մեզ անհրաժեշտ է իմանալ,— շարունակեց նախագահը,— ձեր վերաբերմունքը թերթում յիշուած բոլոր հարցերի նկատմամբ.

Ինչ հարցեր են դրանք՝ թող դրանց հետ ծանօթանայ նաև ընթերցողը։ Ես թւում եմ ստորև այդ հարցերը բառացի ճշտութեամբ։

«Ընկեր Բ. Իշխանեանին,

Խնդրում եմ պատասխանել հետևեալ հարցերին.

1. Ձեր վերաբերմունքը դէպի Հայաստանի Խորհրդային իշխանութիւնը.

2. Ձեր վերաբերմունքը դէպի կոմունիստական կուսակցութիւնը.

3. Ձեր վերաբերմունքը դէպի III-րդ ինտերնացիոնալը.

4. Ձեր վերաբերմունքը դէպի Ռուսաստանի սօցիալ-դեմօկրատական կուսակցութիւնը (մենշևիկեան կամ փոքրամասնական. Մարտովի թեր).

5. Ձեր վերաբերմունքը դէպի Ռուսաստանի սօ-

ցիալիստ յեղափոխական կուսակցութիւնը։

6. Ձեր վերաբերմունքը դէպի ձախ սոցիալիստ յեղափոխականները։

7. Ձեր վերաբերմունքը դէպի հայ սոցիալիստ յեղափոխականները։

8. Ձեր վերաբերմունքը դէպի Վրաստանի սոցիալ-դեմոկրատական (փոքրամասնական կամ մենշեվիկեան) կուսակցութիւնը։

9. Ձեր վերաբերմունքը դէպի Հ. Յ. Դաշնակցութիւնը։

10. Ձեր վերաբերմունքը դէպի Ռուբէն փաշա Տէր Մինասեանը, Դրօն և Համազասպը։

11. Ձեր վերաբերմունքը դէպի մաուզերիստները։

12. Ձեր վերաբերմունքը դէպի Մայիսեան շարժումը։

13. Ի՞նչ միջոցների էք դիմել Մայիսեան շարժումը ճնշելու համար. ե՞րբ և Հայաստանի ո՞ր մասերում էք դասախօսութիւններ կարդացել մայիսեան շարժման դէմ։

14. Ի՞նչ աշխատութիւններ էք հրատարակել 1917—1920 թւականների ընթացքում։

Ծանօթանալով այդ հարցաթերթի բովանդակութեան հետ, անմիջապէս ասացի Նախագահին, որ ես կտրականապէս հրաժարւում եմ 10-րդ հարցին պատասխանելուց, որովհետև մասնաւոր մարդկանց անունները չեն կարող տեղ գտնել ու շօշափւել սկզբունքային բնոյթ կրող մի գործի մէջ։ Նախագահը համաձայնւեց ինձ հետ և դուրս ձգեց յիշեալ հարցը։ Մնացած հարցերի համար յայտնեցի, որ նա վաղը կը լսէ իմ պատասխանը։

Յաջորդ օրը, փետրւարի 4-ին, ես նորից տրիբունալում եմ։ Զինւորական քանտից հարցաքննութեան

էին բերել մի շարք դաշնակցականների. մեզ արդէն ծանօթ բժ. Օվի Միքայէլեանին, որը, ինձ նման, նորից բանտ է նետուել իմ ձերբակալութիւնից երկու շաբաթ անցած. ապա գիւղատնտեսութեան նախարարի նախկին օգնական Թ. Տօշեանին, պարլամենտի անդամ բժ. Արշակ Ղազարեանին և ուրիշների. Ըստ նրանց պատմածի, զինուորական բանտում ռեժիմը անհամեմատ մեղմ էր. բայց նրանց միայն ժամանակաւորապէս էին տեղաւորել այնտեղ. մի քանի օր անցած նրանց եւս, նոր բանտարկուածների հետ միասին, բերան կենտրոնական բանտ կոչեցեալ դժոխքը.

Նորից ներկայանալով տրիբունալի նախագահին, ասում եմ նրան հետեւեալը.

Ես ձեր առաջադրած կէտերից մի քանիսի համար տուի լուսաբանող բացատրութիւններ. Ես հարկ չգտայ ամենեւին երկարօրէն ծանրանալու ինձ տուած հարցերի վրայ և ահա ինչու.

Ձեր առաջադրած կէտերը շօշափում են մի շարք տեսական և գործնական-տակտիկական խնդիրներ, որոնց վրայ ես հանգամանօրէն կանգ եմ առել իմ թէ գրական աշխատութիւնների և թէ դասախօսութիւնների մէջ. Եթէ խորհրդային իշխանութիւնը հարկ է համարել ինձ ձերբակալել և ահա ամիսուկէսից աւելի բանտ նստեցրել, նշանակում է նրան ծանօթ է եղել իմ գործունէութիւնը, տեսական և գործնական ուղղութիւններով, և այդ գործունէութեան վրայ հիմնել է իր մեղադրականը իմ դէմ. Ցանկանո՞ւմ էք ինքներդ, իբրեւ նոր մարդ այստեղ, մանրամասն ծանօթանալ ձեր առաջադրած կէտերի վերաբերեալ ունեցած իմ գրքի հետ, համեցէք, հրապարակի վրայ են իմ երկերը և դասախօսութիւնների համառօտակի բովանդակութիւնը թերթերում. դուք այդ բոլորից կարող

էք շատ աւելի բան իմանալ և, գուցէ, շատ աւելի մեղադրական կէտեր հանել այնտեղից, քան իմ տուած մի քանի բացատրական պատասխաններից.

— Այդ ձեր բանն է,— ասաց նախագահը,— բայց դուք աւելի կարագացնէիք ձեր գործի քննութեան ընթացքը, եթէ ինքներդ բաւարարութիւն տայիք իմ տուած հարցերին.

— Եթէ միայն այդ հանգամանքը կարող է ձգձգել եւ ուշացնել իմ գործը, ոչինչ չունեմ. բայց, դժբաղդաբար, այդ հանգամանքը չէ, որ կարող է պատճառ դառնալ իմ գործի ուշացման։ Թոյլ՝ տուէք ինձ նկատել, որ գործի փաստական և էական կողմը շատ քիչ է հետաքրքրում ձեզ՝ բոլշեվիկներիդ. եթէ այդպէս լինէր, իմ գործի էութիւնը իր ամբողջութեամբ վաղուց է յայտնի բոլոր հայ բոլշեվիկներին և իմ դատը շատ վաղուց պիտի լինէր...

Նախագահը ընդհատելով ինձ, ասաց, որ մինչեւ ութ օրը կը լինի իմ դատը.

Այդպէս վերջացաւ իմ երկրորդ հարցաքննութիւնը, մինչդեռ իմ բաղդակիցները կարծում էին և նախանձում, որ այդքան շուտ և բոլորից վաղ պիտի լինէր իմ դատը.

XIV

Փետրուարի 9-ն էր։ Առանձին կենդանութիւն էր նկատւում բանտարկեալների շարքերում. Մէկը միւսին առանձին խորհրդաւորութեամբ և փսփսալով հաղորդում էր նոր միայն բանտի պատերից ներս թափանցած արտակարգ լուրը.

Ի՞նչ էր պատահել.

Նախորդ երեկոյեան ձերբակալել էին մի երիտա-

տարգի՝ Լեւոն Խանայեան անունով, պարուրւած կանացի հագուստի մէջ։ Ըստ լրտեսների տուեալների այդ երիտասարդը, իբր թէ, ծպտեալ մի տերրորիստ էր, որ դիտաւորութիւն է ունեցել մահափորձ կատարելու Աթարբէկեանի դէմ.

Ի՞նչ կայ որ. ինչո՞ւ չօգտուել հանգամանքից. ինչո՞ւ չստեղծել չինծու տերրորիստ և չձերբակալել նրան՝ դուր գալու համար արտակարգ լիազօրութիւններով և արտօնութիւններով օժտւած Աթարբէկեանին՝ նրա ողորմած ուշադրութիւնը գրաւելու և շնորհակալութեան արժանանալու համար։

Ամէն մէկը ունի իր սեփական չափերից բղխեցըրած իւրայատուկ դատելակերպը։ Լրտեսների— ամենից շատ ստոր ստորաքարշ տիպերի—դատելակերպն էլ այդ էր։

Փաստորէն ինչո՞ւմն էր բանը։

Լ. Խանայեանը իր միւս երկու ընկերների հետ միասին նստում կարտ էին խաղում իրանց տանը, Էջմիածնում։ Էջմիածնի «Չեկայից» գալիս են նրանց տունը խուզարկելու։ Խուզարկող պաշտօնեայի պահանջը՝ զինաթափւելու համար երեք երիտասարդներին, չի ընդունւում։ Սկսւում է ընդհարում։ Խանայեանը իր ընկերներով սպանում են մի պաշտօնեայի և վիրաւորում միւսին. վիրաւորւում է նաև իրանցից մէկը, իսկ երկուսը փախչում են։ Խանայեանը գալիս է Երեւան, և, իրան չմատնելու համար, հագնում է կանացի զգեստ։ Նրան մատնում են, ձերբակալւում և բանագրօսիկօրէն վերագրում նրան՝ Աթարբէկեանին սպանելու դիտաւորութիւն ունեցողի մեղքը։ Այդ երիտասարդին բերում են բանտը և երեք օրից յետոյ առանց որևէ դատավարութեան գնդակահարում։

Հէնց այդպիսի մի տիպ էր հարկաւոր, որպէսզի

խորհրդային իշխանութիւն ամբողջ պարզէր իր իսկական դէմքը Հայաստանում — մատնէր անլուր բռնութիւնների եւ իր տեռորիստական, ապա է՝ մարդասպանական էութեան հակումները։

Փետրուարի 9-ից սկսած, մի քանի օր շարունակ, Երեւանի «Չեկան» Դոնքիչեանի կողմն է յայտարարում քաղաքի բնակչութեան։ Մանրազննին խուզարկութիւն է կատարւում քաղաքի բոլոր մասերում՝ իբր թէ թագուած եւ պատրաստուող մահափորձի հետքերը գտնելու համար։ Ոչ միայն հարիւրներով ձերբակալւում են անխտիր բոլոր դաշնակցականներին, այլ եւ մի շարք ժողովրդականների եւ ռամկավարների, քաղաքային վարչութեան եւ գաւառական ինքնավարութեան անդամների։ Բանտերը եւ «Չեկան» ծայրէ ի ծայր լցուել էին բանտարկեալներով. կենտրոնական բանտը իր սովորական ծաւալից երեք անգամ աւելի մարդիկ է ամփոփել իր մէջ՝ աւելի շուտ իրար վրայ կուտակել։ 300 հոգու փոխարէն, բանտարկուածների թիւը հասնում էր 850—900-ի. 20—25 հոգի տեղաւորող կամերներում գտնուել էին 80—70 եւ աւելի բանտարկեալներ։ Եւ այն կամերները, ուր ձմեռը չէին տեղաւորում ոչ մի արդամարդու, սարսափելի ցուրտ լինելու պատճառով (բանտարկեալները «Սիբիրի սանամանքը» անունն էին տալիս նրանց), այժմ էլ կամերներից ամեն մէկում տեղաւորել էին 50, 60, 70, 75 բանտարկեալներ։ Նորեկները նախանձում էին հներին, որոնք աւելի տանելի պայմաններում էին գըտնւում։

Այդպէս ուրեմն. մեր ամբողջ հասարակական մտաւորականութիւնը, բոլոր կարգի կուսակցական ոյժերը չէզոքացրել էին հրապարակից բոլշեւիկեան միայն ընդունելի ձեւով — բանտարկութեամբ։ Շատ

քիչ բաղդաւորների է յաջողւել մազապուրծ լինել «Չե-կայի» լարած թակարդներից և թաղնւել Երևանի գաղտուկ անկիւններում. այդ քչերի շարքին էր պատ-կանում նաև հայկական կառավարութեան վերջին կազմը նախաբոլշևիկեան շրջանում — Վրացեանը իր դահլիճի միւս անդամներով.

Ինչ էր սպասում բոլորիս — հին ու նոր զոհերին, — ոչ ոք չգիտէր. Բայց պարզ էր բոլորիս համար, որ խորհրդային իշխանութեան այդ արտակարգ բռնու-թիւնների և սարսափների քաղաքականութեան նոր կուրսը վատ նշաններ է ուրւագծում սև ֆոնի վրայ. Բանտային վարչութեան վերաբերմունքը ըստ ինքեան շատ բան էր ասում. չափազանց սաստ, կոպիտ, ար-համարհական, հայհոյալից վերաբերմունք բոլորի կող-մից. Կարծես նրանցից ամեն մէկը պատրաստ էր տեղն ու տեղը իր ձեռքով դատաստանն անել այս կամ այն բանտարկեալի. կատաղած շների տպաւորութիւն էին թողնում, որոնցից կարելի էր միայն խուսափել. աչ-քին չերևալ, չխօսեցնել.

Փետրւարի 10-ին և այնուհետև օրեր շարունակ մենք հանդիսատես եղանք մի տեսարանի, որ մինչև այժմ էլ չեմ կարողանում մոռանալ.

Մեր հարևան կամերում, թիւ 12-ում, տեղաւո-րել էին մի խելագարի. Սկզբում չգիտէինք բնութիւ-նից և մարդկանցից պատժւած այդ գերագանցօրէն թշւառ մարդու ով լինելը. Յետոյ միայն իմանում ենք, որ նա մեր բանտակեց Դերենիկ Դեմիրճեանի եղբայրն է, նախկին ուսուցիչ, առաջնակարգ հաշւա-պահներից մէկը, վերջերս էլ Ալէքսանդրապոլի որբա-նոցի կառավարիչը.

Այդ դժբաղդ մարդուց ինչ որ գաղտնիք իմանալու համար Երևանի «Չեկայում» նրան զարհուրելի կեր-

պով ծեծում են․ Այդ միջոցով չհասնելով իրանց նըպատակին, դահիճները չորս օր պահում են նրան կարցերում․ Այդ սարսափելի պատժարանում չորս ժամ նստելու սպառնալիքն իսկ մահասարսուռ սող է ձգում մարդու սիրտը, ուր մնաց չորս օր անընդհատ, այն էլ խստացուրտ ձմրան օրերին։

Կարցերում Դեմիրճեանը կորցնում է մարդկային ամենաթանկագին գանձը և գժւում․ Այդ արգահատալից վիճակում իսկ ներումն չկար խեղճ մարդու համար․ Դահիճները «Զեկայից» փոխադրում են բանտ, նետում նրան մի-մինակ այդ կամերը և դուռը վրան փակած պահում միշտ։

Մենք գիտում էինք նրան կամերի դռան քառակուսաձեւ բացւածքից․ կամերում ոչինչ չկայ՝ չոր պատեր և մերկ սառը գետին․ վերարկուն և վերնաշապիկը հանած, սոսկ չալպած, անգամ անդրավարտիքը հանած, բոբիկ քայլում է խեղճը մի անկիւնից միւսը կամ պառկում սառը գետնի վրայ․ Անգամ ազատութիւնների համար բաց չէին անում նրա դուռը․ ամեն բան լինում էր տեղն ու տեղը․ Զոր հացի կտորը ձգում էին ներս դռան բացւածքից․ Նրա հայրենակիցները և անձնական ծանօթները չէին կարողանում որեւէ կերպ բացատրւել նրա հետ․ Նա Զաքարիայի նման պապանձւած և ապուշ կտրածնայում էր և երեւր չուռ տալիս։

Առաջին երկու օրը այդ մարդու մարտիրոսագրութիւնը անցաւ խորին լռութեան մէջ․ բացի «ջուր, ջուր» բառերից, որ պապակւած տօնով կոչում էր և պահանջում հսկիչից, ուրիշ ոչ մի բան լսելի չէր նրա կամերից․ Երրորդ օրւանից իւ վեր այդ մարդը սկսեց երգել գիշեր ցերեկ․ երգել այնպիսի աղիողորմ բառաչով, այնպիսի գութ հայցող ձայնով, որ մեր սիրտն էր կտրատում։

Բանտարկեալներս չափազանց յուզուել էինք եւ զայրացել զաւիճների իշխանութեան այդ գազանաբարոյ արարքի վրայ. անգամ վերջին զոհերի գեղջուկը այդպէս չէր վարւի ամենաարհամարհուած անասունի հետ. բայց ինչ կարող էինք անել, բացի դիմումներից և տրտունջներից. թող մէկը համարձակուէր իր թոյնը թափել, չանթահար բողոքով պոռթկար նըրանց դէմ. նոյն վիճակին էլ նա կ'ենթարկուէր, եթէ ոչ աւելի վատ՝ նրանց գրգռուած և գազազուած օրերի այդ շրջանում։ Դժբախտաբար օրիորդ Նունէն չէր երեւում այդ օրերին, որպէսզի գոնէ նրա միջոցով կարելի լինէր փոքր ինչ թեթեւացնել խեղճ մարդու վիճակը։ Անգամ արդարադատութեան կոմիսար Սուլէյման-Նուրին, որ նորից այցելեց բանտը փետրուարի 13-ին, ոչինչ չարաւ. նրան ուղեկցող բանտի կոմիսարը ցոյց տալով իր մեծին թիւ 12 կամերը, ասել է ցինիկական ժպիտը դէմքին. «Միայն այդ եղանակով կարելի է նրան խելքի բերել»։

Մենք, ինչպէս և ուրիշ բանտարկեալներ, տալիս էինք Դեմիրճեանին հաց, թէյ, կերակուր, որպէսզի խեղճ մարդը սովամահ չլինի, քիչ շատ կանոնաւոր սնունդ ստանայ. անգամ հսկիչները արհամարհում էին և ուշադրութիւն չէին դարձնում նրա խնդրանների վրայ։

— Երկաթէ օրգանիզմ ունի այս մարդը,— ասաց բանտարկեալներից մէկը,— գազանային ծեծի ենթարկուել. օրերով կարցեր նստել զարհուրելի սառնամանիքում և այժմ էլ այստեղ օրերով կիսամերկ դրութեան մէջ ընկնել այս սառը գետնի վրայ։ Մարդու փոխարէն երկաթ էլ լինէր կը հալուէր, կը կիսուէր միջից։ Մեզնից ամեն մէկը չէր տանի նրա կրածի մի հարիւրերորդ մասն անգամ։

Նոյն օրը վերջին անգամ այցելում է մեր բանտը Աթարբէկեանը, իսկ յաջորդ օրը, փետրուարի 14-ին, մեկնում է նա Բագու՝ Դիլիջան-Ղազախի ուղղութեամբ։

Ինչու է այդ մարդակերպ բորենին կրկին անգամ այցելում բանտը և ինչ կարգադրութիւններ է նա անում, այդ մենք չգիտենք։

Բայց մենք շատ լաւ գիտենք մի բան։

Նա կանչում է իր մօտ, բանտի գրասենեակը, նախկին երկու նախարարներին՝ Համօ Օհանջանեանին և Արտաշէս Չիլինգարեանին, և դառնալով դէպի առաջինը, ասում է հետևեալը։

— Ես ճանաչում եմ Ձեզ վաղուց և խորապէս գնահատում եմ Ձեր անձնաւորութիւնը։ Բայց ցաւում եմ, որ մենք այսպիսի պայմաններում ենք իրար հանդիպում։ Ես վաղը մեկնում եմ այստեղից և վերջին անգամ եկայ բանտը այցելելու և Ձեզ տեսնելու. ոչինչ չունի՞ք ասելու, — դիմելով երկուսին։

Վերջինները պատասխանում են, որ ոչինչ չունեն ասելու։

Աթարբէկեանը իր մեկնելուց առաջ ստորագրած է լինում մի շարք մարդկանց մահավճիռը, ի թիւս նրանց նաև Արտաշէս Չիլինգարեանինը։

Ո՛ր աստիճան հիւանդ պիտի լինի մէկը իր անզգայական աշխարհով և ո՛ր աստիճան ապականուած իր հոգով ու մտքով, որ կանչէ իր մօտ, հրաժեշտի պատրուակով, այն զոհին, որի ոչնչացման վերջնական վաւերացումը նա ինքն է տուել իր սեփական ստորագրութեամբ։ Այդ հիւանդ տիպը իր զոհի ճակատագիրը որոշելուց յետոյ ցանկացել է կրկին անգամ տեսնել, դիտել նրան սադիստի բաւականութեամբ։ Ամենավերջին վարձկան դահիճից աւելի նողկալի են Աթարբէկեանի նման մարդասպանները։

Իր մեկնելուց առաջ Աթարբէկեանը կրկին անգամ փոխում է Երեւանի «Չեկայի» նախագահը, իր մի գործակցի փոխարէն նշանակելով միւսին — Մելիք Յովսէփեանին յաջորդում է մինչ որ Ամիրխանեան, Թիֆլիսի Ներսիսեան վարժարանը աւարտած մի երիտասարդ։ Այդ պարոնին ոչ ոք չէր ճանաչում. բայց եթէ «Չեկայի» նախագահի փոփոխութիւնը համապատասխանում էր որոշ թունաւորուած տրամադրութիւններին, նշանակում է նա աւելի վատ պիտի լինէր իր նախորդից։

Փետրուարի 15-ին այցելում է բանտը «Չեկայի» նոր նախագահը։ Մտնելով մեր կամերը, ժպտերես մօտենում է ինձ պ. Ամիրխանեանը և հարցնում. «Չէ՞ք ճանաչում ինձ»։

— Ոչ, — պատասխանում եմ ես։

— Մենք ծանօթ ենք իրար հետ Թիֆլիսից, 1917 թւին։

— Նշանակում է ես մոռացել եմ ձեզ, — ասացի ես։

— Դուք մեզ դասախօսութիւն էիք կարդում բոլշեվիզմի մասին. ես այն ժամանակ փոքրամասնական էի (մենշեւիկ) և համաձայն էի ձեր ասածներին. իսկ այժմ, ինչպէս տեսնում էք, փոխուել են մեր դերերը, — ասաց պ. Նախագահը։

— Այսինքն միայն ձերը. դուք էլ նորից կը փոխուի այդ դերը, ո՛վ գիտէ, — նկատեցի ես։

— Ի՞նչպէս էք, ի՞նչպէս են անցնում ձեր օրերը, — հարցրեց նա։

— Ի՞նչպէս կարող է լինել մէկը բանտում, այն էլ այսպիսի պայմաններում, — նկատեցի ես։

— Ոչինչ, կանցնի, ժամանակաւոր դրութիւն է այս, — վրայ բերեց նախագահը և շտապով դուրս գնաց, կարծես խուսափելով, չլինի՞ թէ մեր խօսակ-

ցութիւնը հեռուն տանէր մեզ մինչեւ իրեն համար անցանկալի խորքերը։

Այդ նոր նախագահի այցելութիւնը ոչինչ լաւ լաւ բան չի բերում բանտարկեալների համար, բայց եթէ ամենաանախորժ հետեւանքներից մէկը։

Ժամը արդէն մէկն էր, իսկ դրսից ճաշ չէր ընդունւում տակաւին, մինչդեռ սովորաբար ժամը 12-ից սկսած ստացւում էր տներից բերած ուտելիքը։ Բանտարկեալները անհանգստանում են, զանազան ենթադրութիւններ են անում։ Ճիշտ է, եղել են դէպքեր, երբ կամ բոլորովին ճաշ չի ստացւել, և կամ ընդունելութիւնը սկսւել է շատ ուշ, և կամ ընդհատւել է ճաշի ընդունելութիւնը։ Բայց այդպիսի դէպքեր եղել են բանտի համար արտակարգ նշանակութիւն ունեցող անցքերի ժամանակ. կամ ընդհանուր խուզարկութեան և կամ «մեծ» հիւրի այցելութեան ժամանակ։ Այդ օրը, փետրուարի 15-ին, ոչինչ չկար. «Չեկայի» նոր նախագահը առաւօտեան եկել ու գնացել էր, այլեւս ոչ մի նման բան չէր սպասւում բանտում։ Արդէն ժամը երկուսն էր, մեր անհանգստութիւնը աւելի ու աւելի էր սաստկանում։ Ոչ պակաս մտածում էինք նաեւ այն մասին, որ դուրսը մի արշին խորութիւն ունեցող ձիւնի մէջ ժամերով կանգնած հարիւրաւոր մարդիկ— դրանցից ոմանք գալիս են հերթի կանգնում ժամը 9-ից և 10-ից,— որոնցից մեծ մասը կանայք ու փոքրահասակներ են, դողդողում, սրթսրթում են սաստիկ ցրտից։ Ոչ ընդունում են նրանցից ճաշը և ոչ էլ յայտնում են, որ ճաշի ընդունելութիւն չի լինելու. սպասւում է, որ վերջին յայտարարութիւնը բանտի տեսուչն անէ, իսկ նա դեռ չէր եկել բանտ։

Սա չտեսնուած մի դէպք է, այստեղ մի բան կայ

թագնուած, որ մենք չգիտենք. — մտածում ենք ես ու Թաչիկը, իսկ Արշալոյսը համաձայն չէր մեզ հետ, ասելով, որ դա բանւոր վարչութեան սովորական կամայականութիւններից մէկն է. Փոքր անցած, երբ մենք հսկիչից տեղեկանում ենք, որ «Ձեկայի» նոր նախագահի յատուկ կարգադրութեամբ է, որ այսօր ճաշ չեն ընդունում, իմ և Թաչիկի ենթադրութիւնը աւելի հիմք ստացաւ: Վերջապէս այն հանգամանքը, որ մի ամբողջ շաբաթից ի վեր բացարձակօրէն արգիլել են ամեն մի անձնական տեսակցութիւն, թէեւ վերջինիցս օգտւում էին շատ քիչ բաղդաւորները, ընդամէնը 10—15 հոգի, ահա այդ հանգամանքն էլ իր հերթին աւելի էր ճշտում մեր ենթադրութիւնը.

Յաջորդ օրը, փետրւարի 16-ի առաւօտեան, լուր տարածւեց բանտում (այդ լուրերը լաւ թէ վատ, ճիշտ թէ անհիմն, բերում էին դրսից նոր հերթապահ հսկիչները), որ խորհրդային իշխանութեան ուղարկւած զօրամասը՝ Բաշգեառն գիւղի դէմ՝ վերջինս նւաճելու դիտաւորութեամբ, խիստ ջարդւել և յետ է նահանջել գիւղացիների անընկճելի դիմադրութեան հետեւանքով: *) Ճնշւած տրամադրութիւն է տիրում կառավարական շրջաններում — աւելացրել է լրաբերը.

Մենք, երէկւանից արդէն քաղցած, սրտատրոփ սպասում էինք ժամը 12-ին, երբ կը սկսւի դրսի ճա-

*) Մենք բանտից դուրս գալուց յետոյ միայն իմանում ենք, որ փետր. 15-ին, զնդապետ Սարգսեանի հրամանատարութեամբ Բաշգեառն գիւղի դէմ ուղարկւած 700 զինւորները ջարդւում են 120 գիւղացիների կողմից, որոնք հերոսաբար կռւել են խմբապետ Մարտիրոսի գլխաւորութեամբ, խլելով բոլշեվիկեան զօրքից մի թնդանօթ, չորս գնդացիր եւ մեծ քանակութեամբ փամփուշտ.

չի ընդունելութիւնը։ Բայց որքա՜ն զարմացանք ու վշտացանք, երբ այդ օրն էլ ճաշ չստացեց դրսից։

— Այս ի՞նչ բան է, չտեսնուած դէպք է սա՝ երկու օր իրար վրայ ճաշ չընդունել դրսից, առանց որ եւէ հանգստացուցիչ բացատրութեան։ Այժմ մազաչափ կասկած չունեմ, որ կայ բոլորիս համար տակաւին անյայտ մի խորհրդաւոր գաղտնիք, երէկուայ մեր ենթադրութիւնը ճիշտ էր միանգամայն, — ընդհատեցի մեր երեքիս ընթերցումը և տեւական լռութիւնը։

— Գոնէ քաղաքացիներին, դուրսը կանգնած ժողովրդին բացատրէին ճաշ չընդունելու պատճառները. ես երեւակայում եմ թէ որքան են դուրսը անհանգստանում մեզ համար, — վրայ բերեց Թաչիկը։

Այսպէս, անորոշութեան և սպասողական դրութեան մէջ սահում էին ժամերը իրար յետեւից։

XV

Փետրուարի 16-ն էր, երեկոյեան ժամը ութից անց։ Բանտարկեալների ընդհանուր սառուցումը, — այդ երեկոյ բաւական ուշ տեղի ունեցած, — եղել, վերջացել էր արդէն։ Ցանկարծ լսեցինք բանտի տեսչի ձայնը միջանցքում. բանտի կոմիսարի հետ միասին, մի ցուցակ ձեռքին շրջում էր կամերից կամեր և ինչ որ անուններ կարդում։ Մօտեցաւ նաև մեր կամերին և դրան քառակուսաձեւ բացուածքից կարդաց երեքիս անունները։ Մենք, օգտուելով հանգամանքից, դիմեցինք տեսչին և հարցրինք ճաշ չընդունելու պատճառի մասին։ Նա ասաց մեզ հետեւեալը.

— Գիտէք, որովհետեւ մինչեւ այժմ դրսից ճաշ ստանալու գործը եղել է անկազմակերպ և յաճախ

դրսից հաղորդել են բանտարկեալներին տոմսերով նաև քաղաքական բովանդակութիւն ունեցող տեղեկութիւններ, ուստի որոշել ենք ժամանակաւորապէս, մինչեւ ամսի 20-ը կամ 21-ը դադարեցնել ճաշի ընդունելութիւնը և աւելի լաւ հիմքերի վրայ կազմակերպել այն։

Որքան խօսք կար բանտի տեսչի ասածների մէջ, այնքան էլ սուտ կար, ինչպէս յետագայ դէպքերը ցոյց տուին։ Դա միայն յերիւրած մի բացատրութիւն էր՝ դրանով անհանգիստ բանտարկեալների հարցերին այս կամ այն բաւարարութիւնը տալու համար։

Բանտապետը հրամայել էր հսկիչներին կողպած պահել բոլոր կամերների դռները այդ ամբողջ գիշեր և անգամ բանտարկեալների բնական կարիքների համար բաց չանել դռները։

Ժամը դեռ տասը չկար. պահանջում էինք հսկիչից բաց անել դուռը ըստ սովորականին բնական կարիքների վայրը գնալու համար։ Նա պատասխանում էր, որ բանալիները տարել է բանտապետը, բաց անելու հնարաւորութիւն չունի։ Երեւակայում եմ դրութիւնը ընդհանուր կամերներում բազմամարդ խմբերով տեղաւորուած բանտարկեալների։

Բայց ինչ անհասկանալի առեղծուած էր այդ, ոչ ոք ոչինչ չգիտէր. ինչ որ մի բան էր սպասւում։ Մենք երեքս էլ քար կտրած նստած էինք. քուն չէր գալիս մեր աչքերին. Յաճախ մարդիկ էին գալիս բանտի դըրասենեակից. ոտքերի ձայներով շրջում էին միջանցքներով և հսկիչներին ինչ որ խորհրդաւոր կարգադրութիւններ անելով կրկին հեռանում էին։ Հսկիչը մօտենում էր ամեն մի կամերի և անսովոր ձայնով ու տոնով յայտնում էր, որ բոլորը պառկեն ու քնեն։

Մենք պառկեցինք. բայց ո՞վ էր քնողը։ Վատա-

գոյժ նախազգացումը պաշարել էր մեզ և ոչ մի հանգստութիւն չէր տալիս։ Բոլոր արտասովոր նշաններն ու պատրաստութիւնները ունեն իրանց իմաստը և լաւ բան չեն ասում,— մտածում էինք մենք։

Ժամը մօտ 11-ը կը լինէր։ Յանկարծ լսում ենք նախկին աւագ հսկիչ, այժմ բանտապետի նոր օգնական նշանակուած Գաբրիէլի ձայնը, գազանին մէկը, որ ստանձնել էր Գաբրիէլ հրեշտակի հոգեհան դերը։ Նա և բանտի կոմիսարը մօտենում են թիւ 13 կամերին,— մեր կամերից յետոյ 3-րդը,— և կամացուկ ձայնով կանչում են քնած բանտարկեալներից մէկին։

— Վե՛ր կաց, հագնուի՛ր և իրերդ վերցրու եկ գրասենեակ, պէտք է գնաս «Ձեկա»,— ասաց Գաբրիէլը։

Ի՞նչ է պատասխանում բանտարկեալը, չգիտեմ, բայց Գաբրիէլի հետեւեալ խօսքերից երեւում էր, որ նա հրաժարւում էր գիշերը «Ձեկա» գնալ։

— Ի՞նչ նշանակութիւն ունի ցերեկ է, թէ գիշեր։ Չէ՞ որ «Ձեկան» գործում է անդադար՝ ցերեկ թէ գիշեր, շուտ վե՛ր կաց, քեզ սպասում են։

Բանտարկեալը հետեւում է իր դահճին և դուրս է գնում։

Բանտի դիւանատունը կամ կանցելյարիան, բաղկացած մի քանի գրասենեակներից, գտնւում էր բանտի բակում, բանտի դռանը շատ մօտ, ստորին հարկում։ Բանտի դէպի բակը նայող կորպուսները՝ վերին և ստորին յարկերում, ունէին մի շարք կամերներ, որոնց պատուհանները դուրս էին նայում ուղղակի դէպի բանտի դուռը, բակը և բանտի դիւանատան սենեակները։ Այդ կամերներում տեղաւորուած բանտարկեալները կատարեալ հնարաւորութիւն ունէին և՛ լսելու և՛ տեսնելու այն բոլորը, ինչ կատարւում էր

բանտի բակում, դիւանատունը և բանտի մուտքի մօտ։

Ստորին յարկում գտնւող մեր կորպուսը և մեր կամերները, ընդհակառակը, գտնւում էին միւս ծայրում, միւս բակի վրայ։

Թէ ինչ է կատարւում փետրւարի 16-ի լոյս 17-ի գիշերը, մենք փաստօրէն ոչինչ չգիտէինք։ Լսում էինք միայն զարհուրելի աղմուկ, գոռում, գոչում, օգնութիւն խնդրող աղիողորմ ձայներ, անդադար և որոտացող ուժեղ հրացանաձգութիւն, բայց նաև ուռռաներ ու կեցցէներ։

Մենք ուղղակի տանջւում էինք անորոշութեան մէջ. ի՞նչ էր կատարւում, ի՞նչ աղմուկ էր, ո՞ւմ էին խփում, ո՞ր կողմից էին օգնութիւն խնդրում և ո՞վքեր էին ուռռա ու կեցցէ ասողները — ոչինչ չգիտէինք։ Գիտէինք միայն, որ բանտի մէջ կամ չուրջը տեղի էր ունենում մի ծանր դէպք, մի խոշոր անցք։

Յետոյ միայն, յաջորդ օրը, իմանում ենք, որ այդ գիշեր տեղի է ունեցել ամենաքստմնելի ոճիրներից, ամենավայրագ գազանութիւններից մէկը, որին երբ և իցէ կարող է ընդունակ լինել մի պետական իշխանութիւն։ Ով գիտէ, Երևանի բանտում կատարւածը որ հազարերորդ անորակելի ոճիրն էր բոլշևիկեան րէժիմի անիծւած գոյութեան ընթացքում։

Ինչո՞ւմն էր բանը։

«Չեկան» որոշել էր այդ գիշեր գնդակահարելու 21 հոգու։ Բանտային վարչութիւնը՝ տեսուչը, կոմիսարը, բանդապետը և օգնականները մէկ մէկ հաւաքում են այդ 21 բանտարկեալներին զանազան կամերներից և նրանց ժողովում բանտի դիւանատան կից մի ազատ սենեակում, Սպասում էին, որ «Չեկայի» օտոմոբիլը գայ ու նրանց տանէ գնդակահարութեան

վայրը։ Հաւաքուած բանտարկեալները հասկանում են իրանց գլխին գալիք աղէտը։ Նրանց մէջ գտնուող երեք բօլշեւիկները (դրանցից մէկը տխրահռչակ Լեւոն Ենգիբարեան), բռնուած զանազան յանցանքների համար, հասկացնում են միւսներին, որ իրանք գիտեն բօլշեւիկների մօտ ընդունուած սովորութիւնը և որ այդ ուշ ժամին իրանց տանում են միայն գնդակահարելու համար, ուստի բոլորն էլ որոշում են սենեակի դուռը ներսից կողպել և հրաժարուել դուրս գալուց։ Բանտի տեսչի ու բանտապետի բոլոր դիմումներն ու սպառնալիքները՝ բաց անել դուռը և դուրս գալ, ապարդիւն են անցնում։ Խմբուած բանտարկեալները միայն մի պատասխան են տալիս. «Եթէ ուզում էք մեզ «Չեկան» տանել հարցաքննելու, տարէք ցերեկը և ոչ կէս գիշերին. դուք մեզ խաբում էք, դուք տանում էք մեզ սպանելու, գնդակահարելու, չենք ուզում դուրս գալ»։ Անգամ պարոնայք Աւիսի, Սուլէյման Նուրիի և Ամիրխանեանի,— որոնք հարկ էին զգացել քամինելի ոճիրին ներկայ լինելու՝ երեւի իրանց «յեղափոխական» պարտականութիւնը աւելի բարեխղճօրէն կատարած լինելու համար,— խօսքերն ու դիմումները անհետեւանք են անցնում։

Դահիճները որոշում են իրանց գազանային եղեռնագործութիւնը կատարել տեղն ու տեղը, բանտի բակում, ի տես և ի զարհուրանս արդէն արթնացած հարիւրաւոր բանտարկեալների։

Եւ սկսւում է աննկարագրելի ոճիրը. սկսւում են իրար յաջորդող պահակի զինուորների անընդհատ համազարկերը բակից՝ սենեակի պատուհանների դէմ ուղղուած։

Բայց թողնենք, որ պատմէ իրողութիւնը ինքը ականատեսը՝ յիշեալ սենեակի դէմ առ դէմ գտնուող

կամերում նստած բանտարկեալներից մէկը, որ իր ընկերների հետ միասին լսել ու տեսել է այդ գիշերւայ սարսափելի անցքերը և ապրել ու տանջուել մահապարտների նման *).

Ժամը 5-ից բանտապետը, բանտի վերատեսուչն ու կոմիսարը հարցաքննութիւններ էին անում.

Յաճախ լսում էր բանտի երկաթէ դռների ահռելի գրնգոցը. Ինչ որ մարդիկ բանտ էին մտնում եւ ելնում.

Զարմանալի բան էր պատահում. Այդ գիտակցութիւնը աւելի ամրացաւ, երբ հայ պահակներին փոխարինեցին թուրք բոլշեւիկներ և ռուս կարմիր զինւորներ. Պահակներին պատուիրեց ուշադիր լինել, իսկ նախիջներին հրամայեց չբացել կամերաների դռները.

Սարսափը պատել էր ամենքին. Բոլշեւիկ բանտարկեալների զարհուրելի պատմութիւնները պատկերանում էին ամենքիս. «ահա գիշերին,— ասում էին նրանք,— գալիս է ոտնորդը և մէկիկ-մէկիկ հանում են բանտարկեալներին կամերաներից, տանում են քաղաքից դուրս՝ հրացանազարկ անում, անյայտացնում. Ով որ չի իմանում՝ ով տարաւ եւ ուր...».

Մենք կծկուած մեր կամերայում, լռութեան

---

*) Բարեբաղդաբար ես ի վիճակի եմ մէջ բերելու այստեղ ականատես բանտարկեալներից մէկի՝ Ա. Պետրոսեանի հարազատ ու ճշգրիտ նկարագրութիւնը փետր. 16-ի գիշերը տեղի ունեցած եղեռնական անցքերի, որ լոյս տեսաւ «Կարմիր Գիշերներ» վերնագրով «Ազատ Հայաստանի» թիւ 8-ի մէջ. Ես կը բերեմ այստեղ նրա նկարագրութիւնից ամենաբնորոշ կտորը.

կորած, հետեւում էինք բանտի անսովոր անցուդարձին։

Ժամը ութ և կէսին մէկ էլ բացեց մեր կամերայի դուռը և ներս մտան՝ բանտի վերատեսուչը, կոմիսարը, բանտապետը և հսկիչը մոմը ձեռքին։ Բանտապետը ձեռին բռնած մի ընդարձակ ցուցակ՝ սկսեց կարդալ։

— Կորգանով Նիկոլայ, այստե՞ղ է։

— Այստեղ չէ.— պատասխանեց բանտարկեալներից մէկը։

— Էնգիբարեան Լեւոն։

— Ներքեւի յարկումն է,— ձայն տուեց մի ուրիշը։

— Բոգդանով Նիկոլայ։

— Ես եմ։

— Վերցրէք ձեր իրերը և հետեւեցէք։

Եւ այսպէս կարդացեց քսան և մէկ բանտարկեալի ազգ և անունը։

— Տղե՛րք. բանտապետի գազանացած դէմքը լաւ բան չի ասում,— նկատեց բանտարկեալներից մէկը,— փո՛ւ, ինչ արիւնարբու և գիշատիչ արտայայտութիւն ունէր. կեանքիս մէջ չեմ մոռանայ այդ սոսկալի պատկերը։

— Օտօմօբիլ է,— սարսափած համարեա միաբերան ձայն տուինք բանտարկեալներս։

— Դէպի բերդն է գալիս։

— Կանգնեց բանտի դրան մօտ։

*— Կեցցէ՛, կեցցէ՛... օտօմօբիլի կանգնելն ու աղաղակներով օդ թնդացնելը մէկ եղաւ։ *)*

---

*) Կեցցէ գոչողները բանտի վարչութեան անդամները եւ ծառայողներն են եղել։

Ի՞նչ առեղծուած է սա․ ի՞նչ է նշանակում,— բացագանչեցին մի քանի բանտարկեալ միաժամանակ։

— Զգո՛յշ, տղերք․ ոչ մի ձայն․ պրովօկացիա է սա․ ուզում են կոտորածի առիթ ստեղծել,— խօսեց սովետական բանտերի կարգերին ծանօթ մէկը։

Նորից լսւեց երկաթէ դռների շառաչը․ ապա բանտի գաւթում լսելի եղաւ մարդկանց ոտքերի ուժեղ տրոփիւն։ Մեզանից երկու հոգին բարձրացան թախտերի վրայ, դիտելու պատուհաններից դրսևում տեղի ունեցող շարժումը։ Մեր կամերայի երկու պատուհանն էլ նայում էին ուղիղ գաւիթը, որտեղից երևում էր հիւանդանոցի շէնքը, ուր տեղաւորուած էին կին բանտարկեալները, միջին կորպուսի ձախ կամերաների պատուհանները դարպասից ներս ու դուրս անողները և այլն։ Իսկ դրսի խօսակցութիւնները աւելի որոշ լսելու համար պատռեցինք պատուհանների թղթով ծածկած աչքերը։

— Տղե՛րք, զսպեցէք ձեր հազը, որ կարողանանք լսել խօսակցութիւնները,— շշնջալով խօսեց պատուհանից դիտողը։

— Եկողները քսանից աւելի զինուած զինուորներ են,— շարունակեց դիտողը,— եկան շարեցին հիւանդանոցի առաջ, հայեր են․ մի խումբ էլ գալիս է դէպի մեր կորպուսը․ կանգնեցին, յետ դարձան նորից իրանց տեղը․ գրասենեակի առաջ աղմուկ, իրարանցում է... Սա... կալանաւորներին առաջարկում են դուրս գալ բանտից... նրանք մերժում են...

— Առաջարկում եմ անմիջապէս դուրս գալ, թէ չէ բոլորիդ տեղն ու տեղը կը գնդակահարեմ, սրիկաներ,— խռպոտ ձայնով սկսեց գոռգոռալ բանտապետը,— կարաո՛ւլ, պատրաստուեցէք։

— Ինչո՞ւ գիշերն էք տանում․ եթէ հարցաքննե-

լու էք տանում, տարէք առաւօտեան. այժմ մենք չենք գալ, — բարձր ձայնով խօսել սկսեցին բանտարկները։

— Կարաո՛ւլ, եղէք պատրաստ, — նորից գոռաց բանտապետը։

— Օգնութի՛ւն, ընկերներ, մեզ տանում են կոտորելու. օգնութի՛ւն... — մէկ էլ լսելի եղան բանտարկեալների խմբական աղաղակներն ու ճիչերը։

Դրսից աղմուկ, իրարանցում.

— Կրա՛կ... կանչեց բանտապետը։

— Բո՛ւֆ, բո՛ւֆ, բո՛ւֆ... լսուեցին համազարկեր։

— Օդում են կրակում, վախեցնելու համար է, — ասաց պատուհանից դիտողը։

Լսելի եղան բանտի դռների զըրնգոցը և աւտոմոբիլի դըրդոցը. «Բանտից մարդիկ դուրս եկան, աւտոմոբիլը հեռանում է», — նորից խօսեց բանտից դիտողը։

— Կարաո՛ւլ, կրակ, — գոռաց բանտապետը։

— Բո՛ւֆ, բո՛ւֆ, բո՛ւֆ...

— Զրնգզրնգալէն թափուեցին ժողովուած բանտարկեալների սենեակի պատուհանների ապակիները։

— Շներ, չէք վախեցնիլ ձեր բռնութիւններով. գիշերն էք գալիս անզէն մարդկանց կոտորելու. — մէկ էլ յստակ ու զիլ ձայնով խօսել սկսեց պատուհանից խմբուած բանտարկեալներից մէկը, — չեմ վախենում, հրացանազարկ արէք անզգամներ։

— Բաշլի՛ր, որիկա՛յ, թէ չէ տեղն ու տեղը կը սատկացնեմ — գոռաց բանտապետը։

— Չես վախեցնի, զարկի՛ր, շուն, մեր արեան փոխարէն շուտով ձեր կեանքի գնով կը պատասխանէք։

— Կարաո՛ւլ, կրակ, — գոռաց բանտապետը։

Այս անգամ զինուորները համազարկ չտուին, այլ կրակեցին միայն մի երկու զինուոր։

— Զինուորների շարքերում խլրտում է նկատւում, — խօսեց դիտողը, — այս ու այն կողմն են քաշուել և խումբ-խումբ փսփսում են. երևում է, հրաժարւում են բանտարկեալներին գնդակահարելուց։

Նորից հեռուում լսեց ատոմօբիլի խուլ ձայն։

— Նորից ատոմօբիլ, անիծւիս...

— Դէպի բանտն է գալիս, — ասաց դիտողը, — կանգնեց դռան մօտ, բանտի դռները բացւեցին. մարդիկ մտան ներս և դէպի գրասենեակը գնացին։ Նայեցէք ո՛ր ժամն է, — հարցրեց նոյն դիտողը։

Լուցկին վառեցինք. բժիշկը նայեց ժամացոյցին, — տասներկուսից քառորդ անց — ասաց նա։

Դուրսը նորից լռութիւն տիրեց. լսւում էր անց ու դարձ անող պահակի ոտքի տակի ձիւնի ճթճըթոցը, մէկն էլ լապտերը ձեռքին մի քանի պտոյտ արաւ կենտրոնական շէնքի առաջ ու անյայտացաւ։

Նորից բացւեցին բանտի դռները, նոր զինուորներ մտան բանտ։

— Պահակները փոխւում են, — ասաց դիտողը, — մի քանի զինուորներ մեր կորպուսը եկան։

— Ո՞վ է, ձայն տուեց միջանցքում զբօսնող պահակը։

— Պահակապետը։

— Ամեն ինչ կարգին է, — զեկուցեց պահակը։

— Ազատ ես, նոր պահակ է նշանակւում, — ասաց պահակապետը և հրահանգեց նոր պահակին՝ զգաստ լինել, չքնել։

Ոչ ոք մեզանից դեռ չէր քնել, ոմանք կծկւած խոնաւ գետնին, ոմանք պառկած թախտերի վրայ, ծպտուն կտրած, գնդակահարուողների հետ հաւասա-

բապէս տանջւում էին և նրանց հետ միաժամանակ ապ-րում մահւան երկիւղը։

Հեռւում նորից լսելի եղան խօսակցութեան խուլ ձայներ։ Նորից համոզում էին բանտարկեալներին չըն-դիմանալ և յանձնւել։

— Առաւօտեան տարէք. դատեցէք. ապա գնդա-կահարեցէք, չէ՞ որ յայտնել էք, որ առանց դատի ոչ ոքի չէք պատժիլ. ինչո՞ւ չէք պահում ձեր խօսքը,— բարձրաձայն բողոքում էին բանտարկեալները։

— Ընկեր Աւիս, չէ՞ որ ես ես կոմունիստ եմ և կուսակցութեան շարքերում երկու տարուց աւելի աշ-խատում եմ...

— Սա... Բօգդանովի ձայնն է, Աւիսի հետ է խօսում,— ասաց պատուհանից դիտողը։

— Աղաչում եմ, ընկեր Աւիս,—շարունակեց Բօգ-դանովը,— նախ գործս քննեցէք, եթէ մեղաւոր լի-նեմ, նոր գնդակահարէք։

Ընկեր Նուրի, ընկեր Ամիրխանեան, միջնորդեցէք ինձ ազատել մինչեւ գործիս քննութիւնը...

Այժմ մի ուրիշն է խօսում. նա եւս բողոքում է, որ առանց քննութեան տանում են գնդակահարելու. «կոտորեցէք սենեակի մէջ, չենք դուրս գալ գիշե-րը»,— ասաց վերջին բողոքողը։

— Լապտերը նորից երեւաց,— ասաց դիտողը.— Նորից կարգադրութիւններ են անում. զինւորները շարւում են. հրաման տւեց կրակի բանել բանտարկ-եալներին։

— Բո՛ւֆ, բո՛ւֆ. բո՛ւֆ.... լսւեց համազարկի ձայնը։

— Օգնութի՛ւն, սպանեցի՜ն... արիկաններ, վա՜յ... օգնութիւն ընկերներ..., օֆ, օֆ...

— «Ի էտօ բուդետ նաշ պօսլեդնիյ և րեշիտելնիյ

բոյ»..., *) — մէկ էլ սկսեցին երգել բանտարկեալները։

Աղաղակը, հառաչանքը, երգը, վայոցն ու հրացանների ձայնը իրար խառնուեցին։

— Շներ, որիկաներ, գիշերային աւազակներ, արիւնարբու գազաններ, կոտորեցէք, չենք վախենում, — նորից լսելի եղաւ առաջին անգամ խօսող բանտարկեալի յստակ ու հնչուն ձայնը, — մեր արեան համար պատասխանատու էք...

Հրացանների զարկերը շարունակւում էին, զինուորները երկու մասի բաժանուած, մի խումբ կրակում էր մեր կողմից, իսկ միւսը անցել էր կենտրոնական կորպուսի հակառակ կողմը և կրակում էր այնտեղից։

Երկու կողմից էլ շարունակւում էին կատաղի համազարկերը. բանտարկեալները լռել էին, երբեմն լսւում էր «վա՜յ» կամ «օ՜ֆ» հառաչանքը։ Աղմուկների և հրացանների զարկերի մէջ լսելի եղաւ հեռացող օտոմոբիլի սուլոցը։

— Մօտեցէք սենեակին, բարձրացէք սեղանների վրայ, կրակեցէք պատուհաններից, յատակի վրայ, պատերի տակ են պառկած, կրակեցէք....— կարգադրութիւններ էր անում ինչ որ երիտասարդ։

Բանտապետի ձայնը շատ գոռալուց կտրուել էր, բառերի փոխարէն լսւում էր ինչ որ խզզոց։

— Զինուորները հրաժարւում են բարձրանալ սեղանների վրայ, — խօսեց նորից պատուհանից դիտողը, — հրաժարւում են նաև կրակելուց, բողոքում են, ասում են՝ երկու ժամը վաղուց անցել է, կանչեցէք ուրիշներին, մենք յոգնել ենք, չենք կարող։

---

*) Դա ռուսական յայտնի յեղափոխական երգ է, որ նշանակում է հայերէն թարգմանութեամբ. «Եւ այս կը լինի մեր վերջին եւ վճռական կռիւը»։

Պահ մի դադարեց հրացանաձգութիւնը։ Լսում են ինչ որ դռան խուլ հարուածներ, երեւում է փորձում են կոտրել բանտարկեալների դուռը։

— Սրիկանե՛ր, շնե՛ր, գազաննե՛ր չէք կարող...— լսեց նորից հնչուն ու յստակ ձայնը։

— Բո՛ւֆ, բո՛ւֆ... նորից լսեց հակառակ կողմից համազարկի ձայնը։

— Օ՜ֆ, վա՜յ, վա՜յ...

Նորից լռութիւն։ Ժամը չորսից անց էր, երբ նորից բանտին մօտեցաւ օտոմոբիլը։ Բանտի դռները նորից զրընգալէն յետ գնացին։

— Նոր զինուորներ են բերել, ռուսներ են. նրանց թիւն աւելի է, հայ զինուորները հեռանում են,— ասաց դիտողը։

— Այս անգամ փրկութիւն չկայ, չեն խնայիլ,— շշնջացին մեր կամերայի բանտարկեալներից մի քանիսը։

Նորից հրաման արձակեց կրակ բաց անել դէպի բանտարկեալները. այս անգամ հրաման արձակողը ռուս էր։

— Արագ, բարձրացէք սեղանների վրայ, պառկեցէք յատակին և պատերի տակ, նոյնը նաև դռան կողմից. պատրաստուեցէք մէկ, երկու, երեք։

Բո՛ւֆ, բո՛ւֆ, բո՛ւֆ...

Այս անգամ արդէն օգնութիւն չէին կանչում բանտարկեալները. միայն լսում էին մէջ ընդ մէջ «վա՜յ, օ՜ֆ, մեռա՜յ»... հառաչանքներ։

Համազարկերը շարունակւում էին անընդհատ, անդթօրէն։ Այլեւս չէր լսւում հպարտ բանտարկեալի խրոխտ ու յստակ ձայնը. երեւում էր նա այլեւս կենդանի չէր։

«Օ՜ֆ ու վայ» հնչիւնները վաղուց դադարել էին,

քայց դեռ ևս չարունակւում էին հրացանների համազարկերը և միաժամանակ լսւում էր ռուս սպայի խըռոխտ հրամանը.

— Ժիվօ ռեբեատա, նեչեվօ ցերեմօնիտցա . . . *)

Առաւօտեան ժամը 6-ին մօտ էր, երբ վերջնականապէս դադարեցին հրացանների ձայները և բանտից յաղթական դղրդոցով հեռացաւ ատօմօբիլը, տանելով իր հետ ռուս զինւորներին.

Այնուհետեւ նորից երեւաց լապտերը, սակայն այս անգամ նա լուսաւորում էր բանտի դռան և կենտրոնական շէնքի միջեւ ընկած հրապարակը. Միջին կորպուսից (այն սենեակից, ուր գնդակահարւել են բանտարկեալները) ինչ որ բաներ են կրում դէպի դարպասի մուտքի ներքնայարկը. Ներքնայարկի պատուհանից նոյնպէս նշմարւում էր աղօտ լոյսի հետք.

Կարճ ժամանակամիջոցից յետոյ այդ լոյսն էլ անյայտացաւ, ամեն ինչ դադարեց բանտում, նորից ամենուրեք լռութիւն և մեռելային խաղաղութիւն պատեց. կարծէք ոչ մի՛ սարսափ տեղի ունեցած չլինէր այդ գիշերը. Եւ երբ լոյսը վաղուց ծագել էր ու ներս ցոլացել մեր կամերայի պատուհաններից, քսան եւ չորս բանտարկեալներս արթուն, քարացած մեր տեղերը, չռել էինք մեր աչքերը և անտարբեր, յոգնած ու դժգունած դէմքերով նայում էինք իրար.

Այդ գիշերը, քսան և մէկ գնդակահարւածների հետ, մենք ևս, թէև կենդանի, գնդակահարւած էինք.

Եւ ոչ միայն մենք, այլ ամբողջ բանտը, ութ հարիւր հոգուց աւելի բանտարկեալներ.

Ահա ականատեսի ձեռքով լուսանկարչական ճշտութեամբ եւ հարազատօրէն արձանագրած այն դար-

*) Արագ, տղերք, առանց խնայելու.

հուրծլի ոճիրը. որ տեղի է ունեցել Երեւանի բանտի բակում փետրուարի 16—17 գիշերը.

Սակայն այդ «լուսանկարչական ճշտութիւն» խօսքերը սոսկ պայմանական իմաստ ունեն ներկայ կապակցութեան մէջ. Արձանագրած տողերը չէին կարող աւելին լինել, քան լոկ սխեմատիկ նկարագիրը արտաքին գործողութիւնների. ճիշտ այնպէս, ինչպէս լուսանկարիչը կարողանում է մաթեմատիկական ճշտութեամբ արտացոլեցնել թղթի վրայ որոշ դէմքի, անցքի կամ երեւոյթի միայն արտաքին գծերն ու ներկերը, առանց իր օբիեկտի ներքին էութեան խորքը թափանցել կարողանալու.

Ո՞վ կարող էր, ընթերցո՛ղ, թափանցել 21 մահապարտների հոգու խորքը և վերզգալ, վերապրել եւ վերարտադրել նրանց սոսկալի ողբերգութիւնը, 4—5 ժամ տեւող գերմարդկային մաքառումները շարունակական համազարկերի «բո՛ւֆ, բո՛ւֆ, բո՛ւֆ» որոտումների դէմ.

Ոչ ոք, ոչ մի ականատես.

Ճիշտ այնպէս, ինչպէս ես կարող էի մեր կամերայի դուռը անդադար բաղխող քաղցած բանտարկեալների միա՛յն ողբալի տեսարանը նկարագրել, որպէս ականատես, առանց վերապրել ու վերարտադրել կարողանալու սովեալների հոգեկան գալարումները.

Այդ է պատճառը, որ ես նախաբանիս մէջ չեշտեցի, որ բոլշեւիկեան իրականութիւնը իր անհեթեթութեամբ և հրէշային գծերով գերազանցում է ամեն մի նկարագրական ուժի ու տաղանդի.

Եւ ինչո՞ւ էին գնդակահարում այդ 21 դժբաղդ զոհերին այդպիսի վայրագութեամբ.

Նրանցից երեքը բոլշեւիկներ էին՝ ինչ-ինչ յանցանքների համար բռնուած. յանցանքներ սակայն, որ

գործում են բոլշևիկների մեծագոյն մասը՝ մինչև վերին պատասխանատու կոմիսարները,— հանրաճեռս յանցագործութիւնը տիրապետող սիստեմ է նրանց աշխարհում և ոչ բացառութիւն,— բայց տուժում են իրանց կեանքով միայն շատ քչերը, նրանք, որոնք չունեն պաշտպանութեան համար ամուր կապեր վերին՝ աւելի մեծ յանցագործների շրջաններում.

Մնացած 18 հոգին մարտիկ երիտասարդներ էին՝ այսպէս կոչուած մաուզերիստներ, որոնց մեղադրում էին, բոլշևիկ լրտեսների ցուցմունքներով, այն բանի մէջ, որ նրանք մասնակցել են մայիսեան շարժման [բոլշևիկեան] դէմ մղուած կռւին շատ բուռն կերպով, այսինքն նրանց մեղադրում էին հին հաշիւների մէջ.

Այսպէս թէ այնպէս, ենթադրենք մի րոպէ, որ մէկ և միւս կարգի մեղադրեալները— 3 հոգի բոլշևիկներ, 18 հակաբոլշևիկներ— գործել էին ինչ-ինչ յանցանքներ և պէտք է բանտարկուէին.

Բայց չէ՞ որ նրանք իրաւունք ունէին սպասելու և պահանջելու, որ փաստերով ու վկաներով ապացուցուի իրանց վրայ բարդուող մեղքը, որ լինի հարցաքննութիւն և դատ՝ նախ քան այս կամ այն պատիժը ստանալը.

Չէ՞ որ իրանց իսկ պաշտօնական օրգան «Կոմունիստ»-ի մէջ յայտարարել էր յեղկոմը՝ ստորին ու վերին տրիբունալները հիմնելու առիթով, որ ոչ մի բանտարկեալ չի պատժւի և ոչ մի պատիժ չի կիրառւի, առանց դատի, առանց գերագոյն տրիբունալի վաւերացման.

Չէ՞ որ անգամ ինքը՝ ինկվիզիտորական ոճրագործութիւնների հեղինակ և դահճապետ Աթարբէկեանը, յայտարարել էր բանտարկեալներին իր այցի ժամա-

նակ․ որ նրանք կը հարցաքննուեն և դատ կը լինի։

Եւ իրաւունք չունէի՞ն դժբաղդ զոհերը յիշեցնելու դահիճներին նրանց հանրածանօթ յայտարարութիւնը։ Իրաւունք չունէ՞ր բանտարկեալներից մէկը յեղափոխականին վայել հպարտութեամբ և խրոխտ ու աներկիւղ տոնով իրանց դահիճներին «գիշերային աւազակներս» անուանելու։

Կատարեալ իրաւունք ունէին։

Ամէն մի արտայայտութիւն չափազանց մեղմ է բոլշեվիկեան ոճիրը որակելու համար։

Բոլշեվիկեան ոճիրը անորակելի է։

XVI

Փետրուարի 17-ն էր։ Գիշերուայ մահասարսուռ ապրումներից յոգնած ու նուաղած բանտարկեալները վաղ առաւօտից սկսած դիմում էին մէկը միւսին և ահաբեկ շեշտերով պատմում իրանց անցրած մղձաւանջ վայրկեանների մասին։ Բոլորին հետաքրքրող առաջին հարցն այս էր, թէ ո՞վքեր են եղել գնդակահարուածները և արդեօ՞ք կը վերջանայ դրանով «Չեկայի» սեւ գործը թէ չէ։

Իրար յետեւից բաղխում էին մեր դուռը ծանօթ բանտարկեալներ հարեւան կամերներից և համարեա մահապարտի երկիւղը սրտում օրուայ զարհուրելի անցքի մասին զանազան կարծիքներ յայտնում և հարցեր տալիս մեզ։

Առաջինը մտաւ մեզ մօտ մի վանեցի երիտասարդ թիւ 12-րդ կամերից (այդ կամերից հանել էին արդէն խելագարեցրած, յետոյ կազդուրուած Դեմիրճեանին և տեղաւորել թիւ 14-ում), երկար ժամանակ զօր. Անդրանիկի մօտ ծառայած հաւատարիմ զինուորներից մէ-

կը, որ առանձին համբաւ էր վայելում իր ընկերների շարքերում իր քաջութեան և անվստահութեան շնորհիւ։

— Ես զարմանում եմ ձեզ վրայ,— սկսեց նա տաքացած տոնով,— մի՞թէ դա յեղափոխականին վայել վերաբերմունք է։ Եղբայրք չէ՞ք տեսնում, որ մեր ընկերներին մէկ-մէկ հանում են կամերներից եւ սպանդանոց ուղարկում։ Չէ՞ որ վաղը հերթը գալու է ինձ, ձեզ և միւսներին։ Ինչո՞ւ չէ՞ք բողոքում, յուզւում, այս դռները ջարդ ու փշուր անում.

— Լա՛ւ, հասկացանք, ի՞նչ կարող ենք անել, ի՞նչ բողոք, ի՞նչ բան, երեխայական բաներ ես խօսում, քանի՞ գրոշի արժէք ունի նրանց աչքում մեր բողոքը,— ընդհատեց վանեցուն Արշալոյսը։

— Երիտասարդ,— դարձայ ես նրան,— դու քաջ ես և կտրիճ, լսել ենք, միշտ էլ քաջ ու անվախ մընաս։ Բայց շատ միամիտ ես այսպիսի հարցերում։ Եթէ ուրիշ կարգերի և պայմանների մէջ բանտում եղած որեւէ անարդարութեան դէմ արձակած բողոքը կարող է առհասարակ որեւէ բարոյական նշանակութիւն ունենալ և ազդել անարդարութիւնը մեղմացնելու համար, այստեղ, կամ բոլշեւիկների բանտերում ընդհանրապէս կարող է բոլորովին հակառակ հետեւանքները ունենալ։ Օրինակ, դու համարում ես մեր բողոքը մի միջոց վերջ տալու համար կոտորածին, իսկ ես, ընդհակառակը, իւրաքանչիւր բողոք ներկայ դէպքում կը համարեմ որպէս մի կործանարար միջոց՝ որ կարող է առիթ դառնալ կոտորածը ուժեղացնելու ու կամ սպանդանոցի զոհերի թիւը աւելացնելու։ Նըրանք կը համարեն մեր բողոքը, որպէս մի բունթ, մի ըմբոստութիւն և կօգտագործեն այդ հանգամանքը ամենայն դաժանութեամբ։ Ահա ինչպէս են դասա-

ւորւած այժմ պայմանները. Նրանք այնքան են գա-զազւած այժմ, որ պրովոկացիայի շինծու առիթներ են որոնում իրանց գազանային վրիժառութեան յագուրդ տալու համար. ըմբռնիր այս բանը և նոյնը հասկցրու ընկերներիդ։

Վանեցի ռազմիկը, կարծեմ Հրանտ անունով, ըստ երևոյթին բաւարարւում է այդ բացատրութեամբ և հեռանում է։

Բայց շատերին լեղապատառ անելու չափ մտա-տանջում էր մի հարց. արդեօք կը շարունակւի՞ բոլ-շևիկեան սպանդանոցի սև գործը, այն էլ բանտի բակում և այնպիսի աննախընթաց վայրագութեամբ, թէ արդէն վերջացած պիտի համարել զոհերի թիւը։

Գրեթէ բոլորը համոզւած էին, որ կոտորածը շարունակւելու է մի քանի օր ևս, և ահա ինչու։

Պարզ էր արդէն ամենքի համար՝ դրսից ճաշ ընդ-ունելու փաստը. և որովհետև ինքը բանտի վերատեսուչը յայտարարել էր, որ ճաշի ընդունելու-թեան դադարը պիտի տևէ մինչև փետրւարի 20 կամ 21-ը. պարզ էր արդէն եզրակացութիւնը. դահճային ռէժիմը որոշել էր 5—6 օրւայ ընթացքում իր հաշիւ-ները մաքրել հայ մարտական, հասարակական, քա-ղաքական և մտաւոր-կուլտուրական ոյժերի բանտարկ-ւած բազմութեան հետ։

Լաւատես էին այդ վայրկեանին շատ քչերը. ի թիւս դրանց նաև ես։

(Իշխանեանի յուշերն ընդհատուած են այստեղ)

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Երկար որոնումներից յետոյ, Խարթումաբնակ Եղբարք Վանեանների ջանքերի շնորհիւ, Հ. Յ. Դաշնակցութեան Եգիպտոսի կազմակերպութեան յաջողւեց, վերջապէս, ձեռք անցնել այն «ժառանգութիւնը», որ իր եղերական մահից յետոյ ձգել էր հայ հանրութեան Բախչի Իշխանեանը։ Այդ ամբողջ «հարստութիւնը» բաղկացած էր մի քանի կտոր հինցած լաթերից և մի երկու տրցակ անարժէք թղթերից.— առաւելապէս նամակներ, որ հեռաւոր գաղութների տարագիր հայերը տուել էին Իշխանեանին՝ յանձնելու համար իր Ոգիսեականի ճամբին ընկած այլ գաղութների իրենց հարազատներին։

Յանձնողները, անծանօթ ճակատագրի դաժան խաղերին, համոզուած էին անշուշտ, որ Իշխանեանի միջոցով իրենց նամակներն է՛լ աւելի ապահով... տեղ պիտի հասնեն։

Ահա այդ նամակները, հինցած լաթերն ու թըղթերի կտորտանքներն էին, որ մեր ձեռքն անցան։

Բարեբախտաբար, այդ «հարստութեան» հետ փըրկուել էր Իշխանեանի նաև ձեռագիր մէկ տետրակը՝

(մատիտով գրուած)՝ «Երկու ամիս բոլշեվիկեան բանտում» խորագրի տակ։ Սակայն նաև այդ թանկարժէք յուշերը, մեզ անծանօթ պատճառներով, դժբախտաբար, թերի էին մնացած։ Դէպքերի նկարագրութիւնը սկսւում է 1920-ի դեկտեմբեր 2-ից և շարունակւում մինչև փետրուար 17 և այդտեղ էլ ընդհատւում։ Արդեօք կորա՞ծ է շարունակութիւնը, թէ՞ նա բնաւ չէ գրուած,— այս հարցերը անկարող եղանք ստուգել։

Սակայն իր այս վիճակի մէջ իսկ Իշխանեանի «Բանտային յուշերը» իբրև թանկարժէք նիւթ պիտի ծառայեն մեր կեանքի վերջին տարիների պատմութեան համար։ Բոլշեւիկեան արիւնոտ կարգերի մէկ երեսը միայն հայկական պատմութեան սեփականութիւնն է դառնում նրա զոհերից մէկի գրչով, որ, ի դէպ, տարիներ շարունակ ապրած ու գործած էր նոյն բոլշեւիկների հետ, իբրև անդամ սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան։

Այս «յուշերը» կրկնակ արժէք են ստանում նաև այն պատճառով, որ նրանց հեղինակը վաղեմի, հին ու անհաշտ հակառակորդն էր այն կուսակցութեան, որի գլխաւորութեամբ մեր հայրենիքը անկախ հռչակուեցաւ, ապա մօտ երկու ու կէս տարի ապրեց իբրև ազատ երկիր և վերջն էլ, անցքերի եղերական բերումով, այդ նոյն կուսակցութեան իշխանութեան օրով զրկուեց իր անկախութիւնից։

Մենք գիտենք, որ Դաշնակցութեան հակառակորդներից Իշխանեանը ոչ առաջինն էր և ոչ էլ վերջինը, որ օրուան լոյսին տակ հարկադրուած եղաւ ի վերջոյ գլխարկ հանելու ճշմարտութեան առջեւ։

Գիտենք նաև, որ վաղը, երբ ազատութեան արշալոյսը ծագի մեր խաւար երկնակամարի վրայ, երբ

բացուեն զանգուածների գոց լեզուներն ու նորէն հնչի ազատութեան ձայնը՝ նման «յուշեր» —է՛լ աւելի վառ ու սարսուռ բերող գոյներով— բիւր բիւրաւորները ժառանգութիւն պիտի թողնեն պատմութեան, այդ «յուշերի» մէջ ի յայտ բերելով բոլշեւիկեան անարգ բռնապետութեան ցնցող ու արնահոտ ոճիրները.

Սակայն Իշխանեանի «յուշերը» միշտ էլ կ՚ունենան իրենց ուրոյն տեղն ու արժէքը գրուած ու գրուելիք բոլոր «յուշերի» մէջ.

Մատենաշար «Յուսաբեր»-ի Վարչութիւնը հրատարակութեան տալով Իշխանեանի այս ձեռագիր տետրակը, որոշեց կցել նրան նաև այն մի քանի կտոր թղթերը, ուր հապճեպով գրի առնուած են որոշ ու, դժբախտաբար, նորէն թերի մնացած մտքեր։ Նաեւ այդ փշուրները, ի յարգանս վաղամեռ գործչի, որոշուեց փրկել կորստից.

Շատ չէ նրանց թիւը։

Առաջինը՝ մի փոքրիկ կտոր թղթի վրայ ու անխորագիր՝ կցկտուր նօթեր են փետրուարեան ապստամբութեան պատմական օրերի մասին.

Երկրորդը՝ «Երեւանի գաղթը կամ Գողգոթայի ճանապարհին» խորագրի տակ, չափազանց սեղմ ու սքեմաթիք ձեւով, կտրտուած թերթիկների վրայ ու գրեթէ սղագիր. տրուած է ապրիլեան Մեծ Գաղթի ճանապարհը Երեւանից մինչեւ Թաւրիզ.

Երրորդը՝ «Քաղաքական մոմենտի մասին. դեկտեմբեր 2-ի եւ փետրուարի 18-ի պատմական անցքերի իմաստը. կոնսպեկտ» խորագրի տակ, երկու փոքրիկ թերթիկների վրայ, գրի առնուած են այդ երկու պատմական օրերի գլխաւոր անցքերը՝ հեղինակին հետաքրքրող գծերով։

Չորրորդ՝ «Մեր դասախօսութիւն» խորագրի տակ,

մի փոքրիկ կտոր թղթի վրայ գրի առնուած են— ու նորէն մատիտով— որոշ մտքեր նոյն շրջանին վերաբերող անցքերի մասին։

Այս թերթիկները— որոշ ու հասկանալի նկատումներով— հրատարակում ենք նոյնութեամբ, *առանց որեւէ փոփոխութեան ենթարկելու սղագրուած կամ մութ մնացած խօսքերից որեւէ մէկը։*

Վ. Ն.

Բ. ԻՇԽԱՆԵԱՆԻ ԹՂԹԵՐԻՑ

Փետր. 3-ին և 4-ին իմ հարցաքնն. Վ. Տրիբ. նախգ. մոտ. ողջ կենսագր. և իմ վերաբերմունքը դէպի բոլոր քաղաքակ. կուսակց., դէպի մայիսեան շարժումը։ Անձնակ. թշնամիներիս ստոր բամբասանքները։ (Մի խումբ մաուզերիստների և զինւորակ.)— Փետր. 16-ի գիշերը մեր կրած ապրումները։ 21 հոգու գնդակահարումը։ Դրսից ճաշ չենք ստացել սկսած Փետր. 15—17։

Փետր. 17-ի գիշերը գնդակահ. խմբապետների (Համազասպ, Մակեդոն, Արտիւշ խան և այլն) մարտիկ այժերի։

(Ուրբաթ) Փետր. 18-ի վաղ առաւօտեան ժամը 5-ին ուժեղ մի հրացանաձգութիւն։ Ապըստամբ. բոլշ. իշխ. դէմ. մեր կարծիքը (պրովօկացիա յաջորդ գնդակահ. համար ինտելիգ. ույժերի)։ Մեր ազատութիւնը, առաջին խմբի փախուստը. (անընդունելի Վ. Ն.) պահ մի յուսահատ., ժամը 8-ին մեր ազատութիւնը, խանդավառ ոգևորութիւն և սրտաշարժ տեսարաններ, համբոյրներ։ Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն. Ապստամբ. կազմ. էր ութ օրւայ ընթացքում, բռնկւել է երեք օր առաջ, էջմիածինը ընկել էր 17-ին (այնտեղ սպանւել են 14 սասունցիներ)։ Բաղ. կուս. ժողը. Միջկուսակցական խորհուրդ փետր. 21-ին պարէն և ագիտացիա։ Բոլշև. փախուստը դէպի Ղամար-

լու (Նախիջեւանի ուղղութեամբ), կռիւներ նրանց հետ Ուլուխանլուի, Աղբաշի, Տօրքի, Թաղագիւղի, Նորագաւիթի և այլ գիւղերի շրջանում։ Փետր. 26-ին ուժեղանում է վտանգը. կռիւը տեղի է ունենում 5—6 վերստ հեռաւորութեան վրայ։ Ինտելիգենց. որոշ մասին առաջարկւում է հեռանալ Երեւանից. գալիս ենք երեկոյ. ժամը 11-ին Նորք, 2—8 վերստ այնտեղից Ջրվէժ (5—6 վերստ), Ողջաբերդ (7 վերստ, ժամը 11·30-ին ցերեկ.) այնտեղից Բաշգեառնի (12 վերստ, հասնում ենք ժամը 3-ին)։ Իմ տարօրինակ տոկունութիւնը ճանապարհին։ Փետր. 27-ին ժամը 3-ին հասնում ենք Բաշգեառնի և սպասում իրերի վախճանին։ Փետր. 28-ին լսւում էր ուժեղ հրացանաձգութիւն Երեւանի շրջանում։ (Շարունակ. Brissot-ի թերթում)։

ԵՐԵՒԱՆԻ ԳԱՂԹԸ
ԿԱՄ ԳՈՂԳՈԹԱՅԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Անհարեկուած խուճապով մասսայական գաղթը սովորական երեւոյթ է եղել հայ ժողովրդի կեանքում մանաւանդ վերջին պատերազմական տարիներին։ Ամեն մի գաղթ, անշուշտ, ունեցել է իր առանձնայատուկ կողմերը՝ ըստ տեղի, ժամանակի, գաղթի պատճառ հանդիսացող հանգամանքների, ուղեկից մոմենտների և այլն։ Մէկը եղել է դիւրին, միւսը ծանր պայմանների մէջ. մէկը՝ նախամտածուած, միւսը յանկարծակի եկած, մէկը՝ առանց ցնցումների և զոհերի, միւսը ցնցումալից եւ զոհաբեր։

Երեւանի գաղթը ապրիլ 2-ին (1921 թ.) կազմում է, իր շատ ու շատ կողմերով, մի նմանը չտեսնուած բացառութիւն հայկական բոլոր գաղթերի մէջ, ինչպէս կը տեսնեն ընթերցողները նկարագրութեանս ընթացքում։

Ես այստեղ մի խօսք անգամ չպիտի ասեմ Երեւանը ընկնելու պատճառների մասին. դա մի այլ ծանրակշիռ ու նշանակալից թեմա է՝ արժանի յատուկ գրուածքի։ Ես այստեղ պիտի գործ ունենամ Հայաստանի մայրաքաղաքի անկման փաստի և հետեւանքների— մասսայական խուճապի— հետ, *)

---

*) Այս աշխատութիւնը, դժբախտաբար, չկայ։ Վ. Ն.

ԵՐԵՒԱՆԻ ԱՆԿՈՒՄԸ

Ապրիլի 1-ին գիշերը, ժամը 3-ին մօտ 20 հոգով հեռանում ենք Բաշգեառնի (25 վ. հեռ.)։ Ապրիլի 2-ին, ժամը 2-ին ընկնում է Երեւանը. մի քանի տասնեակ հազարների հասնող ժողովուրդ է փախչում քաղաքից. մեր ուղղութեամբ մօտ 8000 հոգի. ամբողջ ինտելիգենցիան, ազատ պրոֆ. ներկայաց., պետական պաշտօնեաները, անգործ ծառաները, հասարակ արհեստաւորներ, գիւղացիներ լեղապատառ փախչում են և կենտրոնանում Բաշգեառնում, ուր վաղօրօք փոխադրուած էր ռազմամթերք և պարէն։ Ապրիլի 4-ին Բաշգեառնից առաջ է շարժւում գաղթականների առաջին խումբը (մեր խումբը) 90 հոգուց բաղկացած, հասնում ենք առաջիկայ Բէյբուրդ գիւղը (7 վ. հեռ.) որտեղ գիշերում. (ճանապարհին, Բաշգեառնի մօտ խոր ձորի մէջ, գետ հոսող., գիւղակ. պահակները խփում էին հրացաններով և խանգարում առաջ շարժւելու)։

Ապրիլի 7-ին, Գեօլ-Այսօրից մեկնում ենք առաւօտեան ժամը 6-ին և ժամը 11-ին հասնում Ձանգլի (6—7 վերստ հեռաւորութեան վրայ). այնտեղից մեկնում ենք Խօսրով ժամը 1-ին և հասնում ժ. 7.30-ին, (12 վերստ. հեռ., բարձունքներով լի, իսկ վերջին վարէջքը (սպուսկ) մի զարհուրելի բան էր (նկարագրել իջնելը)։ Գեօլ-Այսօրում մնում ենք իզուր ապրիլի 5—6-ին, շնորհիւ Համօի դանդաղկոտութեան)։ Ապրիլի 8-ին մեկնում ենք Խօսրովից ժամը 5-ին, և հասնում ժ. 9-ին Ջիմին գիւղը։ Այնտեղից գնում ենք

Գիւմիւշ Բաշն և ժամը 12-ին. կէս ժամից մեկնում ենք Արմիկ գիւղը և գիշերը մնում այնտեղ. այդ օրը մենք կտրում ենք մօտ 35 վերստ ճանապարհ։

Արմիկից յաջորդ օրը, ապրիլի 9-ին, ժամը 10-ին, մեկնում ենք առաջ (գիշերը հիւանդանում եմ, փորս ցաւում է սարսափելի կերպով), զարհուրելի բարձրութիւններով, մէկուկէս արշին խորութեամբ ձիւներով և հասանք վերին Զանախչի (ժամը 1-ին), ներքին Զանախչի (ժ. 3-ին), սա 4—5 վերստ հեռաւորութեան վրայ էր գտնւում բոլշեւիկեան ռազմաճակատից. տեղական հրամանատարի խորհուրդով մենք մեկնում ենք շուտով և երեկոյեան ժ. 10-ին հասնում ենք Էրգին (իմ պորտֆելի ցաւալի կորուստը, ներքին գործ. մինիստր. պաշտ. ծառայողների ձիու վրայ)։ Գիշերում ենք բացօթեայ (կիսաքանդ վրանի տակ և յաջորդ օրը, ապրիլի 11-ին, գնում ենք առաջին մարդաբնակ գիւղը՝ Այնաղոր (Էրգին վերաբնակ. էր 30 տ. գաղթականներով), հասնում ենք ժամը 5 երեկոյեան. մեր թափառումները անէ տուն անձրեւային եղան, ցեխոտ ճանապարհ. յաջողւում է հինգերորդ տունը (Պետոյեանց Մկրտչի) իջնել եօթ հոգով (Արշ. Ղազ. խումբը)։ Ուտելիք ստանալու դժուարութիւնները, բոլոր ջանքերը՝ ձու, իւղ. մեղր փողով ձեռք բերելու համար ապարդիւն են անցնում։ Յաջորդ օրը, ապրիլի 11-ին, ժամը 9-ին մեկնում ենք Քեչիլչքենդ (12 վերստ) և հասնում ժամը 5-ին, մի յետընկած Կեղտոտ գիւղ. տեղաւորւում ենք պարլամենտի մի քանի անդամների հետ (Սիրական Տիգրանեան և ՀայրԱբրահամ) միասին։ Գորիս անցնելու սկզբնական արգելքը վերանում է. ստանում ենք թոյլտուութիւն և միւս օրը (ապրիլ 12-ին) ժամը 6-ին երեկոյեան գնում ենք Մալիշկին (7 վերստ). իջնում

ենք կոմիսարի տունը (կոմիսարը հին դաշնակցութեան ռազմիկ գործիչ էր. Արշակ անունով, տաճկական բանտում նստած) նրա հօր անտանելի ժլատութիւնը. առհասակ տեղացիների սառը վերաբերմունքը դէպի գաղթողները. հարուստ գիւղում ոչինչ չենք ստանում, բացի ցամաք հացից և տաքացրած ջրից։

Միւս օրը, ապրիլի 13-ին, ժամը 10-ին մեկնում ենք Դընղէվազ (23 վ. հեռ.) և ժամը 8-ին երեկոյեան հասնում ենք այնտեղ. սարսափելի կոպիտ ընդունելութիւն կնոջ և տղամարդու կողմից. սպառնում ենք բանտարկել տալ։ Ոչինչ չեն տալիս, անգամ թէյ. առաւօտեան թէյ ենք խմում և 9-ին մեկնում Բազարչայ (18 վ. հեռ.)։ Ճանապարհի զարհուրելիութիւնը. մեծ բարձրութիւններ, ձիւնապատ, ջրերով լի ուղիներ. մինչև մարդու կէսը ձիւն ու ջուր։ Մալականների այդ գիւղը լաւ ընդունեց մեզ. տաք, յարմար սենեակ, առատ թէյ և գետնախնձոր (չորս հոգու համար)։ Տանտէրը՝ Ալիքսան Լիկով, առեւտուր էր անում գաղթականների հետ թանկ գներով։ Երեք գիշեր մնացինք. Ղազարեանի խմբի գալը հալեցնում է մեր պարէնը. ամբողջ գաղթականութիւնը խմբւում է Բազարչայում. նաև զօրամասերը, իրանց լքւած գինւորներով, մանաւանդ տաճկահայերը. գլուխս լանալը, ճանապարհորդական ամուսն..

—Ապրիլի 16-ին 600 ինտելիգենտների թոյլատրում են տեղաւորւելու երկու վերստ հեռաւ. վրայ գտնւող Բօրիսովկա մոլոկան. գիւղում։ 27-ին թոյլատրում են գալ Ղարաքիլիսա (Անգեղակաթում 450 տուն, երեք ժամ կանգ առնելը՝ երկու կին շրջանային կոմիսար., Բագւում ծառայած Տէր Մկրտիչեանի հիւրաս.)։ Ղարաքիլիսա (150 տուն) հասնում ենք ժամը 8-ին երեկոյեան (25 վերստ. Բազարչ.-ից)։ Մեր (Չիլ., եւ.

օր. Մաչա) ընդունելութիւնը կոմենդանտում. Մեր վալատ Արտաշէսի հարցաքննութիւնը և իբրև բոլ. ագենտի գնդակահարութիւնը նոյն երեկոյին. իջնում ենք հաշտար. դատաւորի գրասենեակում. (Լ. Մ.—Ազարեանի հետ միասին, բռնեալ). Մնում ենք երկու գիշեր. ամենայն դժուարութեամբ պարէն գտնել. տնէ տուն ման էի գալիս հաց կամ ձու գտնելու,—200 հոգու ցուցակ. առաջարկը Նժդեհի կողմից՝ Դարաքաս անցնելու համար։ Մեր խումբը (13 հոգի) ապրիլի 19-ին Լծինի (20 վ., էժան ճաշը, չնորհիւ քահանային) վերայով հասնում ենք Տաթև (Լծինից 12 վ. հեռ.)։ Սքանչելի տեսարանը, ճանապարհին հսկայական բարձրութիւններ, նեղ շաւիղներով, անտառների միջով։ Տաթեւում գտնւում ենք արդէն 400—500 հոգի, առաջարկը մնում է թղթի վրայ։ Մեր (8 հոգու) տեղաւորելու սկանդալ տեսարանը (դուռը կոտրում է կոմիսարը, տանտիրուհու յիմար յամառութիւնը։ Մեծ, բայց ցուրտ սենեակում գիշերում ենք չորս օր. պարէն գտնելու (մանաւանդ հաց) աներեւակայելի դժւարութիւնները։ — Ապրիլի 23-ին Տաթեւից մեկնում ենք (Տաթեւի վանքը, չարժակ. սիւնը, տեսակց. Նժդեհի հետ, Նրա խօսքերը ինտելեգ. մասին, Նրա ճառը վանքի բակում, Ռուբէնի խօսքերը՝ ինտելիգ. կ'ուզէ ձորեր. թողնել). 35 հոգով Արչ. Ղազ. ղեկավ., առաւօտեան ժամը 3-ին. (5.30-ին) անձրև և մառախուղ. սարսափելի ցեխ, հասնում ենք ժամը 3-ին Խոտանան (21 վերստ հեռ.) ամբողջ օրը անձրեւի տակ։ 12 հոգով տեղաւ. ենք Յովհաննէս անունով Բուզւում աշխատ. եղած և ինձ ճանաչող մի գիւղացու տուն, թանկ գներով պատւէրներ. հացի սով, ձու և մածուն ենք ստանում, բժ. Տէր-Դաւիթ. և Կանդուրալ. տիկերը. առանձին խնամք դէպի ինձ տանտիրոջ կողմից։

Առաւօտուն, Ապրիլ 24-ին շարունակում ենք ճանապարհը և Առաջաձորի (Արփիաժամ խանումի տունը մածուն գիւղի ծայրում կամխարից հաց պահանջ.՝, 2 ժամ սպասել 6 հաց սառնալու համար, իրար ձեռքից խլել) անցնում ենք Ղափանի հանքերը (բազար կամ կենտրոն, գեղեցիկ տնտարաններ, արդիւնարեր. օազիս. թէյ և մի մի կտոր հաց բազարում, զործող. կամխաէի կողմից. շարունակում ենք ճանապարհը նոյն օրը (Ապրիլի 24-ին) և հասնում ժամը 7-ին Գիւտգեամ (7 վերստ) գիւղը (190 տուն). Բազարի նման լաւ, երկյարկանի, քարաշէն տներ թիթեղեայ տանիքներով, բարեշէն և բարեկեցիկ գիւղ. առատ եւ սիրալիր հիւրասիրութեամբ, մորթում է մեզ համար մի եզ Բազարի կոմենդանտի կարգադրութեամբ. մենք իջնում ենք 25 հոգով Աւիսի քրոջ տանը. նրա ափսոսանքը իր եղբոր մասին. Ապրիլի 25-ին գալիս ենք Ծիկահող (12 վ. հեռ. 200 տուն). աւելի պակասւոր, յետամնաց գիւղ. (ճանապարհը սարսափելի ցեխոտ) Ցեխձոր եւ անտառներ. երեք հոգով (ես, Արշ. և Լ. Մ. Ալ.) իջնում ենք մի տուն, գիշերում. կաթնով թէյ. մածուն, կանաչի. առաւօտը՝ թէյ, մածուն, ձու, գետնախնձոր. Վարձում եմ մի ջորի, բեռնում եմ և Արշակի իրերը, նստում և սարսափելի վերելքով,.ցեխոտ անտառով գալիս ենք Կիմանց գիւղը (8 վ., 30 տուն, 26-ին ապրիլի, 12-ին ժամը). Ընդունելութիւնը Ծիկահողում և Կեմանցում լինում է ոչ բիրտ. Միայն ես հիւր եմ լինում մի չափազանց բարի քրիստ.—Մելքոն Տէր-Մարտիրոսեան անունով,— մօտ. Զանեւոր, բայց սիրտը բաց, աստուածեան, եկողներին չի մերժում, մեծ մասամբ ձրի, միշտ Աստուծոյ անունը տալով. 73 տարեկան., առոյգ, աշխոյժ, կինը 40 տարեկան, երկրորդ կինը. Ինձ վրայ

ունի (թանկ նստեց, 125 հազար. րուբլի., (նաև էշի վարձը՝ երեխս մինչև սարը տանելու համար)։ Այդ փոքրիկ և սակաւահող, աղքատիկ գիւղը առատաբար լաւ է հիւրասիրում գաղթականներին։ — Յաջորդ օրը, ապրիլի 27-ին, ժամը 7-ին մեկնում ենք դէպի Ծիրւանաձոր գիւղը՝ 20 վերստ հեռու., 450 տուն, սկզբի 8 վերստը սարահարթի վերևից՝ չարաճակ անտառով, քարքարոտ ճանապարհ, ապա սարահարթի վարէջքը, գիւղը ձորումն է, պարտէզների մէջ գըրկուած. այգիներով և մարգերով առատ, արդէն կանաչած, կատարեալ գարուն։ Գիւղացիները վատ են ընդունում (սկզբի խմբերին ընդունել են լաւ, յետոյ վատ, շնորհիւ Ռ.-ի անտակտութեան)։ Մեր խմբի մեծ մասը, մօտ 20 հոգու տեղաւորում են երկու սենեակում, առանց պարէնի (միայն թէյ և 12 հաց). ես ուտելիք եմ առնում մի բարի կնոջ մօտ։ Աղեկսյս տալիս ենք առաւօտեան ուտելիքով, 10 հացով, 10 ձուով, 5 ֆ. լոբով։ Ապրիլի 28-ին, ժամը 11-ին մեկնում ենք Մեղրի (14 վ. հեռ., 300 տուն)։ Նախորդ օրը յայտնեցին, որ պարսկական իշխանութիւնը չի թոյլատրում։ Խանին կանչում են Մեղրի եւ յաջողեցնում։ Խանի ասելով բոլշևիկները 3000 հոգի, եկել են Օրդուբադ։ Մեղրի ճանապարհը, շատ լաւ էր. գիւղի կողքին կանգնեցնում են մեզ Ռ.-ի կարգադրութեամբ. ժամուկէսից բաց են թողնում։ Շրջանային կոմիսար Խաչիկ Դանիէլեանը ինձ տեղաւորում է մի լաւ տան՝ Արամ Յովակիմեանի մօտ (գիւղի միւս մասում, Մեղրի գետի միւս ափում). սքանչելի տեսարան ունի. գիւղը, իր երկու մասերով չափազանց խտացած ու սեղմուած են ծառերով։ Ժայռերի արանքում, միջին տարած.., ձորում, գետի երկարութեամբ փռուած են երեք վերստ հեռաւորութեամբ ամէն տե-

սակի այգիները։ — Մնում եմ Մեղրիի փոքրիկ թաղում՝ Ատոմ Յովակիմեանի տունը (գործադիր կոմիտէի քարտուղարը 29 տարեկան, պառաւ կին, որ գանգատւում էր․ թէ ինչու որդին չի ամուսնանում)։ Հըբաշալի ընդունելութիւն, լաւ հիւրասիրութիւն․ այդ գիշեր մնում եմ, մեր խումբը մեկնում է գիշերը ժամը 2-ին Արաքսի ափը, առանց ինձ առնելու (տեղս չեն իմանում)։ Յաջորդ օրը, ամսի 29-ին, ժ․ 9-ին, ջորի եմ նստում և շտապում մեր խմբի յետեւից, որը դեռ չէր անցել Արաքսը պարսկական Դիւզալ գիւղի մօտից (7 վերստ Մեղրիից հեռու, 5 վ․ Կարճեւան գիւղից)։ Ապրիլի 27-ին անցել էին սահմանը Շանթը, Սիրական Տիգրանեանը, Մալխասը եայլն․ 28-ին անցնում են՝ Վրացեանը, Քաջազնունին և 6 ինտել․․ 2-ին մեր խմբից անցնում են 6 հոգի ղեկավ․․ Արշակի հետ միասին․ ես ուշանալու պատճառով անունս ընկել էր նոր ցուցակի մէջ թիւ 20 (5ի փոխարէն)։ Մարդկանց փոխադրում են Արաքսով ամենապրիմիտիւ միջոցով (5—6 ուռեցրած տիկերով, ամեն անգամ վերցնելով չորս մարդ)։ Ամբողջ օրը (29 հոգի) մնում ենք Արաքսի ափին, գիշերը մնում ենք մօտ տարած․ վրայ գըտնւող աւերակ տունը, քաղցած վիճակի մէջ։ Տեղափոխութեան ողբալի անկազմակերպութիւնը, կաշառքներով խանգարում են կարգը․ Արշ․ Վաչեանը՝ շրջանի խանի (Մութալի խան) ստորաքարշ լակէյը, անգթօրէն կաշառքներ էր վերցնում կողմնակի մարդկանցից, չխնայելով ինտելիգենտներիս վիճակը։ Ամենաանախորժ զգացումներն ու ապրումները․ մեր կառավարութեան ծայրահեղ ապիկարութիւնը․ օրական անցնում են 16—20 մարդ, իսկ Մեղրուց բաց են թողնում հարիւրներով։ Ռուբէն փաշայի դատապարտելի վարմունքը։ Ես անցնում եմ ամսի 30-ին, չա-

թաթ օրը, ժամը 3-ին (Կարճեւանից ստացած պարէնը)։ Առաւօտից անցածները տեղաւորեցին Դիւզալ գիւղում. Թուրքերը մեզ (ես. Վաղ. Տէր-Յաչ., բժ. Արտիւշ Պօղ. և Օր. Զատիկեանը) հարեւան Բիւրտաշ գիւղը. մի շարք աղաների տունը. մեծ աղայի ստացած նուէրները (ժամացոյց և բինոկլ) Նժդեհից. մեր զատկական թաթախումը աղաներ' տունը (փլաւ եւ գինի). ձիաների և ջորիների առատ առաջարկները (10 թումանով մինչեւ Թաւրիզ)։ Յաջորդ օրւայ թանկ ծախսերը (5-ական ղռան)։ Խումբը (Բիւրտաշից եւ Դիւզալից) մեկնում է մայիսի 1-ին ժամը 8-ին առ., ու հասնում ենք (ես ձի ունէի, Նաև ուրիշ վեց հոգի) Իլլաք պարսկական գիւղը (28 վերստ հեռ.) ժամը 5-ին նոյն օրը. տեղաւոր. են խանի մարդկանց մօտ (կեղեքումը, սաւաններիս վաճառքը 8 ղռ.)։ Թուրքերի խաբեբայութիւնը սկզբում, կոպտութիւնը փողերը վճարելու համար։ Առաւօտեան ժամը 6.30-ին մեկնեցինք և պիտի կորէինք 48 վ. և հասնէինք Մուժամբար հայկական գիւղը. ձիապաններին յամառ մերժումը, մեր սպառնալիքը. ժամը 8-ին երեկոյին հասնում ենք Մուժամբար գիւղը, անցնելով իրեն [անընթանելի Վ. Ն.] (գիւղը (անցնելով 30 վ.) իրենից մեծ և տեղ տեղ ձիւնապատ բարձունքները։ Մուժամբարը միակ հայկական գիւղն էր ամբողջ շրջանում (բաղկացած մօտ 120 տնից), քաջ և անվախ, մի քանի անգամ յաջող կռուեներ մղած պարսկական արշաւանքների դէմ։ Ընդունելութիւնը շատ սիրալիր. գան զառը խանական կամայականութեան և ծանր տուրքերի դէմ։ Առաւօտեան ժամը 8-ին մեկնում ենք Մուժամբարից և ժամը 4-ին հասնում Թաւրիզ (28 վ. հեռաւոր., կանոնաւոր ճանապարհ.)։— Թաւրիզի փռուած դիրքը հեռուից, հարթ տարած. վրայ, հսկայական ծաւալով։

Առանձնայարկը. ամէն տան առաջ պարտէզ մրգատու ծառերով. տները բարձր պարիսպներով շրջապատած, պատուհանները փոքրիկ, մեծագոյն մասը ներսից. հայերի թաղերը Ղալա և Լիլաւա, ամենալաւ մասերն են քաղաքում, ուր ապրում են եւրոպական ներկայացուցիչներ), փողոցները վերին աստիճանին նեղ, ծուռ ու անկանոն խիստ բացառութեամբ. Նոր էին ձգել ելեկտրական լոյս, գլխաւ. փող.—Դրամակ. կրիզիսը. չատ հայերի սնանկութիւնը և տեղացիներից (5000 հոգի) շատերի (2112 հոգի) նպաստ ստանալը ամերիկացիներից։— Հսկայական բազարը իր լի առատութեամբ շուարեցրեց բոլորիս։— Ես հիւրընկալւում եմ առաջին իսկ օրից (մայիսի 3—27-ը) Վարդան Խաչատրեանի տանը (եղբայրը կամաւոր. Կամօ, Սուրէն, հարսը, տիկ. Վարսենիկ, սիրալիր մայրը), ուր մի օր առաջ տեղաւորուել էին Զիլինգարեան ամուսինները։ Վերին աստիճանին հիւրասէր ընտանիք։ Ընդհանուր հիւրասիրութիւնը Թաւրիզում։—Արքեպիսկոպոս Ներսէս Մելիք Թանգեանի եռանդուն գործունէութիւնը, ստեղծած կապն ու յարաբերութիւնը պարսկական կառավարութեան հետ։— Գաղթականները շարունակում են հետզհետէ մեծ խմբերով գալ Թաւրիզ Արաքսի ափից. մինչև մայիսի 15-ը հասնում են 500-ից աւելի. մինչև 20-ը անցնում են 2000-ից, մինչև յունիսի 5-ը 6000-ի։ Յետագայ խմբերի գալն գանգատը՝ ճանապարհին պարսիկներից կողոպտուելու, թալանուելու մասին։ Եղել են եօթ հոգու անյայտացման դէպքեր։— 3 հոգու Արաքսում խեղդուելը, սովամահութեան տասնեակ դէպքեր Արաքսի ափին։ Մայիսի կէսերին Հայաստանի յեղկոմը բաց է թողնում ներման դեկրետ՝ Լենինի հրահանգի հիման վրայ, որով պահանջում է նա մեղմ քաղաքականութիւն տանել հակառակորդնե-

րի հետ՝ Հ-ի ապստամբութեան տխուր փորձը չկրկնելու համար. Անդրկովկասում առհասարակ. Գաղթականների զարհուրելի դրութիւնը ստիպում է նրանց երեւան վերադառնալ խմբերով. առաջին էշելոնը 360 հոգի մայիսի 24-ին, երկրորդը՝ 600 հոգի մայիսի 30 մինչեւ յունիսի 6-ը վերադարձած են 2000 հոգի, այդպէս շարունակ. բացի կուսակցական պատասխանատու գործիչներից (Յովսէփ Թադէոսեանի խօսքերը՝ որ ես ոչ մի դէպքում չվերադառնամ)։— Շտապում եմ ճանապարհը շարունակել. ճանապարհածախսի պակասութիւնը, իմ վիճակը, մի կերպ գալիս եմ Թեհրան՝ անցնելով ճանապարհը վտանգի, զրկանքների բովից. (մեր դասընթացքները Թաւրիզում, հրապ. դաս. թոյլ չեն տալիս, մի խումբ՝ ես, Աղբալեան, Սիրական Տիգրանեան, Արտաշէս Չիլինգարեան եայլն կարդում ենք դասախ.)։ Ղազւինում, յունիսի 4-ին կարդում՝ եմ զեկուցում և նոյն օրը մեկնում Թեհրան.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՈՄԵՆՏԻ ՄԱՍԻՆ

1921 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի ԵՒ ՓԵՏՐՈՒԱՐԻ 18-Ի ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՔԵՐԻ ԻՄԱՍՏԸ

(ԿՈՆՍՊԵԿՏ)

1. Ներածութիւն.— *Երկու և կէս ամիս սոյն ամբիոնից խլացր. ձեր ականջը չարունակ. Ծռ. ֆրազ. (ինտերնաց., սոցիալիզմ, մանաւանդ կոմունիզմ և կոմ. կուսակց., համաշխ. յեղ., արեւել. ինտերնաց., բանւորա-գիւղաց. իշխ., պրոլետ. դիկտատուրա, պրոլ. դասակարգային կռիւ և դաս. յեղափ. խորացում և վերջապէս կեցցէ քաղաքաց. պատերազմը.)։—* Խոր. զաղ., բայց սնամէջ, դատարկաճճ. Ֆրազ., երբ *Մոսկ. Կրեմլում բազմած կոմիսարօդերժավեան Լենին-Տրոցկու գլխ.* ուխտեց խաբեբայութեան արուեստը *ծառայեցնել սով. իշխ. տիրապ. գլխաւոր հիմքերից մէկը։— Խաբ. պրիոմները զեղծ. կոմիս. չափ (Լենինի համեմատ.)։— Կենտրոնի չէֆերի խաբեբ. արուեստի շկոլան զաւառ. ճետերը (ինչպէս կաթոլիկ. պապական. խաբ.) հազարերանգ վերսիաներով.— Հայաստանի բոլշ. ճետերը—* դա տգէտ ու տհաս *աշակերտների մի խմբակ է. սոցիալիզմի այբուբենը* չմարսած խղճուկ ֆրազեօլօգների *մի վոհմակի իշխ., յենուած սւինների վրայ։— Մամուլի ճնշումը՝ խաբ. արուեստի ամենամեծ պրիոմն է...*

2. Դեկտ. 2-ի պատմակ. անցքը.— *Անդրկուլիս.* ինտրիգաներ անցքի *նախօրեակին (թեթև սովետիզ., ընդդէմ թիւրքերի, յօգուտ երկրի ամբողջացման, ուլտիմատում).— Պատմ. մէջ չտեսնուած երե-*

ուլթ՛իչկս. անձնատուր լինելը.— քաղաքակ. պատճառները (տաճկական վտանգ և պարեն. կրեդիտ.(պատճ. մասսաների համար (ո՞ւ ակընկալ., վաճառեց իր ազատ. ու անկախութիւն՝ը՞ ֆիզիքակ. գոյութիւնը պահպանելու գնով).

3. Սովետ. իշխանութեան. քաղ. Հ-ում.— Մի խորթ ու օտար բոյս հայ կեանքում. ոչ մի հետաքրքրութիւն դէպի ռէալ կացութիւնը. կուսակցակ. Իդա-գեօլօգիայի ճեղեղատ կենտրոնում և գաւառներում, եւ բորբոքուած ուղեղով դեկրետների անվերջ չարան՝ տընտեսական աւերումների պրօցեսը արագացնելու համար։

Սով. իշխանութեան կուրսի կատարեալ սնանկութիւնը քաղաքակ. եւ տնտես. բոլոր հարցերում. 1) Արտաքին քաղաք. Տաճկական հարցում ֆիասկօ (բացասութիւններ). 2) Պարենաւորման քաղաքակ. (ստայօդ տեղեկութիւններ) Ռուսիայ եւ Ադրբէյջանից պարէն ստանալու նկատմամբ. Հայաստանից պարէն (կաթ, կակաօ, ալիւր եւ այլն) յափշտ. և Ռուս. տանել. 3) Տնտեսակ. սովետիզացիա (երկու ուղղութեամբ՝ բռնագրաւումներ, խուզումներ և նացիոնալիզացիա—քննադել երկուսն էլ). 4) Ներքին քաղաքակ. (ճնշումներ, խուզ., ձերբակալութիւններ, բըռնութիւններ, աքսոր, գնդակահարութիւններ—արեան կոմպենսացիա թուրքերի պահանջով).

4. Փետրուարի 18-ի պատմ. անցքը.— Հայ ժողվ. ապրածը եւ տեսածը, ակնկալածը եւ կրածը.—Հայ մուրացիկ գիւղաց. վիճակը վերջին 3 տարին.— Փետր. 18-ի անցքը— դա ժող. զանգուածի ներքին բռնաւոր ցասման տարերային պոռթկումն է, իբրեւ արդիւնք այն հակասութեան, որ գոյութիւն ունէր ժողվ. սպասելիքների և տեսածի միջեւ.— Փետրուարի 18-ը— դա

հայ ժողի. բաստիլեան փոթորիկն է. դա մի յեղափ. եւ ազատագր. որոտընդոստ ակտ է.՝ յեղափ. բռնութեան, ռէակցիոն ճնշումների դէմ. ազատագրութիւնը՝ օտար, ոչ ընտանի և ոչ հայրենի բռնակալ ռէժիմից. — Փետր.ի 18-ի անցքը՝ դա կորզուած ազատութեան և անկախութեան վերստին նուաճումն է (առանց արտաքին հարուածի չէր արուել). — Փետր.ի 18-ի ակտը հայ ժող.ի բարոյական կորովի և գիտակցութեան ամենափայլուն ապացոյցն է (ռուսակ. օրիենտացի. զերին ըմբոստացաւ ռուսութեան դէմ. 1920 թ. յուն. 23-ի իմ գաղափ. հայը կը կռուէ ռուս զինու. դէմ).

5. Անդրկովկասեան ժողովրդների դիրքը դէպի հիւս.-բռնի արշաւը. — Միանգամայն բացասական է դեմոկր. տեսակէտից. — Բոլոր ժող.-ին մահացու վտանգ է սպառնում բոլշ. իմպերիալիզմը. — Հայաստանի Յեղկոմը ընդունեց Նախիջեւանի ժողի. ինքնորոշումը, պիտի նոյն կերպ ընդունէ հայ ժողի. ինքնորոշումը. — Միայն ինքնայօժար և համերաշխ ձգտումներով կարող են մանր ժողովուրդները միանալ մեծ Ռուս.-ին և ոչ բռնի կերպով.

6. Հայ ժողի. կորովը այսուհետեւ. — Հակաբոլշ. նոր շարժումների սկզբնակ. շրջանը Հայաստանում. — Հայ երկրի պատմութեան ամենէն սքանչելի էջերից մէկը. — Երեւանի պատերի տակ չորս օրեայ փոխարէն 24 օր. — Յաղթելու վճռականութեամբ տոգորուած հայ ժողը. թող գոչէ միշտ՝ կեցցէ ազատ ու անկախ Հայաստանը, կեցցէ Անդրկովկ. ժողովրդների եղբայրական համերաշխութիւնը. — Կեցցէ սօցիալիստական դեմոկրատիայի յաղթանակը բռնակալութեան դէմ.

ԵՐԵՔ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

1. *Ինչո՞ւ Հայաստանը պարտւեց Քեմալական Թիւրքիայից։*

2. *Ինչո՞ւ Հայաստանը դարձաւ խորհրդային կամ սովետական։*

ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

1. *Բօլշեվիկեան իշխանութեան քաղաքականութիւնը Հայաստանում։*

2. *Ինչո՞ւ ծագեց հակաբօլշեվիկեան ապստամբութիւն։*

ԵՐՐՈՐԴ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

1. *Մէկուկէս ամսւայ ազատագրական կռիւը բօլշեվիկների դէմ։*

2. *Ինչո՞ւ Հայաստանը երկրորդ անգամ դարձաւ խորհրդային կամ սովետական։*

I 1920 *թ. ամառը Հայկական Հանրապետութեան ունեցած մի շարք փայլուն յաջողութիւնները՝ ներքին և արտաքին ճակատներում, աւելի լարեցին իր դէմ նրա երկու թշնամիների յարաբերութիւնները։*

II *Հայ-Տաճկական պատերազմի իմաստը, ընթացքը և վախճանը ըմբռնելու համար, պէտք է պատկերացնել այն ամբողջ քաղաքական մթնոլորտը, որ ստեղծւել էր Հայաստանի շուրջը։*

III Այդ թշնամիները՝ խորհրդային Ռուսիան և Քեմալական Թիւրքիան, լինելով դաշնակիցներ, ունենալով ընդհ. քաղաքական ձգտումներ արեւելքում անտանտի կամ դաշնակիցների դէմ, չէին կարող հաշտ աչքով նայել դէպի մի հանրապետութ., որը գոյութիւն ունի դաշնակիցների հաւանութեամբ, որի գոյութեան փաստը վաւերացրուել է de facto և de jure նոյն դաշնակիցների կողմից և որը, որպէս այդպիսին, տանում էր դաշնակիցների օրիենտացիայի գիծը արեւելքում, այսինքն հանդիսանում էր բնական թշնամին ու խոչընդոտը ռուս-տաճկական դաշինքի վարած քաղաքականութեան դէմ արեւելքում.

Որքան ուժեղանում և հաստատւում է երկու դաշնակիցների ձգտումը՝ կապ հաստատել և միանալ արեւելքում, այնքան այդ ձգտումը խոչընդոտների էր հանդիպում Հայաստանի ունեցած յաջողութիւնների հանդէպ։ Բագւի «Կոմունիստ»ի սպառնալիքները՝ Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջեւանի վրայով Անատոլիայի հետ կապւելու համար. «Հայաստանը՝ Անտանտի փոքրիկ չնիկը պէտք է խեղդւի և փոշիացնւի մէջտեղից».

ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

[10h.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0214737

А п
81188